

**ՔԱՐՈՉԳՐՔԵՐ**

**ՊԱՐԶ ՔԱՐՈՉՆԵՐ**



ՀՐԱՄԱՆԱԲ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԻՆ

**Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԷՄՄԱՆՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆՑ

## ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ

(Ժողովրդական ընթերցանության համար)



ՀՏԴ  
ԳՄԴ  
Ն -

Տպագրվում է երաշխավորությամբ  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի  
Հրատարակչական Խորհրդի

### **ՆԱԶԱՐՅԱՆՑ ԷՄԱՆՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ**

Ն - ՊԱՐՁ ՔԱՐՈՉՆԵՐ: - Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011, 272 էջ:

Ուսուցիչ, գրականագետ, քարոզիչ Էմմանուել քահանա Նազարյանցը թողել է բավական զգալի գրական ժառանգություն՝ թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական: Էմմանուել քահանայի կրոնական բովանդակության գրքերից հայտնի են «Հիսուս Քրիստոսի մկրտությունը», «Չարչարանքի շաբաթը» և «Պարզ քարոզներ» քառահատոր ժողովածուն: Ներկա հրատարակությունն ընդգրկում է նրա «Պարզ քարոզները», որոնք այսօր էլ պահպանում են իրենց կենդանի ուժն ու ներգործությունն ընթերցողի վրա:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ  
ԳՄԴ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» Հիմնադրամի

ISBN

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011 թ.

# ԷՄՍԱՆՈՒԷԼ ԶԱԿԱՆԱ

## ՆԱԶԱՐՅԱՆՑ

(Կենսագրական տեղեկություններ)

Ուսուցիչ, գրականագետ, քարոզիչ էմմանուել քահանա Նազարյանցը, (ավագանի անունով Հովհաննես), ծնվել է 1852 թվականի մարտի 20-ին Ղարաքիլիսայում (այժմյան Վանաձոր) բանվորական ընտանիքում: Նրա հայրը՝ Պետրոսը, որը քարհատ էր, աշխատանքի բերումով ընտանիքով տեղափոխվում է Թիֆլիս: Ահա այս բարեպատեհ տեղափոխությունը կարևոր նշանակություն է ունենում մանուկ Հովհաննեսի հետագա կյանքի համար: Նա իր կրթությունն ստանում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտում է 1870 թվականին: Ներսիսյան դպրոցում ուսումը վերջացնելուց հետո Հովհաննեսն իրեն նվիրում է ուսուցչական գործունեությանն ու գրականությանը: 1880 թվականին, երբ Գևորգ Գ Ամենայն հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո տեղի է ունենում ուսահայոց ուսուցչական առաջին ընդհանուր ժողովը, որի նպատակը հայկական դպրոցների բարեկարգությունն էր, Հովհաննեսն այդ ժողովի քարտուղարն էր և կազմում է ժողովի գործունեության տեղեկագիրը և առանձին գրքով հրատարակում այն<sup>1</sup>:

Ներսիսյան դպրոցում կուտակած իր գիտելիքները Հովհաննեսը փոխանցում է ազգային տարբեր կրթական հաստատությունների սաներին՝ այդ տեղերում դասավանդելով հայոց լեզու և հայոց պատմություն առարկաները: Ութ տարի պաշտոնավարում է Թիֆլիսի հայ օրիորդաց Սբ. Գայանյանց միջնակարգ ուսումնարանում, երկու տարի՝ Վերին Ագուլիսի և Սիմֆերոպոլի երկսեռ ծխական դպրոցներում, ապա մինչև քահանա ձեռնադրվելը (1893 թ.) Թիֆլիսի ծխական դպրոցում: «Ես ուր եղել եմ, ամենուրեք սիրով անձնովին նվիրվել եմ եկեղեցական ժամերգությունների

---

<sup>1</sup> Հովհաննես Նազարյանց, Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմությունը, Թիֆլիս, 1883:

և եկեղեցական գիտելիքների ուսումնասիրությունը, և ուսուցչական պաշտոնավարություն այդ երկար ժամանակամիջոցում պատրաստվել են հոգևոր կոչումն ընդունելու»<sup>1</sup>: 1885 թվականից եկեղեցական սպասավորություն է անցնում Թիֆլիսի Հավլաբար թաղամասի Սբ. Գևորգ էջմիածնական եկեղեցում: Այնուհետև 1889 թվականի փետրվարի 18-ին ձեռնադրվում է սարկավագ: Իսկ 1893 թվականի փետրվարի 2-ին ձեռնադրվում է օծվում է քահանա՝ Հավլաբարի Սբ. Կարապետ եկեղեցում ծառայելու համար: Իր հովվական դժվարին ծառայությունը զուգահեռ էմմանուել քահանան շարունակում է զբաղվել ուսուցչական և գրական գործունեությամբ:

1899 թվականի վերջերին Մոսկվայի հայ համայնքում երկրորդ քահանա ունենալու հարց է բարձրացվում: Չնայած կային բազում թեկնածուներ՝ հարցը փակվում է էմմանուել քահանայի ընտրությամբ, որը Մոսկվա է ժամանում 1901 թվականի հունվարի 2-ին: «Զիջողություն առ դիմացինը, վեհանձնություն վերջինիս կամա թե ակամա սխալների նկատմամբ, հարգանք նրա իրավունքներին, քաղաքավարություն, համբերատարություն, անհիշաչարություն, սեփական սխալների խոստովանություն – ահա թե ինչի կրող-ավետող էր Մոսկվայի նորընտիր հովիվ էմմանուել քահանա նազարյանցը»<sup>2</sup>: Այսպիսի հատկանիշների շնորհիվ շատ կարճ ժամանակաընթացքում նորանշանակ էմմանուել քահանան լայն ժողովրդականություն է վայելում Մոսկվայի հայկական համայնքում: Այստեղ նա դարձյալ շարունակում է իր մանկավարժական, գրական և հրապարակախոսական գործունեությունը, ինչպես նաև թղթակցությունը Մոսկվայի և Թիֆլիսի հայ պարբերականներին, մասնավորապես «Մշակ» օրաթերթին, որի ընթերցողներին մինչև իր մահը մշտապես ուղարկվող իր նամակներով ու հեռագրերով տեղակացնում էր Մոսկվայի հայության հետ կապված յուրաքանչյուր նորությունը: 1912 թվականի հոկտեմբերի 12-ին Մոսկվայում էմմանուել քահանան կնքում է իր մահկանացուն վաթսուհինգ հասակում: 1959 թվականի հոկտեմբերի 2-ին նրա կրտսեր որդին՝ բժիշկ

<sup>1</sup> Ազգային արխիվ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 7830:

<sup>2</sup> Ա. Շահնգարյան, էմմանուել քահանա Նազարյանցի դագաղի առաջ, «Հովիտ» ազգային, հասարակական, գրական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1912, թիվ 42, էջ 671:

Պարույր Նազարյանը, Մայր Աթոռի մատենադարանին է նվիրում հոր գրադարանի մի շարք արժեքավոր գրքեր և ձեռագրեր:

Էմմանուել քահանան թողել է բավական զգալի գրական ժառանգություն՝ թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական: Դեռևս իր ուսուցչական գործունեության ժամանակ նա կազմել և հրատարակել է հայոց լեզվի դասագիրք՝ «Ընտիր հատվածներ» վերնագրով, և ընդհանրապես լեզվի ուսումնասիրությանը վերաբերող մի քանի աշխատություններ: Կազմել է նաև 1887-1894 թվականների օրացույց, որը «տեղական բոլոր օրացույցների մեջ ամենից աչքի է ընկնում յուր բովանդակության ճոխությունով»<sup>1</sup>: Հրատարակել է երեք հատորով «Անեկդոտներ» ժողովածուն, որն օտար անեկդոտների հետ միասին պարունակում է նաև հայկական կյանքից վերցված մանրապատմւներ: Իսկ նրա թարգմանած և տպագրած գործերից ամենաարժեքավորը պրոֆեսոր Ա. Մենզլիսի «Կրոնի պատմությունը» գործն է: Էմմանուել քահանայի կրոնական բովանդակության գրքերից հայտնի են «Հիսուս Քրիստոսի մկրտությունը», «Չարչարանքի շաբաթը» և «Պարզ քարոզներ» քառահատոր ժողովածուն: Այս «Պարզ քարոզների» գրքի առաջին հատորը տպագրվել է 1895 թվականին, երկրորդն ու երրորդը՝ 1896-ին, և չորրորդը՝ 1897 թվականին Վաղարշապատում:

Էմմանուել քահանայի այս քարոզները, որոնք նա տարբեր առիթներով խոսել է Քիֆլիսի հայ հավատացյալ ժողովրդի առջև, այժմ էլ պահպանում են իրենց կենդանի ուժն ու ներգործությունն ընթերցողի վրա: Յուրաքանչյուր նախադասություն կարդալով կարծես թե զգում ես հեղինակի գրույցը քեզ հետ, որը ցանկանում է հանրամատչելի կերպով վերհանել մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերի մեջ թաքնված իմաստությունն ու ճշմարտությունը: Հատկապես հետաքրքրություն են ներկայացնում քարոզների մեջ եղած խրատական պատմություններն ու օրինակները, որոնցով էլ ավելի տպավորիչ է դառնում քարոզչի անկեղծ խոսքի ազդեցությունը:

Այս քարոզների գրքի ներկա հրատարակությունը որոշակիորեն տարբերվում է նախորդից ուղղագրական փոփոխությամբ, դասական ուղ-

---

<sup>1</sup> Գրախոսություն, «Մուրճ» գրական, հասարակական և քաղաքական ամսագիր, Թիֆլիս, 1891, թիվ 11, էջ 1398:

ղագրությունը դարձվել է ներկայիս՝ արևելահայերեն ուղղագրության: Քարոզներում օգտագործված որոշ բառեր, որոնք իրենց իմաստով անհասկանալի կլինեն այսօրվա հայ քրիստոնյային, տողատակով տրվել են դրանց բացատրությունները, որպեսզի պահպանվի գրքի «Պարզ» կոչված անվանումը, այսինքն՝ խոսքի մատչելիությունն այժմյան ընթերցողին: Սուրբգրային մեջբերումները, որոնք հեղինակը միշտ բերել է գրաբարով, փոխարինվել են Ս. Գրքի արևելահայերեն թարգմանությամբ և արդի ուղղագրությամբ՝ ըստ 1994 թ. հրատարակության<sup>1</sup>:

Տ. Վաչե արեղա Սկրոչյան

---

<sup>1</sup> Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր Կտակարանների, արևելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին և ՀԱԸ, 1994:



## ԱՅՍ ԳՐՎԱԾՔԻՍ ԿԱՐԴԱՅՈՂՆԵՐԻՆ

### Միրելի՛ ընթերցող

Ամենքիս հայտնի է, որ մենք հայ քրիստոնյա ենք, այսինքն՝ Քրիստոսին հավատացող ու հետևող: Հավատալով, այո՛, հավատում ենք, որովհետև առանց Քրիստոսի չկա հույս, չկա մյուս կյանք, չկա երկինք, չկա Աստված, այլ միայն փոշի՝ արտասուքով թրջված: Հավատում ենք, որ Նա Աստված է և Աստծո Որդի: Հավատում ենք, որ Նա մեր փրկության համար թողեց Իր Հոր ծոցը, երկնքի անհասանելի բարձրությունից խոնարհվեց, երկիր եկավ, Իր աստվածություն հետ մեր մարդկությունը խառնեց, մեզ եղբայր դարձավ, որ մի օր մեզ էլ բարձրացնի, Աստծո որդի շինի: Դրա համար Նա՝ մարդացած Աստվածը, ամբողջ երեք տարի քարոզեց, խրատեց Իր ժամանակվա մարդկանց, սովորեցրեց նրանց այն ամեն բանը, ինչ որ հարկավոր էր նրանց և մեզ՝ ամենիս համար և բաց արեց մեր առաջ այն ճանապարհը, որով պետք է գնանք հավիտենական կյանքը, այն երանելի կյանքը, «որ մարդուս աչքը չէ տեսել, ականջը չէ լսել և ոչ ոքի մտքովն էլ չէ անց կացել, մի խոսքով՝ այն երջանիկ կյանքը, որ Աստված պատրաստել է Իր սիրած մարդկանց համար»:

Ասացի հավատում ենք այս բոլորին, բայց միայն հավատալը բավական չէ. պետք է և հետևենք, այսինքն՝ ինչ որ մեր Տեր Հիսուս Քրիստոս խոսքով քարոզել է, աշխատել է մեր ականջներումը հալել, այն մենք գործքով պետք է կատարենք: Եթե ոչ, դատարկ հավատն առանց գործքի մեռած հավատ է: Առաքյալն էլ այսպես է խրատում. «Ինչպես որ,– ասում է,– մարմինն առանց հոգու մեռած է, այնպես էլ հավատն առանց գործքի մեռած է»: Բայց մենք ինչպե՞ս կարող

ենք կատարել Քրիստոսի ասածները, եթե չգիտենանք, թե նա ինչեր է ասել: Նրա ասածներն էլ վաղուց կմոռացվեին, եթե Իր աշակերտները չգրեին Սուրբ Հոգով: Նրանց գրածները հետո մեր սուրբ հայրապետերը հավաքեցին մի գրքի մեջ, որին անվանեցին Ավետարան, այսինքն՝ մեկ այնպիսի գիրք, որի մեջ մեր փրկության համար «ավետիք» կա, մեզ «աչքալույս» կա:

Աշխարհիս երեսին լաված չէ մեկ այնպիսի ճշմարիտ, իմաստուն խոսք, որ գրված չլինի Ավետարանում: Եվ Ավետարանը չի կարելի կարդալ ուրիշ գրքերի պես: Այն կարդալիս պետք է մոռանաս աշխարհը և ինչ որ կա նրա մեջ, պետք է փակես աչքերդ՝ չորս կողմիդ բաները չտեսնելու համար, պետք է կալնես<sup>1</sup> ականջներդ՝ դրսի ձայները չսեղու համար: Մարմնիդ աչքերը փակելուց հետո պետք է լայն բաց անես հոգուդ աչքերը, ինքդ պետք է մտնես քո մեջ և բոլորովին ուշք ու միտք դարձած՝ պետք է խրվես, մտնես նրա խոսքերի, նրա մտքերի մեջ, ինչպես այն մարդը, որ մտնում է ծովի հատակը՝ մարգարիտներ փնտրելու համար: Ավետարանի ամեն մի խոսքը մի ահագին խրատ, մի անգին մարգարիտ է նրա գինն իմացողի համար: Ավետարանի խոսքը մեղրից ավելի քաղցր է, կարագից ավելի աննդարար: «Ճաշակեցե՛ք և տեսե՛ք ինչպես քաղցր է Տերը»: Հարկավոր չէ, որ անպատճառ Ավետարանի բոլոր խրատներն անգիր գիտենանք, բավական է, որ դրանցից միայն մեկի գորուծյունն իմանանք, որ կարողանանք մեր կյանքը Քրիստոսի ուզածի պես կառավարել այս աշխարհում: Այդ խրատների ծովից մի քանի կաթիլ ջուր էլ որ վեր առնենք, մեզ բավական է: «Ավետարանի խոսքերը ճրագ են մեզ համար և լույս են տալիս մեր ճանապարհներին»: Երբ քահանան կարդում է Ավետարանը, ինքը չէ, որ խոսում է, Աստված է խոսում՝ «Աս է Աստուած»: Այս է պատճառը, որ ժողովուրդը ոտքի է կանգնում՝ Աստծուն լսելու համար:

---

<sup>1</sup> Փակել:

Ավետարանն ամեն օր կարդացվում է եկեղեցում, բայց ամեն-քը չէ, որ ականջ են դնում, լսում, լսողներից էլ տասից մեկը հազիվ է հասկանում, հասկացողներից շատ քչերն են մտքում պահում, մտքում պահողներից էլ հարյուրից մեկը հազիվ է լսածն ու պահածը կատարում: Սրա պատճառն այն է, որ «աշխարհի հոգսերը, փառք ու պատվի հետևից ընկնելը» մեզ այնպես են կապել, կաշկանդել, որ մենք, փոխանակ այս աշխարհի տերը դառնալու, սրա ծառան, սրա ստրուկն ենք դարձել: Բոլորովին մոռացել ենք, որ մենք այնքան այս հողեղեն աշխարհի համար չենք ստեղծված, ինչքան մեկ ուրիշ՝ հոգեղեն աշխարհի համար: Բայց մեր հոգին դատարկ է, մեր սիրտը ցամաքած, այդ պատճառով Քրիստոսի այն խոսքերը, որ պետք է մեր հոգին թևավորեին, մեր սրտի թելերը թրթռացնեին, մեր սրտի պատերին հասնելիս այնպես են սառչում, կորչում, ինչպես հրացանից արձակված գնդակը սառչում, կորչում է ավազոտ անապատում: Եթե մենք այդ խոսքերի միտքը լավ հասկանանք, եթե մենք դրանց տեղ տանք մեր սրտում, այդ ժամանակ դրանք կմտնեն մեր սիրտն ու հոգին, ինչպես անձրևի կաթիլները ծծվում են դաշտերի կոշտացած հողում:

Հիսուս Քրիստոս շատ ու շատ ընտիր խոսքեր է ասում Իր Ավետարանի մեջ՝ մեկը մյուսից ավելի իմաստուն, մեկը մյուսից ավելի հոգեշահ խոսքեր: Այնպես որ եթե մեկն ուզենա դրանցից ամենալավն ու գեղեցիկն ընտրել, ամենալավն ու գեղեցիկը միշտ ընտրելու կմնա, որովհետև Նրա բոլոր խոսքերն աստվածային խոսքեր են: Նրա ամեն մի խոսքն այն սանդուղքի մի ոտքն է, մի աստիճան, որի մի ծայրը երկնքում է, մյուսը՝ երկրում: Նրա ամեն մի խոսքը մեզ մի աստիճանով մոտեցնում է երկնքին, և բոլորը միասին մեզ մտցնում են երկինք ու երկնային արքայություն՝ թողնելով, որ վայելենք այնտեղ հավիտենական կյանքը: Երբ մեկ անգամ Հիսուս պարզապես ասաց Իր աշակերտներին, որ Իր թագավորությունը երկնքում պետք է լինի, ոչ թե երկրում, ինչպես իր աշակերտներից ոմանք էին կարծում, նրանցից շատերը թողին Նրան ու հեռացան,

այն ժամանակ իր մոտ մնացող աշակերտներին հարցրեց. «Մի՞թե դուք էլ եք կամենում գնալ»: Սրան Պետրոս առաքյալը պատասխանեց. «Տե՛ր, դու հավիտենական կյանքից ես խոսում. մենք ո՞ւմ մոտ պիտի գնանք»: Այդպես էլ մենք այդ սանդուղքի գլուխը հասնելու համար պետք է մնանք Հիսուսի մոտ:

Բայց Քրիստոս իր սբ. Ավետարանի մեջ մեզ եղբայրաբար խրատելով և ընկերաբար համոզելով չէ բավականանում: Այլ նա ճշմարիտ ուսուցչի պես զգուշացնում է մեզ, ցույց է տալիս, որ մենք վերջը պատասխան պետք է տանք նրան իր տված խրատները մտքերիս մեջ չպահելու և իր կամքը չկատարելու համար: «Այն խոսքերը,– ասում է նա,– որոնք ուզում եմ այս աշխարհում հալել ձեր ականջների մեջ, հենց այդ խոսքերը ձեզ կդատեն ու կդատապարտեն մյուս աշխարհում, որտեղ ես, իբրև դատավոր, հաշիվ կպահանջեմ ձեզանից»:

Այս պատճառով ահա ես այսուհետև քեզ հետ խոսելու եմ ավետարանական խրատների մասին, որ տեսնես, թե ինչ իմաստովիշյուն կա թաքնված Հիսուս Քրիստոսի ասած պարզ ու հասարակ խոսքերի մեջ:

*Էմմանուել քհն. Նազարյանց*

# ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

## ԲԱՆ Ա

«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց, որովհետև այդ իսկ են Օրենքն ու մարգարեները»:  
(Մատթ. Է:12)

*Մենք մեր կյանքում շատ բաներ ենք անում, բայց կա այնպիսի բան, որ պետք է անենք և չենք անում, կա այնպիսի բան էլ, որ չպետք է անենք, բայց անում ենք: Մենք ո՛չ մեր անելու բաների օգուտն ենք հասկանում և ո՛չ էլ շանելու բաների վնասը և շատ անգամ լավը վատի տեղ ենք ընդունում, վատը՝ լավի: Սրա պատճառն այն է, որ մեր բոլոր անելիքներն անում ենք ոչ թե այնպես, ինչպես մեր Տեր Հիսուսն է կամենում, այլ ինչպես մենք ենք հասկանում:*

*Մեզանից հազարավոր տարիներ առաջ Իսրայելացի ժողովուրդն էլ՝ երեսն Աստծուց դարձրած, ամեն բան իր հասկացողությամբ էր անում, որ Աստված նրան խրատելու համար մեկը մյուսի հետևից մարգարեներ ուղարկեց: Այդ մարգարեների ձայնը կտրվեց նրանց խրատելով, բայց նրանք մագի շափ էլ չուղղվեցին: Եկավ Քրիստոս և ամեն բան գտավ տակնուվրա եղած, ժողովրդի բարքերը փչացած, Աստծո պատվիրանները մոռացված, սուտն ու կեղծիքը սրտերում արմատացած:*

*Արդյոք Քրիստոս, որ մեզ մոտ գա, իսրայելացիներից ավելի լա՞վ կգտնի մեզ: Մեզ, որ Իր Ավետարանի լույսով լուսավորված և Իր սուրբ արյունով մեղքի գերությունից ազատված ենք: Ինչո՞վ ենք մենք նրանցից ավելի: Մեր ո՞ր գործով կարող ենք պարծենալ նրանց առաջ: Ոչ մի գործով: Մենք էլ մեր երեսն այնպես ենք դարձրել Քրիստոսից, ինչպես իսրայելացի ժողովուրդը՝ իր Աստծուց:*

«Այս ժողովուրդը,— ասում էր Հիսուսը,— շրթունքներով, դատարկ լեզվով է պաշտում Ինձ, իսկ իրենց սրտերը շատ հեռու են ինձնից»։ Այսօր՝ 1900 տարի անցնելուց հետո, այս նույն խոսքերը պակաս են սազում մեզ։ Մեր բերանում անդադար կրկնվող «Աստված, Քրիստոս, Խաչ, Ավետարան» խոսքերը որևիցե նշանակութուն ունե՞ն, հաստատո՞ւմ են, որ մենք քրիստոնյա ենք։ Ինչի՞ց է երևում մեր քրիստոնեությունը։ Մի՞թե նրանից, որ տարին մեկ-երկու անգամ եկեղեցի ենք գնում, երեսներին խաչ հանում, ծուներ դնում, մոմ վառում, պաս պահում։

Մենք մեր ո՞ր գործով փառավորեցինք Հիսուսի անունը։ Նրա տված հազար ու մի խրատներից ո՞րը մեր ականջին օղ շինեցինք, նրա քարոզած ճշմարտություններից ո՞րը մեր կյանքի համար կանոն դարձրինք։ Մեր ո՞ր պակասություններն ուղղեցինք, մեր ո՞ր թուլություններին հաղթեցինք։ Ոչինչ չենք արել, ոչինչ չենք սովորել։ Դեռ ավելին ասեմ, մենք այսօր հրեաներից էլ ենք հետ մնացել։ Ինչպե՞ս։ Նրանց քարոզեցին 16 մարգարեներ, մեզ քարոզեցին 12 առաքյալներ, 72 աշակերտներ, հարյուրավոր հայրապետեր, հազարավոր նահատակներ։ Մենք Ավետարան ունենք, նրանք չունեն։ Նրանք Քրիստոսին խաչեցին չհասկանալով, մենք խաչում ենք Նրան հասկանալով։ Զէ՞ որ «Ում շատ է տրված, նրանից շատ էլ կպահանջվի»։

Թե՛ նրանք, թե՛ մենք օրենքի հոգին թողել, նրա տառը, նրա խոսքն ենք ձեռք առել։ Թե՛ նրանք, թե՛ մենք եկեղեցի ենք գնում ձևի համար, աղոթում ենք ձևի համար, պաս ենք պահում ձևի համար։ Ավետարանը մեզ ասում է. «Աղքատին պետք է ողորմություն տանք», մենք չենք տալիս, եթե տալիս էլ ենք, ուրիշներին ցույց տալու համար ենք տալիս։ Ավետարանը մեզ ասում է. «Պետք է աղոթք անենք»։ Մենք չենք անում, եթե աղոթում էլ ենք, միտքներս ոչ թե մեր աղոթքի, մեր խնդրվածքի վրա է, այլ եկեղեցուց դուրս։ Ավետարանը մեզ ասում է. «Պետք է պաս պահենք»։ Մենք պաս չենք պահում, եթե պահում էլ ենք, միայն կերակրեղենի պասն ենք պահում։ Մենք տարին մի անգամ չենք խոստովանում, եթե խոստովանում էլ ենք, ոչ թե մեր

մեղքերն ենք խոստովանում, այլ քահանայի ասածներն ենք կրկնում: Մենք չենք ճաշակում, եթե ճաշակում էլ ենք, ոչ թե այն պատճառով, որ ճաշակելու մի առանձին կարիք ենք զգում, այլ որ ուրիշներն էլ են ճաշակում: Սրանից ի՞նչ է դուրս գալիս. այն, որ մենք շատ քիչ ենք գանազանվում կեղծավոր փարիսեցիներից: Ոչ մի բան չենք անում հասկանալով, ամեն բան միայն ձևի համար ենք անում:

Բայց եթե մենք մարդ ենք կատարյալ, եթե քրիստոնյա ենք ճշմարիտ, մեկ մտածենք, թե ինչի համար ենք աշխարհ եկած, ունե՞նք մի բարձր նպատակ, հասնո՞ւմ ենք այդ նպատակին: Մի՞թե մենք նրա համար ենք աշխարհ եկել, որ ամեն մեկս միայն մեզ համար մտածենք, մեր ապրուստը հոգանք, մեր կյանքն ապահովենք: Մեզ պես հազարավոր մարդկանց հետ ենք ապրում ու նրանց մեջ պատվում: Մի՞թե դեպի այդ մարդիկը մենք ոչ մի պարտք չունենք կատարելու: Հայր ենք՝ ընտանիքի մեջ, ազգակից ենք՝ մոտիկ շրջանի մեջ, ընկեր ենք՝ մտերիմների մեջ, անդամ ենք՝ հասարակության մեջ, որդի ենք՝ հայրենիքի մեջ, մասն ենք՝ մարդկության մեջ: Մի՞թե ոչ մի կապով կապված չենք այս ամենքի հետ, ոչ մի պարտք չունենք կատարելու սրանց նկատմամբ:

Հնարավոր է, որ դու ինձ հարցնես, թե այդ ինչ պարտքեր են, որ դրված են ինձ վրա: Այդ պարտքերը, սիրելի՛ս, գրված են Ավետարանի ամեն մի էջում, գրված են նրա ամեն մի տողում: Այստեղ դժվարն այն է, որ մենք չենք կարող բոլորը մի տեղ հավաքել ու միշտ մեր աչքի առաջն ունենալ: Այս բանը շատ լավ գիտեր ինքը՝ մեր պարտքերը հասկացնող Հիսուսը: Նա շատ լավ գիտեր, որ մենք, իբրև հողեղեն արարածներ, աշխարհի ունայն հոգսերի մեջ խրված մարդիկ՝ շուտ կմոռանանք Իր տված խրատները: Այս պատճառով նա Իր ասածներն ու ասելիքը հավաքեց այս մեկ խրատի մեջ. «Այն ամենը, ինչ որ ուզում եք, որ ուրիշները ձեզ անեն, դուք էլ այն արեք նրանց»: Ի՛նչ կարճ խոսք, բայց ի՛նչ երկար միտք: Մեկ միտք, որ ոչ թե մարդիկ, այլ ամբողջ ազգ կարող է ոտքի կանգնեցնել, ոչ թե տներ, այլ ամբողջ աշխարհ կարող է կառավարել: Ահա երկու խոսք,

որ ամեն մարդ, ամեն հայ քրիստոնյա կարող է իր կյանքի կանոնը շինել: Դա մի այնպիսի խոսք է, որ միշտ կզարթնեցնի մեր թմրած խիղճը, մի խոսք, որ միշտ կկակղեցնի մեր քարացած սիրտը, կտաքացնի մեր սառած հոգին: Այս կարճ խոսքը մի նեցուկ է մեզ համար այն ամեն ժամանակ, երբ մեր ոտքը սահելու լինի: Սա մի վառած լապտեր է, որ կլուսավորի մեր կյանքի դարուփոս ճանապարհները: Այս կարճ խոսքը մի ազդարար ձայն է, որ ամեն հարկավոր ժամանակ մեզ հիշեցնում է մեր պարտքը: Կարելի է դու ուզում ես ավելի մոտիկից տեսնել այդ խոսքի ուժը. ահա ցույց տամ քեզ:

Տե՛ս, այս մարդն ապրելու համար հաց չունի, իսկ դու այսօր քո սեղանի վրա մի քանի տեսակ կերակուր ես ունենալու: Հիմա դու մոռացիր քո լիությունը և մտի՛ր նրա չքավորության մեջ, այնպե՛ս համարիր, թե ցամաք հացի կարոտը դու ես, Աստծո բարությամբ լցված սեղանի տերը նա է: Ինչպե՛ս է, լա՛վ օրի ես, դո՛ւր է գալիս քեզ այդ թշվառությունդ: Տե՛ս, մեկ օր չէ, երկու օր չէ, ամբողջ կյանքդ կնոջդ ու որդեկերանցդ հետ այդպիսի սև օրում պետք է անցկացնես: Ի՞նչ է, շա՛տ նեղ է տեղդ: Ի՞նչ կկամենաս, որ այն առատ սեղանի տերը քեզ անի: Գիտեմ, սիրտդ շատ բան կուզի, բայց այս անգամ քոյդ էլ կբավականանաս: Անկասկած, դու կուզես, որ նա մի կտոր հաց և մի բաժին տաք կերակուր քեզ տա: Հացի Տերը՝ աշխարհի համար առատ սեղան բաց անող Աստված, աչքը քեզ վրա է գցել: Լիություն ու բարություն բաժանող Հիսուս ասում է քեզ. «Տեսա՞ր թշվառությունը, դե՛հ հիմա տո՛ւր այդ խեղճին իր ուզածը, էլ մի՛ սպասիր, որ նա ձեռքը դեպի քեզ մեկնի, կարելի է՝ ամաշում էլ է. թե՛ նրան տված, թե՛ Ինձ, միևնույն է»:

Տե՛ս, այս մարդը, այս ձյուն-ձմեռ օրով, մարդուս թուքը սառեցնող ցրտին, բարակ ու ցնցոտի հագուստի մեջ կծկված, ձեռքերը բերանով տաքացնելով, ով գիտե՛ մի կտոր փայտի, մի պարկ խուշուրի՝<sup>1</sup> հետևից է ման գալիս՝ իր խուցը տաքացնելու: Իսկ դու, տաք

---

<sup>1</sup> Օառերից թափված չոր ձյուղեր:



սենյակումդ, փափուկ բազմոցիդ թեկն ընկած, ստանալիք փողերիդ հաշիվն ես տեսնում: Թող Աստված մեկդ հազար անի, բարով վայելես: Մի՞տո՞ք է առաջվա կյանքդ, ո՞վ էր քեզ մարդատեղ դնում, երեսիդ նայողն ո՞վ էր, պարտքով ապրելով հոգիդ դուրս էր գալիս: Ոչինչ էիր, ահագին կարողութեան տեր դարձար: Դու վայելում ես Աստծո ստեղծած կրակի ջերմությունը՝ մեկը տասով, մեկը հարյուրով, դու ծիծաղում ես դրսի սառնամանիքի վրա և վառարանիդ փայտն ավելացնում: Իսկ դրսում սառուցցով պատած աշխարհը սառեցնում է այդ թշվառի լյարդն ու թոքերը: Հիմա մի րոպե քո վիճակը փոխիր դրա վիճակի հետ: Ի՞նչ դառն է, ի՞նչ անտանելի՞ մերկ գետին, սառած պատեր, անկրակ օջախ, տկլոր-չփլախ երեխաներ, տարակուսած մայր, անօգնական հայր: Իսկ ձյունը բրդում է ու բրդում<sup>1</sup>: Ասա՛ տեսնե՞մ՝ ի՞նչ կկամենաս, որ այն մեծատունը քեզ անի: Անկասկած կասես՝ ինչ լավ կլինեն, որ այս բախտավոր մարդը մի քիչ հին-մին շոր տար ինձ, կամ մի քանի կտոր փայտ: «Տո՛ւր դրան, տո՛ւր,– ասում է Հիսուս,– տո՛ւր ինչի որ կարոտ է, որ դրա մերկությունը ծածկես, որ դրա սառած երեխաներին մի քիչ շնչի բերես, ես այնպես կհամարեմ, թե Ինձ ես հագցնում, Ինձ ես տաքացնում»:

Ահա այս ողորմելի մարդը, իր առաջվա բարձրությունից ընկած, հարստությունից զրկված, այսօր կրճքի տակից ծանր հառաչանք, քթից մուխ հանելով՝ իր սև օրն է ողբում: Ամբողջ օրը պարապ՝ քաղաքի փողոցներն է շափում: Առաջվա բարեկամների ու ծանոթների երեսին չի կարողանում նայել, ամենքի մոտ կուչ է եկել, փոքրացել, գետնին հավասարվել: Մի քանի կոպեկ է ուզում՝ մի գործի կպչելու, չի ճարում: Իսկ դու հազարդ հազարի վրա դրած բանկ ես շտապում և այդ թշվառի մոտով անցնում ես, իբրև թե դրան ամենևին չես նկատել: Չե՞ս հիշում՝ քանի՛-քանի՛ ճոխ սեղանների շուրջ դրա «կենացն» ես առաջարկել: Ահա նա, վա՛յ դրա «կյանքին»: Մի՛ շտա-

---

<sup>1</sup> Խոշոր փաթիլներով տեղալ:

պիր, կանգնիր մի ընդհանուր, քեզ դրա տեղը դիր: Ի՞նչ կուզեիր, որ այդ վաղածանոթ մեծատունը քեզ աներ: Երևի դու կկամենայիր, որ նա քեզ իր գործերից մեկի վրա կարգեր, թեկուզ ամենահասարակ գործի վրա: Կուզեիր, որ քեզ ձեռք տա, սիրտ տա, հոգի տա, ընկած տեղիցդ բարձրացնի, որ քո փրվող տունը կանգուն մնա, որ ձեռքիդ նայող ընտանիքդ մի քիչ շունչ առնի: Ուրեմն «Դու էլ նրան այդպես արա»,— ասում է քեզ Հիսուսի այս փրկարար խրատը:

Տես, մի խումբ ցածր մարդիկ, նախանձեղով այս ազնիվ մարդու բարի անվանը, նրան սև գույներով են ներկում իր իշխանավորի առաջ՝ նրա աչքից զցելու համար: Քո խոսքը գին ունի իշխանավորի առաջ, և հեռու կանգնած թամաշա ես անում<sup>1</sup>: Դիր քեզ նրա տեղը, որ դուր բամբասվում է: Ի՞նչ կկամենայիր, որ նա քեզ աներ: Անկասկած, դու կկամենայիր, որ նա քեզ պաշտպաներ իշխանավորիդ առաջ, կուզենայիր, որ քո մաքուր, անբիծ անունն իր բարձրության վրա մնար: Ուրեմն դու էլ նրան այդպես արա: Ահա ամեն այսպիսի ժամանակ դու և քեզ հետ աշխարհն իր վրա կզգա Հիսուսի այն մեծ խրատի գորությունը, որ ասում է. «Ինչ որ ուզում եք, որ ուրիշները ձեզ անեն, դուք էլ այն արեք նրանց»:

Բայց այս խրատն ուրիշ խրատների նման չէ: Սա երկասյրի թուր է. աջ էլ է կտրում, ձախ էլ: Եթե այս խրատը հակառակ մտքով հասկանանք, էլի միևնույն օգուտները կստանանք: Մեզ շրջապատող մարդկանցից դեպի մեզ կա՛մ օգուտ է գալիս, կա՛մ վնաս: Մեկը ցանկանում ենք, մյուսը չենք ցանկանում: Որն էլ որ գալու լինի մեզ վրա, ինչին որ կարոտ լինեն ուրիշները, ինչից որ ազատվել ուզենան, այս խրատը միշտ օգնության կհասնի ամենքին: Ահա այսպես. եթե այս խրատը հակառակ մտքով քննենք, կստանանք մյուս, սրան հավասար խրատը. «Այն ամենը, ինչ որ չեք ուզում, որ ուրիշները ձեզ անեն, դուք էլ մի՛ արեք նրանց»: Դու չես կամենա, որ ուրիշը քեզ զրկի, տանջի, հալածի, չես ուզի, որ ուրիշը քեզ խաբի, անպատ-

---

<sup>1</sup> Դիտել, նայել

վի, դավաճանի, «Դու էլ,– ասում է քեզ միևնույն խրատը,– ուրիշին մի՛ գրկիր, մի՛ տանջիր, մի՛ հալածիր, մի՛ խաբիր, մի՛ անպատվիր, մի՛ դավաճանիր»:

Ահա թե, սիրելի՛ս, ինչ պարտքեր են դրված քեզ վրա, ինձ ու ամենքի վրա: Այս պարտքերը դրված են թե՛ առաջին հարուստի և թե՛ վերջին աղքատի վրա: Ոչ ոք ստեղծված չէ հանուն այն բանի, որ միայն իր օգուտի համար ապրի: Ոչ մեկս այն պատճառով չենք զարդարված բանականության պսակով, որ մեր կյանքն օգուտ չբերի ուրիշներին: Եվ եթե մեր կյանքն օգուտ չի բերում ուրիշներին, նշանակում է մենք իբրև մարդ մեռած ենք: Ինչպես որ կան կենդանիներ մեռածների մեջ, այնպես էլ կան մեռածներ կենդանիների մեջ: Երբ որ մենք կարողանում ենք բարին զանազանել չարից, ճշմարիտը՝ ստից, դրանով մենք երկրի վրա պարտական ենք մնում մարդու առաջ, երկնքում՝ Աստծո առաջ: Եվ եթե մենք, այսքանը հասկանալով, չօգնենք միմյանց, այդ ժամանակ մարդկային ազգը շուտով կվերանա, կջնջվի աշխարհի երեսից, և աշխարհս կդառնա առաջվա պես՝ «երկիր աներևույթ և անպատրաստ»:

Սկսած այն ուրախ ընդունից, երբ մայրն իր մանկանը փաթաթում է խանձարուրում մինչև այն տխուր ընդունի, երբ մեկի ձեռքը մեռնողի երեսից սրբում է մահվան քրտինքը, այդ ամբողջ ժամանակ մեզնից ոչ ոք չի կարող աշխարհում ապրել առանց միմյանց օգնելու: Այս պատճառով ամեն մարդ, ով կարոտ է օգնության, ոչ թե պետք է խնդրի, աղաչի, այլ իրավունք ունի օգնություն պահանջելու ամենքից: Եվ ով որ կարող է օգնություն հասցնել, բայց չի հասցնում, նա մեղավոր է, նա վատ զինվոր է պատերազմի դաշտում: Առաքյալն էլ է ասում. «Ով որ գիտե բարին, բայց չի անում, նրա համար մեծ մեղք է»: Իսկ սրբակրոն վարդապետերից մեկն ավելի հեռուն է գնում. «Մարդիկ,– ասում է,– պետք է դժոխքում տանջվեն ոչ թե միայն այն չար գործերի համար, որ արել են, այլև այն բարի գործերի համար, որ կարող էին անել, բայց չեն արել»:

Հիսուս Քրիստոս, երբ տվեց մեզ այս խրատը, թե. «Այն ամենը, ինչ որ ուզում եք, որ ուրիշները ձեզ անեն, դուք էլ այն արեք նրանց», սրանով չվերջացրեց իր խոսքը, այլ դրա մեծ նշանակությունը ցույց տալու համար ավելացրեց. «Որովհետև հենց սրա մեջ են պարունակված բոլոր օրենքներն ու մարգարեների գրվածքները»: Ի՞նչ է ուզում ասել սրանով Հիսուս: Բոլոր օրենքներն ու մարգարեները ինչպե՞ս են մտել այդ երկու խոսքի մեջ: Մեր զարմանքն ինչքան ավելի պետք է լինի, երբ մտածենք, որ օրենքներն ու մարգարեություններն այն բոլոր խոսքերը, մտքերն ու խրատներն են, որ Աստված Իսրայելի ժողովրդին ասել ու տվել էր իր ուղարկած մարգարեների բերանով: Կարճ ասենք, օրենքներն ու մարգարեություններն ամբողջ Աստվածաշունչ Սուրբ Գիրքն են: Իսկ ամբողջ Սուրբ Գրքի միտքն ամփոփված է Աստծո՝ մեզ տված տասը պատվիրանների մեջ: Թե՛ այդ պատվիրանները կատարենք, թե՛ Հիսուսի այս խրատը, միևնույն է:

Եվ մեր արած բարերարությունների փոխարեն երկնքի արքայությունյան մեջ ստանալուց առաջ պետք է համոզված լինենք, որ կստանանք այս և մյուս կյանքի շեմքին եղած ժամանակում: Ճշմարիտ, հիմա լավ մտածենք, թե ինչեր են գալու մեր աչքի առաջ, երբ տեսնենք կամ հիշենք այն քաղցածին, որին մենք կերակրել ենք, այն ծարավածին, որին խմեցրել ենք, այն մերկին, որին հագցրել ենք, այն պանդուխտին, որին մեր տուն ենք տարել, այն հիվանդին ու բանտարկվածին, որոնց տեսություն ենք գնացել: Ի՞նչ ուրախ սրտով, ի՞նչ հանգիստ խղճով պետք է հիշենք մենք նրանց: Ի՞նչ տեսարաններ են:

Եվ մեր մահվան բուրակներին, երբ աչքներս վերջին անգամ կզցենք այս աշխարհի վրա և առաջին անգամ դեպի երկինք, օ՛հ, այդ տխուր, այդ ծանր ու անմխիթար բուրակներին ոչ ոք և ոչ մի բան չեն կարող մեզ այնպես մխիթարել, ինչպես այդ տեսարանները: Եվ դազազում պառկելիս մեր հոգու աչքով կտեսնենք այդ թշվառներին, որոնց մենք որևիցե կերպով օգնել ենք, և դրանք ամենքը կերևան մեզ ինչպես մխիթարիչ հրեշտակներ:

*Կանցնի վերջապես այս աշխարհն իր փառքով, իր հոգսերով, կգա մեր արածների համար հաշիվ տալու օրը, այդ ժամանակ այս խրատին սիրով հետևողները պետք է արդար, անմահ դատավոր Հիսուսից ընդունեն այն ահագին օրը, որն այլևս վերջ չի ունենալու, այն մեծ օրը, երբ խոսքը պետք է վերջանա, և գործը թագավորի:*

## ԲԱՆ Բ

«Գանձեր մի դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց և ո՛չ ժանգ չեն ոչնչացնում, և ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում. քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն»:  
(Մատթ. Զ:19-22)

*Աշխարհիս երեսին ի՞նչ կա մարդուս համար ոսկուց և արծաթից լավ բան: Ա՛խ, ի՛նչ լավ բան է գանձ ունենալը: Ի՛նչ արժե մի հարուստ, մի փարթամ տիկնոջ համար մատները շարել գոհար մատանիներ, բազուկը զարդարել ոսկյա ապարանջանով, պարանոցն ու կուրծքը՝ աչք ծակծկող ակնեղենով: Ի՛նչ փառք, ի՛նչ պարծանք է այդ զարդերով մտնել մի լուսավորված, մի ջահավորված դահլիճ, մտնել մի ընտիր հասարակության մեջ և սրան-նրան բարևելիս, ձեռք տալիս չորս կողմն այրող կրակներ ցանել ու տարածել: Երբ ամեն աչք քեզ կնայի, երբ ամենքի ուշքը քեզ վրա կլինի դարձրած, այդ ըոպեն մի թագավորություն արժե:*

*Բայց մեզ՝ տղամարդկանցս համար այդ կանացի զարդերն այնքան էլ զին չունեն. մեզ համար ամոթ էլ է զանազան զարդ ու զարդարանքով պարծենալը: Մեր պարծանքը փողն է, դրամն է: Լա՛վ քննեցե՛ք «դրամ» բառը, թարս կարդացե՛ք, կստանաք «մարդ»: Ասում են՝ այս նշանակում է, թե մարդն ու դրամն անբաժան պետք է լինեն: Այո՛, դրամը, փողը մեր ամենահարկավոր բանն է, մեր ուժն*

ու գորուծյունն է, մեր պատիվն ու պարծանքն է, մեր երջանկությունն է, ա՛խ, ինչ եմ ասում, մեր երկրորդ աստվածն է. առաջին Աստվածը երկնքում՝ Աստված, երկրորդ աստվածը երկրում՝ փողը:

Բայց քանի որ մենք այսպես կուրացել ենք ոսկով ու փողով, լսենք՝ ինչ է ասում ամեն հարստություն տվող Հիսուս: «Ձեզ համար,– ասում է,– գանձ մի՛ հավաքեք երկրի վրա»: Ինչո՞ւ. չէ՞ որ գանձով ենք ապրում այս աշխարհում: Գանձ որ չհավաքենք, մեզ ո՞վ կպահի, մեր որդիներին ո՞վ կկերակրի, կհագցնի, ինչո՞վ կհոգանք մեր հազարավոր կարիքները: Մեզ հարկավոր է տուն ու տեղ ունենալ, ծառա ու աղախին պահել, մեծ-մեծ գործեր սկսել, մեզ հարկավոր է կյանք վայելել, մեզանից հարուստների հետ ոտք մեկնել, անձանոթներից փառավորվել, ծանոթներից երկրպագվել և ուրիշ հազար ու մի տեսակ փառք ու պատվի տիրանալ: Գանձ որ չհավաքենք, այս բաներն ինչո՞վ պետք է ձեռք բերենք:

Ո՛չ, սիրելի՛ս, երբ Հիսուս ասում է. «Ձեզ համար գանձ մի՛ հավաքեք երկրում», չպետք է կարծենք, թե նա հակառակ է գանձ ունենալուն: Նա հակառակ է գանձ հավաքելուն, գանձ դիզելուն: Նա արգելում է ոչ թե գանձ, փող ունենալը, այլ աննպատակ փող հավաքելը: Ինչո՞ւ: Որովհետև ինչպես որ ավելորդ կերակուրները ծանրացնում են մարդու ստամոքսը և վնասում առողջությանը, այդպես էլ ավելորդ փող դիզելը խանգարում է հոգու կյանքին և ամբողջովին փչացնում է մեր քրիստոնեական վարքն ու բարքը: Ինչ որ Հիսուս խրատում, հրամայում ու պահանջում է մեզանից, փողի սերն ստիպում է դրա հակառակն անել: Այս պատճառով էլ Հիսուս ավելացնում է. «Ձեք կարող ծառայել և՛ Աստծուն, և՛ փողին: Ձեք կարող ծառայել երկու տիրոջ»: Ամեն ծառա պետք է մեկ տիրոջ կամքն ու հրամանը կատարի, չի կարող երկու տիրոջ կամքն ու հրամանը կատարել: Եվ եթե երկու նման տերերի չի կարելի ծառայել, ինչպե՞ս կարելի է ծառայել երկու հակառակ տերերի, որոնցից մեկն Աստված է, մյուսը՝ փողը: Փողասերը, արծաթասերը կոռուպտ է, նրա կուռքը փողն է: Երբ որ նա կատարյալ սիրով, սրտով ու հոգով

է սիրում փողը, դրանից երևում է, որ նա փողին է անձնատուր եղել: Այդպիսով նա իր հավատը, հույսն ու սերը տալիս է փողին՝ ամբողջովին մոռացութեան տալով Աստծուն: Բայց ով որ մի անգամ եղել է Քրիստոսի ծառա, նա երբեք չպետք է փողի ու մամոնայի ծառա դառնա:

Միջակ կարողութեան տեր լինելը շատ անգամ լավ է, քան անչափ հարուստ լինելը: Ինչպես իմաստուններից մեկն էր աղոթում. «Աստված,— ասում էր,— հարստություն կամ աղքատություն մի՛ տուր ինձ»: Ինչո՞ւ: Որովհետև հարստությունը պահելու և վաշխելու համար, իսկ աղքատության թշվառությունից ազատվելու համար մարդու հարկ է լինում անվերջ հոգսերի մեջ ընկնել: Բայց աղքատությունն այնքան չի կարող ու չի վնասում հոգուն, ինչքան հարստությունը: «Մեծ հրաշք կհամարես,— ասում է սբ. Հովհաննես Ոսկեբերանը,— որ մեկը շատ հարստության տեր դառնա ու շատ պակասությունների գերի չդառնա»: Ինչո՞ւ: «Որովհետև,— ասում է առաքյալը,— ամեն շարունակ, ամեն անկարգության ու մեղքի արմատը փողասիրությունն է»: Փողասիրությունից առաջ է գալիս ազահություն, ատելություն, մարդասպանություն և մի անգամ էլ «արծաթասիրութեամբ մոլեալ» Հուդայի ձեռքով աստվածասպանություն: Ազահությունը մի հոգեկան հիվանդություն է և աշխարհումս եղած հիվանդություններից ամենասարսափելին: Իմաստունը, ազահի արարքներից զարմացած, ձայն է տալիս. «Մի վատ հիվանդություն տեսա ես արեգակի տակ, գիտե՞ք՝ որն է. հարստությունը՝ իր շար տիրոջ աչքից հեռու պահված, խորը թաղված»: Մինչև անգամ մահվան անկողինը չի կարողանում մարդուս մոռացնել տալ ոսկու սերը, փողի սերը: Հնդկաստանի առաջին մահմեդական իշխողը, զգալով, որ իր մահը մոտեցել է, հրամայեց դարսել իր առաջ իր բոլոր թանկագին քարերն ու ոսկին: Վերջին անգամ աչք գցելով դրանց վրա՝ նա, ինչպես մի փոքրիկ երեխա, դառն արտասուքով լցված, ասաց. «Ո՛հ, քանի՛-քանի՛ վտանգների մեջ եմ գցել ինձ, ինչքան հոգնել, տանջվել եմ հոգով ու մարմնով այս բոլոր գանձերը

ձեռք բերելու համար, որքան հոգսերի մեջ եմ ընկել սրանք պահելու, պահպանելու համար: Իսկ հիմա ես մեռնում եմ և հավիտյան պետք է բաժանվեմ սրանցից»: Իսկ մի հարուստ գործարանատեր, որ իր համար ահագին կարողություն էր դիզել, մեռնելուց առաջ հրամայեց, որ իր անկողնու վրա դարսեն մի մեծ կուլտ նոր հատած ոսկե դրամ: Նա գգվում էր շողշողուն ոսկիներին ու չէր կշտանում դրանց վրա նայելուց, բռնելով բարձրացնում էր ու վերևից զրնգ-զրնգոցով ցած էր թափում: Թափվող ոսկիների ձայնից խեղճի ուշքն անցնում էր: Բայց երբ մեռավ, իր դռան շեմին ընկած վերջին մուրացկանից ո՛չ հարուստ էր, ո՛չ աղքատ:

Պետք է տեսնել, թե հին փիլիսոփաներն ինչ աչքով էին նայում հարստությանը: Նրանցից մեկը, երբ լսեց, որ իր ողջ հարստությունը կորավ, ասաց. «Այսուհետև ես հեշտ կլինեմ փիլիսոփա»: Մի ուրիշ փիլիսոփա իր ողջ հարստությունը կորցնելուց հետո ասաց. «Նա չէի փրկվի, եթե հարստությունս չկորչեր»: Մեկն էլ, մի ահագին գումար ծովը գցելով, ասաց. «Ավելի լավ է ես ձեզ ընկղմեմ, ջուրը գցեմ, քան դուք ինձ»: Եկեղեցու սբ. հայրերից մեկը հարստությունն ազնիվ ու թանկագին աղբ է անվանում:

Հիսուսը, ասելով. «Ձեզ համար գանձ մի՛ հավաքեք երկրում», պատճառն էլ հետն է բերում. «Որովհետև,– ասում է,– երկրում կա՛մ ցեցն ու ժանգը կուտի, կա՛մ գողերը կգողանան»: Երկիրը, տունը, խանութն անապահով տեղ է. իր գանձը լավ պահելու համար մարդս միշտ երկյուղի, միշտ կասկածի մեջ է. ինչքան էլ թղթերի, լաթերի, կաշվի մեջ փաթաթենք, ինչքան էլ տուփերի, արկղերի, երկաթե սնդուկների մեջ փակենք, էլի հանգիստ չենք, էլի անապահով ենք: Մինչև անգամ գետինն էլ որ փորենք ու մեր գանձն այնտեղ պահենք, գողերի ձեռքն այնտեղ էլ կհասնի, տակից կփորեն ու էլի կհանեն: Է՛, էլ ինչ տեղ է մնում մեզ. գետերում ու ծովերում հո չե՞նք կարող պահել: Մեզ մնում է իմանալ, թե Ինքը՝ Հիսուս, որտեղ կկամենար, որ հավաքենք մեր գանձերը:



«Այլ ձեր գանձերը հավաքեցեք երկնքում,— ասում է և պատճառն էլ հետն է բերում,— որովհետև այնտեղ ո՛չ ցեցն ու ժանգը կուտի, ո՛չ էլ գողերը կգողանան կամ գետինը փորելով կհանեն»: Այս վերջին խոսքերով երկինք ու երկիր ստեղծող Աստված մեզ հասկացնում է, որ մեր գանձը, երկրի որ անկյունում էլ որ պահելու լինենք, միշտ երկյուղ ունենք թե՛ փշանալու և թե՛ գողացվելու կողմից: Երկնքի պես ապահով տեղ չկա. այնտեղ, ուր Աստծո աթոռն է, ուր բյուրբյուրոց հրեշտակներ են, ի՞նչ գործ ունեն ցեցն ու ժանգը, գողն ու ավազակը: Շատ ապահով տեղ է երկինքը մանավանդ այն պատճառով, որ ինքը՝ Հիսուսն է մեզ ցույց տալիս այդ տեղը: Բայց բանն այն է, թե մենք մեր գանձերն ու հարստությունն ինչպես պետք է ուղարկենք այնտեղ: Երկինքը՝ բարձր, երկիրը՝ խոր, մենք մեր մարմնավոր ծանրությունք չենք կարող բարձրանալ, թեթևաթուիչ հրեշտակներն էլ չեն իջնի մեզ համար: Հակոբ նահապետի տեսած սանդուղքն էլ, որի մի ծայրը երկրում էր, մյուսը՝ երկնքում, միայն ինքը տեսավ, այն էլ՝ երազում: Ուրեմն ինչպե՞ս ուղարկենք, տանողն ո՞վ է:

Ա՛խ, ուղարկել ուզենանք թե չէ, տանող շատ կճարենք: Տեղ հասցնելը դժվար, անկարելի որ լիներ, Հիսուսը մեզ ինչպե՞ս ցույց կտար երկինքը: Դու տվող ասա, տանող շատ կա: Ամեն Աստծո օր քարավաններ են, որ գնում են երկրից դեպի երկինք, և դու ասում ես՝ տանողն ո՞վ է: Օր չի լինի, որ այդ քարավանին չհանդիպենք, ոտքերս այնպես չենք փոխի, որ քարավանի տիրոջը չպատահենք: Բավական է, որ մեր գանձն իր տեղից շարժենք, իսկույն հարյուրավոր տանողներ լույս կընկնեն, իրար ձեռքից խլելով կտանեն: Ահա, սիրելի՛ս, աղքատներն են, որ շարեշար կապված են այդ քարավանների մեջ: Եվ քանի՛-քանի՛ տեսակ են այդ աղքատները՝ հացի կարոտ, հագուստի կարոտ, գիշերվա լույսի կարոտ, ժամ-պատարագի կարոտ: Ինչ որ մենք տանք այդ թշվառներին՝ թե՛ փող, թե՛ հաց, թե՛ շոր, թե՛ մինչև անգամ մի բաժակ ջուր, դրանք բոլորը կտանեն երկինք: Ինչ որ մենք այստեղ դնում ենք աղքատների, չքավորների ձեռքը, այդ բոլորը հավաքվում է այնտեղ՝ երկնքում:

Տէ՛ս, այս ողորմելի ընտանիքին. պահպանող հայրն անգործ, մանր երեխաներն ամբողջ օրը քաղցած, անոթի, մոր սիրտը մորմոքեցնելով հաց են պահանջում նրանից, լա՛վ մտածիր, մեղր ու կարագ չեն պահանջում, սպիտակ ու փափուկ հաց չեն ուզում, սեն ու շորն էլ ուրախությամբ կուտեն, բայց տվող չկա: «Զհաց մեր հանապազորդ, տո՛ւր մեզ այսօր»,— ասում ենք «Հայր մերի» մեջ: Մեր ամենօրվա հացն այսօր էլ տո՛ւր մեզ: Մեր երկնավոր Հայրն այդ հացն ինչպես պետք է տա մեզ: Նա ունեցողի ձեռքով կտա շունեցողին, հացի կարոտներին: Գիտե՞ս, թե Աստված քեզ ինչու է դրել է երկրի վրա. իր սուրբ անունը փառավորելու համար: «Սո՛ւրբ եղիցի անուն Քո»: Քո Աստծո անունն ինչո՞վ պետք է սուրբ անես. քո տեսակ-տեսակ բարի գործերով: Ամեն շարիքի դիմաց Աստված մի բարիք է դրել, ամեն ցավի համար՝ մի դեղ: Այդ բարիքն ու դեղը քո ձեռքում են, քո գանձիդ ու գանձարանիդ մեջ, ո՞ր օրվա համար ես պահում, քարավանը գնում է, տո՛ւր իրեն: Բայց մենք ի՞նչ ենք տեսնում: Փողատերը, հարուստը, Աստծո բարությամբ տուն ու դուռը լիքը մարդը, փոխանակ միտքը բերելու այն քարավանը, որի մի ծայրն իր մոտ է, իր կողքին, իսկ մյուսը, արդեն ահագին ճանապարհ կտրելով, Աստծո աթոռին է հասել, նա՛ այդ անմիտ հարուստը, ուրիշ բան է մտածում՝ երկրի մեջ իր անչափ գանձերն ու հարստությունը տեղավորելու, ավելի խորը պահելու համար հնարք ու տեղ է փնտրում: Հիսուս իր սուրբ Ավետարանի մեջ մեզ ցույց է տալիս այդպիսի մի անմիտ հարուստի պատկեր:

Ահա նրա խոսքերը:

Կար մի հարուստ մարդ, որ ուներ շատ անդ ու անդաստան, մեծ-մեծ այգիներ, անթիվ ոչխարներ, կովեր, գոմեշներ: Նրա ամբարներն ու մառանները հացով, գինով ու մրգեղենով լիքն էին, կաթն ու մածոնը, սերն ու կարագը, եղն ու մեղրը նրա տանն առվի պես էր գնում: Օրը քսան, երեսուն մշակ՝ հովիվ, հոտաղ<sup>1</sup>, հնձվոր,

---

<sup>1</sup> Վարձու մշակ:

այգեպան նրա տանը սեղան էին նստում, նրա հացով լիանում և նրա արեշատությունը խնդրում: Աստված, որ նրա հավատը փորձելու համար նրան այդպիսի շտենված առատություն էր տվել, նրա տունն ու տեղն այնպես էր լցրել ամեն տեսակ բարությունով, որ մարդը մնացել էր շվարած: Նա մտածում էր. «Այսքան հարստությունն էս ի՞նչ պետք է անեմ, որտե՞ղ տեղավորեմ, գետի պես գալիս է ու գալիս: Հա, գիտեմ ինչ կանեմ, կքանդեմ ամբարներս, մառաններս, մարագներս, գոմերս, փարախներս և կշինեմ ավելի մեծերն ու ընդարձակները: Երբ ամեն բան կշինեմ, կպատրաստեմ և ունեցածս կտեղավորեմ, այն ժամանակ կասեմ ինձ ու ինձ. «Այ մարդ, ահա այնքան բարիք, այնքան կարողություն ունես, որ ոչ միայն քեզ, քո ահագին ընտանիքին էլ բավական է, այլև թե՛ որդիներդ, թոռներդ ու թե՛ թոռնորդիներդ ուտեն, խմեն, հագնեն, մաշեն, կոտրեն, ջարդեն, էլի մի հարյուր տարի բավական կլինի: Է՛, որ այսպես է, դու էլ կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ կաց»:

Քանի որ նա այդպիսի չափ ու ձևի մեջ էր, հարյուրավոր տարվա պլաններ էր սարքում, հանկարծ Աստված ձայն է տալիս նրան. «Անմիտ, դո՛ւ ողորմելի, այս գիշեր հոգիդ քեզանից հետ են պահանջելու, այդ որ սարքում-կարգում ես, հավաքում-լցնում ես, ո՞ւմ պետք է մնա: Հոգիդ տալու ժամանակ դրանցից ոչինչ չես կարող վայելել, բայց մի տեսնենք իմ պատրաստած արքայությունից մի բան կարո՞ղ ես վայելել: Մարմնով կմեռնես այս գիշեր, արդյոք հոգով էլ չե՞ս մեռնի հավիտյան: Այդքան բարիքներ, այդքան առատություն տվի ես քեզ, մի՞ թե դու այստեղ ոչինչ չունեիր ուղարկելու, այդ անտուտ<sup>1</sup> ու անծայր քարավանները ինչի՞ համար եմ թողել քեզ մոտ, քո կողքին, քո շուրջը»: Ա՛խ, ինչ բարկություն, ինչ կրակ է թափում Աստված անմիտ հարուստների վրա, որոնք, երկնքի արքայությունը թողած, երկրի արքայության հետևից են վազում: Զարմանալի անհոգ ենք մենք, լավ գիտենք, որ այս երկիրը, որի վրա մենք

---

<sup>1</sup> Անպերջ:

կարճ ժամանակով ենք ապրելու, անցավոր է, բայց այստեղ դարձյալ մի տուն, մի շինություն ունենալու համար ծախում ենք մեր բոլոր ունեցածներս, շատ անգամ արյան գնով ենք ձեռք բերում ուզածներս, իսկ երկինքը ձեռք բերելու համար, որ հավիտյան պետք է ժառանգենք ու վայելենք, ոչ մի ծախս չենք ուզում անել, մանավանդ որ երկինքն այնքան ծախսեր չի պահանջում:

Հենց այդպիսի հարուստների համար է, որ Հիսուս ձայն է տալիս. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ավելի հեշտ կարող է պատահել, որ ուղտն ասեղի ծակը մտնի, քան հարուստը՝ երկնքի արքայություն»:  
Բայց Հիսուսի ասածը բոլոր հարուստների մասին չէ: Նա երկնքի արքայություն մտնելն այդքան դժվար ու անկարելի է համարում միայն անմիտ հարուստների համար, որոնք ազահաբար դիզում են և անմտաբար փականքների տակ դնում կամ ունայն վայելչությունների վրա ծախսում: Նայեցե՛ք ահագին հարստության տեր Հայր Աբրահամին՝ երկնքի արքայության մեջ բազմած, այն էլ մի այնպիսի պատվավոր տեղ, որ արքայությունն ուրիշ խոսքով «գոգն Աբրահամու» է կոչում: Դա հատուկ Հիսուսի ցույց տված արդար հարուստն է, որ երկրի վրա իր համար փառավոր ու շքեղ տներ կառուցելու փոխարեն երկնքում ոսկե պալատներ է պատրաստել: Հիմա լսի՛ր, թե երկնքում ինչպես են փառավոր պալատներ պատրաստում:

Հնդկաստանում մի թագավոր կար՝ Գունդաֆոր անունով: Սա ցանկացավ իր երկրում մի քանի պալատ ունենալ հոռմեացի կայսրերի պալատների նման: Այդ պատճառով նա Ավան անունով մի հարուստ վաճառականի ուղարկեց Հրեաստան, որ այնտեղ պալատ կառուցելու համար մի վարպետ գտնի: Վաճառականի գնացած ժամանակ Քրիստոս երազում երևաց Թովմաս առաքյալին և ասաց. «Այդ եկած մարդու հետ գնա՛ իր երկիրը և քարոզի՛ր Ավետարանը»:  
Առաքյալը, մյուս օրը տեսնելով Ավանին, հայտնեց, որ նրա ուզած վարպետը ինքն է, և հետը գնաց Հնդկաստան: Գունդաֆոր թագավորն ուրախացավ, վարպետին ցույց տվեց պալատների տեղը, շինություն համար շատ ոսկի ու արծաթ տվեց, իսկ ինքը գնաց մի ու-

րիշ երկիր: Առաքյալն ստացած բոլոր փողերը բաժանեց աղքատներին և սկսեց քարոզել Ավետարանը:

Անցավ երկու տարի: Գունդաֆորը եկավ իր երկիրը և մարդ ուղարկելով վարպետի մոտ՝ հարցրեց. «Գործը որտե՞ղ է հասել, շո՞ւտ կվերջացնես պալատների շինությունը»: Առաքյալը պատասխանեց. «Ամեն բան պատրաստ է, միայն առաստաղը ծածկելն է մնում»: Թագավորն ուրախացավ և էլի ոսկի ուղարկեց, որ մնացածն էլ լրացնի: Աբ. Թովմասն այդ փողերն էլ բաժանեց չքավոր ժողովրդին, որ ուրախութունից խոսք չէր գտնում նրան շնորհակալություն հայտնելու:

Շուտով թագավորը լուր ստացավ, որ ինքը խաբված է: Կանչեց իր մոտ առաքյալին՝ նրան սարսափելի մահով ոչնչացնելու: Երբ առաքյալին բերեցին, թագավորը հարցրեց նրան.

– Շինե՞լ ես պալատներս:

– Շինել եմ,– պատասխանեց նա,– և ի՞նչ փառավոր պալատներ են:

– Որտե՞ղ ես շինել, ցո՛ւյց տուր տեսնեմ,– ասաց թագավորը:

– Այդ պալատները դու այս կյանքում չես կարող տեսնել,– ասաց առաքյալը,– դու կտեսնես մյուս աշխարհ գնացած ժամանակ և ուրախ-ուրախ կտեղափոխվես ու հավիտյան կբնակվես նրանց մեջ:

Թագավորը, այս անհասկանալի խոսքերը լսելով, կարծեց, թե նա համարձակվում է ծաղրել իրեն: Բարկացավ ու կատաղեց, բայց որովհետև չկարողացավ խելքի գալ ու մտածել, թե ինչ անի այդ անամոթ խաբեբային, առժամանակ հրամայեց, որ նրան ու Ավանին բանտ նստեցնեն, մինչև որ նրանց համար մի շտեմնված տանջանք կմտածի: Երբ թագավորն ուշքի եկավ, վճռեց երկուսի կաշին էլ քերթել ու նրանց այրել: Ոչ ոք չէր համարձակվում բերանից մի խոսք թոցնել թագավորի առաջ, սարսափելի տանջանքից ազատելու էլ ոչ մի հնար չկար: Բայց «Ինչ որ մարդուս համար անկարելի է, այն Աստծո համար շատ հեշտ է», որտեղ մարդը հուսահատվում է՝ իր

անգորուծությունը տեսնելով, այնտեղ Աստված Իր օգնությունն է հասցնում Իր կամքը կատարողներին:

– Այս ի՞նչ բերիր մեր գլխին, մենք կորած ենք,– ասում էր Ավանը բանտում:

– Մի՛ վախեցիր,– ասում էր նրան առաքյալը,– հույս ունեմ, որ մեզ ոչինչ չի պատահի:

Նույն գիշերը թագավորի եղբայրը երազում տեսավ իր եղբոր պալատները, առավոտը վաղ-վաղ գնաց և թագավորին ասաց.

– Ես գիտեմ՝ դու ինձ այնքան ես սիրում, որ ինչ էլ խնդրեմ քեզանից, չես խնայի ինձ համար: Տո՛ւր ինձ այն պալատները, որ շինել ես տվել երկնքում, իսկ դրա փոխարեն ստացիր ինձնից ամբողջ հարստությունս:

– Ի՞նչ պալատների մասին ես խոսում,– հարցրեց թագավորը: Եղբայրը պատմեց իր երազը, և թագավորն ասաց.

– Ես քեզ այն պալատները չեմ կարող տալ, բայց եթե դու էլ ես ցանկանում այդպիսի պալատներ ունենալ, մենք մի լավ վարպետ ունենք, նա քեզ համար կշինի:

Այս ասելուց հետո թագավորն իսկույն ազատեց բանտարկվածներին, ինքն իր ոտքով գնաց նրանց առաջ, մինչև գետին գլուխ տվեց սբ. Թովմասին և խնդրեց նրան, որ ների իր անգիտության հանցանքը: Իսկ սբ. Առաքյալը, շնորհակալություն հայտնելով Աստծուն իր գործի հաջողության համար, թագավորին ու նրա եղբորը քարոզեց սբ. Ավետարանը, մկրտեց նրանց և այսպիսով քրիստոնեությունը մտցրեց ամբողջ Հնդկաստանում:

Ձեր գանձը երկնքում հավաքեցե՛ք ասելով Հիսուսն իր խրատն այսպես է վերջացնում. «Որովհետև որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի»: Սա բոլորովին պարզ է, որտեղ մեր գանձն է, մեր ուշքն ու միտքն էլ այնտեղ է, մեր սիրտն ու հոգին էլ: Բայց որովհետև Հիսուս կամենում է, որ մեր ուշքն ու միտքն էլ, մեր սիրտն ու հոգին էլ ոչ թե երկրում լինի, այլ երկնքում, այդ պատճա-

ուով պահանջում է, որ մեր սրտից առաջ մեր գանձերն այնտեղ ուղարկենք: Երբ մեր գանձարանը կկառուցենք երկնքում, այդ ժամանակ մեր աչքն էլ երկրի վրա չենք գցի, և այն բոլոր բաները, որոնց համար մենք դողում, հոգի ենք տալիս, մեր աչքում կկորցնեն իրենց արժեքը:

Աշխարհումն շատ տեսակ բարեգործություն կա, բայց ամենից լավը, Աստծո սիրածը ողորմությունն է, որը բարեգործությանը թագուհին են կոչում: Ողորմության թռիչքը շատ արագ է ու համարձակ: Նա երկրից դեպի երկինք գնալիս ճեղքում է օդի ահագին տարածությունը, իր հետևում է թողնում լուսինը, թռչում է արևից բարձր և հասնում է երկինք: Բայց նա երկնքում էլ կանգ չի առնում, անցնում է երկինքը, ոտքի տակ է թողնում հրեշտակների դասերը, բոլոր երկնային զորքերը ու հասնելով երկնից-երկինք՝ կանգնում է ուղղակի թագավորական գահի առաջ: Նա երկնավոր Հորից պահանջում է նրա պարտքը, այն է՝ մեկի փոխարեն հարյուրապատիկ, փոքրի փոխարեն՝ մեծը, երկրավորի փոխարեն՝ երկնավորը, մարմնավորի փոխարեն՝ հոգևորը, ժամանակավորի փոխարեն՝ հավիտենականը: Ի՞նչ երևելի առևտուր:

Բայց հարկավոր է, որ այդ առևտուրը, որ մարդն անում է Աստծո հետ, անի իր ձեռքով, իր հոժար կամքով, իր կենդանության օրով և ոչ թե ուրիշի ձեռքով, ուրիշի խելքով, մահվան անկողնում պառկած: Իր ձեռքով և ուրիշի ձեռքով արած բարերարության միջև սար ու ձոր կա: Ահա ինչպես: Ասենք թե երկու պանդուխտ գիշերով ճանապարհ են գնում, մեկը ճրագն իր առջևից է տանում, մյուսը՝ հետևից: Այդ ճրագներից ստվերներ են տարածվում գետնի վրա: Առաջից ճրագ տանողի ստվերը հետևից է գնում, իսկ հետևից տանողի ստվերը առջևից է գնում և չի թողնում, որ ճանապարհորդը լավ տեսնի իր առջև եղած դարն ու փոսը, քարն ու քոլը:

Մարդն էլ այս աշխարհում մի պանդուխտ է, որովհետև մեր հայրենիքը երկինքն է: Մեռնելիս ամեն մեկս ճանապարհ ենք ընկնում դեպի հավիտենական կյանք: Եթե մեր մեղքերի ահագին ստվե-

րը երկնային Դատավորի մոտ գնա մեր առջևից, ի՞նչ օգուտ պետք է տա անժամանակ ու ակամա տրված ողորմության՝ հետևներիցս եկող նվազ լույսը: Մեր ողորմության, մեր բարեգործության լույսը մեր առջևից պետք է ուղարկենք, մեր առողջության, խելքը գլխներիս եղած ժամանակ մեր ձեռքով և չպետք է սպասենք այն ճրագներին, որ մեր ժառանգները մեր մահից հետո կկամենան ուղարկել մեր հետևից: Այն էլ Աստված գիտե՛ նրանք այդ ճրագները մեզ համար կվառե՞ն:

Այսպես, սիրելի՛ս, մյուս կյանքում մեզ չեն հարցնի, թե ձեր աշխարհում ի՞նչ կերաք, ի՞նչ խմեցիք, ի՞նչ հագաք, ո՞ւմ զարմացրեցիք, ումի՞ց փառավորվեցիք: Այնտեղ մեզ կասեն. «Ինչ որ ձեր հողեղեն, ժամանակավոր աշխարհում կերաք, խմեցիք, ձեզ հալալ լինի, տեսնենք՝ ձեր վերջին օրվա համար մի բան ուղարկե՞լ եք այս մեր լուսեղեն, հավիտենական աշխարհի գանձարանում պահելու համար»:

## ԲԱՆ Գ

«Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»:

(Մատթ. Ե:48)

Հիսուս երեսուն տարեկան հասակում դուրս եկավ Իսրայելի ժողովրդի մեջ Իր քարոզներով: Նա եղած օրենքներին հակառակ ոչինչ չէր քարոզում, այլ բացատրում ու լրացնում էր դրանք: Ինքն էլ է ասում. «Նա նրա համար չեմ եկել, որ եղած օրենքները քանդեմ, այլ եկել եմ դրանք լրացնելու»: Եվ նա, ձեռքն առնելով նրանց օրենքները, մեկ-մեկ բացատրում ու լրացնում էր Իր քարոզների մեջ:

Բայց Հիսուսին պետք է տեսնել օրենքները բացատրելիս, նրան պետք է լսել երկնային իմաստությունները երկրավոր մտքե-



րով հասկացնելիս: Պետք է տեսնել ու լսել նրան ոչ թե այն պատճառով, որ մինչև նրա աշխարհ գալը մարդկանց մտքերը կապված, կաշկանդված էին օրենքի տառով, այլ այն պատճառով, որ նա իր խոսքերով մեզ համար բաց է անում երկիրք տանող ճանապարհը, որտեղից եկել է Ինքը: Եթե այդ ճանապարհը երկար էլ լինի, եթե այդ ճանապարհը ծուռ ու քարքարոտ էլ լինի, մենք պետք է աչքներս բաց հետևենք նրան, որովհետև Ինքն է «ճանապարհը»: «Ով ուզում է գնալ Հորս մոտ, – ասում է Հիսուս, – միայն Ինձանով կարող է գնալ»:

Հիմա մտածի՛ր, սիրելի՛ս, թե երբ ճանապարհ ցույց տվող Հիսուսը բաց անի իր աստվածային բերանը, մենք, որ նրա ձեռքի գործն ենք, նրա ոտքի հողն ենք, ինչպե՞ս պետք է ականջ դնենք նրան: Կարող ենք անուշադիր թողնել նրա բերանից դուրս եկած որևիցե խոսք: Պետք է լավ համոզված լինենք, որ նա մեզ չի մոլորեցնի, որ նա և միայն նա կարող է ամեն բան ցույց տալ, հայտնել ու ասել մեզ ճշմարտությունը, քանի որ Ինքն է ճշմարտությունը, «մարմնացած ճշմարտությունը»: Եվ եթե գնանք նրա ցույց տված ճանապարհով, մենք հավիտյան կապրենք, կվայելենք հավիտենական կյանքը, որովհետև Ինքն է միևնույն ժամանակ և ամենքիս կյանք տվողն ու հենց «կյանքը»: Նա մեզ տվել է երկրավոր, ժամանակավոր կյանք, բայց չի բավականանում, նա ուզում է մեզ տալ և երկնային, հավիտենական կյանքը, որովհետև թեպետ մենք երկրում ենք բնակվում, բայց իսկապես երկնաքաղաքացի ենք, երկնքի համար ենք ստեղծված, երկիրքը պետք է վայելենք:

Ճշմարիտ է, Հիսուսը չքանդեց եղած օրենքները, բայց և շթողեց այնպես, ինչպես որ կային, ինչպես որ երևում էին, այլ տակնուվրա արեց և ցույց տվեց, որ մարդիկ միայն նրանց աստառն էին տեսնում, իսկական երեսը նրանց հոգու աչքից ծածկված էր: Այդ էր պատճառը, որ իսրայելացիների մեծ մասը, այն է՝ դպիրներն ու փարիսեցիները, կամ, ուրիշ խոսքով, ուսումնականներն ու կեղծավորները, արտաքին արարողություններին ավելի մեծ նշանա-

կուձյուն էին տալիս, քան թե օրենքի ներքին ոգուն (մեր այսօրվա ժողովրդի մեծ մասի հասկացողությունն էլ այդպես է): Մի խոսքով հրեաների հասկացած օրենքների ու Հիսուսի քարոզած օրենքների միջև մեծ զանազանություն կա, այնքան մեծ զանազանություն, ինչքան որ կա հոգու և մարմնի միջև, առարկայի և նրա ստվերի միջև:

Եղած օրենքները բացատրելիս Հիսուս իբրև օրինակ վերցնում է դրանցից մեկը և ասում. «Դուք ձեր ժողովարաններում, ձեր ուսուցիչներից կամ հենց ինքներդ Սուրբ Գրքից լսած կլինեք, թե այսինչ բանն այսպես պետք է անել, բայց ես ձեզ ասում եմ, որ ոչ թե այդպես պետք է անել, այլ այն, ինչ որ օրենքի ոգին է պահանջում: Ահա մի քանի օրինակ: Դուք լսել եք, իհարկե, որ օրենքը ձեզ ասում է. «Մի սպանիր»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ Ոչ թե միայն չպետք է մարդ սպանեք, այլև չպետք է այնպիսի մի բան անեք, որից մարդասպանություն առաջ գա: Օրինակ՝ մեկին «հիմար» ասելուց պետք է զգուշանաս, որովհետև այդ խոսքից հետո շատ հեռու չէ ձեռն ու սպանությունը»:

Դուք լսել եք նույնպես, որ օրենքը հրամայում է, թե «Շնուձյուն մի՛ արա», անկարգ, անառակ կյանք մի՛ անցկացնի, ամուսնական սուրբ օրենքը մի՛ պղծիր, ընտանիքի պատիվը ոտնակոխ մի՛ անի: Չկարծես, թե դու անպատճառ պետք է մեկի հետ անառակ կյանք անցկացնես, որ Աստծո հրամանին հակառակ գնացած լինես: Ո՛չ, եթե մեկին ծուռ աչքով էլ մտիկ տաս, իմ հաշվով դու էլի շնուձյուն ես արել: Եվ ուղիղն ուղո՞ւմ ես. շատ լավ կանես, որ քեզ սխալեցնող, քո միտքը ծոող աչքը քո ձեռքով հանես, կուրանաս, քան թե երկու աչք ունենաս ու չար ճանապարհով ման գաս: Այդ չար աչքիդ տված վնասն էլ միայն այն հո չի լինի, որ քեզ բարի ճանապարհից հանում է, թանկագին ժամանակդ փչացնում է, ծանոթի ու բարեկամի մոտ անունդ կոտրում է, հարստությունդ ոչնչացնում է, այլ մեծ վնասն այն է լինելու, որ հավիտենական կյանքի փոխարեն քեզ համար հավիտենական տանջանք է պատրաստում: Եվ ծուռ աչք ասելով էլ ոչ թե մարմնավոր աչքը պետք է հասկանաս, այլ հոգու աչքը, ծուռ մտքի աչքը, գեշ ցանկության աչքը, մանավանդ որ մարմնավոր

աչքը հանելով մտքի, սրտի ու ցանկության աչքը չենք հանում: Կարճ ասելով՝ ավելի լավ կանես, որ զրկվես այն բանից, որին աչքիդ չափ սիրում ես և արքայության արժանանաս, քան թե սիրածդ վայելես և արքայությունից զրկվես:

Դուք այն էլ լսած կլինեք, որ ասված է, թե՛ Ոչ ոքի մի՛ ներեցեք, ոչ ոքի մի՛ համբերեցեք, «Աչքի փոխարեն աչքը հանեցեք, ատամի փոխարեն ատամը փշրեցեք, ձեռքի տեղ՝ ձեռքը, ոտքի տեղ ոտքը կոտրեցեք, վերքի տեղ՝ վերք, հարվածի փոխարեն հարված հասցրեք», մի խոսքով՝ ով ինչ կողմով վնաս է հասցնում, դուք էլ այն կողմով նրան իր արժանավոր պատասխանը տվեք<sup>1</sup>: Բայց ես ձեզ ասում եմ. «Տեսար՝ դիմացիդ մարդը չարի, անիրավի մեկն է, մի՛ հակառակվիր նրան: Կարելի է, որ դու ասես՝ շատ էլ չար է, անիրավ է, եթե ինձ անպատվում է, պետք է լռե՞մ ուրեմն, տված անպատվությանը չպե՞տք է պատասխանեմ»: «Այո՛,– ասում է Հիսուս,– պետք է լռես»: Եթե շապիկդ խլի, շորդ էլ հետը տուր, եթե հայհոյի, լռությամբ ընդունիր: Մի խոսքով՝ չարին, անիրավին մի՛ հակառակվիր:

Մենք շատ կսխալվենք, եթե Հիսուսի ասած այս խոսքերը հենց այսպես էլ հասկանալու լինենք, որովհետև այստեղ խոսքը ոչ թե իրավունքի մասին է, այլ քրիստոնեական համբերության: Երբ ասում է. «Թող որ շորդ էլ հանեն, թող որ ավելի հայհոյեն», նա դրանով ոչ թե ուզում է ասել, թե հենց նահատակվիր ուրիշի ձեռքով, լռիր, ով ինչ ուզենա քեզ ասել, անել: Այլ ուզում է ասել, թե ինչ որ կարելի է համբերությամբ անել, այն չի կարելի թուփ ու թվանքով անել, խփողին խփելով, ձեծողին ձեծելով. դու կրակի վրա կրակ ես ավելացնում, և շատ հեշտությամբ մի փոքրիկ կայծից մի ահագին հրդեհ է առաջ գալիս: Բայց համբերելով դու քեզ անպատվողի լեզուն կապում, ձեռքը թուլացնում ես, նրա զենքը ձեռքից վայր ես գցում, նա ամաչում է, նա զղջում է, նա իրեն հաղթված է տեսնում:

---

<sup>1</sup> Մովսես մարգարեի դատաստանական օրենքը այդպես էր հրամայում, և հատուկ դատավորների համար էր գրված:



«Դուք այն էլ լսած կլինեք, – ասում է Հիսուս, – թե՛ Ընկերոջդ սիրի՛ր, թշնամուդ ատի՛ր, իսկ նա ասում եմ՝ մեծ բան չէ, որ ընկերոջդ, եղբորդ, բարեկամիդ սիրես, այդպես հո մաքսավորներն ու մեղավորներն էլ են անում, էլ քո արածդ ինչո՞վ պետք է ավելի լինի նրանց արածից: Վերջին տգետը, հետին անառակն էլ իր ընկերոջը, իր բարեկամին սիրում է, դա մեծ շնորք չէ: Իմ ուզածն այս է, որ դու «Թշնամուդ սիրես», ում վրա որ Աստված ստեղծելիս դրել է իր կնիքը, ով որ կրում է իր վրա «մարդ» անունը, նա է, որ պետք է սիրի ու սիրվի, նա պետք է սիրի ամենքին, ամենքը՝ նրան»: Ուրեմն Հիսուսի պահանջած սերը մարդկային սերն է, մարդասիրությունն է: Երբ մենք մեր մեջ կուենանք այդ սուրբ սիրո կրակը, երբ մենք սեր ցույց կտանք ամեն մարդու՝ մեր խելքը, շնորքը, ուժը, կարողությունը, մի խոսքով՝ մեր ամբողջ մարդկությունը նրա ձեռքի տակ դնելով, նրան նվիրելով, նրան զոհելով, այդ ժամանակ մենք կատարած կլինենք այն վսեմ գործը, որ կոչվում է մարդասիրություն:

Ինքը՝ մարդասեր Հիսուս, սիրում էր ոչ թե այս կամ այն մարդուն, ոչ թե ծանոթի կամ անծանոթի, ոչ թե այս կամ այն երկրի մարդուն, այս կամ այն ազգի մարդուն, այլ իսկապես մարդուն, որ ամեն տեղ և ամեն ժամանակ հավասար է նրա աչքում, հավասար է Ադամի որդի լինելով, հավասար է մահկանացու լինելով, հավասար է այս կյանքի վշտերով, հավասար է մյուս կյանքի հույսով: Եվ այնքան է սիրում մարդուն, որ Իր կյանքը խաչի վրա զոհաբերում է նրա փրկության համար: Մ՛հ, ի՛նչ սեր կարող է համեմատվել այդ սիրո հետ: Եթե մտածենք, թե ինչ էր նա երկնքի մեջ և ինչ եղավ երկրի վրա, եթե կռռենք, թե ինչ բանի էր արժանի նա և ինչ ստացավ, կտեսնենք, որ նա անձնվիրության և մարդասիրության մի այնպիսի օրինակ էր, որին ո՛չ մեր միտքը կարող է հասնել, ո՛չ լեզուն պատմել, ո՛չ գրիչը կարող է նկարագրել:

Այնպես էլ դու պետք է սիրես ամենքին՝ թե՛ բարեկամի, թե՛ թշնամու, թե՛ ծանոթի, թե՛ օտարի: Նայեցե՛ք ձեր երկնավոր Հորը, Իր արևն աշխարհ ուղարկելիս չի հարցնում, թե տեսնենք լավն ով է,

վատն ով, և իր անձրեն ուղարկելիս չի հարցնում՝ տեսնենք արդարն ով է, մեղավորը՝ ով: Նա արժանավոր ու անարժան չի հարցնում, այլ արևն էլ, անձրեն էլ հավասարապես ուղարկում է ամենքի վրա:

Այսպես, երբ Աստված հրամայում է. «Մարդ մի՛ սպանիր, շնություն մի՛ անիր» և այլն, դու ոչ թե անպատճառ հրամանի խոսքերը պետք է կատարես, այլ ավելի նրա ներքին իմաստը, նրա միտքը, նրա նպատակը պետք է հասկանաս: Ասենք թե երկրագործը, կամենալով հանգստացնել իր եզներին, իր մշակին հրամայում է, որ այսինչ օրը վար շանի: Եթե մշակը հողատիրոջ հրամանի միայն խոսքերը հասկանա՝ առանց իմաստը հասկանալու, եզները լծի ու վազեցնի դաշտի մի ծայրից մինչև մյուս ծայրը և հոգնեցնի անասուններին, դրանից ի՞նչ դուրս կգա: Այն, որ ճշմարիտ է, մշակը երկրագործի հրամանը կատարում է դաշտը չվարելով, բայց չէ՞ որ եզներին աննպատակ վազեցնելով՝ ոչ միայն չհանգստացրեց նրանց, այլ շատ հնարավոր է, որ եթե նույն օրը նա դաշտը վարելու լիներ, անասուններն այնքան չտանջվեին:

Այս և սրանց նման շատ խրատներ տալուց հետո Հիսուս, կամենալով ավելի լավ հասկացնել իր բոլոր պահանջները, իր բոլոր ասածներն ու ասելիքները կարճ կտրելով, այսպես է վերջացնում. «Մի խոսքով՝ այնպես կատարյալ պետք է լինեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»: Հիսուս այս վերջին խոսքով ուզում է մեզ աստվածանման մարդիկ դարձնել: Եվ շատ պարզ է: Եթե նա «Մարդ մի՛ սպանիր» ասելով ուզում է մեր մեջ ոչնչացնել մարդասպանության պատճառները, եթե «Շնություն մի՛ անիր» ասելով ուզում է մեր մեջ հանգցնել ամեն անկարգ ցանկություն կրակ, եթե «Չարին մի՛ հակառակվիր» ասելով ուզում է արմատից հանել մեր սրտի բարկություն թուլյնը, եթե վերջապես «Միրի՛ր թշնամուր» ասելով ուզում է մարդասիրության զգացմունք արմատացնել սրտներին մեջ, ուրեմն ամեն բանից երևում է, որ նա ուզում է մեր ընկած վիճակից մեզ բարձրացնել, աստվածանման վիճակի հասցնել:

Կարելի է դու մտածես. «Ես ինչպե՞ս կարող եմ նմանվել Աստծուն: Աստված աշխարհի ստեղծող, ես նրա ձեռքի գործը, Աստված աշխարհը պահող, ես առանց նրա պահպանության մի օր, մի ժամ չեմ կարող ապրել, Աստված ամենասուրբ, ես մի ողորմելի մեղավոր, Աստված, ի՞նչ ասեմ, ո՛չ նրա սկիզբն է հայտնի, ո՛չ էլ վերջ կունենա, ես մի օր ստեղծվել եմ, մի օր պետք է մեռնեմ»:

Ձէ՛, եղբայր, այդպես որ մտածես, դու մի ավագի հատիկ էլ չես Աստծո առաջ, բայց Աստծուն նմանվելը բոլորովին ուրիշ բան է: Ձէ՞ որ առաջ էլ նման էիր Աստծուն. ասենք դու չէիր, քո պապն էր, առաջին մարդն էր՝ Ադամը, բայց թե՛ դու, թե՛ նա՝ երկուսդ էլ հո մարդ եք: Ինչպե՞ս էր Աստված ստեղծել Ադամին՝ Իր պատկերով ու Իր նմանությամբ: Ահա նրա խոսքը. «Եկեք մարդ ստեղծենք՝ մեր պատկերով ու մեր նմանությամբ»: Բայց այստեղ «պատկեր ու նմանություն» բառերն Աստծո կերպարանքի մասին չեն ասված:

«Աստծո պատկեր» ասելով նրա իշխանությունը պետք է հասկանաս, այն իշխանությունը, որ Աստված, իբրև ստեղծող, ունի ամբողջ աշխարհի ու բոլոր արարածների վրա: Նա է երկնքի ու երկրի, ծովի ու ցամաքի տերը, նրա կամքն է, ամենքին կառավարողը նա է, ինչպես Իր կամքով տվել է մեզ հոգի ու մարմին, կարող է Իր իշխանությամբ քանդել ու քայքայել մեր մարմինը, հետ պահանջել մեզ տված հոգին: Նա է միայն մեր կյանքի տերը. «Նրանով է, որ կանք ու շարժվում ենք»,– ասում է առաքյալը:

Երբ ասում ենք՝ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, դրանով հասկանում ենք այն, որ նա Իր ստեղծած ամբողջ աշխարհը դրեց մարդու ձեռքի տակ և նրան տեր ու իշխան կարգելով՝ երկիրն օրհնեց ու ասաց. «Աձեցե՛ք ու բազմացե՛ք, ողջ աշխարհը լցրե՛ք ու նրան տիրեցե՛ք»: Եվ այդ օրից մարդն աճում ու շատանում է, հետզհետե լցնում է երկրի անմարդաբնակ տեղերը և տիրում նրան, իշխում է նրա վրա: Աստված, մարդուն Իր պատկերով ստեղծելով, դրանով մի իշխանական, մի թագավորական թագ դրեց նրա գլխին. չէ՞ որ մարդն էլ նրա ստեղծագործության թագն ու պսակն էր: Եվ

մարդն իր բանականության շնորհիվ տիրում ու իշխում է ամեն բանի, հնազանդեցնում է բոլոր շնչավորներին, խոնարհեցնում է կատաղի գազաններին, հաղթահարում է բոլոր դժվարությունները: Կենդանիների թագավոր առյուծն անգամ զգում է մարդու մեջ Աստծո պատկերի ուժն ու զորությունը:

«Աստծո նմանությունը» ո՞րն է: Աստված հոգի է, սուրբ է: Մարդն էլ պետք է նմանվի Աստծուն իր հոգևոր կյանքով, իր սրբությունամբ: Իհարկե, մարդ ոչ մի ժամանակ չի կարող լինել Աստծո շափ սուրբ, ինչպես որ չի կարող նրա շափ բարի լինել, Հիսուսի ասածի պես «Բարին միայն Աստված է»: Բայց ամեն մարդ պետք է աշխատի Աստծո պես սուրբ լինել, ինչքան որ մարդս իր մարդկային բնությունամբ կարող է հասնել սրբության: Մարդս Աստծո նմանությունը վայելում էր, քանի որ ապրում էր փափկության դրախտի մեջ, բայց հենց որ նա զրկվեց այդ փառքից, նրա հետ էլ կորցրեց Աստծո նմանությունը: Նա, Աստծո հրամանի դեմ մեղանշելով, մեղքի ծառա դարձավ: Եվ այնուհետև սկսեց գլորվել մի մեղքից դեպի մյուսը և ինչքան շատ մեղքերի հանդիպեց, ինչքան խորը խրվեց մեղքերի մեջ, այնքան նրանում Աստծո նմանությունն ավելի պակասեց, նսեմացավ, կորավ և վերջը բոլորովին անհետացավ ու նմանվեց անբան անասունի: Այդ օրվանից նրան մնում է միայն ամեն կերպ աշխատել, որ բարձրանա իր ցածր վիճակից, վերականգնի իր մարդկային պատիվը, որպեսզի կարողանա նորից ձեռք բերել այն փառքը, որով նա փառավորված էր Աստծո նմանությունը կորցնելուց առաջ:

Հիսուս մեզանից պահանջում է, որ լինենք կատարյալ: Բայց ինչպե՞ս պետք է կատարյալ լինենք՝ խելքո՞վ, իմաստով՞յա՞մբ, այդ դեռ բավական չէ: Ճշմարիտ իմաստունը ոչ թե շատ ուսյալ ու գիտուն մարդն է, այլ նա է, որ երկիրը թողած՝ երկինք է դիմում, իր կամքը թողած՝ Աստծո կամքն է կատարում: Ճշմարիտ իմաստունը ժամանակավոր գանձ չի հավաքում և իր հույսն ու ապավենը հավաքած գանձը չի դարձնում, փառք ու պատվի հետևից չի ընկնում, սրտի ուզածները չի կատարում, ոչ թե երկար, այլ բարի կյանք է ցանկանում: Հա-



սարակ գյուղացին, որ կատարում է Աստծո կամքը, ավելի լավ է, քան թե այն իմաստունը, որ իր Աստծուն թողած՝ երկնքի աստղերն է հաշվում: Իմաստությունը շատ լավ բան է, բայց մաքուր խիղճը և բարեգործ կյանքը դրանից ավելի լավ է: Ընդհակառակը, մարդիկ իմաստությունն ավելի են փնտրում, քան թե բարի կյանքը: Այս պատճառով շատերը սխալմունքների մեջ են ընկնում և ունեցած իմաստությունն իրենց օգուտ չի տալիս: Գատաստանի օրը մեզ չեն հարցնի, թե ինչ ենք կարդացել, այլ թե ինչ ենք արել: Եթե իմաստության հետ չունենք անարատ վարքուբարք, եթե իմաստուն լինելով բարոյական մարդ չենք, երբեք չենք կարող ասել, թե կատարյալ մարդ ենք:

Բայց երկու տեսակի բարոյականություն կա՝ մեկը մեզ արգելում է չար գործ կատարել, մյուսը մեզ հրամայում է բարի գործ կատարել: Մեկն առանց մյուսի անկատար է: Աստված իր պատվիրանների մեջ մեզ երկու կերպով է խրատում: Ասում է. «Այս արա, այն մի՛ արա»: Մենք էլ պետք է հանձն առնենք նրա պատվիրանների մի մասը, մյուսից պետք է հրաժարվենք: Այս պատճառով քահանայի առաջ խոստովանվելիս «Մեղայի» մեջ մեզ խոնարհեցնելով Աստծո առաջ՝ ասում ենք. «որովհետև ոչ հանձնառելիները կատարեցի և ոչ էլ հրաժարելիներից հեռացա»: «Մեղավոր եմ, Տե՛ր,– ասում ենք,– որովհետև ո՛չ այն եմ արել, ինչ որ հրամայված է ինձ, ո՛չ նրանից եմ հեռացել, ինչ որ ինձ արգելված է անել»:

Միայն հրաժարական պատվիրանները կատարելը բավական չէ, պետք է, որ հանձնառականներն էլ կատարենք: Ի՞նչ օգուտ, եթե դու ոչ ոքի շարություն չես անում, բայց ոչ ոքի բարություն էլ չես անում: Բավական չէ, որ ոչ ոքի ապտակ չխփես, հարկավոր է, որ ձեռքովդ մի քանի թշվառի արցունքներն էլ սրբես: Բավական չէ, որ մարդ չսպանես, պետք է որ մարդ էլ ազատես սպանությունից: Բավական չէ, որ շար ճանապարհներով ման չգաս, հարկավոր է, որ գնաս այն բոլոր տեղերը, ուր կանչում է քեզ քո պարտականությունը:

Հրամայելով, որ լինենք կատարյալ, Հիսուս ավելացնում է. «Ինչպես և ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»: Ասացի, որ մեր երկ-

նավոր Հայրը հոգի է, սուրբ է: Մարդս թեև հոգի չէ, բայց ստեղծված է ավելի հոգևոր կյանքի, քան թե մարմնավոր կյանքի համար: Բայց մարմինը մեր մեջ իր ստոր ցանկություններով այնպես է խեղդել հոգին, որ մեզանում հոգևոր կյանքի նշույլ անգամ չի մնացել: Մեր կյանքն այնքան հոգևոր չէ, որքան անասնական է: Մենք առավոտյան զարթնում ենք՝ ինչ ուտենք, ինչ խմենք ասելով, իսկ երեկոյան քնում ենք՝ ցերեկվա անկարգ, զեխ կյանքի ծանրությունից թմրած, հոգիներս մեռցրած, և եթե մի քիչ կարողություն մնացել է մեզանում, այն էլ գործի ենք դնում հաջորդ օրվա պլանները կազմելով:

Աստված հոգիների Հայրն է, և Նրա գերդաստանը հոգևոր գերդաստան է: Իսկ երբ մենք հոգով Աստծո որդի չենք, օրը քսան անգամ էլ որ Նրան «Հայր մեր» անվանենք, Աստված մեր հայրը չէ և չի լինի: Սրանից երևում է, որ մեր երկնավոր Հոր պես կատարյալ լինելու համար մենք պետք է ունենանք ներքին սրբություն, մենք պետք է սրտով սուրբ լինենք: «Սուրբ սիրտ հաստատի՛ր իմ մեջ, Աստված», – թագավորական գահի բարձրությունից ձայն էր տալիս Գավիթը: Անցավ հազար տարի, և Գալիլեայի մի լեռան գլխից Հիսուս քարոզում էր. «Երանի՛ նրանց, որոնք սուրբ են սրտով»:

Բայց լավ պետք է հասկանանք «սուրբ» բառի բուն նշանակությունը: Սուրբ ասելով մեզանում հասկանում են մեղք չունենալը, բայց միայն մեղք չունենալը դեռ սրբություն չէ: Ինչպես որ մենք միայն պատժից ազատ լինելով երջանիկ չենք, այլ միայն այն ժամանակ ենք մեզ երջանիկ համարում, երբ պատժի ու տանջանքների փոխարեն ուրախություն ենք վայելում, այդպես էլ մենք այն ժամանակ կլինենք սուրբ, երբ մեղքի տեղը բռնում է սրբությունը, այսինքն՝ երբ սրբությունը մարդու բնավորությունն է դառնում: Իսկ եթե սրտի մեջ սրբություն չկա, անպատճառ կա անսրբություն, որն առաջին դեպքում իսկույն ինքն իրեն ցույց է տալիս: Մեղքը, մոլուխյունն այն ժամանակ կարող է սրտից դուրս քշված համարվել, երբ դրանց տեղն այնտեղ բուն են դնում սուրբ բնավորությունը և առաքինությունը: Այն մարդը, որի մեջ չկա առաքինություն, ոչ թե մեղ-

քից դեպի առաքինություն է գնում, այլ մեկ մեղքից դեպի մյուսն է գլորվում: Իսկ մեր երկնավոր Հորը նմանվելու համար մեզ ներքին փոփոխություն է հարկավոր, հոգևոր փոփոխություն է հարկավոր: «Մինչև որ մարդս ջրից և հոգուց չճնվի,– ասում է Հիսուս,– չի կարող մտնել երկնքի արքայություն»: Իսկ հոգուց ծնվել նշանակում է հոգեպես ծնվել, հոգևոր կերպով ծնվել: Այսինքն՝ մեզք գործելու ընդունակությունը թողնել և նորից իբրև հոգևոր մարդ ծնվել: Աստծուն «նմանվելու» միակ միջոցն ու հնարը մեր հոգևոր ծնունդն է: Հոգևոր ծնունդը մարդուս բնության մեջ մի հիմնական փոփոխություն է մտցնում և մեզ Աստծո ընտանիքի, Նրա հոգևոր գերդաստանի անդամ է դարձնում և այդպիսով մեզ համարձակություն է տալիս Նրան «Հայր» անվանելու: Ինչպես որ դարբնոցի կրակի մեջ դրված երկաթը կրակի սաստկությունից մաքրվում է ժանգից և կարմրում, կրակ է դառնում, այդպես էլ այն մարդը, որ թողնում է աշխարհը և երեսը դարձնում է դեպի Աստված, մաքրվում է իր հոգևոր արատներից և փոխվում, նոր մարդ է դառնում:

## ԲԱՆ Դ

«Շաբաթ օրը մարդու համար է, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար»:

(Մարկ. Բ:27)

Մեր եկեղեցին տարվա մեջ շատ տոներ է կատարում, և դրանք բոլորը սահմանված են սրբոց պատվի համար: Բայց բոլոր տոների մեջ կա մեկը, որ սահմանված է Աստծուն փառավորելու համար: Այդ տոնը կրկնվում է ամեն շաբաթ և է կիրակի: Բոլոր տոները սահմանել են կա՛մ առաքյալները, կա՛մ մեր սբ. հայրապետերը, իսկ կիրակին սահմանել է ինքը՝ Աստված: Կիրակին բոլոր տոների մեջ այնքան է նշանավոր, որ նրա անունով մի քանի նշանավոր

տոներ էլ համարվում են կիրակի: Այդպիսի տոների մասին մեր տոնացույցն ասում է. «Այսօր կիրակի է»:

Կիրակին Աստծո տված տասը պատվիրաններից մեկն է, ուրեմն ոչ մի տոն չի կարող հավասարվել նրան: Կիրակին մյուս բոլոր տոներից մեկ էլ նրանով է զանազանվում, որ ուրիշ տոներ մի ազգ կատարում է, մյուսը չի կատարում, իսկ կիրակին տոնում են ոչ միայն քրիստոնյա ազգերը, այլև մոլսիսականները (հրեաները) և մահմեդականները՝ այն զանազանությամբ, որ մահմեդականները տոնում են ուրբաթը, մոլսիսականները՝ շաբաթը, իսկ քրիստոնյաները՝ կիրակին: Ամենքն էլ շաբաթվա յոթ օրերից մեկը նվիրում են Աստծուն: Նրան նվիրված օրերի անուններն էլ միևնույնն են ցույց տալիս: Այսպես.

«Ուրբաթ» բառն ասորերեն է և նրանց լեզվով ասվում է ըռուպաթ, որ նշանակում է լրումն, այսինքն՝ լրումն ստեղծագործության:

«Շաբաթ» բառը եբրայերեն է և նշանակում է հանգիստ:

«Կիրակի» հունարեն է և նշանակում է տերունի, տերունական, այսինքն՝ Տիրոջ համար որոշված օր:

Աստված վեց օրում աշխարհն ստեղծելուց հետո յոթերորդ օրը հանգստացավ և հրամայեց, որ մարդիկ էլ վեց օր աշխատեն, իսկ յոթերորդ օրն Աստծուն նվիրեն: Քրիստոսից հետո նրա առաքյալները, ի պատիվ նրա հարույթյան, շաբաթվա փոխարեն, որ վերջին օրն էր, սահմանեցին կիրակին, որ առաջին օրն է<sup>1</sup>: Աստված ասում է. «Հիշի՛ր, որ սուրբ պահես շաբաթ օրը, վեց օր աշխատիր և կատարիր քո բոլոր գործերը, իսկ յոթներորդ օրը հանգստյան օր է քո Տիրոջ համար: Այդ օրը գործ մի՛ անիր ո՛չ դու, ո՛չ քո որդիդ, ո՛չ քո աղջիկդ, ո՛չ քո ծառայող ու աղախինդ, ո՛չ քո եզր ու էջր, ո՛չ քո ամեն անասունդ ...»:

---

<sup>1</sup> «Կիրակին» գրաբարում ասվում է միաշաբթի, այսինքն՝ շաբաթվա առաջին օրը: Այս է պատճառը, որ նրանից հետո եկող օրը կոչվում է երկուշաբթի:

Այս հրամանը կատարվում էր տասը պատվիրանները տալուց էլ առաջ: Երբ իսրայելացիներն անապատում մանանա էին հավաքում, տեսնում ենք, որ նրանց իշխանները գալիս, գանգատվում են Մովսեսին, որ ժողովուրդը վեցերորդ օրը երկու օրվա պաշար է հավաքում. չէ՞ որ ամեն օր պետք է միայն մեկ օրվա պաշար հավաքվի: Մովսեսը նրանց պատասխանեց. «Վնաս չունի, վաղը հանգստյան սուրբ շաբաթն է»: Սա պարզ ապացույց է, որ շաբաթը հաստատվել է ուղղակի աշխարհի ստեղծելուց հետո:

Ասում ենք. «Յոթներորդ օրն Աստված հանգստացավ»: Արդյոք շա՞տ կուացավ, բարձրացավ, շա՞տ բեռ կրեց, շա՞տ աշխատեց ձեռքով ու ոտքով, որ կարիք զգաց հանգստանալու: Արդյոք երկնքի ստեղծելու վրա շա՞տ շարժարվեց, թե՞ երկրի, արևի, լուսնի ու անթիվ անհամար աստղերի ստեղծելն ավելի՞ հոգնեցրեց նրան, թե՞ ծովերի ու ցամաքների, սարերի ու ձորերի ստեղծելը, որ հանգստացավ: Կամ թե, կարելի է, կավից մարդ ստեղծելը նրանից շա՞տ ժամանակ խլեց:

Այն, ի՞նչ եմ ասում, նա այդ բոլորն իրենց ամեն սարք ու կարգով ստեղծեց՝ ամեն օր միայն մեկ խոսք ասելով. «Թո՛ղ լինի լույս», «Թո՛ղ ջրերը բաժանվեն ցամաքներից», «Թո՛ղ օդը լցվի թռչուններով, ցամաքը՝ ամեն տեսակի կենդանիներով, ջրերը՝ ձկներով, և ահա շունչ կենդանիներ էր, որ վիստում էին վերև-ներքև, ձայներ էր, որ լսվում, որոտում էին այն բոլոր ստեղծում, ուր մի օր առաջ ձայն-ծպտուն չէր լսվում: Ինչ կար ուրեմն հանգստանալու, երբ Ստեղծողի խոսքն էր գործ անում, ոչ թե ձեռքերն ու ոտքերը: Ուղիղն այն է, որ հանգստացավ ասելով ուզում ենք ասել՝ վերջացրեց իր գործը՝ աշխարհի ստեղծագործութունը: Անկասկած, Աստված կարող էր փոխանակ վեց օրում ստեղծելու՝ մեկ օրում, մի ժամում, մի րոպեում ստեղծել, երբ Ստեղծողն իր բերանից դուրս եկող մեկ խոսքն էր: Բայց ամեն օր մի բան միայն ստեղծելով, այն էլ դեռ ամենահարկավորը, հետո մյուսները, Աստված ուզեց սովորեցնել, որ մենք էլ մեր գործերը կարգ ու կանոնով առաջ տանենք: Իսկ կարգ ու կանոն

պահպանելն այնքան մեծ նշանակություն ունի, որ մի գիտնականի ասածի պես՝ Առանց կարգ ու կանոնի մեր կյանքի երեք մասից երկուսը գուր է կորչում:

Աստժողովրանների մյուս կեսը հրամայում է շաբաթ օրը ոչ մի գործ չանել: Եվ հրեաները, այդ հրամանի իսկական միտքը չհասկանալով, քիչ էր մնում, որ կերակուր ծամելն էլ հրամանին հակառակ գործ համարեին, այնքան միտքը թողած՝ բառին էին հետևում: Բայց միայն գործ չանելը չէ, որ ցույց է տալիս շաբաթը ճիշտ պահելը: Անգործությունը, փոխանակ շաբաթը սրբելու, եղծում, փշաջնում է շաբաթը: Անգործությունը, պարապությունը ամեն շարունակյալն ու անգործության մայրն է, և պարապ մարդը դժոխքի սյուներից մեկն է: Աշխատանքը օրհնված է, պարապությունը՝ անիծված:

Հրեից հասկացողությամբ շաբաթ օրը ոչ միայն սովորական գործ չպետք է անել, այլև նրանց բաբինները մի ցուցակ էին կազմել, որի մեջ արգելվում էին հազար ու մի տեսակի բաներ: Օրինակ՝ շաբաթ օրը չէր կարելի հագնել այնպիսի կոշիկներ, որոնց մեջ մեխ էր լինում ցցված, որովհետև այդպիսի կոշիկները բեռ էին համարվում, իսկ մեխ չունեցող կոշիկներ կարելի էր հագնել: Մի մարդ կարող էր տանել մեկ մեծ բոքոն (կլոր հաց), իսկ երկուսով չէր կարելի, որովհետև երկուսի ձեռքին նույն հացը բեռ էր համարվում:

Հիսուս, որ օրենքների մասին ունեցած սխալ հասկացողությունը հրեից քահանաների ու փարիսեցիների երեսներովն էր տալիս՝ շաբաթվա բուն նշանակությունը նրանց հասկացնելու համար, շաբաթ օրերին էլ ուրիշ օրերի պես իր գործն էր տեսնում: Մի անգամ շաբաթ օրով Հիսուսն իր աշակերտներով անցնում էր հանդերով, հասած արտերի կողքով: Աշակերտները, որ երկար ժամանակ անթի էին մնացել, այլևս չկարողանալով դիմանալ սաստիկ քաղցածությանը, սկսեցին հասկեր քաղել, բռերի մեջ փշրել, քամուն տալ և ցորենն ուտել: Փարիսեցիների լրտեսները ծածուկ հետևում էին Հիսուսին՝ տեսնելու, թե նա արդյոք այդ օրն օրենքի հակառակ բան չի

անի, որ մատներին փաթաթեն ու նրան մեղավոր դուրս բերեն ժողովրդի ու օրենքի առաջ: Հենց որ նրանք աշակերտների արածը տեսան, մոտեցան Հիսուսին. «Տե՛ս, ինչ են անում աշակերտներդ, այնպիսի բան են անում, ինչ որ արգելված է անել շաբաթ օրը»: Թեպետ օրենքով արգելված էր շաբաթ օրով հասկ կտրելն ու ջարդելը, բայց ըրաբիհները դրանից մի քիչ հեռու էին գնացել: Նրանց կարծիքով հասկ կտրելը կարելի էր հնձի տեղ ընդունել, հասկ տրորելն էլ՝ հասկ ջարդելու տեղ: Այդ պատճառով աշակերտների արածը քարկոծելու արժանի մեղք էին համարում:

Հիսուս նրանց պատասխանեց. «Լա՛վ, այդ որ ասում եք, ինչո՞ւ այն էլ չեք մտաբերում, թե ինչ արեցին Դավիթը և իր հետ եղած մարդիկ, երբ քաղցել էին: Ինչպե՞ս եղավ, որ նա մտավ տաճար ու կերավ այն հացը, որը միայն քահանաները կարող էին ուտել և ոչ աշխարհականները: Իսկ եթե Դավիթը՝ այդ ձեր սիրած մեծ ու սուրբ թագավորը, կարող էր օրենքին հակառակ վարվել, այն էլ շաբաթ օրը, և դարձյալ անմեղ է համարվում, հապա իմ խեղճ աշակերտները ինչո՞ւ պետք է մեղավոր համարվեն, երբ իրենք էլ, սովից տանջված, հասկ են փշրում ու ցորենն ուտում»: Հրեից անհասկացողությունն այն աստիճանի էր հասել, որ շաբաթ օրով մահից մարդ ազատելն էլ էին մեղք համարում: Եվ երբ Հիսուս այդ օրերին բժշկություններ էր անում՝ մեկի շորացած ձեռքն էր առողջացնում, մյուսի բորոտությունն էր սրբում, այս կույրի աչքն էր բացում, այն անդամալույծի անդամներն էր ամրացնում, և փարիսեցիները կատաղությունից իրենց անելիքը զգիտեին, այդ ժամանակ Հիսուս նրանց ասում էր. «Ի՞նչ եք կարծում, շաբաթ օրով հոգի ապրեցնե՞լն է լավ, թե՞ հոգի կորցնելը, բարի, աստվածահաճո գործ անե՞լն է լավ, թե՞ անգործ նստելը: Ողորմելիներ, լա՛վ մտածեք, շաբա՞թն է մարդու համար ստեղծված, թե՞ մարդը շաբաթվա համար, օրե՞նքն է մեզ համար, թե՞ մենք ենք օրենքի համար, շորե՞րն են մեզ համար, թե՞ մենք շորերի համար: Լավ իմանաք, որ ձեզ հետ խոսողը ինչպես ձեր

տերն է, ինչպես ժամանակի ու հավիտենականության տերն է, այնպես էլ ամեն օրվա ու շաբաթվա տերն է»:

Պատմում են, որ նույն օրը Հիսուս տեսավ մի մարդու, որ գործ էր անում, նա ասաց նրան. «Ո՛վ մարդ, եթե գիտես, թե ինչ ես անում, երանի քեզ, իսկ եթե չգիտես, թե ինչ ես անում, վայ քեզ»: Սրանով Հիսուս ուզում էր ասել. «Ո՛վ մարդ, եթե հավատիդ պատվերը գիտենալով ես շաբաթ օրով գործ անում, երանի քեզ, որովհետև արածդ ուղիղ է, իսկ եթե պատվերը չհասկանալով ես անում, վայ քեզ, որովհետև արածդ սխալ է»: Ահա մի բացատրություն, որին ուրիշ ոչինչ չի մնում ավելացնելու:

Այժմ մեր մասին խոսենք: Մենք՝ հայերս, որ լուսավորված ենք Ավետարանի լույսով, առաջին քրիստոնյա ազգն ենք և շաբաթվա առաջին օրը՝ կիրակին, մեզ համար հանգստյան օր ենք ընդունել, կարող ենք պարծենալ, որ այդ օրվա նշանակությունն ավելի լավ ենք հասկացել, քան հրեաները: Շաբաթվա վեց օրերը գլուխներս կախ՝ ամենքս մեր բանին ու գործին ենք հետևում, մեր ապրուստը հոգում: Բացվում է կիրակին՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի հարության հրաշալի օրը: Օ՛, ի՛նչ օր է այդ օրհնված օրը: Ի՛նչ մտքեր, ի՛նչ հիշատակներ է զարթնեցնում դա ամեն քրիստոնյայի մեջ: Մեր բոլորի փրկության համար տանջված, շարչարված և ավազակների մեջտեղում խաչված Հիսուսի հարության փառավոր օրը երկու բանով պետք է զբաղվենք՝ Աստծո հրամանը կատարելով և մեր փրկությունը տոնելով: Այդ օրը եկեղեցին մեզ սբ. Պատարագի է հրավիրում, հրավիրում է, որ մեր աչքով տեսնենք մեզ փրկողի մահը, այն սարսափելի անցքը, որ երկար ու ձիգ տարիներ առաջ պատահել է Գողգոթայի վրա: Մահվան բաժակը, որ Հիսուս խաչի վրա խմելուց առաջ Սիոն սարի վերնատանը խմեց, պետք է բարձրանա մեր աչքի առաջ, այն բաժակը, որ մեզ համար կյանքի բաժակ դարձավ: Ահա այդպիսի հոգևոր ճաշի, այդպիսի շքեղ հանդեսի է հրավիրում մեզ եկեղեցին:



Եկեղեցու հրավերը շատ վաղ է սկսվում՝ լուսածագին: Հնչում է տաճարի կամարներում սբ. Ներսես Շնորհալու շնորհալի երգի ձայնը: Զարթնել է մեծ հայրապետը գիշերով Զեյթունի կողմերը, Կիլիկիայի ժայռերում, նրա հետ զարթնել են նաև իր սուրբ սրտի աստվածային զգացմունքները, զարկում է սրտի թելերին, ինչպես ալախոսիկ<sup>1</sup> քնարի լարերին: Եվ ի՞նչ է ուզում սուրբ ծերունին, ի՞նչ է ուզում ազգի հայրապետը: Ուզում է մի ընդհանուր երգով փառաբանել Ստեղծողին, ուզում է շնորհակալություն հայտնել Նրան գիշերային հանգիստ քնի համար, ուզում է խնդրել Նրանից, որ կարողանա առաջիկա օրը խաղաղություն մեզ անցկացնել: Մտերից ու ամեն տեսակ թուշիկներից առաջ է ուզում լսելի դարձնել իր ցանկությունները: Կամենում է «գիշերով հիշել Տիրոջ անունը»: Իր անհուն սիրտը բուրվառ է շինել և անուշահոտ խունկի ծուխն ու բույրը բարձրացնում է դեպի Արարչի գահը:

«Զարթի՛ք, փա՛ռք իմ, զարթի՛ք, և ես զարթեացյ առաւօտուց»: Զի ասում արթնացեք, իմ որդիներ, ասում է. «Արթնացի՛ր, ի՛մ փառք, ի՛մ պարծանք, ի՛մ ուրախություն: Արթնացե՛ք, ծերե՛ր և պատանինե՛ր, արթնացե՛ք, երիտասարդնե՛ր և կույսե՛ր, արթնացե՛ք: Արթնացե՛ք հոգով հարսնե՛ր, որ սպասում եք սուրբ փեսայի գալուն: Արթնացե՛ք, լապտերներդ պատրաստեցե՛ք, ձեթի փոխարեն ջերմ արցունքնե՛ր լցրեք: Եկե՛ք, ահ ու դողով աղոթքի կանգնենք և մեր մեղքերը խոստովանենք: Փեսան ողորմած է, կների մեր մեղքերը, արթնացե՛ք»:

Այսպես, եկեղեցին, լեզու դարձած, իր որդիներին է կանչում, հրավիրում՝ մե՛րթ խնդրելով, մե՛րթ հրամայելով: Ա՛խ, որդիներն ուրիշ աշխարհում են, երազների աշխարհում: Ինտելիգենտ ժողովուրդը, բարձր դասակարգը լուսադեմին է անկողին մտել և շատ էլ օրերի հաշիվը չի պահում, նրա համար կա՛մ կիրակի չկա, կա՛մ հենց

---

<sup>1</sup> Քաղցրածայն:

ամեն օր էլ կիրակի է, և եկեղեցին, հավատը նրա մտքի անկյունով էլ չեն անցնում: Վաճառական ժողովուրդն առավոտ կանուխ խանութ գնալիք շունի, կակուղ բարձի վրա շունչ է տալիս, շունչ առնում, շատ էլ եկեղեցին ճանաչում է, բայց ի՞նչ դրա ժամանակն է. այնտեղ էլ հո առևտուր չկա՞: Արհեստավոր ժողովուրդը, որ անհամբեր լուսանալուն էր սպասում, արդեն ոտքի վրա է, բայց եկեղեցի ուրիշներն էլ կարող են գնալ, հապա գինեատները ո՞ր օրվա համար են: Իսկ ամեն տեսակ խառն ամբոխը դեպի հրապարակներն ու բազարն են շտապում՝ ծախելու, առնելու կամ աննպատակ թափառելու: Իսկ այնտեղ՝ եկեղեցում, տիրացուները բեմի առաջ կանգնած ծանր ու բարակ երգում են. «Վասն ժողովրդեանս, որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք»: Եվ այս ամենը լինում է բոլորովին դատարկ եկեղեցում, չորս պատերի մեջ:

Ուրեմն հայ ժողովուրդն ինչպե՞ս է հասկանում հանգստյան օրը՝ մի մասը մինչև ճաշ, մյուսը մինչև նախաճաշ՝ անուշ քնի մեջ է, իսկ այնտեղ պաշտոնն էլ է վերջանում, Պատարագն էլ: Ոտքի վրա եղածների մի մասը բազարն է շտապում, մյուսը՝ գինետուն: Եվ քահանան աղոթքների մեջ, սարկավազը քարոզների մեջ, պատարագիչն անարյուն Զոհի առաջ խնդրվածքներ է, որ անում են այն ժողովրդի համար, որ միանգամայն կորցրել է եկեղեցու ճանապարհը:

Իսրայելացի ժողովուրդը, որ շաբաթ օրը որևէ գործ անելուց այնպես էր հրաժարվում, ինչպես մենք սատանայից, իմ կարծիքով ավելի լավ էր անում, քան թե մենք, որ կիրակի օրն անում ենք ամեն անկարգ բան, գնում ենք ամեն անկարգ տեղ, նայում ենք ամեն անկարգ տեսարանի, ականջ ենք դնում ամեն անկարգ խոսք ու զրույցի, բերաններիցս դուրս ենք հանում ամեն անվայել խոսք ու հայհոյանք, նստում ենք անչափ ու անկարգ կերուխոտի: Փոխանակ մեզ այդ օրը կարգին պահելու, զսպելու՝ մենք հենց այդ օրն ենք մեզ ամեն բան թույլ տալիս: Եվ մեր այս անկարգ արարմունքով ոչ թե պատվում ու փառավորում ենք Աստծո անունը, այլ անարգում ու կողոպտում ենք նրանից Իր փառքը:

Եթե լավ քննենք դատարանները մտնող գանգատները, դեղատները մտնող դեղատոմսերը, գերեզմանները մտնող դիակները, այդ ժամանակ կնկատենք, որ այն կոիվները, որոնց մասին գանգատներ են եղել, այն հիվանդությունները, որոնց պատճառով դեղատոմսեր են գրվել, այն սպանությունները, որոնցից մահ է առաջացել, դրանք բոլորը մեծավ մասամբ պատահել են կիրակի օրերին: Այս բոլորը ցույց է տալիս, որ շաբաթը մի անգամ հանգստության համար սահմանված օրը մենք անց ենք կացնում մարմնավոր ու հոգևոր տանջանքների մեջ: Այդ օրը սահմանված է սրբվելու համար, մենք պղծում ենք, սահմանված է Աստծուն նվիրելու համար, մենք նվիրում ենք սատանային:

Ի՞նչ է նշանակում Կիրակին նվիրել Աստծուն: Նշանակում է այդ օրն անցկացնել աստվածահաճո գործերի մեջ: Իսկ Աստծուն հաճելի գործերն են՝ մի կողմ թողնել մարմնապաշտությունը, մարմնի ցանկությունները կատարելը և զբաղվել աստվածապաշտությամբ ու հոգևոր գործերով: Օրհնություն մեր սբ. հայրապետերին, օրհնվի՛ նրանց հիշատակը: Նրանք արյուն-քրտինք թափեցին, կյանքները մաշեցին և սրբազան ծեսերով ու արարողություններով այնպես պայծառացրին մեր եկեղեցին, որ այն դարձավ մի երկնային դրախտ: Ինքը՝ Քրիստոս, այդ դրախտի պլանը գծեց, Աստված վերևից նրա հիմքն օրհնեց, Թագևոսն ու Բարդուղիմեոսը ծառերը տնկեցին, Լուսավորիչը ցանկով պատեց, Թարգմանիչները ակոսներ բաց արին, Վարդանանք իրենց արյունով ջրեցին (ոռոգեցին), Շնորհալին դանակն առավ, հոտեց<sup>1</sup>, հայ ազգը պտուղները վայելեց: Ահա թե ինչ է եկեղեցին. նա մեր հոգևոր կյանքի վառարանն է, աշխարհային աղմուկներից զերծ մնալու խաղաղ նավահանգիստն է:

Եկեղեցի գնալը, պաշտամունքի ու սբ. Պատարագի ներկա լինելը, իր խնդրվածքը քահանայի աղոթքների հետ խառնելը, սբ. Ավետարանի կարդալու միջոցին ավետաբեր Հիսուսին ականջ դնե-

---

<sup>1</sup> Կտրել, էտել:

լը, այս բոլորն ամեն քրիստոնյայի սրբազան պարտականութիւնն է: Հիրավի, ի՛նչ արժե մարդուս համար շաբաթվա մեջ մի երկու ժամ կտրվել աշխարհից ու նրա հրապույրներից, մտնել Աստծո տուն, որտեղ ականջիդ հասած ամեն ձայն հոգուդ հետ է խոսում, որտեղ հետդ խոսողն Աստված է և իր սիրելիները: Ինչպէ՛ս է ճնշված ու թմրած հոգիդ մի փոքր շարժվում ու թարմանում, ինչպէ՛ս թեթևացած ես զգում քեզ:

Կիրակին եկեղեցում մեր հոգու առաջ բաց է անում սրբոց ժողովարանը: Այդ ժողովարանի սուրբ անդամներին թեպետ մարմնավոր աչքերով չենք տեսնում, բայց նրանց սրտաշարժ խոսքերը, նրանց հոգեպարար մտքերը, որոնք եկեղեցու կամարները թնդացնելուց առաջ նրանց խցերի պատերն են ցնցել, պարզ ու որոշ հասնում են մեր ականջին ու զմայլեցնում մեզ: Նրանք թևավորում են մեր հոգին, որ, այդ միջոցին իր համար նեղ գտնելով տաճարի ցածր կամարները, երկնային բարձր կամարներն է սլանում: Հայոց երկրի ամեն մի նահանգ, ամեն գավառ այդ ժողովարաններում ունի իր արժանավոր ներկայացուցիչը: Սահակն ու Մեսրոպն իրենց աշակերտներով, Խորենացին իր ընկերներով, երկնային բանաստեղծների, հոգևոր երգիչների մի սովոր բազմութիւնն եկեղեցին թնդացնում են իրենց սրտահույզ երգերով, տաղերով ու մեղեդիներով:

Կիրակի օրը ժամ-պատարագ տեսնելը հայի համար այնքան մեծ նշանակութիւն է ունեցել, որ քահանայի առաջ խոստովանողն այս էլ էր ասում. «Կիրակի օրը եկեղեցի չեմ գնացել, մեղա Աստուծո»: Ոչ ոք չի կարող կիրակի օրով եկեղեցի չգնալն արդարացնել նրանով, որ այնտեղ լավ ժամերգութիւնն չկա, հոգևորականների մեջ կարգ ու կանոն չկա, լավ ձայնավոր երգիչներ չկան և այլն: Դրանք այնպիսի հանգամանքներ են, որոնք մեզ չեն կարող մեր Աստծուց հեռացնելու պատճառ դառնալ: Դու ոչ միայն ինքդ պետք է եկեղեցի հաճախես, այլև շատ սիրուն բան արած կլինես, եթե մատաղ մանուկներիդ էլ հետդ տանես: Եթե դու եկեղեցասիրութիւնը, քո պապերի գովական սովորութիւններն ու ծեսերը, սրբազան երգեցո-

ղությանը, Ավետարանի փրկարար խոսքերին, քահանայի հոգեշահ քարոզներին ահանջ դնելը մանկությունից հաստատես երեխայիդ անարատ սրտում, պետք է հավատացած լինես, որ մեծ գործ արած կլինես Աստծո տնտեսություն մեջ:

Մեր հայրերը բախտավոր ժամանակներում էին ապրում: Պապենական սովորության համաձայն՝ հացի նստելիս, հացից վեր կենալիս երեխաները պետք է ոտքի կանգնած, ձեռնամաձ «Հայր մերն» ասեին: Իսկ երեկոյան՝ անկողին մտնելուց առաջ, պապը, տատը, ծնողները, որդիները, թոռները միասին կանգնում, «Յկեսցէ» և «Հավատով խոստովանիմքն» էին ասում և ապա երեսները խաչակնքելով՝ անկողին մտնում: Ինչ երկյուղածություն, ի՛նչ ջերմեռանդություն էր տիրում մանուկների սրտերին: Այդտեղ էր ահա կյանքի համն ու հոտը, այդտեղ էր օջախի սրբությունն ու հաստատությունը, այդտեղ էր պատիվն ու պատկառանքը, այդտեղ ողջ տունը, մի հոգի դարձած, կանգնում էր Տիրոջ առաջ: Իսկ հիմա ինչպե՛ս ենք կորցրել ճանապարհներս, ինչպե՛ս մոռացել հավատներս, ինչպե՛ս փոխվել են հոգիներս, ինչպե՛ս սառել, դատարկվել, ծխոտվել...


Կիրակի օրը քրիստոնյան տանը պետք է կարգա կրոնական, բարոյական գրվածքներ, որոնց մեջ իր համար հոգևոր կերակուր կարող է գտնվել: Թող հայ քրիստոնյան կարգա սբ. Ավետարանը, «Հիսուսի վերջին շաբաթը», թող կարգա «Մարգարիտ արքայությունց երկնիցը», «Չարշարանքի շաբաթը», թող կարգա «Դրախտի ընտանիքը», «Մրմունջք Հիսուսին» և այս բովանդակության ուրիշ գրքեր:

Քրիստոնյայի պարտքն է կիրակի օրերին մանավանդ հիշել չքավորներին, աղքատներին, օգնել նրանց, թեթևացնել նրանց վիճակը ինչով որ կարելի է, տեսություն գնալ հիվանդներին, բանտարկյալներին և առհասարակ օրն անցկացնել բարեգործությամբ: Չմոռանանք, որ եթե կիրակի օրը սովորական գործով պարապելն անվայել է, ավելի անվայել են զանազան անկարգ զվարճությունները, որոնցով մարդիկ ուզում են սպանել ժամանակը:

Ինքը՝ Պողոս առաքյալը, հրամայում է ողորմություն տալ ավելի հաճախ կիրակի օրը, որ տվողների մեջ ավելի եռանդ շարժվի: Կիրակին այն պատճառով է դրա համար հարմար օր համարվում, որ այդ օրը դադարում է ամեն աշխատանք, և հոգին հանգստանում է, իսկ գլխավոր պատճառն այն է, որ այդ օրը մենք շատ շնորհների ենք արժանացել: Կիրակի օրը խորտակվեց մահ՛ը, ջնջվեց նզովքը, ոչնչացավ մեղքը, կործանվեցին դժոխքի դռները, Աստված հաշտվեց մարդու հետ, մարդկային ազգը լավագույն վիճակի արժանացավ, և արեգակը տեսավ սքանչելի տեսարան. այն է, որ մարդը դարձավ անմահ: Առաքյալը, այդպես հանդիսացնելով կիրակին, կարծես ամեն մեկիս ասում է. «Մտածի՛ր, ո՛վ մարդ, թե ինչքա՛ն բազմաթիվ ու մեծ շնորհների ես արժանացել դու այդ օրը, ինչպիսի՛ շարիքներից ես փրկվել, ի՛նչ էիր առաջ և ի՛նչ ես հիմա»: Մենք սովոր ենք մեր ծննդյան օրը տոնել շքեղ հանդեսներով ու ճոխ սեղաններով, ինչքան ավելի պետք է պատվենք այն օրը, որը կարելի է անվանել մարդկային բնության ծննդյան օր: Որովհետև մենք կորած էինք, գտնվեցինք, մեռած էինք՝ կենդանացանք, թշնամի էինք, հաշտվեցինք: Ուրեմն մենք պետք է այդ օրը տոնենք ոչ թե շափազանց կերուխումով, այլ հոգևոր պատիվ տալով սրան. այն է՝ մեր չքավոր եղբայրներին ամեն անգամ օգնելով: Այն Աստվածը, որ ասաց. «Թող երկիրը բուսցնի ամեն տեսակ խոտ ու բույս», մի՞թե չէր կարող հրամայել, որ աշխարհի ամեն կողմ ոսկե գետեր հոսեին: Բայց չկամեցավ այդ, այլ թողեց, որ շատերը խեղճ ապրեն թե՛ իրենց և թե՛ մեր օգտի համար: Թողեց, որ ով իրեն մի բանում մեղավոր է զգում, մխիթարվի նրանով, որ Աստված նրա կողքին աղքատներ ու չքավորներ է դրել, որպեսզի նրանց վրայով, ինչպես մի կամրջով, անցնի, գնա երկնքի արքայությունը: Ինքը՝ Աստված էլ, երբ աշխարհ եկավ ու մարդկանց մեջ բնակվեց, հարկավոր համարեց բոլոր խեղճերի հոգսը քաշել: Նա, որ մեկ խոսքով ստեղծում էր ամեն բան, նա, որ հրաշալի կերպով հացերը շատացրեց, կարող էր մի բոպեում հազարավոր գանձեր ի հայտ բերել, բայց չարեց, այլ Իր աշակերտ-

ներին հրամայեց, որ մի արկղ պահեն, ժողովրդից ստացված փողերը մեջը ժողովեն և այդ փողերով օգնեն խեղճերին: Ահա թե ում օրինակին պետք է հետևենք մենք ամենքս, եթե կամենում ենք ամենողորմ և մարդասեր Հիսուսին ոչ թե դատավոր, այլ պարտապան տեսնել հանդերձյալ կյանքում:

Երբ կիրակին կսրբենք ու կսրբացնենք սուրբ մտածումներով, սուրբ ճանապարհներով, սուրբ գործերով, այդ ժամանակ հասկացած կլինենք այդ օրվա մեծ նշանակությունը և միայն այդ ժամանակ կատարած կլինենք Աստծո պատվիրանը, որ ասում է. «Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն»:



# ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

## ԲԱՆ Ա

«Եվ ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով, կատանաք»:  
(Մատթ. ԻԱ: 22)

Ի՞նչ է նշանակում ԱՂՈԹՔ անել

*Երբ ստեղծվածը հոգով, սրտով ու մտքով կապվում է իր Ստեղծողի հետ, ժամանակավորը՝ հավիտենականի հետ, մահկանացուն՝ անմահի հետ, դրան ասում ենք աղոթք անել:*

*Բայց միայն մարդս չէ, որ աղոթում է. բոլոր արարածները՝ թե՛ բանական, թե՛ անբան, թե՛ շնչավոր, թե՛ անշունչ, աղոթում են Աստծուն: Երբ առավոտյան արշալույսին ծտերը ճռվողում են, կովերը բառաչում, ոչխարները մայում, ծառն իր սոսափյունով, ծաղիկն իր գլուխը վեր տնկելով, ծովն իր ծփալով, հողմն իր շնչով, ամենքը միասին մի ընդհանուր աղոթք է, որ վեր են բարձրացնում դեպի Ամենակալի գահը: Երկինք-գետին, ծով ու ցամաք, զգացմունք ու լեզու դարձած, իր Ստեղծողին է ուղղում իր առաջին հայացքը, իր առաջին խոսքը: Իսկ բանական մարդը, այդ բոլորի մեջ իր Արարչի մատը տեսնելով, իր մեջ նրա շունչը զգալով, նորոգում է նրա հետ իր մշտական կապը՝ բաց անելով նրա առաջ իր սիրտը: Ահա այդ ժամանակ սուրբ Ոսկեբերան հայրապետի ասածի պես բարձրանում է աղոթքը, և իջնում է Աստծո ողորմությունը:*

*Վշտերի ու հոգսերի մեջ աչք բաց արած մարդուն այնքան այլոց մխիթարանքը չի օգնում, ինչքան այն, որ նա իր սիրտը բաց է անում*



ուրիշի մոտ, իր վշտերն ու ցավերն է պատմում: Մի՞թե միևնույնը չի պատահում մարդուս, երբ աղոթք է անում, երբ իր անզորությունն ու ոչնչությունը դնում է իր Ստեղծողի առաջ: Երբ դու աղոթում ես, այդ սուրբ բուպեներին, երբ քեզ շրջապատող աշխարհը մոռացած՝ ծխում ես քո սրտի բուրվառը դեպի Նրան, որի առաջ դու հող ես և մոխիր, մի ներքին փոփոխություն չե՞ս գգում մեջդ, սիրտդ չի՞ թեթևանում, անձդ չի՞ հանգստանում, վշտերիդ դառնությունը չի՞ մեղմանում: Երբ անասունը ցավագարում է, երբ քաղցում է, չի՞ մոռնում. նրա մոռունչն իր աղոթքն է առ Աստված: Երբեմն անդաստանների կողմը արտերը փչացնող քամիներ են փչում, որից նրանք իսկույն թառամում, գետին են խոնարհվում, բայց հետո մի ամպի կտոր է գալիս, կաթիլներ է ցողում վրաները և կրկին վեր է բարձրացնում նրանց թմբած գլուխները: Մեր հոգին էլ ունի իրեն թառամեցնող, շորացնող քամիները, որոնք ամեն կողմից, ամեն ուղղությամբ փչում են նրա վրա: Աստծուց հեռացած լինելու մեղքերն են, որ շորացնում են նրան, անձրև է հարկավոր նրան կրկին զվարթանալու համար, և հոգու տապը զովացնող այդ անձրևն աղոթքն է: Ամեն ստեղծված կախում ունի, կյանք ունի, հույս ունի Ստեղծողից. այդ պատճառով աղոթքը բույն ունի դրած ամեն մարդու հոգու խորքում, ամեն տեղ և ամեն ժամանակ: Վայրենի մարդուն անգամ, որ իր սրտի ուզածը խոսքով հայտնելու համար լեզու չունի, աղոթքը վշտերի միջոցին ստիպում է իր անմիտ երեսը դեպի երկինք ուղղել, և անհավատ հորը ստիպում է ծունկ խոնարհել իր որդու մահվան անկողնու մոտ:

Աղոթքն իջեցնում է Աստծո բարկությունը, հաշտեցնում է մեղավորի հետ, լվանում սրտի ախտերն ու կեղտերը, ազատում վտանգներից: Աղոթքը մի ոսկե շղթա է, որով Աստված մոտենում է մարդուս նեղություն ժամանակ: Ինչպե՞ս ազատվեց Հովնան մարգարեն կետի փորից՝ ձեռքը ձգելով աղոթքի շղթային: Ինչպե՞ս ազատվեցին երեք մանկունքը Բաբելոնի հնոցից՝ բռնելով աղոթքի շղթան: Ավագակն ինչպե՞ս խաչի վրայից դրախտ մտավ՝ ձեռքը գցելով աղոթքի

շղթային: Ինչպե՞ս փշրվեցին բանտում Պողոս առաքյալի շղթաները՝ ապավինելով աղոթքի ոսկե շղթային:

Բայց պետք է ականջ դնել մեր սբ. հայրապետերին, թե ինչպես են գովում աղոթքը, ինչ ուժ ու զորություն են տեսնում նրա մեջ: Մեկն ասում է. «Աղոթքն է հավատի հիմքը, աստվածության սանդուղքը, հրեշտակաց բարեկամը»: Մյուսը ձայն է տալիս. «Աղոթքն է թշնամու խարազանը, մեղավորի ապաստարանը, Աստծո պատարագը»: Երրորդը, թե. «Աղոթքն է ուղևորի վահանը, աշխատյալի հանգիստը, անքույթ<sup>1</sup> նավահանգիստը»:

\*\*\*

Աղոթելուց առաջ պետք է հարկավոր պատրաստությունը տեսնել: «Երբ աղոթելիս լինես,— ասում է Հիսուսը,— մտի՛ր սենյակդ, փակի՛ր դռներդ և խնդրվածքդ փոխի՛ր Հորդ առաջ»: Չպետք է կարծել, թե դրանով ուզում է ասել, որ իբր ամեն մարդ աղոթելիս պետք է անպատճառ մտնի իր տունը: Այլ ուզում է ասել. «Կտրի՛ր քո հարաբերությունները քեզ շրջապատող ամեն բանի հետ, ամփոփվի՛ր ինքդ քո մեջ, ուշքդ ու միտքդ լա՛վ ժողովիր, որ խնդրելիքդ ուղղակի առ Աստված ուղղես, բոլոր զգայարաններիդ դռները փակի՛ր աշխարհային ունայն մտքերի, ձայների ու տեսարանների դեմ և ապա սկսի՛ր քո խոսքի թելը: Իսկ եթե ինքդ ծնկած ես եկեղեցում, բայց հոգիդ դրսում է, եթե շրթունքներդ աղոթքի խոսքեր են մրմնջում, իսկ միտքդ ուրիշ բաների վրա է, դու ճշմարիտ աղոթող չես: Եթե հոգիդ չի աղոթում, եթե սիրտդ չի արտասվում, ինչքան էլ ծունր դնես, երկրպագես, արցունք թափես, անօգուտ է»:

Աղոթելու պատրաստությունը հասկացնելուց հետո Հիսուս ուղղակի աղոթելու կերպի մասին է խոսում: «Երբ աղոթելու լինես,— ասում է,— շատախոս մի՛ լինիր»: Շատախոսությունը մարդու հետ ինքնընտանիքյան ձանձրալի է, մանավանդ Աստծո հետ, իսկ աղոթո-

---

<sup>1</sup> Ապահով, խաղաղ:

դի համար միշտ անգամ վնասակար, որովհետև շատ խոսքեր ասելիս չկարողանալով ամբողջ ուշքը մի բանի վրա պահել՝ նա դառնում է մի խոստուն մեքենա: Եթե շատախոսություն միտքն այն է, որ խնդիրը լավ հասկացվի, շատ ավելորդ է, որովհետև Աստծուն լավ հայտնի են մեր պետքերը. «Առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք»: «Թո՛ղ,– ասում է Հիսուս,– իրենց աստվածներին այդպես աղոթեն հեթանոսները, կռապաշտները: Նրանք կարծում են, թե միայն շատ խոսքեր ասելով, շատախոսելով կարող են բան հասկացնել իրենց քարե, երկաթե, ոսկե և արծաթե աստվածներին, որոնք աչք ունեն, չեն տեսնում, ականջ ունեն, չեն լսում և ոչինչ չի մտնում իրենց գլուխը: Իսկ դու գործ ունես աստվածների Աստծո հետ, որ քո խնդրելուց էլ առաջ գիտի՝ ինչ է հարկավոր քեզ»:

Շատախոսությունն էլ երկու տեսակ է: Առաջինը՝ երբ մարդ Աստծուն աղոթելիս նրան սովորեցնում է, թե ինչ է հարկավոր իրեն և ինչ հարկավոր չէ: «Տե՛ր Աստված,– ասում է,– Քեզանից հարստություն, գանձ ու մեծություն չեմ ուզում, տո՛ւր ինձ առողջություն և բավական է»: Միևնույն է, թե կավը ասեր բրուտին. «Ինձնից կարաս պատրաստի՛ր, ոչ թե կճուճ»:

Եվ այսպես, իր կարծիքով ինչ որ հարկավոր ու օգտակար է իրեն, միայն այն է խնդրում՝ չմտածելով, թե ինչքան անմիտ է իր խնդիրը, և ինչքան անսահման Աստծո իմաստությունը, որ իրենից լավ գիտի իր օգուտն ու վնասը: Քիչ չի պատահել, որ երբ մեկից մի բան ենք խնդրել ու մերժվել ենք, մեր ուզածը չենք ստացել, փոխանակ տրամելու՞ ուրախացել ենք, որովհետև գործով համոզվել ենք, որ եթե մեր խնդիրը կատարվեր, այս կամ այն կողմով պետք է վնասվեինք: Եվ եթե նա, որից կախված էինք համարում մեր վիճակի բարելավությունը, մեզ չկարեկցելով մերժեց, բայց գոհ մնացինք, ինչքան առավել գոհ պետք է լինենք մեր Ստեղծողից, որ մերժում է՝ մեր բարին ցանկանալով: Այո՛, Աստծո մի առանձին բարերարություն է, որ շատ-շատ անգամ մեր խնդրածը չի տալիս մեզ:

Երկրորդ՝ երբ աղոթողը վճռել է ունենալ մի բան և անպատճառ ուզում է ստանալ, այդ ժամանակ նա, ինչպես մի փաստաբան, աշխատում է հանողել Աստծուն, որ անպատճառ տա իրեն՝ էլ չմտածելով, թե Աստված ուզում է տալ, թե ոչ: «Տե՛ր Աստված,– ասում է,– օրը երկու անգամ ժամ գնալով հոգնեցի, շատ ծունր դնելով ծնկներս մաշվեցի, շատ արտասովելով աչքս կուրացավ, ե՛րբ պետք է հասցնես ինձ Քո օգնությունը, ես արդեն հողի հետ հավասարվեցի»։ Այսպիսի խնդրվածքով Աստծուն դիմելն անմտությունից էլ ավելի է, որովհետև դրանով խնդրողը մտնում է Աստծո իրավունքների մեջ:

Մեր խնդրվելիքը պետք է լինի Աստծո կամքի համաձայն: Մենք ոչ թե պետք է ասենք՝ Աստված, ինձ այս տո՛ւր, այն տո՛ւր, այլ Դու լավ գիտես՝ ինչ է հարկավոր ինձ, ինչն է օգտակար, տո՛ւր ինձ այն, ինչ որ հաճելի է Քեզ, այնքան տուր, ինչքան կամենում ես, այն ժամանակ տուր, երբ կամենում ես: Եթե Հիսուս չարչարանքի բաժակն իրենից հեռացնելու համար ավելացնում էր. «Բայց ոչ ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես Դու», մենք՝ տարակուսած մարդիկս, մեր ուզածը պետք է խնդրենք: Իսկ սրբերից մեկն ասում էր. «Ես ավելի կցանկանամ մի շնչին որդ լինել Աստծո կամքով, քան թե մի սերով՝ բե իմ կամքով»:

\*\*\*

Մենք Աստծուն պետք է խնդրենք ոչ թե շատախոսությունք, այլ պնդերեսությունք, ինչպես մի մուրացիկ, որ թեպետ իր վրա ուշք դարձնող չկա, սակայն երեսը պնդացնում է և ձանձրացնելու շափ խնդրում: Երբ մեզ նեղացնում են խնդրելով, մենք զայրանում ենք, բայց Աստված այն ժամանակ է զայրանում, երբ նրան շատ չենք խնդրում: Հիսուս դրա համար մի գեղեցիկ օրինակ է բերում: «Կարող է լինել,– ասում է,– ձեր մեջ մի այնպիսի մարդ, որի դրացին գնա մոտը և ասի. «Սիրելիս, բարեկամս հեռավոր տեղից եկել է, ոչինչ չունեմ ուտելու, երեք հաց տուր, խնդրում եմ, դնեմ առաջը», և

նա պատասխան տա. «Այս կեսգիշերին ի՞նչ հաց ուզելու ժամանակ է, դուռս փակ, երեսաներս էլ անկողնումս քնոտած, խնդրում եմ՝ հանգիստ թողնես ինձ, չեմ կարող վեր կենալ և ուզածդ տալ»։ «Ճշմարիտ եմ ասում,– ավելացնում է Հիսուս,– եթե դրացիության պատճառով շտա, գոնե երեսն այդպես պնդեցնելու համար վեր կկենա և կտա նրան իր ուզածը»։

Եվ ի՞նչ է այդ քո բերած նմանությունը, Տե՛ր Հիսուս։ Դու բնությամբ անքուն, իսկ Քո առակի դրացին անկողնում ձգված, Դու Իսրայելի անքուն պահապանը։ Դու Հակոբի տան ոչխարների արթուն Հովիվը, իսկ նա քնի տարած. մի՞թե Դու էլ ես քնում, անքուն բնություն։

Եթե քնկոտը խնդրողի պնդերեսությունից ուզածը տվեց, մի՞թե արթունը չի տա։ Եվ որպեսզի մեզ հաստատի այդ մտքի մեջ և ձգտել տա այդ միջոցով ձեռք բերելու մեր խնդրածը, Հիսուս մի երկրորդ օրինակ էլ է բերում։ Այդ օրինակի մեջ Աստծո անհուն բարերարություն մի փոքրիկ նմանությունը նա ցույց է տալիս ոչ թե անկողնում ձգված դրացու, այլ դատավորական աթոռի վրա բազմած դատավորի մեջ։ «Մի դատավոր կար,– ասում է,– մի քաղաքում. ո՛չ Աստծուց էր վախենում, ո՛չ մարդկանցից ամաչում։ Նույն քաղաքում մի խեղճ այրի կին էլ կար, որ ամեն օր գնում էր դատարան և դատաստան էր խնդրում իր թշնամու դեմ։ Բայց դատավորը երկար ժամանակ ականջ չէր դնում նրան։ Նրա հոգը չէր, թե թշվառ այրու հարուստ դրացին պարտքի դիմաց գրավել էր նրա ամբողջ կայքը, հացը խլել որբերի ձեռքից և միակ ապավեն խրճիթն էլ ձեռք գցելու վրա էր։ Անտեր, անօգնական այրին, որի կուրծքը տքնում էր անվերջ հառաչանքներից, որ շատ անգամ էր ընկել պարտատիրոջ ոտքերը և գթություն խնդրել, այժմ էլ լուսանալուն պես վազում էր դատարան, դատավորի խիղճն էր թակում։ Բայց նրա խիղճը թմրած էր, և նա մնում էր քարացած և խուլ։ «Դա՛տ արա թշնամուս դեմ» խոսքերը վերջապես հոգնեցրին նրա լսելիքը, խայթեցին նրա խիղճը։ Եվ մեր «անիրավ դատավորը» սկսեց խելքը գլուխը հավաքել և այս-

պես մտածել. «Թեև ես Աստծուց չեմ վախենում և մարդուց չեմ ամաշտում, գոնե այս պնդերես այրուց օձիքս ազատելու համար անեմ իր դատաստանը և ականջս հանգիստ պահեմ»: «Մտածի՛ր հիմա,— ասում է Հիսուս,— եթե անիրավ դատավորը խնդրողի պնդերեսուկցունից վերջապես հոժարում է կատարել նրա խնդիրը, հապա Աստված չի՞ անցնի իր ծառաների, իր որդիների կողմը, որոնք «աղաղակում են առ Նա ի տուէ եւ ի գիշերի»:

Մի խոսքով Աստված կամենում է, որ աղոթելով ձանձրացնենք Իրեն, խնդրենք մուրացկանների պես, որոնք չեն դադարում ուզելուց, կրկնելուց, դուռը բախելուց, մինչև չեն ստանում:

\*\*\*

Աղոթելիս չպետք է շարաշար խնդրել, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում. «Խնդրում եք, բայց չեք ստանում, որովհետև շարաշար եք խնդրում, դեպի ուրիշները աններող գտնվելով եք խնդրում»: Չարաշար խնդրողները կեղծավոր, հպարտ, անողորմ մարդիկ են, որոնք իրենց աղոթքով Աստծուն ավելի շատ են բարկացնում, քան թե քաղցրացնում: Չարաշար խնդրողները նրանք են, որոնք իրենց ականջներն են խցում՝ ուրիշների խնդիրները չլսելու համար, և այդպիսիների մասին Աստծո օրենքի մեջ պարզապես կարգում ենք. «Ով որ խցում է իր ականջը, որ չսի տնանկին, նա ինքն էլ կաղաղակի առ Աստված և չի լսի նրան»:

Երբ շարաշար աղոթողն իր համար է աղոթում, այնպես աղաչանքով ու պաղատանքով է խոսում, այնպիսի համոզիչ լեզու է բանեցնում, որ կարողանա հասանելի անել Աստծուն: «Աղաչում եմ,— ասում է,— Տե՛ր, ողորմի՛ր անարժանիս, քա՛ղցր դատավոր, բարերար՝ և մարդասե՛ր, մի՛ հիշիր իմ մեղքերը, անտե՛ս արա իմ հանցանքները, եթե արդարն ու մեղավորը փնտրես, ո՞վ կարող է փրկվել»: Իսկ երբ նա, իր թշնամուց վիրավորված, գնում, աղոթքի է կանգնում, իր խնդրվածքն ուրիշ կողմ է շուռ տալիս: «Տե՛ր Աստված,— ասում է,— անաչառ դատավոր ես, անիրավությունն ատում

ես, մի՛ ներիր իմ թշնամուս, Քո բարկութեան կրակն ու կայծակը թափի՛ր նրա գլխին, արդար հատուցում արա»:

Իսկ Աստված ի՞նչ է պատասխանում. «Երբ քեզ դատելիս ուզում ես, որ քաղցր ու բարերար լինեմ, չհիշեմ քո մեղքերը, իսկ երբ թշնամուն դատելիս լինեմ, ուզում ես, որ արդար ու անաչառ լինեմ: Ձէ՞ որ առաջ իբրև քաղցր դատավորի էիր ազաղակում, իբրև անհիշաչարի ազաչում, այս ինչպե՞ս փոխվեցիր: Բայց լա՛վ իմացիր, անկարելի է, որ դու ինձնից բարիք ստանաս, իսկ թշնամիդ՝ արդար հատուցում, որովհետև բարերարը դեպի ամենքն էլ բարերար է, և արդար դատավորը՝ դեպի ամենքն էլ անաչառ»: Դեռ կարելի է, որ թշնամուդ հակառակ աղոթելիս դատավորիդ գայրացնես քո դեմ: Արդար դատավորի աչքում երկուսդ էլ մեկ եք, Նա երկուսիդ էլ հավասարապես է քննում:

Աղոթքը պետք է լինի հավատով: Մենք պետք է խնդրենք հավատով, հետևենք հուսալով, բախենք սիրով: Հավատով, հույսով և սիրով աղոթքը երկնքի բանալին է, որ բաց է անում Աստծո ողորմութեան դուռը, ինչպես հուսադրելով ասում է Հիսուս. «Ամեն բան, ինչ որ աղոթքի մեջ խնդրեք հավատով, կստանաք»: Աղոթքը թույլ է, եթե հենված չէ հավատի վրա. անհավատ, անհույս, անսիրտ աղոթքը նման է անծուխ խնկի, չի կարող բարձրանալ առ Աստված: Ինչպես ծերությունից ուժասպառ եղած մարդը շուտ-շուտ գայթում<sup>1</sup>, ընկնում է, եթե գավազանի վրա չէ հաստատված, այնպես էլ աղոթքը չի կարող Աստծուն մոտենալ և մնալ, եթե հավատով ամրացած չէ: Ամենայն մարդ, որ Հիսուսից օգնություն էր խնդրում՝ հավատ ցույց տալով, հավատ, որ նրա զգացմանց, նրա խոսքի, նրա աղաչելու կերպի մեջ էր երևում, ստանում էր իր խնդրածը: Ամեն այդպես խնդրողի Հիսուս հասցնում էր իր օգնությունը՝ ասելով. «Ըստ քո հաւատի թող լինի քեզ», այսինքն՝ քո հավատն ավելի է շարժում իմ սիրտը, քան թե քո խոսքը: Ահա դրա մի լավ օրինակը:

---

<sup>1</sup> Սայթաքել

Մի քանանացի հեթանոս կին, դուրս գալով իրենց սահմաններից, պատահում է այնտեղ Հիսուսին և աղաղակում. «Տե՛ր, օգնի՛ր ինձ, աղջիկս հիվանդ է, դևոտվում է շարաշար, չկա մեկը, որ բժշկի նրան, իմ ճարը Դու ես, օգնի՛ր»:

Բայց Հիսուս պատասխան չի տալիս. նա լուռումունջ շարունակում է ճանապարհը: Կինն այդժամ շտապելով առաջ է ընթանում և փակում է նրա ճանապարհը, այնպես որ նա այլևս չի կարողանում առաջ գնալ: Նա տարածում է բազուկները դեպի Տերը, ցույց է տալիս նրան իր արտասովորից աչքերը, իր վշտալի դեմքը, իր մայրական պատառոտած սիրտը, աշխատում է շարժել նրա սիրտն իր կտրված, խզված, երկչոտ ձայնով: Խեղճ կինը մի բան է միայն աղաղակում. «Տե՛ր, օգնի՛ր ինձ»: Ուզում է ասել. «Նս գիտեմ, որ իբրև հեթանոս կին, իրավունք չունեմ հույս դնելու քո օգնության վրա. գիտեմ, որ Դու եկել ես միայն Քո աչքի լույս պես սիրած Իսրայելի ժողովրդի համար, բայց ինչ ուզում է լինի, ում համար ուզում է եկած լինես, ես չեմ թողնի Քեզ»:

Տերն ավելի խիստ ու կծու կերպով է պատասխանում.

– Լավ չէ, որ երեխաների ձեռքից հացն առնենք, շներին տանք: Ես իմ ժողովրդի հացն օտարին չեմ կարող տալ. թող դեռ իմ ժողովուրդը կշտանա, տեսնենք հետո ձեզ համար էլ մի բան կմնա՞:

Հիսուսի սիրտը, մարդացած Աստծո սիրտը, անկասկած, ավելի է արյունոտվում, քան թշվառ կնոջ սիրտը, որ լսում է, թե ինչպես է իր խնդիրը մերժվում, ինչպես են իրեն համեմատում շների հետ, բայց և այնպես «հովվասեր շունը» ձեռք չի քաշում Հովվից և ձայն է տալիս.

– Տե՛ր, չէ՞ որ շներն էլ իրենց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով են կերակրվում: Աշխարհս օգնության է ստանում Քեզանից, մի՞թե միայն ես պետք է սխալվեմ հույսերիս մեջ, մի՞թե միայն ինձ պետք է արձակես դատարկաձեռն, մի՞թե Դու ինձ համար ուրիշ բարիք չունես, Քո ամեն բարությանք լի սեղանից մի՞թե



կտորներ, փշրանքներ չեն մնացել. ինչո՞ւ զուր կորչեն այն փշրանքները, որոնց կարոտ չեն քո «երեխաները»:

Հիսուս հաղթվում է, ոչ մի բառով չի հանդիմանում նրա թախանձանքը, ոչ մի խոսք չի ասում նրա համառուության մասին, ընդհակառակը, գովում է նրան և ձայն տալիս.

– Այ կին, մեծ է քո հավատը, թող լինի, ինչպես ուզում ես:

Կինը գնում է տուն և որդուն գտնում է բժշկված:

Աղոթքը պատահական չպետք է լինի, այն մի ներքին, հոգեկան պահանջ պետք է լինի: Մեր սիրտն ու հոգին պետք է վարժեցնենք աղոթքին և շուտ-շուտ աղոթելուն, աղոթքը պետք է անցնի մեր սովորական զբաղմունքների կարգը, եթե ոչ, ամեն անգամ հոգեպես նորոգվելու կարիք պետք է զգանք, և ամեն անգամ նորից պետք է սկսենք արդեն մի անգամ բռնած ճանապարհը: Հնարավոր է դու մտածես, թե ինչպես ժամանակ գտնես շուտ-շուտ աղոթելու համար, եկեղեցին էլ հեռու է, օրը երկու անգամ ինչպե՞ս գնաս:

«Օրը յոթ անգամ պետք է օրհնեմ Քո անունը, Տե՛ր,— ասում է Դավիթը,— սուրբ պարտքս պետք է համարեմ օրը յոթ անգամ Քեզանով զբաղվել, Քեզ հիշել, ամեն տեղ Քեզ եմ տեսնում, Քեզ եմ գտնում, թե երկնից բարձունքն եմ թևակոխում, Քեզ այնտեղ եմ տեսնում, թե երկրի անդունդն եմ խորասուզվում, Քեզ այնտեղ եմ գտնում»: Իսկ եթե անթիվ հոգսերով ծանրաբեռնված թագավորը ժամանակ էր գտնում միշտ Աստծուն հիշելու, օրը յոթ անգամ նրա հետ խոսելու, նրան աղոթելու, դու, որ նրանից անհամեմատ շատ ժամանակ ունես, ի՞նչով կարող ես արդարանալ:

Բացի դրանից՝ հրեա աղոթողը շատ ծեսեր ուներ կատարելու: Նա պետք է մտներ տաճար, առներ կրակարանը, փայտ ու կրակ տաներ, առներ դաշույնը, կանգներ զոհաբերության սեղանի առաջ և կատարեր ուրիշ շատ պարտականություններ: Իսկ քեզ դրանցից ոչ մեկն էլ հարկավոր չէ, ուր էլ որ լինես, երբ էլ ուզենաս, ամեն տեղ ու ամեն ժամանակ հետդ են զոհն էլ, զոհարանն էլ, փայտն ու կրակն էլ, դաշույնն էլ, և այդ բոլորը դու ինքդ ես: Դո՛նապա՛ն ես,

կարող ես դռանդ մոտ կանգնած աղոթել, անդամալու՜յծ ես, կարող ես նստած տեղդ աղոթել, ուղևո՞ր ես, կարող ես ճանապարհիդ աղոթել: Հարկավոր է միայն, որ կամքի հոժարություն, հոգու տրամադրություն ունենաս, այդ ժամանակ ո՛չ տեղը, ո՛չ ժամանակը և ո՛չ այլ ինչ չեն կարող քեզ արգելք լինել: Կարող ես ծնկի էլ չգալ, կուրծքդ էլ չկոծել, բազուկներդ էլ չտարածել, որովհետև Աստված տեղը, ժամանակն ու ձևը չի հարցնում. նա միայն պահանջում է վառվռուն սիրտ ու ողջախոհ հոգի:

Մովսես մարգարեն ձայնով չէր աղոթում, բայց Աստված ասաց նրան. «Ի՞նչ ես աղաղակում»: Սամուելի մայրը՝ Աննան, շրթունքները չէր շարժում, բայց Աստված լսեց նրա աղոթքը: Եզեկիա թագավորը, մահվան անկողնում պառկած, երեսը դեպի պատը դարձրած, ջերմ հոգով Աստված աղաղակեց: Աստված փոխեց նրա մահվան վճիռը, և նա առողջացավ: Հովնան մարգարեն կետի փորից աղոթեց, ողջ-առողջ ցամաք դուրս եկավ, Աստծո դեսպանությունը կատարեց: Դանիել մարգարեն առյուծների գբից աղոթեց և անվնաս դուրս եկավ այնտեղից: Լուսավորիչը Խոր վիրապի օձերի մեջ աղոթեց, առողջ դուրս եկավ, ազգ լուսավորեց:

Ով հուզում է իր ուղեղը, ով արթնացնում է իր հոգին, ով տեղափոխվում է երկինք և այդպիսով Աստծուն իրենն է համարում, նա, այդպիսի սուրբ խոսակցության մեջ վարժվելով, երեսը շուռ է տալիս կենսական բոլոր հոգսերից, երկրավոր բոլոր հրապույրներից և թևավորվում, մարդկային կրքերից բարձր է կանգնում: Ցածում եղած մարդիկ իրենց մանր կրքերով ու շնչին հաշիվներով նրա աչքին շատ փոքր են երևում, ուստիև չի ուզում հավասարվել նրանց:

Յիթե այդպիսի մեկը աղոթելուց հետո իր թշնամուն տեսնի, էլ չի կարող նրա վրա նայել իբրև թշնամու, որովհետև աղոթքի վառած բոցը դեռ նրա սրտում է, որտեղից հալածել, այրել, ոչնչացրել է ամեն չար ցանկություն: Բայց որովհետև մենք, իբրև թույլ արարած, կարող ենք անհոգություն մատնվել, ուստի զգալով, որ ժամանակ

անցնելուց հետո մեզանում վառվող բոցը հետզհետե սառչում է, շուտով պետք է աղոթքի դիմենք և տաքացնենք մեր սառած հոգին: Ինչպես երբ ճաշի նստած միջոցին նկատում ենք, որ կերակուրը սառել է, նորից դնում ենք կրակի վրա, որ տաքանա, այդպես էլ մեր շրթունքը պետք է դնենք աղոթքի վրա, ինչպես վառված ածուխների վրա, և մեր սիրտն ու հոգին կրկին վառենք բարեպաշտ մտքերով:

\*\*\*

Մենք՝ մարմնավոր կյանքով ապրող մարդիկս, որ հոգևորի մասին ոչինչ չենք մտածում, ուզում ենք, որ աղոթքը մեր ցանկացածն զգալի, տեսանելի, շոշափելի կերպով բերի մեր ձեռքը, դնի մեր գրպանը, լցնի մեր տունը, մեր այգին: Բայց այդ ժամանակ աղոթքն էլ ի՞նչ գին պետք է ունենար: Դու էլ կաղոթես, ես էլ կաղոթեմ, մեզ պես հազարավորներն էլ կաղոթեն, ամեն օր կաղոթենք և շատ էլ միմյանց հակառակ, մինչ անգամ անմիտ բաներ կխնդրենք, ի՞նչ կլինի, թե ամենքիս խնդրածն էլ մեր ուզածի պես կատարվի. բրուտը արև կուզի, երկրագործը՝ անձրև, Աստված որի՞ն պետք է լսի: Եթե ինչ որ մտքովդ անցկացնես, իսկույն կատարվի, այդպիսի աղոթքն առաջ եկած կլինի ոչ թե Աստծուն որդիաբար սիրելուց, այլ շահասիրությունից, և ո՞ր անխելքը չի աղոթի այնպիսի Աստծուն, որ իսկույն լսում ու անհաշիվ կատարում է ամենքի ուզածը:

Մեր աղոթքի պատասխանը մենք կստանանք միայն այն ժամանակ, երբ ունենանք կենդանի հավատ: Իսկ եթե հաստատ հավատ ունենալով էլ մենք անպատասխան մնանք, որն անկարելի է, ապա այդ նշանակում է՝ այն Աստվածը, որ մեր սրտում դրել է աղոթելու կարիքը, մի այնպիսի Աստված է, որ մեր մեջ սահմանել է քաղց՝ առանց կերակրի, ծարավ՝ առանց զովացման, մի Աստված, որ իր ստեղծածին ասում է. «Այսպիսի Աստված եմ ես. դու միշտ պետք է հարցնես, իսկ ես երբեք չպետք է պատասխանեմ քեզ, դու միշտ պետք է բախես, բայց երբեք չպետք է բացվի քեզ»:

Բայց այդպես չէ. առհասարակ մարդս ինչ խնդրում է, ստանում է: Եթե դու ընկերոջդ համար մի վնասակար բան ես խնդրում, ստանում ես, միայն ոչ թե ընկերոջդ, այլ քեզ համար: Եթե խնդրածդ Աստված էլ է քեզ համար օգտակար համարում, տալիս է, իսկ եթե միայն դու ես օգտակար համարում, այն ժամանակ Աստված չտալով բարիք է հասցնում քեզ: Տկար ես, առողջութիւն ես խնդրում, Աստված քեզ չի տալիս, ընդհակառակը, ավելացնում է ցավդ ու վիշտդ: Չպետք է կարծես, թե դու լավ բան խնդրեցիր, Աստված քեզ վատը տվեց, որովհետև ցավիդ սաստկանալն Աստծո հաշվով քեզ ավելի օգտակար էր, քան թե առողջանալը: Աստված քո կամքն այդպես ուղղում է դեպի բարին, երբ անօգուտ առողջութեան փոխարեն քեզ օգտակար ցավ է տալիս: Մեր սուրբ հայրապետներից մեկն ասում է. «Թե՛ ստանանք մեր խնդրածը, թե՛ չստանանք, միշտ պետք է աղոթենք և շնորհակալ լինենք ոչ միայն ստանալու, այլև չստանալու համար՝ մտածելով, որ երբ Աստված մեր ուզածը չի տալիս, դա քիչ բարերարութիւնն է, քան եթե տար, որովհետև մենք այնպես լավ չգիտենք, թե ինչն է մեզ օգտակար, ինչպես նա գիտե»:»

Տեսնենք վերջապես, թե ինչ պետք է խնդրենք Աստծուց: Մենք սովորաբար Աստծուց խնդրում ենք երկրավոր, ժամանակավոր բարիք, երկնավոր ու հավիտենական բարիքները մոռանում ենք: Մոռանում ենք, որ մենք այս «տրտմութեան հովտում» մի պանդուխտ ենք, մի ուղևոր, որ վաղ թե ուշ հասնելու է իր բնիկ երկիրը, իր հայրենիքը՝ երկիրն: Մեր Աստծուց, որ այսօր մեր Հայրն է և վաղը մեր դատավորն է լինելու, մենք խնդրում ենք շատ մանր-մունր բաներ՝ մեծերը թողած: Մենք պետք է մեծերը խնդրենք, որովհետև մեծի մեջ փոքրն էլ կա, բայց փոքրի մեջ մեծը չկա: Այո՛, երկրավոր, ժամանակավոր բարիքները կարող ենք խնդրել, միայն միշտ ավելացնելով. «Եթե հոգուս էլ օգտակար է», իսկ հոգևոր բարիքը պետք է խնդրենք անպայման և համարձակ: Հիսուս Ինքն է սովորեցնում. «Ամենից առաջ,– ասում է,– խնդրեցե՛ք Աստծո արքայութիւնը, իսկ

մնացած բարիքներն ինքնըստինքյան կտրվեն ձեզ»: Այդ կողմից մեզ շատ լավ օրինակ է հանդիսանում Սողոմոնը:

Մի անգամ Աստված երազում երևաց նրան և ասաց.

– Խնդրիր ինձնից ինչ որ ուզում ես:

– Տե՛ր,– պատասխանեց Սողոմոնը,– Դու ինձ թագավոր դրիր մի մեծ ազգի վրա, իսկ ես մի անփորձ երիտասարդ եմ: Խնդրում եմ Քեզնից, տո՛ւր ինձ սուրբ սիրտ և իմաստուն միտք, որ կարողանամ բարին շարից զանազանել և արդարությամբ անել այս ահագին բազմություն դատաստանը:

Աստված ասաց.

– Որովհետև դու Ինձնից ուժ ու զորություն, հարստություն, փառք ու երկար կյանք չխնդրեցիր, այլ երկնային արքայությունը ժառանգելու համար սրբություն և իմաստություն խնդրեցիր, այդ պատճառով ես քեզ տալիս եմ ոչ միայն այն, ինչ որ խնդրեցիր, այլև այն ամենը, ինչ որ չխնդրեցիր, ես քեզ տալիս եմ երկնավոր ու երկրավոր բարիքները միանգամայն: Ես կտամ քեզ այնպիսի հոգի և իմաստություն, որ ո՛չ քեզ նմանը եղած լինի քեզանից առաջ, ո՛չ էլ լինի մեկը քեզանից հետո:

Եվ Աստված կատարեց Իր խոստումը. Սողոմոնն իմաստուն եղավ ոչ միայն թագավորների, այլև ամբողջ Իսրայելի մեջ: Նրա իմաստության համբավը հասավ աշխարհի ամեն կողմերը, և «հարավի դշխուհին»՝ Սաբայի թագուհին, աշխարհի մի հեռավոր ծայրից եկավ Սողոմոնի իմաստությունը լսելու: Եվ նրա իմաստուն խոսքերն այսօր էլ կարգացվում են մեր եկեղեցում:

Մեր եկեղեցական սուրբ հայրերն էլ, որոնք սքանչելի աղոթքներով զարդարել են մեր ամենօրյա ժամերգությունը, միշտ միայն երկնավոր բարիքն են խնդրում, իսկ երկրավորներից միայն այն բաներն են խնդրում, որոնցով կարող ենք ձեռք բերել երկնավորը, այն է՝ հավատ, հույս, սեր և պատվիրանապահություն:

Ահա այդ խնդրվածներից մի քանիսը.

Աստված, որ լույս ես և Արարիչ լուսո, բնակվող անմատուց լույսի մեջ, այս առավոտյան լուսո ծագման բոպեներին մեր հոգու մեջ ծագի՛ր աստվածագիտության լույսդ:

Տե՛ր, ծածկի՛ր մեզ Քո ամենազոր Աջիդ հովանու տակ, զորաց-րո՛ւ մեզ սուրբ հոգովդ, պահի՛ր մեզ աչքի լույսի պես:

Տո՛ւր մեզ շնորհք, որ կարողանանք քեզ սիրել մեր բոլոր սրտով ու մտքով և մեր ամբողջ զորությամբ կատարել Քո պատվի-րանները:

Տե՛ր, որ «երից մանկանց» աղոթքի զորությամբ Բաբելոնի հնոցի հուրը հանգցրի՛ր երկնային շրեթիդ հեղեղներով, թափի՛ր մեզ վրա էլ Քո բարերար ողորմության ցողը և հանգցրո՛ւ մեր հանցա-նաց հնոցի բոցը:

Տո՛ւր մեզ կարողություն, որ ուղիղ հավատով և առաքինասեր վարքով ապրենք այս աշխարհում և ապա արժանանանք երկնից արքայությանդ:

Մենք էլ մեր Շնորհալի սբ. ներսես հայրապետի հետ աղոթենք. «Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զարարածս ողորմու-թեամբ Քով. Քեզ յանձն առնեմ զանձն իմ. Դու հոգա եւ պատրաստեա զպետս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան»:

## ԲԱՆ Բ

«Եվ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց, ապա քաղց զգաց»:

(Մատթ. 9:2)

Այնպիսի ժամանակներում ենք ապրում, երբ փողի ու փորի թագավորությունը մարդուս գլխից խլել է բանականության թագը և նրան իջեցրել իր բարձրությունից, անբան անասունին է հավասա-

րեցրել: Ինչքան մարդս մոտեցել է փողին, այնքան հեռացել է Աստծուց, ինչքան տաքացել է փողի վրա, այնքան սառել է Աստծուց. իր աստվածը նա փողի մեջ է փնտրում, և երբ մեկն ասում է. «Փողը երկրորդ աստվածն է», մյուսը վրա է բերում. «Առաջին աստվածն է»: Ինչո՞ւ: Որովհետև հենց որ լուսանում է, փողի մասին ենք խոսում, փորի մասին մտածում:

Իսկ եթե դեռ կան մարդիկ, որոնք, լուսաբացին երեսները դեպի արևելք, դեպի «շաղաթաթախ աղոթարան» ուղղած, աղոթում են, անկասկած, նրանք էլ փողի ու փորի համար են աղոթում:

Բայց մարդս ստեղծված է ավելի բարձր, ավելի հոգևոր կյանքով ապրելու, քան թե ցածր, մարմնավոր կյանքով: Երբ մենք, վերինը, հոգևորը թողած, անսանձ, անզուսպ կյանք ենք անցկացնում, դրանով ցույց ենք տալիս, որ մեր կյանքի անասնական մասով ենք ապրում: Մ'ւր է հապա մարդկայինը: Երբ մենք հոգին ու հավատը թողել,՝ մարմինն ու փողն ենք պինդ բռնել, երբ հավատի պատվերները թողել, փողին ենք ծառայում, երբ հոգու պահանջները մոռացած՝ մարմնի պահանջներն ենք կատարում, էլ որտե՞ղ մնաց Աստծո պատկերը, Աստծո նմանությունը: Արդյոք մեր բանական պատկերը անբան անասունի պատկերի հետ չե՞նք փոխել:

Ահա մի այսպիսի ապականված ժամանակ, այս փողապաշտության ժամանակ, որ մեզ շրհեղեղի ժամանակներն է հիշեցնում, «երբ ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում», երբ փողատերը պարարած<sup>1</sup>, ճարպակալած, ամենակեր խոզի կերպարանք է ստացել, երբ մարմնապաշտը որովայնի թաղանթները, ստամոքսի պատերն է լայնացնում, երբ հենց մեծ պասի առաջին օրից վաճառանոցները լի են ամեն տեսակ մսեղենով ու ձկնեղենով, երբ որովայնամոլի կարմրատակած թշերից արյուն է կաթկթում, երբ չորեքշաբթին ու ուրբաթը ուրիշ օրերից ոչնչով չեն զանազանվում, և պասը միայն օրացույցներում է գրված: Մի այսպիսի

---

<sup>1</sup> Գիրացած:

մարմնապաշտ ժամանակ ահա ես ուզում եմ խոսել «պասուայ» մասին:

Բայց պասի մասին ի՞նչ է խոսում ինքը՝ ժողովուրդը: Ժողովուրդը, եթե նա չքավոր է, աղքատ կամ նահապետական ընտանիք, այնքան է սիրում ու գովում պասը, որ հավատի շենքի հիմնաքարերից մեկն է համարում, պաս է պահում սրբությամբ և խստությամբ, անգիր գիտե, թե որ ամսին ինչ պաս է գալիս, որ տոնից հետո որ պասի բարեկենդանն է: Նա «բերան-փակեք» ու «բերան-բացեք» էլ ունի, որի մասին ուրիշը հասկացողություն անգամ չունի: Նա մանավանդ մեծ պասի առաջին առավոտը եկեղեցում «Նուացարուք, սրբեցարուք»-ը լսելուց հետո գնում է տուն, մոխրաջրով այնպես է լվանում, մաքրում ու պասահան անում ամանները, որ խեղճ պղնձեղենի հոգին էլ հետն է դուրս գալիս: Նա պաս ուտելն ու թուրքանալը մեկ է համարում, պաս ուտողը նրա աչքի գրողն է, էլ լափ ու լուտանք չի մնում, որ գլխին չթափի: Գյուղացի ժողովուրդը մեծ պասի առաջին օրն այնպիսի մի սրբազան ուրախություն է զգում, ինչպիսին Զատիկի օրը: Նրանք, այդ օրը տնետուն ման գալով և ջերմ համբույրներ տալով միմյանց, շնորհավորում են պասը:

Ի՞նչ է ասում իր վիճակից գոհ փարթամը. «Պասը հիմար բան է, մարդկանց հնարած բան, պասն այն է, ինչին որ ձեռքդ չի հասնում. ի՞նչ է, լոբի ուտեմ, դրա՞խտ կգնամ, միս ուտեմ, դժոխք կգնամ: Լոբին էլ, միսն էլ Աստծո ստեղծածն է, ուրբաթն էլ, շաբաթն էլ Աստծո օրն է: Կե՛ր, եղբա՛յր, ո՞վ է հարցնում: Կյանքն առանց այն էլ շատ կարճ է»:

\*\*\*

Ինչ է նշանակում պաս: Պաս կամ պահս բառը ծագել է պահք բառից, որ նշանակում է պահեցողություն, պահել: Բայց ի՞նչ պահել: Պետք է պահենք, այսինքն՝ զսպենք մեր անձը, որպեսզի մեր հոգին չթմրի, չքնի, չմեռնի: Ինչքան մարմինը գիրանում, զվարթանում է,



այնքան հոգին նրա մեջ ճնշվում, խեղդվում է: Եվ որովհետև մեր բոլոր զգացմունքները բխանում, քարանում են պարարտացնող կերակուրներից և գրգռիչ խմիչքներից, այդ պատճառով սահմանված է նաև կերակրեղենի պահեցողություն:

Պահեցողության նպատակն է հոգին ապրեցնելու համար մահացնել մարմինն ու զգայությունները: Պահեցողության նպատակը մտքի մաքրությունն ու սրտի սրբությունն է: Եվ որովհետև աչքի տեսողությունը, ականջի լսողությունը, լեզվախոսությունը և այլն կարող են դրանց երկուսին էլ արատավորել ու վնասել, ուստի պետք է պահեցողության կանոններ սահմանենք դրանց համար: Եթե ոչ, անօգուտ բան է բերանով պահել, իսկ մյուս զգայարաններով չզգուշանալ մեղքի առիթներից: Պետք է մեզ պահենք ոչ միայն կերակրեղենից, այլև այն ամեն բանից, ինչ որ կարող է մեղքի պատճառ դառնալ: Իսկ նա, ով միայն կերակրեղենի պահքն է պահում՝ առանց իր զգայարանների վրա պահապաններ դնելու, նման է այն մարդուն, որ մի կողմից պարիսպ է կանգնեցնում թշնամու առաջ, մյուս կողմից տասը տեղ դուռ է բաց թողնում նրա համար: Մի բան էլ կա. Քրիստոսը գլուխն է, մենք՝ նրա մարմնի անդամները: Ինչպես Քրիստոս առաջ խաչվեց ու հետո փառավորվեց, այդպես էլ մենք առաջ պետք է մեր մարմինը պահքով ու ճնշելով խաչ հանենք, որ հետո արքայության մեջ Քրիստոսի հետ փառավորվենք, ինչպես առաքյալն է ասում. «Եթե իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին»: Առանց չարչարանքի փառավորվել չկա, փշով պսակված գլխի անդամներին վարդի պսակ չի վայելի:

\*\*\*

Շատերը պահքն արհամարում են՝ ասելով, որ հայրապետերի սահմանած բանն է, և Քրիստոս Ավետարանի մեջ ոչ մի տեղում չի հրամայում պաս պահել: Առաջին՝ հայրապետերը ոչ մի բան ուղղակի իրենցից չեն սահմանել, եթե սկզբից սահմանված չեն տեսել

Հիսուսից, առաքյալներից կամ եթե հիմք չեն ունեցել Սուրբ Գրքից: Եվ եթե հայրապետերն էլ սահմանած լինեին, նրանց էլ պետք է հնազանդվենք, որովհետև քրիստոնյան պարտավոր է հնազանդվել ոչ միայն Հիսուսին, այլև նրա հիմնած եկեղեցուն, ոչ միայն առաքյալներին, այլև նրանց օրինավոր հաջորդներին, պետք է պահպանի ոչ միայն Հիսուսի պատվիրանները, այլև եկեղեցու պատվիրանները: Երկրորդ՝ Հիսուս, այո՛, չի հրամայում պաս պահել, բայց հայտնի է՝ հրեաների մեջ պասը շատ վաղ էր սահմանված, որոնք հինգշաբթին պահում էին ի հիշատակ այն բանի, որ Մովսեսը բարձրացավ Սինա սարը, և երկուշաբթին՝ ի հիշատակ այն բանի, որ նա Իսրայելի ժողովրդի համար այնտեղից բերեց քարեղեն տախտակները: Նույն բանն է հաստատում Հիսուսի առակի փարիսեցին, որը գոռոզաբար պարծենում էր Աստծո առաջ. «Շաբաթը երկու անգամ պաս եմ պահում»: Երրորդ՝ թեկուզ Հիսուս ուղղակի չի հրամայում պաս պահել, բայց նա ոչ միայն դեմ չէ պահեցողությանը, այլև շատ ժամանակ գովում է պասը և նրա փրկարար ներգործությունը, օրինակ, երբ Հիսուսի մոտ բժշկելու բերեցին մի դիվահարի, որին աշակերտները չէին կարողացել բժշկել, նա ասաց. «Այս տեսակ հիվանդությունն ուրիշ բանով չի բժշկվում, այլ միայն աղոթքով ու պահքով»:

Շատերն էլ չեն պահում՝ պատճառ բերելով, թե Քրիստոս ասել է. «Ինչ որ մտնում է բերանը, այն չի պղծում մարդուն»: Եթե այդպես է, ուրեմն, Քրիստոս ինքն է մեղքի ճանապարհները սովորեցնում և խրատում է, որ մենք ավելի անհաշիվ ուսող-խմող լինենք, ավելի որովայնամոլ լինենք, քան թե հրեաները և հեթանոսները, որովհետև առաջին մեղքը և մեր մահվան գլխավոր պատճառը եղավ որկրամոլությունը: Սրան հակառակ՝ ընդունելով, որ պահքը շատ օգտակար բան է, աղոթքի մասին խոսելուց հետո Քրիստոս խոսում է պահեցողության կերպի մասին՝ ասելով. «Բայց երբ դու պահեիր լինես, մի՛ պահիր կեղծավորների նման, որոնք աղոտտում են իրենց երեսը և տրտում կերպարանք են ստանում, որ մարդկանց

երևան, թե պահում են: Այլ դու օծիր գլուխդ անուշահոտ յուղով, մաքուր լվա երեսդ, որ արածդ դրսից երևալու նպատակով չլինի»:

Մենք ամեն տեղ Հիսուսի ասածի ոգին պետք է հասկանանք, ոչ թե միայն խոսքերը: Երբ նա ասում է, որ բերանը մտած կերակուրը չի պղծում մարդուս, այդ այն մտքով է ասում, որ ավելի պարզ ցույց տա, թե շարունակյալ բույնը մարդուս սիրտն է: Եվ հենց միևնույն տեղում նա ավելացնում է, թե. «Անլվա ձեռքերով հաց ուտելը չի պղծում մարդուն»: Մի՞թե դրանով Հիսուս հրամայում կամ հավանում է, որ մենք աղտոտ, անլվա և անմաքրասեր լինենք: Ի՞նչը չէր, որ վերնատանը լվաց իր աշակերտների ոտքերը: Եթե մաքրությունը հարկավոր էր ոտքերին, մի՞թե ավելի հարկավոր չէր ձեռքերին, որոնցով պետք է ուտեին զատկական գառը: Պարզ է, որ Հիսուս միշտ այն մտքով է խոսում, որ արտաքին սրբությունը մի առանձին նշանակություն չունի, ներքին սրբությունն է հարկավոր, սրտի սրբությունն է հարկավոր: Իսկ սրտի սրբությունը, մտքի մաքրությունը, հոգու կենդանությունը պահպանվում է ոչ թե անհաշիվ ուտել-խմելով, այլ պահեցողությամբ:

Պահեցողությունը կարևոր պարտք է համարված ոչ միայն Քրիստոսից սկսած, այլև նրանից հարյուրավոր տարիներ առաջ սրբությամբ պահում էին Սուրբ Հոգով լցված մարդիկ, աստվածատես, աստվածախոս մարգարեները: Ավելի հետ գնալով տեսնում ենք, որ պահքն ամենից առաջ սահմանել է ինքը՝ Աստված: Հենց որ ստեղծվեց առաջին մարդը՝ բանական արարածը, իսկույն հետն սկսվեց և պահքը, այնքան պահեցողությունը հարկավոր էր նրան: «Այս բոլոր ծառերի պտուղը կարող ես ուտել, բայց այս մեկ ծառի պտուղը չուտես»: Ահա ինչ ասաց Աստված Ադամին, որ և գեղեցկապես երգում է մեր Շնորհալի հայրապետ սուրբ Ներսեսը. «Որ զօրէնս սրբութեան պահոց՝ նախ ի դրախտին աւանդեցեր»: «Տեր Աստված,— ասում է,— պահքը սրբությամբ պահելու օրենքն ամենից առաջ Դու դրախտում տվեցիր»:

Մեկ մտածի՛ր հիմա, եթե պահքը հարկավորվեց փափկության դրախտի մեջ, ինչքան ավելի հարկավոր է մեզ այս փշոտ աշխարհում, այս հրապույրների, այս մեղքերի աշխարհում: Եթե պահքը հարկավորվեց առաջին անմեղ մարդկանց փորձությունների հանդիպելուց առաջ, ինչքան ավելի հարկավոր է մեզ՝ մեղավորներին, այս փորձությունների աշխարհում, եթե սպեղանին (դեղը) հարկավորվեց վերք ստանալուց առաջ, ինչքան ավելի հարկավոր է վերք ստանալուց հետո: Եթե մեղքը մեր դեմ զինվելուց առաջ զենք հարկավոր եղավ, այդ զենքը մեզ ինչքան ավելի հարկավոր կլինի մեղքի դեմ դուրս գալու ժամանակ:

Պահեցողության գործությունն էս ուզում իմանալ: Ասա՛ տեսնեմ՝ ինչպե՞ս պատահեց, որ Դավիթը պահեցողությամբ մարգարեական շնորհ ստացավ: Ինչո՞վ Աննան կարողացավ մարգարեանալ Հիսուսի մասին. նրանով, որ գիշեր-ցերեկ ծառայում էր տաճարում՝ աղոթքով ու պահքով: Հովհաննես Մկրտիչն ինչի՞ համար Հիսուսից «մեծն ի ծնունդս կանանց» կոչվեց. իր պահեցողության համար: Ի՞նչն էր պատճառը, որ անառակ որդին դարձավ իր հոր տունը. պահեցողության գործությունը: «Ես,– ասում է,– այստեղ սովից մեռնում եմ»: Եթե ստիպողական քաղցը, եթե ակամա պահքն այդքան փրկարար եղավ, ինչե՛ր չի անի կամավոր պահքը:

\*\*\*

Քրիստոսից հետո նրա սուրբ առաքյալները սրբացրին պահեցողության օրենքը՝ ամեն շաբաթ, երկու օր՝ Զատիկից առաջ էլ քառասուն օր պահելով ու պահել տալով: Առաքյալներն ասում են քեզ. «Ո՛վ անարգ կավ, ազատն Աստված քեզ համար, քո փոխարեն բռնվեց և իր հրաշագործ ձեռքերը քո պատճառով կապված՝ մատնվեց հրեաների ձեռքը, երկինք ու երկիր ստեղծողը քեզ մեղքի գերությունից ազատելու համար կախվեց Գողգոթայի անարգ փայտից և խաչվեց, քո հոգին կենդանի պահելու համար իր հոգին ավանդեց,

այդ պատճառով քեզ վրա սուրբ պարտք ենք դնում՝ չորեքշաբթին պահել Հիսուսի մատնության հիշատակի և ուրբաթը՝ Նրա խաչելության ու մահվան հիշատակի համար, այլև քառասնօրյա պահք ենք սահմանում և եկեղեցու սուրբ սեղանը ծածկում քո աչքից, ինչպես Աստված Ադամին դրախտից դուրս գցելուց հետո նրա առաջ փակեց փափկության դրախտի դռները, որպեսզի սուրբ պահեցողությամբ քեզ պատրաստես Քրիստոսի սուրբ հարությանն արժանանալու համար:

Քառասնօրյա պահքը շատ խորհրդավոր է: Իսրայելացիների պանդխտությունն անապատում քառասուն տարի տևեց, մենք էլ քառասուն օր պահելով պետք է տոնենք երկնային Զատիկը, չէ՞ որ մենք էլ պանդուխտ ենք այս երկրում, և ավետյաց երկիրը երկինքն է: Մանասե թագավորը քառասուն տարի մեղանչեց, Աստված նրան միայն քառասուն օր տվեց ապաշխարելու. «Օր ընդ տարուոյ եդի քեզ»: Ասում է. «Մի տարվա մեղքիդ դեմ մի օր պահք դրի»: Քառասուն օր պահեցին նինվեացիները: Երեք օր ծոմ պահելով թագավորը իջավ գահից, քուրձ հագավ, մոխրի վրա նստեց, մարդ ու անասուն ոչինչ չկերան, ոչինչ չխմեցին, առ Աստված աղաղակեցին: Ողորմելի էր այդ հարուստ ու բազմամարդ քաղաքի տեսքը: Եզների բառաչը, ոչխարների մայոցը, անասունների կաղկանձը, մանկանց ու կանանց ողբ ու լացի հետ խառնված, աշխարհք էր դղրդացնում, քարեր սասանեցնում: Եվ պահքը փրկարար եղավ. Աստված հաշտվեց մարդու հետ, նինվեն չկործանեց: Մովսեսն ու Եղիան էլ քառասուն օր պահեցին. մեկը՝ սարի վրա, մյուսը՝ ճանապարհին: Ինքը՝ աշխարհի Փրկիչն էլ թշնամու դեմ պատրաստվում էր քառասնօրյա պահքով պնդվելով: «Եվ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց, ապա քաղց զգաց»: Ի՛նչ էմ լսում, Տե՛ր, մի՞թե քեզ էլ է հարկավորել պահքը, մի՞թե Դու էլ ես պահեցողության կարիք զգացել: Դու, որ առատ ձեռքդ բաց ես անում և լցնում, լրացնում բոլոր արարածների պետքերը, Դու էլ ե՞ս քաղցել: Այո՛, գիտեմ միտքդ, Դու պարտք ունեիր վճարելու, չես ուզեցել պարտական մնալ: Առաջին

Ադամը չկարողացավ պահել իրեն, չկարողացավ պահել Աստծո հրամանը, կերավ արգելված պտուղը, իսկ Դու՝ երկրորդ Ադամը, պահում ես՝ նրա պարտքը վճարելու համար: Նա կերավ, մահ մտցրեց աշխարհ, Դու պահում ես, որ կյանք տաս քաղցած աշխարհին: Նա փորձվեց սատանայից և չպահելով հաղթվեց, Դու եկար, փորձվեցիր նրանից և նրան խաղք ու խայտառակ անելով՝ հաղթեցիր: Ի՞նչ գեղեցիկ խրատ մեզ համար՝ պահքով զինվել թշնամու դեմ և միշտ նույն թշնամու դեմ: Ինչպես երգում է շարականը. «Այսօր պահօք ճշմարտութեան ելցուք ի լեառն սրբութեան ընդ Քրիստոսի՝ պատերազմել ընդ թշնամուոյն»:

Ինչպե՞ս պահեցին իրենք՝ առաքյալները: Պողոսը պահեց շատ-շատ անգամ, Պետրոսը գրեթե ոչինչ չէր ուտում, միայն օրը մի դանկի լուբիա<sup>1</sup>: Մատթեոսը բանջարով ու ընդդեմում էր կերակրվում: Հակոբոսը մսից ու զինուց իսպառ հրաժարվեց: Նախնի քրիստոնյաները մեզ պես պասի տեսակ-տեսակ կերակուրներ ու խորտիկներ չէին ուտում, այլ բավականանում էին միայն հացով ու աղով, որից և մեծ պահքը կոչվեց աղուհաց:

Պահքը մի սանձ է, որով հոգին կառավարում է մարմինը, ինչպես կառապանը ձիերին, և չի թողնում, որ մարդն ընկնի: Պահքով հանգչում է սրտի բոցը, պահքով հալածվում են հեշտությունները և թռչում ցանկությունները: «Պահքը,– ձայն է տալիս մեր առաջին հայրապետ սուրբ Լուսավորիչը,– զորացնում է մեր հոգևոր կյանքը և խափանում է մարմնավոր անկարողությունները, որովհետև մեկի զորանալու միջոցին մյուսը տկարանում է: Ինչպես որ լեշակեր թռչուններն անխնա ուտելուց դժվարությամբ են թռչում և հեշտությամբ որսվում, իսկ սակավակերներն արագաթռիչ են և դժվար բռնելի, այդպես էլ որկրամոլ ու շափավոր մարդն է: Պահքը հզոր պարիսպ է և ամուր դուռ, որ խափանում է խորամանկ թշնամու մուտքը: Պահքը հանգցնում է ցանկությունների բորբոքած հուրը, ո-

---

<sup>1</sup> Լոբի:

րովհետև ինչպես որ կրակը փայտի պակասելուց հանգչում է, այդպես էլ որկրամոլությունն ու արբեցությունը պակասելով ցանկությունների բոցը հանգչում է, և նրա տեղը բորբոքվում են սրբությունն ու արդարությունը՝ պնդյալ պահքով: Պահքն ախտերի ծովածուխ ալիքի դեմ մի խաղաղ նավահանգիստ է և ամեն վտանգից ազատ պահելով՝ հասցնում է կյանքի նավահանգիստը»:

Բայց ով հասկանում է պահեցողության իսկական նպատակը, չպետք է տանջի մարմինը, այլ պետք է զրկի նրան այն ամեն վայելքներից, որոնք անվայել են մեր քրիստոնեական կյանքին: Մարմինը մի բեռ է, որ պետք է թեթևացնել՝ նավը ազատելու համար: Մարմինը մի գերի է, որ միշտ կամենում է տեր լինել: Քրիստոնյան պետք է խիստ վարվի իր մարմնի հետ: Եվ դրա համար ոչ թե պետք է մի օր պահել, հինգ օր չպահել, այլ պետք է շարունակ պահել, հարկավոր է պահել ամեն օր, ամբողջ կյանքում: Մի ժամանակ Եփեսոս անունով մի քաղաքում անկարգ կերուխումի ետևից ընկած բազմության մեջ մեծ աղմուկ բարձրացավ: Աղմուկը դադարեցնելու համար Հերակլիտոս անունով փիլիսոփային խնդրեցին, որ մի բան ասի ժողովրդին: Կռապաշտ փիլիսոփան բեմ բարձրացավ, վերցրեց մի բաժակ, սառը ջուր լցրեց, մեջը գցեց մի քանի հատ ոսպ ու սփսեռ և խմելով այդ խառնուրդը՝ հրապարակից հեռացավ առանց մի խոսք ասելու: Դրանով ուզում էր ասել, թե աղմուկների առաջն առնելու համար պետք է ժողովրդին հեռու պահել անհաշիվ կերուխումից և նրան կրթել չափավորության մեջ:

\*\*\*

Երբ մարդուս բնությունն իրեն հարկավոր եղած ուտելիքն ու խմելիքն է ուզում, դա քաղց է ու ծարավ, բայց երբ հարկավոր եղածը ստանալուց հետո էլի է ուզում ուտել-խմել, դա որկրամոլություն է: Առանց ուտել-խմելու, իհարկե, չենք կարող ապրել, նշանակում է պետք է ուտենք-խմենք ապրելու համար, ոչ թե ապրենք ուտելու համար: Անշափ ուտել-խմելուց շատերն են մեռնում, բայց քիչ ուտելուց

ոչ որ չի մեռնում: Պետք եղածից ավելի ուտելը ոչ թե սնունդ է, այլ թույն և ամեն հիվանդություն պատճառ: Ի՞նչն էր պատճառը, որ հին ժամանակ մարդիկ ապրում էին ութ հարյուր տարի: Սուրբ Գիրքը պատասխանում է. «Մարդուս կյանքը պահվում է հացով ու ջրով», այսինքն՝ պարզ ու հասարակ սննդով: Այն ժամանակվա մարդիկ միս չէին ուտում, տեսակ-տեսակ կերակուրներ չէին ուտում, կերածները հաց էր ու պտուղ, խմածները՝ ջուր: Մարդիկ հետո հնարեցին համով կերակուրները և ընտիր, թանկագին խմիչքները, որոնք պատճառ դարձան կյանքի հետզհետե կարճանալուն: «Որկրամոլությունից շատերը մեռան,– ասում է Սուրբ Գիրքը,– իսկ չափավոր ուտող-խմողն իր կյանքն է երկարացնում»: Վենետիկցի մի հարուստ ազնվական չափավոր կյանք անցկացնելու մասին մի գիրք ունի գրած, որի մեջ իր մասին պատմում է, թե մինչև երեսունհինգ տարեկան դառնալն անչափ ուտել-խմելու պատճառով միշտ հիվանդոտ կյանք է անցկացրել, միշտ դեղերի կարոտ, բայց երբ սկսել է ուտել-խմելուն չափ դնել, էլ ամենևին հիվանդություն չի ունեցել և ապրել է իննսունհինգ տարի: Իսկ մի բժիշկ, որ հարյուր քառասուն տարի ապրեց, երբ հարցնում էին այդքան երկար ապրելու պատճառը, պատասխանում էր. «Սեղանից այնպես եմ վեր կենում, որ դեռ ախորժակ եմ ունենում ուտելու»:

Բայց վատն այն է, որ որկրամոլությունը ոչ միայն մարդու առողջությունն է վնասում, կյանքը կարճացնում, այլև զանազան մեղքերի պատճառ դառնալով հոգին էլ է սպանում: «Ուտել-խմելով փորն ու գլուխը հաստացրեց,– ասում է Սուրբ Գիրքը,– և իր Ստեղծողից հեռացավ»: Իսկ կերուխումի տնից մինչև անառականոցը մեկ քայլ է: Այս պատճառով երբ սրբերը մարմնական փորձություն էին զգում, իսկույն ծոմ էին պահում, սովորական կերակուրներից էլ հեռու էին մնում և այդպիսով իրենց ներսի կրակը մարում: Անչափ կերուխումի հետևանքն այնքան վնասակար է մեր հոգևոր կյանքին, որ դրա դեմ Հիսուս Ինքն էլ է ձայն բարձրացնում. «Զգուշացեք,– ասում է,– չլինի թե ուտել-խմելուց մտքերդ պղտորվի, սրտերդ ծան-



րանա, հոգիներդ թմրի, որովհետև կարող է պատահել, որ հանկարծ վրա հասնի ձեր մահը, այն էլ ոչ միայն ժամանակավոր, այլև հավիտենական մահը»: Հիսուս ոչ միայն զգուշացնում է չափազանց ուտել-խմելուց, այլև վա՛յ է տալիս: «Վա՛յ ձեզ,— ասում է,— որ կերել, կշտացել եք, վա՛յ ձեզ, որ կյանքի խաչերը թողած՝ նորանոր փափուկ կյանք եք ստեղծում ձեզ համար»: Հիսուսը վա՛յ է տալիս, Պողոս առաքյալը՝ բացատրում. «որովհետև այնպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ՝ իրենց որովայնին»:

\*\*\*

Որկրամոլի մյուս տեսակն արբեցողն է, որի համար պահանջ է դարձել ոչ այնքան ուտելը, որքան խմելը: Արբեցողն անասունից էլ վատթար է, որովհետև եթե փորձես նրան չափից ավելի խմեցնել, սպանես էլ, չի խմի: Միայն մարդն է, որ բավական խմելուց հետո պատրաստ է նորից խմելու: Պետք է տեսնել, թե մեր եկեղեցական հայրերն ի՞նչ փառավոր անուններ են տալիս արբեցողությանը: Մեկն ասում է. «Արբեցողությունը կամավոր դիվահարություն է, անօրենսության մայր և ամեն առաքինության թշնամի»: Մյուսը, թե. «Գինովությունը մի ախորժելի դիվահարություն է, մի անուշ թուլյն և ծանր մեղք, որովհետև գինովցածը ոչ միայն մեղք է գործում, այլև ինքը հենց ոտքով-գլխով մեղք է:

Այո՛, արբեցողը մարդկության նախատինքն է: Մարդու կատարելությունների մեջ ամենից մեծն ու ազնիվն իր խելքն ու բանականությունն է: Խենթը խելք ունեցողի ամեն արածն անում է, բայց որովհետև բանականությունը կորցրել է, նրան խղճում ենք: Որքան ավելի թուքումների է արժանի այն թշվառականը, որ իր կամքով իրեն զրկում է այդ մեծ կատարելությունից՝ բանականությունից, Աստծո թանկագին պարգևից, բայց բանականության կորստից ավելի մեծ կորուստ բարոյական անկումն է: Արբեցողն ամենից առաջ կորցնում է կանոնավոր աշխատելու սովորությունը: Տեսնում ես՝ մարդն առաջ գործունյա, աշխատող, իր ոտքին-գլխին նայող մի

մարդ էր, բայց գինու սիրուց դարձավ անհոգ, ծուլ, սրիկա: Սիրտն աշխատանքից կտրած, որդիների, ընտանիքի հոգար մտքից հանած, ինչ ասում են, ինչ ուզում են, ամեն բանի էլ «բան շունե՛ս» ասելով թրև է գալիս մի գինետնից մյուս գինետուն և իր կրքին բավականություն տալու համար ոչ մի բանից չի քաշվում, ոչնչից չի հրաժարվում: Ահա թե ինչ տեղից է առաջ գալիս ընտանիքի կործանումը, աղքատությունը և հանցանքներ գործելու եռանդը:

Եթե գերեզմանները բացվեն, հազարավոր մարդիկ կհայտնեն մեզ, որ իրենց կրած վշտերի ու թշվառությունների մեծ մասն առաջ է եկել անշափ գինի ու օղի գործածելուց: Հաշվել են, որ անձնասպանության շորս դեպքից մեկը կատարվում է գինի ու օղի գործածելուց: Աղքատանալու երեք դեպքից երկուսն առաջ է գալիս արբեցությունից, բանտերում եղող երեք կալանավորից երկուսին գինին ու օղին են գցել այնտեղ: Խելագարությունը, հանցանքներն առաջ են գալիս արբեցությունից: Գողությունների, սպանությունների և դատարաններ քաշքշվելու գլխավոր պատճառն արբեցությունն է: Սուրբ Գիրքը նսայի մարգարեի բերանով վայ է տալիս արբեցողներին. «Վա՛յ նրանց,— ասում է,— որոնք լուսանալուն պես գինետներն են շտապում»: Իսկ Պողոս առաքյալն ավելի կարճ ու խիստ է խոսում. «Արբեցողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն», որովհետև արբեցությունն ամեն շարություն, ամեն անառակություն անել է տալիս մարդուն: Եվ այդ բոլորն առաջ է գալիս ինչի՞ց: Նրանից, որ մարդիկ մոռացել են, թե ինչ է նշանակում պահք :

Հիսուս աղոթքի մասին խրատելուց հետո շատ հարմարապես իսկույն պահքի մասին է խոսում՝ ցույց տալու համար, որ դրանք իրարից անբաժան պետք է լինեն: Սուրբ Ոսկեբերանն էլ է ասում. «Տկար է աղոթելն առանց պահոց»: «Թույլ է աղոթքը,— ասում է,— եթե այն պահքով ամրապնդված չէ: Ինչո՞ւ: Որովհետև աղոթելիս մենք հոգևորապես ենք նվիրվում Աստծուն, իսկ պահելիս նվիրվում ենք թե՛ հոգով ու թե՛ մարմնով, որով լինում ենք Աստծուն մատուցված մի անուշահոտ ողջակեզ, և մեր զոհը լինում է կատարյալ:

## ԲԱՆ Գ

«Ապաշխարեցե՛ք, և հավատացե՛ք Ավետարանին»:  
(Մարկ. Ա:15)

Մինչև կոկորդը մեղքի մեջ խրված մարդկությանը Հիսուսը երկու հրաման է արձակում՝ ապաշխարել և հավատալ Ավետարանին: Բայց Ավետարանի շատ խրատներ, Հիսուսի շատ պատվիրաններ, եկեղեցու շատ պահանջներ մեր ժամանակներում միայն գրքերում ենք տեսնում, եկեղեցում լսում: Իսկ իրականում ոչ մի տեղ չեն պահպանվում: Աղոթքից սառած ժողովրդից, պահեցողությունը մոռացած քրիստոնյայից, մեղքն արհամարհող մարդուց ի՞նչ ունենք զարմանալու, որ ապաշխարության չի գնում, մեղքերը չի զղջում: Այս աշխարհասեր ժողովրդի մեջ ավելի հեշտ կարելի է գտնել իրենց հոգու վրա հսկող, իրենց անմեղությունը պահպանող մարդիկ, քան թե ապաշխարող մեղավորներ: Այն մարդը, որ չի զգում, թե վերք է ստացել, պետք չունի սպեղանիների մասին մտածելու: Ով չի խոստովանում, որ ինքը հիվանդ է, ի՞նչ կարիք ունի բժշկի դիմելու: Մեղքն ու մեղանչելն էլ հոգի կորցնող բան չի թվում մեզ, ուստի սովորական երևույթների կարգն է անցել: Կա՞ այնպիսի մարդ, որ կա՞մ մտածությամբ, կա՞մ խոսքով, կա՞մ գործով մեղանչելիս չլինի: Ավելի ճիշտն ասենք՝ կա՞ այնպիսի մի քրիստոնյա, որ հենց այդ երեք կերպով էլ մեղանչելիս չլինի: Կարո՞ղ ենք մեկ օր մթնեցնել, կարո՞ղ ենք մի քայլ փոխել, որ կա՞մ աչքերով չտեսնենք մեղքը, կա՞մ ականջներով չլսենք: Ո՛չ և ո՛չ: Անցել են այն ժամանակները, երբ մեղքը ծանր էր գործողի համար, զգվելի՞ լսողի համար, սոսկալի՞ տեսնողի համար: Իսկ այժմ մեղքն իր բոլոր կեղտոտ, ապականիչ կողմերով գործվում է մեր աչքի առաջ, հրապարակի վրա, բարի լույսի հետ, և սակայն տեսնում ենք անտարբեր, անցնում ենք անուշադիր: Բայց սրբերից մեկն ասում է. «Եթե ես գիտենայի, թե իմ

մտքի մի խորհուրդը, իմ սրտի մի ցանկությունը, իմ ձեռքի մի գործն ուղղակի առ Աստված չպետք է նայի, Աստծո ուզածի պես չպետք է շարժվի, կցանկանայի, որ ո՛չ միտք ունենայի, ո՛չ սիրտ և ո՛չ ձեռք»:

Դանակի, սրի հարվածը մարմինն է վիրավորում, լեզվի, խոսքի պատճառած վիշտը սիրտն է վիրավորում, բայց մեղքի հարվածը հոգին է վիրավորում և աղտոտում: Եթե կարելի լիներ հոգին տեսնել, նրան սևացած, բծերով լի, ուռուցքներով պատված և զազրատեսիլ տեսնելով՝ պետք է ամոթից կարմրեինք: Եթե մարմնի թանձրությունն և ոսկորների կարծրությունն միջով երևում է նրա տգեղությունը, ի՞նչ կլիներ, եթե մերկ լիներ:

Մեղքի տված վնասները շատ-շատ են: Եթե մի քաղաքում մահը կոտորած է անում, թեպետ շատերն են մեռնում, բայց շատերն էլ ազատվում են: Եթե մրրիկը կարկտահար է անում մի այգի և վնասում շատ պտուղների, շատերն էլ անվնաս են մնում: Եթե ծովն արեկոծվում է և մի քանի նավ խորտակում, մի քանիսն էլ ազատվում են: Բայց երբ մեղքը մտնում է մեր հոգին, ամեն լավ բան ավերում, ամեն բան ոչնչացնում է: Մեղքը ոչ միայն մեր մարմինն է քայքայում, մեր հոգին ապականում, այլև Աստծուն է վիրավորում: Եթե մեկը փչացնում է թագավորի պատկերը կամ նշանավոր նկարչի մի նկարը, դրանով վիրավորում է թագավորին, նկարչին: Իսկ Աստված երկնային թագավորն է և ամենքի նկարիչն ու արվեստավորը, ուրեմն մեղքը, որ մեզանում Աստծո պատկերն է փչացնում, Աստծուն է վիրավորում: Եթե մեկը քաղաքում օրենքին հակառակ աղմուկ է բարձրացնում, անկարգություն անում, դրանով բարկացնում է ոստիկանությունը, իսկ մեղքն Աստծո օրենքներին հակառակ գնալն է, ուրեմն մեղքը բարկացնում է Աստծուն:

Մեղքն այրում, չորացնում է մեր հոգու ջլերը, փշրում-խորտակում է մեր խորհուրդների ոսկորները և փշում-մարում է մեր մտքի լույսը: Եթե մեղքը մեր ամենասիրելի Բարեկամին սպանեց, մենք էլ նրան մեր ամենագլխավոր թշնամին պետք է համարենք: Մեր «Տիրոջն ու Ուսուցչին» սպանողին պետք է մեզ սպանող համարենք, այս

պատճառով պետք է նրա դեմ գինվենք մեր բոլոր ուժով ու հնարներով: Իսկ եթե կովի մեջ հաղթվենք, պետք է դիմենք ապաշխարութեանը:

Աստված մեղավորին աչքից շուտ չի գցում: Նա ամեն հնար ու միջոց տալիս է նրան՝ դարձի գալու համար և շուտ ձեռք չի քաշում նրանից: Մանասե թագավորին քառասուն տարի ժամանակ տվեց, ջրհեղեղի դարի մեղավորներին՝ հարյուր տարի, իսրայելացի ազգին՝ հազար հինգ հարյուր տարի: Բայց սոսկալի պատիժ է, եթե Աստված մեղավորին թողնում է իր մեղքի մեջ, եթե նրանից ձեռք է քաշում՝ թողնելով, որ իր սրտի ուզածն անի: Եվ վա՛յ այն մեղավորին, որի բանը հաջող է գնում աշխարհումս, դա նշան է, թե զոհ պետք է գնա Աստծո բարկութեանը: «Այս ի՛նչ բան է,– աղաղակում է Երեմիա մարգարեն,– որ շարերի ճանապարհները հաջողված են»: Բայց շուտով էլի ինքն է պատասխանում. «Գիտեմ, գիտեմ, ո՛վ Աստված, դու նրանց ժողովում ես կոտորելու համար»:

Մեղքերի բեռից թեթևանալու միակ միջոցն ապաշխարութունն է, եթե միայն մարդս, զգալով իր մեղավորությունը, կամենում է ուղղվել, Աստծուն մոտենալ: Ապաշխարութունը զղջացողի համար երկրորդ ավազան է: Ինչքան մկրտութունն է հարկավոր քրիստոնյային, որովհետև թե՛ մեկով և թե՛ մյուսով մեղքերը լվացվում են: Զուրն ու անձրևը տեսանելի կրակն են հանգցնում, իսկ ջերմ արցունքը մեղքի կրակն է հանգցնում: Ապաշխարութունը զղջացող մարդու վրեժխնդրությունն է, որով նա պատժում է իր անձը: Իսկ նա, ով ապաշխարութեան չի դիմում, մեղքի վրա մեղք է դիզում, կպատժվի անհանգչելի կրակով: Մարդս գտնվում է Աստծո և արարածների մեջտեղում, Աստծո կամ արարածների կողմը լինելն իր ձեռքին է: Եվ նա անպատճառ կա՛մ Աստծո կողմն է, կա՛մ արարածների: Երբ մեկը ծանր կերպով մեղանշում է, այդ ժամանակ նա մեջքը դարձնում է Աստծո կողմը, երեսը՝ արարածների կողմը՝ արարածներին ավելի սիրելով, քան նրանց

Արարչին: Իսկ երբ մեկը զոչում է իր մեղքը, այդ ժամանակ նա դառնում է առ Աստված՝ մեջքը դարձնելով արարածների կողմը:

Ծանր բան է մեղքի մեջ ընկնելը, բայց ավելի ծանր է մեղքի մեջ մնալը, վատ բան է վերքերով խոցոտվելը, բայց ավելի վատ է վիրավորված մնալը, բժշկին ցույց չտալը: Մարմնավոր ցավերի ու վերքերի համար բժիշկը դառը դեղեր է տալիս, այրում է մեր վերքերը, բայց հոգևոր բժիշկը՝ սուրբ եկեղեցին, մեր հոգևոր վերքերի վրա այնպիսի զովացուցիչ բալասան է դնում, որ առանց երկար տանջելու՝ մի ըոպեում բժշկում է վերքերը: Մարմնավոր հիվանդությունների համար դեղերին ու բժշկին պետք է գումար տալ, եթե մի բժիշկը չի օգնում, մյուսին պետք է դիմենք, շատ անգամ մեր տեղում բժիշկ չկա, սարեր պետք է կտրենք, ծովեր պետք է անցնենք, ուրիշ երկրներում բժիշկ ու դեղ փնտրենք: Շատ անգամ էլ այնպես է պատահում, որ ողջ աշխարհը պտտում ենք, բայց բժիշկ ու դեղ չենք գտնում: Իսկ մեր հոգևոր հիվանդությունները բժշկելու համար այդ նեղություններից ոչ մեկը չկա, բժիշկն էլ է մեր կողքին, դեղն էլ և ոչ թե մեր կողքին, այլ հենց մեր մեջ է: Հոգևոր վերքերի դեղը սրտի խորքից դուրս եկած հառաչանքն է, արտասուքի երկու կաթին է, հոգևոր դեղը երկու բառ է՝ մեղավոր եմ, Տե՛ր Աստված, քավի՛ր ինձ՝ մեղավորիս:

\*\*\*

Մարդը, զգալով, որ ինքը խրված է անթիվ մեղքերի մեջ, դրանց միջից դուրս գալու մասին ամենևին չի էլ մտածում և զգալով, որ ինքն արդեն կորած է, թողության ոչ մի հույս չունենալով՝ մտքով չի էլ անցկացնում ապաշխարել: Բայց շատ կսխալվենք, եթե այդպես դատենք: Երկնավոր Դատավորը երկրավոր դատավորի պես չի դատում: Երկրավոր դատավորի հոգը չէ, թե մեկը, օրենքի դեմ մեղանշելով, շեղվել է ուղիղ ճանապարհից և իր համար սև ու մուժ ապագա պատրաստել: Նա հիշում է օրենքի հողավածը, դատաստան է անում և արժանի պատիժ տալիս: Բայց երկնավոր Դատավոր

րը միշտ մտածում է ներելու մասին, երկնավոր Հովիվը հոգում է մոլորյալ ոչխարի հոգսը, երկնավոր Հայրն սպասում է անառակ որդու դարձին. «Մեղավորի մահը չեմ ուզում ես»,— ասում է նա:

Ուրեմն թող ո՛չ ոք չասի, թե սխալվեցի, խաբվեցի, ոտքով գլխով կորա, այլևս փրկության հույս չկա, խավարեցի, կուրացա, այլևս աչք բացելու հնար չկա, վիրավորվեցի, մեռա, այլևս հարության հույս չկա: Նա, որ չորս օրվա թաղված Ղազարոսին հարություն տվեց, մի՞թե քեզ, որ կենդանի ես, չի կարող ոտքի կանգնեցնել: Նա, որ իր սուրբ արյունը խաչի վրա թափելով, քեզ փրկեց քո առաջին ծնողների մեղքից, քեզ ավելի հեշտ չի՞ փրկի քո սեփական մեղքերից: Ո՛չ, փրկվելուդ հույսը չպետք է կտրես, հուսահատությունը վտանգավոր է: Այն հիվանդը, որ բժշկվելու հույս չունի, արդեն ինքն է հեշտացնում իր քայքայվելը, ինքն է մոտեցնում իր մահը, իսկ այն հիվանդը, որ հույս ունի բժշկվելու, խնայում է իր անձը և դեղ ու դարման է փնտրում: Այն ավազակը, որ թողություն ստանալու հույս չունի, ավելի հանդուգն է դառնում և ուղղակի դեպի կորուստն է դիմում, իսկ նա, ով թողության հույս ունի՝ զսպում է իրեն, ուղղում է իրեն: Քո մեղքերի շատությունը չի կարող հաղթել Աստծո ողորմությանը, քո վերքը, քո հիվանդությունը չի կարող այնպիսի վերք, այնպիսի հիվանդություն լինել, որ «իմաստուն և ճարտարապետ Բժիշկը» չկարողանա բժշկել: Ուրեմն մեղանչեցի՞ր, հույսդ մի՛ կտրիր. Աստված մարդասեր է: Ադամը բանի տեղ չդրեց Աստծո պատվիրանները, իր կամքն առաջ տարավ: Աստված չէ՞ր կարող նրան իսկույն ևեթ փոշի դարձնել: Բայց բավականացավ նրան դրախտից դուրս գցելով և նրա դիմացը բնակեցնելով, որ լավ տեսնի ու իմանա, թե ինչ տեղից, ինչպիսի փառքից ու պատվից ընկավ, որ ամեն օր տեսնի և ապաշխարության կարոտի, կրկին իր տեղը դառնալուն արժանանա: Կայենն սպանեց իր եղբորը, բայց Աստված չսպանեց Կայենին, այլ թեթև պատիժ տվեց նրան. «Նրերվես ու տատանվես,— ասաց,— աշխարհի վրա, հանգստանալու տեղ չգտնես»: Խնչքան մեծ էր հանցանքը, բայց ինչքան փոքր պատիժը:

\*\*\*

Փրկվելու, թողություն ստանալու ճանապարհը Քրիստոս ինքն է ցույց տալիս: Ապաշխարելու համար Նա մի ճանապարհ չի տալիս, որ չլինի թե հեռու է, քարոտ է, փշոտ է ասելով դժվարացնես ապաշխարությունդ: Նա մի քանի ճանապարհ է տալիս քեզ, մեկը չես հավանո՞ւմ, մյուսով գնա, ամենքն էլ մի տեղ են տանում:

Ապաշխարելու առաջին, կարճ, ուղիղ ու հանգիստ ճանապարհը զղջումն է, մեղքը խոստովանելը: Խոստովանի՛ր մեղավորությունդ այստեղ՝ քո ներքին դատավորի, քո խղճի առաջ, քո մեջ, որպեսզի հետո ստիպված չլինես քո ծածուկ պահած մեղքերը մերկացնելու տիեզերքի մեծ հրապարակի վրա, երկնավոր Դատավորի առաջ:

Դրա համար քեզ զղջմամբ ապաշխարելու մի օրինակ տամ: Եվ որ տեսնես, թե ամեն կարգի ու ամեն աստիճանի մարդ էլ մեղանշում ու ապաշխարում է, և մանավանդ թե շատ մարդ իր մեղքերից շատ ապաշխարանքի տակ է գցում իրեն: Նա պետք է քո առաջ դնեմ ոչ թե մի սովորական ապաշխարողի, մի հասարակ մահկանացուի, այլ տերության գահի վրա բազմած, թագով պսակված, միլիոնավոր ժողովրդի հրամայող մի թագավորի ապաշխարությունը: Եվ եթե իմանաս, որ այդ թագավորը միլենույն ժամանակ Աստծո Սուրբ Հոգով լցված մի հոյակապ մարգարե է, այն մեծ մարգարեն, որի խոսքերի վրա իբրև անգին մարգարտի, իբրև մեղրի խորիսխի վրա հավաքվեցին աշխարհիս բոլոր հայրապետերը և ազահաբար հափշտակելով՝ դարձրին եկեղեցու թանկագին սեփականությունը, առավոտ, ճաշ ու երեկո նրա խոսքերը հնչեցրին քրիստոնյաների ականջին, այդ ժամանակ դու ավելի կարիք կզգաս նրա օրինակից ամաչելու, նրա փորձից ոգևորվելու, այդ ժամանակ դու տեսած կլինես ճշմարիտ ապաշխարողի մի ամենալավ օրինակը:



Այդ մեծ ապաշխարողը Դավիթ թագավորն է, Իսրայելի մարգարեն, հոգևոր բանաստեղծը, իր ոսկեթել քնարի լարերի վրա Աստծո գործքն ու անունը փառավորող երկնային աշուղը: Ի՞նչ էր նրա մեղքը. շնուխոն և սպանուխոն: Մարգարեն ոտքի տակ տվեց Աստծո երկու պատվիրանը՝ մի՛ շնանար, մի՛ սպանաներ, խլեց օտարի կնոջը և մարդուն սպանել տվեց պատերազմի դաշտում: Այդ ժամանակ Դավիթը քառասունինը տարեկան էր և տասնհինգ տարվա թագավոր:

Ողջ երուսաղեմը դղրդաց՝ այդ անսպասելի լուրը լսելով: Բարի մարդիկ տրտմեցին, չարերը խնդացին: Իսկ Դավիթը մոտ մի տարի մնաց իր մեղքի մեջ և ունեցավ մի որդի: Եվ քանի որ նա խնդում ու ցնծում էր նորածին մանկան վրա, քանի որ նա արբած էր մեղքից և ինքն իրեն կորցրել էր, ահա Աստված նրա մոտ ուղարկեց Նաթան մարգարեին: Եկավ, հասավ վերքի բժիշկը, մարգարեն՝ մարգարեի մոտ, հպատակը՝ թագավորի մոտ:

Նաթանը նրան ասաց.

– Մի քաղաքում բնակում էին երկու մարդ: Մեկն այնքան հարուստ էր, որ իր անասունների ու դրանց տեսակների թիվն անգամ չգիտեր, իսկ մյուսն այնքան աղքատ, որ մի գառ ուներ միայն: Նա այդ գառանն աչքի լույսի պես էր սիրում, ուստիև իր աղքատիկ կերակրից մաս էր հանում նրան, խմեցնում էր իր միակ ամանից և անկողին մտնելիս նրան իր ծոցում էր քնեցնում: Մի օր մի ճանապարհորդ հյուր եկավ հարուստի տուն: Հարուստը քար կտրեց, սիրտ չարեց մի ոչխար մորթել, աղքատից խլեց նրա հոգու հատոր գառնուկը, մորթեց և նրա մսից կերակուր պատրաստեց իր հյուրի համար:

Դավիթը, որ դեռ չէր հասկացել այդ առակի միտքը, բարկացավ ու գոռաց.

– Աստված գիտե, որ այդ անխիղճ հարուստը չարագործ է և մահվան արժանի, իսկ մորթած գառան փոխարեն կվճարի յոթնապատիկը:

– Այն հարուստ մարդը դո՛ւ ես, թագավո՛ր,– ասաց Նաթանը,–  
ինքդ վճռեցիր քո պատիժը:

Մարգարեի խոսքերը սուր նշտարի պես ծակեցին թագավորի  
սիրտը, երկյուղից լեզուն կապվեց և միայն այսքանն ասեց՝ Մե՛ղա,  
տե՛ր:

Նաթանը շարունակեց.

– Այսպես է ասում Աստված. «Ես քեզ օժեցի Իսարայելի թա-  
գավոր, ես քեզ ազատեցի Սավուղի ձեռքից, ես խորայելացիների  
բոլոր տաճաների ու տոհմերը դարձրեցի քո հպատակները: Եթե այդ  
քիչ է, գրանից ավելին կանեմ: Իսկ դու ինչո՞ւ անարգեցիր իմ պատ-  
վիրանները: Դու կնոջը խլեցիր և մարդուն անողորմաբար սպանել  
տվիր: Այս պատճառով սուրը չի հեռանա քո տնից, ազգուտակով  
կջնջեմ քեզ»:

Սարսափած Դավիթն ասաց դողալով.

– Ես մեղանչեցի Աստծո առաջ:

– Իսկ Աստված ներում է քեզ,– վրա բերեց Նաթանը,– դու չես  
մեռնի:

Բայց Դավիթը չբավականացավ դրանով: Նա հանեց թագավո-  
րական ծիրանին և քուրձ հագավ, իջավ ոսկե աթոռից և նստեց շոր  
գետնին՝ մոխրի վրա: Նիհարեցրեց իր անձը պահքով, ուտում էր մոխ-  
րախառն կերակուր, խմում էր արտասովախառն գինի, գիշեր-ցերեկ  
լացուկոծ ու հորդահոս արցունքով կուրացրեց իր աչքերը, որոնք մե-  
ղանչելու առաջին պատճառն էին դարձել: Եվ թեպետ իր ամուսնա-  
կան անկողինն աղտոտեց միայն մի գիշերվա մեղքով, բայց այդ աղ-  
տը լվանալու համար քանի կենդանի մնաց, ամեն գիշեր արցունքով  
թրջեց իր անկողինը: Եվ այդ անում էր այն մտքով, որ ինչպես իր ա-  
րարքից իր ողջ տերուկնունը գայթակղվեց, այնպես էլ ուզում էր, որ  
ամենքն իմանան ամբողջ սրտով իր առ Աստված դառնալը:

– Տե՛ր, իմ մեղքն ամեն բոպե աչքիս առաջ է,– ասում էր:

Ուզում է ասել, որ. «Թեպետ դու քո անչափ ողորմությամբ թողեցիր իմ մեղքը, բայց ես չեմ մոռանա երբեք: Հիշում եմ այն կնոջը, որին խաբեցի, հիշում եմ ժողովրդին, որին գայթակղեցրի, հիշում եմ այդ բոլորը և ողբում»:

Դավիթն Աստծո ողորմությանն արժանանալու համար շատ բան կարող էր հիշեցնել նրան: Նա շատ անգամ էր պատերազմել հեթանոսների դեմ, շատ անգամ էր ի սեր Աստծո ներել իր թշնամիներին, զարմանալի բարեպաշտությամբ պատվել ուխտի տապանակը և այլն: Բայց նա դրանից ոչ մեկը չհիշեց՝ գիտենալով, որ երբ մարդ մի անգամ մեղանշում է, իր բոլոր առաքինությունները ոչնչանում են:

Դավիթն ավելի այն պատճառով էր իրեն մեղավոր ճանաչում, որ ուրիշ շատ բարիքների հետ Աստված նրան տվել էր մարգարեական ոգի, այնպես առատ-առատ էր տվել, որ նա ոչ միայն Իսրայելի, այլև «մարգարեից թագավոր» է կոչվում:

– Աչքդ հեռացրո՛ւ իմ մեղքերից, Տե՛ր,— ասում է նա, որով կարծես Աստծուց խնդրում է, որ պարտապանի ձեռագրի պես ոչ թե իր մոտ պահի, որ ամեն կարգալիս ստիպի նրան պարտքը վճարել, այլ բոլորովին ջնջի, պատռի, որ էլ իրավունք չունենա պահանջելու:

Շնացող թագավորից հետո ահա և մի շնացող կին՝ Մարիամ Մագթաղենացի: Նա իր երկրում ամենքին հայտնի մի հրեա կին էր՝ շատ մեղքերի տեր: Տեսավ իր մեղքերը, սոսկաց, հառաչեց և վճեց դառնալ առ Աստված և այլևս չբաժանվել նրանից: Հենց որ նա լսեց, թե Հիսուս ճաշի է հրավիրված փարիսեցի Սիմոնի տանը, իսկույն գնաց, ոտքն ընկավ. Ո՛չ մի դժվարություն, ո՛չ մի արգելք չկարողացավ փակել նրա ճանապարհը: Նրա պես մի ազնվական կնոջ համար փոքր բան չէր ապաշխարողի զգեստով երևալ այն քաղաքում, որտեղ իր վարքն ամենքին հայտնի էր: Հեշտ չէր առանց կանչվելու երևալ սեղանի շուրջը, բոլոր հյուրերի առաջ, մի հպարտ փարիսեցու դիմաց, որ նրան պետք է անարգեր դրա համար: Բայց նա մեղքերի սաստիկ խայթից դրանցից ոչ մեկը բանի տեղ չդրեց և իր մեջ ասաց. «Մեղավոր երևալուց չամաչեցի, ապաշխարող երևալու համար

պետք է ամաչե՞մ: Աստծուց չվախենալով՝ ինձ աշխարհին հանձնեցի, ինձ Աստծուն հանձնելու համար աշխարհի՞ց պետք է վախենամ»:

Այդ պատճառով իր աչքերը, որ անպարկեշտ բաների նայելու համար էր բանեցրել, իր մեղքերը լացելու համար բանեցրեց՝ իր արցունքով թրջելով Հիսուսի ոտքերը: Մազերը, որ իբրև գլխի զարդ էր բանեցրել, Հիսուսի ոտքերը սրբելու համար բանեցրեց: Անուշահոտ յուղը, որով իր մազերն էր օծում, թափեց Հիսուսի գլխին, ոտքերը, որոնցով գեշ ճանապարհներով էր քայլում, Հիսուսի արքայության նեղ ճանապարհով գնալու համար բանեցրեց: Մի խոսքով՝ Մարիամը որոշեց վարքն ուղղել, սուրբ կյանք անցկացնել և արեց: Թողեց իր ծանոթներին, որոնց այլևս երբեք չերևաց. ապաշխարողի զգեստ հագած՝ Հիսուսի ետևից գնաց և նրանից ամենևին չհեռացավ մինչև խաչի վրա հոգին ավանդելը, մինչև գերեզման իջնելը:

Եվ Հիսուս, հավանելով ու գովելով դարձի եկող այդ կնոջ արարքը, ասաց այս նշանավոր խոսքը. «Ամեն տեղ, ուր էլ որ քարոզվի իմ ավետարանը, ուր էլ կարդացվի իմ հրավերը դեպի երկնային արքայություն, թող հիշվի և այն, ինչ որ արեց դա՝ մահից առաջ օծելով իմ մարմինը»: Եվ այդ օրից Մարիամի արածը քարոզվում է ու միշտ կքարոզվի:

Արժե լսել, թե մեր սուրբ հայրերն ու հայրապետերն ինչպես են ուզում, որ ցույց տանք մեր մեղքերի ծանրությունը: Ահա նրանք ինչ զգացմունքներ են ծնեցնում մեր սրտում, ինչ խոսքեր են դնում մեր բերանը:

«Արարած աշխարհ, վրաս նայեցե՛ք, ախտակի՛ց եղեք, երկի՛նք ու գետի՛նք, եկե՛ք, ողբացե՛ք եղկելի անձս, չարչաց ցանկությունը ցավալի տեսքով ցավեցրեց աչքերս, հանցանքիս վերքերով վշտանում է հոգիս, վարանյալ<sup>1</sup> շրջում եմ, ցեխի մեջ խրված թավալվում եմ մեղքի մեջ, թոթափել չեմ կարողանում: Հոգով մեռած եմ,

---

<sup>1</sup> Տարակուսած, երկյուղած:

մտքով մոլորված, մարմնով կամ միայն: Թշնամին հանապազ կամենում է կորցնել ինձ, իսկ դու, Տե՛ր իմ, ա՛յց արա մոլորյալ ոշխարիս: Իմ անօրենությունները գլխիցս էլ վեր են բարձրացել ու ծանր բեռան պես դրված են սրտիս վրա, իսկ դու, Տե՛ր, հիշի՛ր, որ բարերարությանդ պատկերն եմ: Կյանքի ծովը հանապազ ալեկոծում է ինձ, նավս ընկղմելու վրա է, նավապե՛տ բարի, հասցրո՛ւ ինձ աջդ: Մեղքերիս շատությունից արժանի չեմ վերև նայելու՝ երկնից բարձրությունը տեսնելու, ամենակալ Տե՛ր, թո՛ղ ինձ իմ մեղքերը»:

\*\*\*

Ապաշխարության երկրորդ ճանապարհն ուրիշի հանցանքը ներելն է: Քրիստոս պարզապես պայման է կապում մեզ հետ. «եթե,—ասում է,— դուք կներեք ուրիշներին իրենց հանցանքը, ձեր երկնավոր Հայրն էլ կների ձեր հանցանքը, իսկ եթե դուք չեք ների նրանց, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ չի ների»: Այս է այն պայմանը, որով կարող ենք թողություն ստանալ Աստծուց: Ոչ թե մարդու կողմից առաջարկված պայման, այլ ուղղակի երկնքից, ուղղակի այն սրտից, որ ներելը սովորեցրեց մեզ աշխարհի միակ ամբիոնից՝ խաչի վրայից: Քահանաները ծաղրում էին, ժողովուրդը՝ հայհոյում, ավազակը՝ անարգում, և այդ բոլորի դեմ Գողգոթայի վրա ո՛չ մի տրտունջ չէր լսվում, ո՛չ մի գանգատ, ո՛չ մի հանդիմանություն, լսվում էր միայն մի աղոթք նրանց մեղքը ներելու մասին:

Բայց մեզ՝ վշտացողներին, մեր սիրտը խոցողներին ներելու համար չպետք է մոռանանք հինգ գլխավոր բան.

1) Ներել առանց բացատրության, այսինքն՝ առանց հիշելու այն պատճառները, որոնցից առաջ է եկել քո խեթն<sup>1</sup> ու ատելությունը՝ դեպի քեզ վիրավորողը: Դրա պատճառն այն է, որ քանի դու հիշում ես ատելությանդ պատճառները, այնքան նորոգում ես ատելությունդ և փոխանակ ստացած վերքդ ներողամտության ձեթով

---

<sup>1</sup> Հիշաշարություն:

բժշկելուն՝ դու թե՛ քո և թե՛ ուրիշի սրտում նոր-նոր վերքեր ես բաց անում:

2) Ներել ամեն անգամ: Հրեաները երկու անգամ էին ներում, երրորդ անգամ հարվածի տեղ հարված էին տալիս, վերքի տեղ՝ վերք: Իսկ Պետրոս առաքյալն իր համբերության չափը ցույց տալու համար դարձավ Հիսուսին, ասաց. «Տե՛ր, ինձ վիրավորողին քանի՞ անգամ ներեմ, յո՞թ անգամ»: «Ոչ թե յոթ անգամ,— պատասխանեց Հիսուս,— այլ յոթանասուն անգամ յոթ»: «Մ՛հ,- կմտածես դու,- մոտ հինգ հարյուր անգամ»: Բայց այդպես չպետք է հասկանալ, սիրելի՛ս, որովհետև սիրտը թվերի հետ գործ չունի: Այլ Հիսուս, այդքան հեռացնելով ներելու սահմանները, ուզում է մեզ հասկացնել, որ ներելը չի կարելի չափի ու սահմանի տակ դնել, ուզում է ասել՝ միշտ պետք է ներես, որովհետև եթե հաշվես, ոչ թե ներած, այլ նորոգած ես լինում:

3) Ներել առանց տեղի, ժամանակի ու անձի պայմանի: Ինչ որ կարելի է ներել այստեղ, այն չպետք է տեղափոխես մի ուրիշ տեղ: Ինչ որ կարելի է ներել այսօր, պետք է ներես այսօր ևեթ: Ինչ որ կարելի է ներել առանց վկայի, պետք է ներես առանձին, սրտագետ Աստծո առաջ: Եթե ներում ես մի հանցանքը, պետք է ներես բոլոր հանցանքները, եթե ներում ես մի հակառակորդի, պետք է ներես հենց ամենքին: Այսպիսի ներումը կլինի կատարյալ ներում: Բայց երբ ուզում ես, որ վիրավորանքը ներես այս կամ այն հարմար տեղում, եթե հետաձգում ես մի այլ ժամանակի, եթե ներում ես ուրիշ-ների առաջ, եթե ներում ես մեկին, չես ներում ամենքին, եթե ներում ես չնչին հանցանքը, լուրմ ես մեծերի մասին, դու այդպիսով ճշուղերը կտրատում ես, իսկ արմատին ձեռք չես տալիս. վերքը միշտ վերք է մնում:

4) Ներել մշտապես: Երբ դու ներում ես միայն սրբությունն ընդունելու ժամանակ, իսկ հետո նորից սրում ես նետերդ՝ հակառակորդի սիրտը կրկին խոցոտելու համար, դու այդպիսով ներած չես լինում: Այդպես էր անում աններող Սավուղ թագավորը: Հեզ Դավի-

թը, Գողիաթի դեմ կռվի դուրս գալով, իր կյանքը վտանգի ենթարկեց, որ ազատի իր թագավորի կյանքը, սրբի նախատինքն Իսրայելի ճակատից, բայց Սավուղը գեղարդը ձեռքից բաց չէր թողնում, միշտ լարված էր մնում Դավթի դեմ: Իսկ դու պետք է ներես մի անգամ ընդմիշտ:

5) Ներել առանց դիրքը քննելու: Չպետք է ասես՝ մեծը, հարուստը, գիտունը ես եմ, նա՛ պետք է ինձնից ներում խնդրի, չպետք է ասես՝ այսինչ գործում հանցավորը ես չեի, նա՛ էր, ուրեմն նա՛ պետք է ներում խնդրի: Ինչպես հարյուր ութըլու գողը չի կարող արդարանալ նրանով, որ հարյուր է գողացել, ոչ թե հազար, այնպես էլ նա, որ ինքը խեթ չունի իր ընկերոջ դեմ, այլ ընկերն ունի իր դեմ, չի կարող ասել՝ ե՛ս չպետք է գնամ նրա դուռը, նա՛ պետք է գա իմ դուռը՝ ինձնից ներում խնդրելու: Ինչպես որ որդին չի պատվում իր հորը, երբ անարգում է իր եղբորը, ինչպես ծառան չի պատվում իր տիրոջը, երբ չի կատարում նրա կամքը, այնպես էլ ոչ ոք չի կարող ասել, թե փառավորում է Աստծո անունը, երբ արհամարհում է իր եղբորը:

Ապաշխարության բոլոր տեսակներն էլ լվանում են մեր մեղքերը և դառնում երկրորդ ավագան: Դեռ չի եղել մի ապաշխարող, որ իր սիրտը կտորի Հիսուսի առաջ և չփրկվի: Մատթեոսը երեկ մաքսավոր, անողորմ կողոպտիչ էր, այսօր բազմած է երկնքում: Պետրոսը՝ իր Աստծուն և Ուսուցչին ուրացողը, այսօր փառքով է պսակված: Պողոսը, երեկ հայհոյիչ և եկեղեցի հալածող, այսօր՝ «ընտրության անոթ», Աստծո մոտ է հանգստանում: Ավագակը, երեկ իբրև մարդասպան խաչված, այսօր արքայության մեջ է նստած:

էլ ինչո՞ւ ենք ծուլանում, շտապե՛նք մի այսպիսի ողորմած Տիրոջ մոտ, որ, բազուկները տարածած, մեզ է սպասում: Բայց Աստված, տեսնելով մեր դանդաղությունը, դուրս է գալիս, կանգնում արքայության դռների մոտ և ձայն տալիս. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր վաստակածներդ ու բեռնավորներդ, եկե՛ք հանգստացնեմ ձեզ»:

Հոգևոր բժիշկը մեծ գին չի պահանջում, ձրիաբար է առաջարկում ամեն ցավի դեղը: «Հիվա՞նդ ես,- ասում է,- ես ձրի եմ բժշկում,

մտի՛ր սենյակդ, բե՛ր ինձ արտասուք, ինչքան կարողանաս, մի կաթիլ էլ որ լինի, բավական է քեզ երկրորդ անգամ մկրտելու և առաջին փառքիդ հասցնելու համար: Մեղավո՞ր ես, ես ողորմած եմ, չեմ եկել կանչելու արդարներին, այլ քեզ պես մեղավորներին արդարության ճանապարհով: Ծարա՞վ ես, մի՛ դանդաղիր, ես կենաց աղբյուրն եմ, ով ծարավ է, թող ինձ մոտ գա և հավիտյան չի ծարավի: Քաղցա՞ծ ես, մի՛ լքվիր, «ես եմ հացն կենաց երկնքից իջած», ով այս հացից ուտի, հավիտյան կապրի: Մե՞րկ ես, ես քեզ պատմուճան եմ և վերարկու, միայն չարություններիցդ մերկացիր, և ես կհագցնեմ քեզ առաջին հանդերձդ:

Տե՛ս՝ ինչքան սիրեցի քեզ: Երկիրը քեզ համար ստեղծեցի, երկինքը քեզ համար հորինեցի, արքայությունը քեզ համար պատրաստեցի, անկյալ հրեշտակների տեղը քեզ համար թողի: Քեզ համար Աստվածս մարդացա, ամեն անարգանք կրեցի, անձս զոհեցի, արյունովս մեղքերդ լվացի, քեզ Հորս հետ հաշտեցրի: Էլի ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ, ասա՛, ես սովոր եմ ամեն տեսակ ծառայության: Եթե մատնիչիս ոտքերը լվացի, քեզ ևս առավել, դու մի կաթիլ արցունք թափիր իմ կոնքը<sup>1</sup>, ես Հորդանանի առատությամբ շնորհքներ թափեմ վրադ: Ինչո՞ւ ես փախչում ինձնից, մո՛տ արի, ես չեմ բարկանում, չեմ մեղադրում, չեմ հայտնում մեղքդ, չեմ հանդիմանում, որովհետև ողորմած եմ, որովհետև Իմ ստեղծածն ես, Իմ պատկերն ես, Իմ նմանությունն ես: Դժվար բան չեմ պահանջում քեզնից, միայն դարձի՛ր Իմ կողմը, և ես կդառնամ քո կողմը: Դե՛հ, մի՛ ամաչիր, արի՛ մոտս»:

Այո՛, սիրելի՛ս, գնանք Հիսուսի մոտ, քանի որ լսում ենք նրա ողորմած ձայնը. «Եկե՛ք Ինձ մոտ»: Քանի որ նա մեզ սիրելով է իր մոտ կանչում, գնանք մոտը: Եթե ոչ, կգա ժամանակ, երբ նա մեզ կասի. «Կորե՛ք աչքիցս», բայց այդ ժամանակ ուշ կլինի:

---

<sup>1</sup> Լվացքի կամ լվացվելու ոչ մեծ աման:



## ԲԱՆ Գ

«Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է Ծա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու համար մեզ ամեն անհրավալությունից»:

(Ա. Գովհ. Ա:9)

Ապաշխարությունը կատարյալ դարձնելու համար, բացի գղջումից, կարևոր է նաև խոստովանությունը: Խոստովանության հրավերի ձայնն առաջին անգամ դրախտում ենք լսում: Հենց որ Ադամը մեղանչեց Աստծո հրամանի դեմ, Աստված՝ ամենատես Բնությունը, իսկույն շտեմնող ձևանալով, քաղցրությամբ խոստովանության է հրավիրում առաջին մեղավորին՝ ձայն տալով նրան. «Ադամ, ո՞ւր ես»: Ուզում է ասել. «Ադամ, ես արդեն տեսա, որ դու մեղանչեցիր, բայց չե՞ս խոստովանի, որ արածդ մեղք է, թողություն ստանալ չե՞ս կամենա: Արի՛, դու Ինձ լսի՛ր, խոստովանի՛ր և կարգարանաս»: Միևնույնն է կրկնում նաև Եսայի մարգարեն. «Ասա՛ անօրենություններդ և կարգարանաս»: Իսկ Սողոմոնը պարզաբանում է. «Ով ծածկի,– ասում է,– իր մեղքերը, չի արդարանա, իսկ ով պատմի ու հանդիմանի, կսիրվի»: Եվ երբ մարգարեն ասում է. «Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք»<sup>1</sup>, ոչ թե մեր կերակրոտ ամանեղենի մասին է ասում, այլ մեր սիրտն ու խիղճը լվանալու և սրբելու մասին է ասում, որովհետև իսկույն վրա է բերում. «և ձեր շար արարքները թոթափեցե՛ք ձեզնից», այսինքն՝ խոստովանեցե՛ք ձեր մեղքերը:

Իր մեղքերը քահանայի մոտ խոստովանողն ինքն իր դեմ է դուրս գալիս, ասես թե ամբաստանում է իրեն, իր արարքներն է հանդիմանում, որովհետև խոստովանել նշանակում է իր արածը

---

<sup>1</sup> Եսայի, 1, 16:

հայտարարել, իրեն մեղադրել: Դրա համար է, որ մեծ ապաշխարող Դավիթը ձայն է տալիս գովելով. «Ի՛նչ սիրուն բան է խոստովանել Աստծո և նրա քահանայից առջև»:

Խոստովանությունը թեթևացնում է մեղքի ծանրությունը: Խոստովանությունը որտեղից դուրս է գալիս, ոսկու պես փայլեցնում է իր ժանգոտ ամանը: Խոստովանությունն ապաշխարողի պարիսպն է, գլորյալի կանգնումը, երկինքը բացողը, երկնաքաղաք առաջնորդողը: Մեղավո՞ր ես, հազար բարեգործություն էլ որ անես, բայց արած մեղքերդ չխոստովանես, սուտ է, զուր է թե՛ աղոթես, թե՛ պահես, թե՛ ողորմես, թե՛ ճգնես. առանց խոստովանության անկարելի է, որ թողություն գտնես:

Բայց քանի որ խոստովանությունն այդչափ հարկավոր պահանջ է ամեն մեղավորի համար, մարդ զարմանում և ապշում է, թե ինչպես դեռ կան մեղավորներ, որոնք այնպես ուշ-ուշ են խոստովանում և ավելի քաղցր ու ախորժ են համարում հանգիստ մնալ իրենց մեղքերի մեջ՝ նման անբան անասունների, որոնք սիրով ընկղմվում են տիղմի մեջ և համառությամբ մնում այնտեղ: Այս է պատճառը, որ Աստված մարգարեի բերանով աղաղակում է. «Ես վրեժ կպահանջեմ նրանցից, որոնք խրված են իրենց տիղմի մեջ»:

Պարտքդ ուշացնելով պարտքից չես ազատվում, լավ կանես, որ քանի քիչ է, վճարես, որպեսզի հետզհետե շատանալով չծանրանա ուսիդ: Մի տարի ձեռքդ մի լվանա, կտեսնես՝ ինչպես է մրոտվում, նորից մաքրելու համար ինչքան օճառ, լիմոն բանեցնես, ինչքան լվանաս, սրբես, սևությունը միշտ կմնա, բծերը չեն անցնի: Այդպես էլ ինչքան քննես սիրտդ, խիղճդ, միշտ մի նոր կեղտ կգտնես լվանալու համար: Այդ պատճառով քանի մեղքերդ գլխիցդ չեն բարձրացել, մտի՛ր սրտիդ խորքը, լավ քննիր, ամեն կողմ մա՛ն արի, ամեն անկյուն քրքրի՛ր և կարծածիցդ ավելի այլանդակ գարշություններ կգտնես: Ի՛նչ ես ուշացնում. Աստծո դեմ հայտնի մեղանչելուց չես քաշվել, քահանային ծածուկ խոստովանելո՞ւց ես քաշվում:

Հիսուս, իր տեղը քահանա դնելով երկրիս վրա, նրա ձեռքն է դրել նաև քո մեղքերին թողություն տալու և շտալու իշխանությունը՝ սսելով. «Ում որ դու արձակես երկրիս վրա, նա արձակված կլինի երկնքում, և ում կապես երկրիս վրա, կապված կլինի երկնքում»: Ասա տեսնեմ՝ քահանան ինչպե՞ս պետք է գործածի իր այդ աստվածատուր իշխանությունը, եթե դու, շարունակ ուշացնելով, զանցանություն տաս և նրան շոսստովանես քո մեղքերը: Մի՞թե կուզես, որ ինչպես պատահի, այնպես անի՝ մեկին արձակի, մյուսին՝ կապի: Ուրեմն եթե նա լավ պետք է գործածի իր իշխանությունը՝ արժանավորին արձակում տալով, անարժանին շտալով, պետք է գիտենա մեղքերիդ թիվն ու ծանրությունը: Իսկ եթե դու չհայտնես մեղքերդ, քահանան ինչպե՞ս թողություն տա կամ շտա: Դատավորն ինչպե՞ս կարող է ազատել կամ պատժել հանցավորին, եթե լավ չգիտենա նրա բոլոր արածները: Եվ ահա քահանան Քրիստոսի պես, որ դատաստանի օրը գալու է դատելու ամենքիս, նստում է դատողական աթոռի վրա, իսկ խոստովանողը, ինչպես մեղադրյալ, ձախակողմյան դասի մեղավորների նման չոքում է նրա ձախակողմում՝ գլխիկոր և ամոթալից:

Տե՛ս, Աստված քեզ հրեշտակի մոտ չի ուղարկում խոստովանելու, որ չլինի թե նրա սրբությունն աչքիդ առաջ ունենալով՝ երկյուղ կրես մեղքերիդ արժանի պատիժ ստանալու համար: Այլ ուղարկում է քեզ նման մարդու մոտ, որ գիտե իր տկարությունք քո տկարությունը չափել և օգնել մարդասիրությունք, որովհետև ինքն էլ Աստծո մարդասիրությունն է կարոտ, ուստիև ներողամիտ կլինի, որ Աստված մեղքերիդ թողություն իրավունքը քահանային է տվել և թեթևացրել քո զղջման ու նորոգման գործը: Այսպես մտածիր՝ եթե թագավորը մի մահապարտի ասեր. «Քեզ կներեմ ու մահից կազատեմ, եթե գնաս և արած հանցանքդ պատմես իմ փոխանորդին», իսկույն ուրախ-ուրախ չէ՞ր վազի դեպի փոխանորդը՝ իր հանցանքը խոստովանելու: Ուրեմն պետք է շտապել քահանայի մոտ, որ Աստծո միջնորդն է և մարդու բարեխոսը:

Մեղքերդ քահանայի մոտ խոստովանելուց առաջ հարկավոր է պատրաստություն տեսնես: Պետք է մաքրես սիրտդ, նրա միջից հանես ամեն խեթ, նախանձ, ատելություն, իսկ դրա համար պետք է հաշտվես այն մարդու հետ, ում որևէ կերպով վիրավորել ես կամ ումից վիրավորվել ես: Քրիստոնյաներին այնքան է հարկավոր ընկերոջ սիրտը շահելը, հոգին գրավելը, որ եթե մարդ առաջ հաշտ չլինի իր ընկերոջ հետ, Աստծո հետ ոչ մի կերպով չի կարող հաշտվել:

Դու պետք է մեջդ մի սրտաքննություն անես, պետք է միտքդ բերես, թե ինչ տեղեր ես եղել, ում հետ ես ապրել, ինչ գործով ես պարապել վերջին խոստովանությունիցդ առաջ: Պետք է մտածես մեղանչելուդ բոլոր հանգամանքների մասին, պետք է աչքի առաջ ունենաս քո կացությունը, աստիճանը, հասակը, ժամանակը, երբ սկսել ես մեղանչել, որքան ես մնացել մեղքի մեջ, այն անձը, ում հետ մեղանչել ես, այն անձինք, որոնց գայթակղեցրել ես, և թե ինչպես ես մեղանչել: Պետք է օրինավոր ուշք դարձնես այս բոլորի վրա, որպեսզի խոստովանությունդ անհաշիվ և անզգույշ չլինի, ինչպես առաքյալն էլ ասում է. «Եթե մեր անձը քննեինք, չէինք դատապարտվի»:

\*\*\*

Ահա մեկը մոտենում է քահանային խոստովանելու: Բայց ինչի՞ց դրդված, մի՞թե հիրավի մի ներքին պահանջ է զգում: Ո՛չ, մոտենում է, որովհետև ուրիշներն էլ են մոտենում: Մոտենում է, որովհետև խոստովանելն ազաթ է, և մոտենում է շատ անգամ ոչ թե դրա համար նախապատրաստված, այլ հենց կանգնած տեղը մտքով անց է կացրել, որ դա էլ մի պարտք է, մի սովորություն է, պետք է կատարել: Նա մոտենում է հույսը քահանայի վրա դրած՝ գիտենալով, որ ինչ նա ասի, ինքն էլ, եթե կարողանա, կրկնի, եթե ոչ՝ «Մեղա Աստուծո» հո կասի:

Շատ քիչ է պատահում, որ խոստովանողը պատրաստի պատասխան ունենա: Երբ քահանան հարցնում է՝ ի՞նչ ունես ասելու, եթե կին է. «Է՛հ, տե՛ր հայր,— ասում է,— քեզ հո լավ հայտնի է, երե-

խանց տեր ենք, չարացնում են, բարկանում ենք, սրտներս վիրավորում ենք, ուրիշ ի՞նչ պետք է ունենամ»: Եթե տղամարդ է. «Դու հոլավ գիտես, տե՛ր հայր, փեշաքար<sup>1</sup> մարդ ենք, սուտ էլ ենք խոսում, խաբում էլ ենք, ձեռնաքաշովթյուն<sup>2</sup> ենք անում, էդպես էլ որ շանենք, մի տուն քուլփաթը<sup>3</sup> ինչո՞վ պահենք»: Շատերն էլ քահանայի հարցմունքին ուղղակի պատասխանում են՝ Ոչինչ: Է՛հ, սիրելի՛ս, երբ ոչինչ ասելիք չունես, ինչո՞ւ ես եկել: Եթե հիվանդ չես, ինչո՞ւ ես գնում բժշկի մոտ: Եթե կարիք չունես, ինչո՞ւ ես դուռը բախում: Եթե հանցանք չունես, եթե ոչ մի ասելիք չունես, նշանակում է դու հողեղեն չես, հրեղեն ես, մարդ չես, հրեշտակ ես: Նշանակում է քո սիրտը մարդկային սրտերից չէ, քո միտքը, քո զգայարանները մարդկային չեն: Նշանակում է աշխարհն իր բոլոր պատրանքներով, կյանքը իր բոլոր հրապույրներով, գեղեցկությունը իր բոլոր կախարդանքով, ոսկին իր բոլոր փայլով, իր բոլոր ուժով, դրանցից ոչ մեկը քեզ վրա, քո սուրբ սրտի, քո մաքուր խղճի, քո անարատ բարոյականի, քո անախտ հոգու վրա ոչ մի ազդեցություն չի՞ ունեցել: Նշանակում է դու մի այնպիսի աչք ունես, որին գեղեցկությունը չի գրավել, որին ոսկին չի շլացրել: Դու մի այնպիսի ականջ ունես, որ երբեք չի ախորժեղ գեշ զրույց լսել, չար խորհուրդներ ընդունել: Դու մի այնպիսի լեզու ունես, որ երբեք սուտ չի խոսել, ոչ ոքի չի վիրավորել, ոչ ոքի անունը չի արատավորել: Դու մի այնպիսի ձեռք ունես, որ ոչինչ չի հափշտակել, ոչ ոքի վրա չի բարձրացել, ոչինչ չի խարդախել, չի կեղծել: Դու մի այնպիսի ոտք ունես, որ մրջյուն անգամ կոխ չի տվել, չարություն ճանապարհ չի անցել: Դու մի այնպիսի սիրտ ունես, որի դռները միշտ փակ են եղել անիրավությունների դեմ, որին օտար են գեշ ցանկությունները, որին խորթ է մեղք ասված բանը: Վերջապես նշանակում է դու մի այնպիսի հոգի ունես, որ իշխում է մտքիդ, սրտիդ և բոլոր զգայարաններիդ վրա, մի այնպիսի հոգի, որ

---

<sup>1</sup> Արիեստավոր:

<sup>2</sup> Գողութուն:

<sup>3</sup> Ընտանիք, ընտանիքի անդամներ:

ոսկու պես մաքուր է, բյուրեղի պես փայլուն: Եթե այդպես է, եթե դու մի այդպիսի անբիծ, անարատ արարած ես, ուրեմն օրհնվի՛ այն արգանդը, որ քեզ ծնեց, օրհնվի՛ այն տունը, որ քեզ սնեց, օրհնվի և այն աշխարհը, որ քեզ պահեց: Երթ ի խաղաղություն, քահանայի մոտ քեզ համար տեղ չկա, եկեղեցին քեզպեսների համար չէ, երկիրը քեզ չի կարող կրել իր վրա, քո տեղը լուսեղեն երկինքն է:

Օրհնա՛ծ, մեկ աչքդ բա՛ց արա, տե՛ս, թե ապաշխարության այս օրերում եկեղեցին ինչ է ձայն տալիս, ինչ է հիշեցնում, ինչ է սովորեցնում: Եկեղեցին այս օրերին իրեն մեղքերի ցեխի մեջ շաղախված, աներևույթ թշնամուց ծանրապես վիրավորված տեսնելով՝ իր թշվառ վիճակից է գանգատվում, օգնություն խնդրում. «Հա՛յր բազումողորմ, խոստովանում եմ Քո առջև ինչպես անառակ որդին, ինձ մաքրի՛ր իմ հանցանքներից, Տե՛ր, ինչպես երբեմն մաքսավորին, և ողորմի՛ր: Մեղա՛, Տե՛ր, խոստովանում եմ իմ հանցանքները, մեղա՛, ողորմի՛ր: Իմ մեղքերը ցույց կտամ Քեզ, Քրիստո՛ս, որ հոգիների բժիշկն ես և կյանքի տերը, բժշկի՛ր իմ հիվանդությունները: Ամեն ժամանակ իմ աղաչանքն այս է՝ սրբի՛ր ինձ իմ մեղքերից»:

Եվ ի՛նչ սրտից է բխում այս խոստովանությունը, ի՛նչ կրծքից են թռչում այս հառաչները, ո՛վ է, որ իր հարկը վայոց տուն է դարձրել, ո՛վ է, որ իր տունը մեղքերի ծով է դարձրել: Եկեղեցու սյունը, հայրենյաց փառքը, ազգի պարծանքը, այդ մեղքերի մեջ կորած, արցունքների մեջ խեղդված մեղավորն առաքելապատիվ սուրբ ներսես Շնորհալիին է: Իսկ դու ասում ես՝ անմեղ եմ: Նրա առաջ ի՞նչ ենք արդյոք ես, դու, այս ապականված աշխարհը: Չէ՛, սիրելի՛ս, արի՛, դու դաս առ այդ սուրբ ուսուցչից, դա՛ս, ոչ թե սովորական իմաստության, այլ դաս՝ Աստծո երկյուղի իմաստության, անձի խոնարհման, իմաստության: «Ո՛վ իցէ, որ կեցցէ, և ոչ մեղիցէ» (Մարդ կլինի՞, որ ապրի ու չմեղանչի): Ուրեմն երբ քահանան քեզ հարցնում է. «Ի՛նչ ես արել, որդի՛ս», ասա՛. «Ի՛նչ չեմ արել, տե՛ր հայր, ոտքից գլուխ մեղավոր եմ, մեղքի գերի եմ: Մի՞թե լեզուն կարող է պատմել, մի՞թե խոսքը կարող է նկարագրել այն բոլոր շա-

րությունները, բոլոր անօրենությունները, որ արել եմ ես, իմ մեղքը շատ է, քան երկնքի աստղը, քան ծովի ավազը. մեղավոր եմ, օգնի՛ր անարժանիս»:

Մեղավորը պետք է խոստովանի անկեղծությամբ, առանց ստելու և ամբողջությամբ հայտնելով իր մեղքերը: Սուտ խոսել այնտեղ, ուր գնացել ես ստախոսությունդ խոստովանելու, գողունի կերպով ծանր մեղքերդ թաքցնել նրա մոտ, ում մոտ գնացել ես գողությունդ խոստովանելու, դա, իհարկե, կրկնակի մեղք է, և շատ էլ որ քահանային խաբես, Աստծուն չես կարող խաբել: Եթե ճշմարտությամբ, անկեղծորեն չես խոստովանում, այդպիսով ոչ թե չես թեթևանում մեղքերիցդ, այլ նոր-նոր մեղքեր ես ավելացնում: Ընդհակառակը, ամեն անգամ խոստովանելիս այնպես պետք է մտածես, թե դա քո վերջին խոստովանությունն է, հոգեվարքի խոստովանությունը: Ով անկեղծ է խոստովանում, նա մոտ է ուղղվելու: Առաջին քրիստոնյաներն այդ լավ էին հասկանում, ուստի, ինչպես սովորությունն էր, իրենց ծանր մեղքերն էլ խոստովանվում էին եկեղեցում, ժողովրդի բազմության առաջ, բարեկամների ու թշնամիների, ծանոթի ու անծանոթի առաջ: Բայց մայրախնամ եկեղեցին, գիտենալով իր որդոց թուլությունը, զիջող եղավ և սահմանեց խոստովանել միայն մի քահանայի առաջ: Սովորությունը վերացավ, բայց հետքը մնաց, այն էլ միայն պատարագի քահանայի վրա, որ դառնալով դեպի ժողովուրդը՝ ասում է. «Հայրե՛ր ու եղբայրնե՛ր, մեծե՛ր ու փոքրե՛ր, խոստովանում եմ նաև ձեր առաջ»:

Անկեղծությամբ խոստովանելու համար ոչինչ չպետք է ծածկես քահանայից, որովհետև ինչ որ այստեղ ծածկելու լինես մի քահանայի առաջ, ստիպված կլինես դատաստանի օրն այն մերկացնելու ողջ աշխարհի առաջ: Այն ժամանակ ամոթից կասես սարերին. «Ընկե՛ք ինձ վրա», և բլուրներին, թե. «Ծածկեցե՛ք ինձ»: Այստեղ եթե անկեղծ խոստովանես, թողություն կստանաս, իսկ այնտեղ ո՛չ խոստովանելու ժամանակ է, ո՛չ էլ թողություն: Մարդասպանն էլ է կախաղան բարձրանալիս խոստովանում իր հանցանքը, բայց չի

փրկվում: Այդ պատճառով առաքյալը, մեզ դեպի ճշմարիտ խոստովանություն հորդորելով, ասում է. «Եթե ասենք, թե ոչ մի մեղք չունենք, մեզ ենք խաբում, որովհետև ասածներին մեջ ճշմարտություն չկա, իսկ եթե շածկենք, խոստովանենք, պետք է հաստատ գիտենանք, որ արդարադատ Հիսուս իսկույն թողություն կտա մեզ»:

Խոստովանելիս քահանան քեզնից մի բան է ուզում միայն՝ քո սիրտը: Երբ նա քեզ հարցնում է. «Որդի՛, ի՞նչ ես արել», դրանով ուզում է ասել. «Դու ամբողջ կյանքդ անց ես կացնում սիրտդ մարդկանցից ծածկած, ամբողջ տարին դու այն չես երևում, ինչ որ կաս, մի՞թե այս կարճ ընթացքներին էլ սիրտդ չես բացի իմ առաջ»:

\*\*\*

Մարդս պետք է խոստովանի համեստ կերպով, ամեն բանի մեջ իրեն մեղադրելով, ուրիշի արածը չհիշելով, իր արածը խիստ մերկացնելով: Խոստովանողը, որ գնում է դատվելու, չպետք է դառնա ինքն իր գործի դատավորը, չպետք է սկսի իր դատը պաշտպանել այլոց դեմ: Քահանայի մոտ այնպես պետք է խոսես, ինչպես հանցավորն է խոսում դատավորի հետ, որ իրեն պետք է ազատի կամ պատժի, ոչ թե ինքնահավանությունամբ ու պարծենալով: Դու պետք է խոսես ոչ միայն խոնարհությամբ, այլև պետք է լսես խոնարհությամբ, երբ խոստովանահայրը քեզ խրատում ու հանդիմանում է: Մի՞թե դու խելագար չէիր համարի այն հիվանդին, որ կծում է իր վերքը բժշկող վիրաբույժի ձեռքը: Եթե խոստովանողը գնացել է իրեն հանդիմանելու, ուրեմն քահանայի մոտ իրեն արգարացնելու տեղը չէ, պատճառներ մեջ բերելու ժամանակ չէ: Շատերը հենց որ խոստովանում են իրենց մեղքը, իսկույն պատճառն էլ հետն են բերում. որն իր հանցանքն ամուսնու վրա է գցում, որը՝ իր կնոջ վրա, որը՝ որդոց: Հանցանքն ուզում է ասել, բայց հանցավոր չի ուզում երևալ: «Եթե այս կինս չստեղծեիր, ես արգելված պտուղ չէի ուտի»: Այսպես են խոսում շատերը: Եթե եկել ես քեզ արգարացնելու, այսինքն՝ մեղքդ ծածկելու, միևնույն է, թե չես խոստովանում: Ի՞նչ օգուտ ու-



նեն այդ պատճառները, մահանաները: Մեղքն արվել է Աստծո դեմ, Աստծուն հակառակ գնալու ոչ մի պատճառ չէիր կարող ունենալ, ուրեմն արածդ մեղք է: Մեղքդ խոստովանիր ոչ թե պատճառները փնտրելով, այլ դեղը փնտրելով, այն ժամանակ կասեմ, որ դու, այ՛ո՛, խոստովանում ես: Դավիթն ազոթում էր. «Տեր, մի՛ թող, որ մեղքերս արդարացնելու համար պատճառներ բերեմ»: Խոստովանանքի գնալիս նույնը դու պետք է խնդրես:

\*\*\*

Խոստովանելու նպատակն է մեղքերից թեթևանալ, արդարանալ: Բայց չպետք է կարծես, թե խոստովանությունը քեզ նորից մեղանշելու իրավունք է տալիս: Ով որ թողություն ստանալու հույսով է մեղանշում, նա խաբեբա է, ոչ թե խոստովանող: Եվ անմիտ է այն մարդը, որ ասում է. «Այս մեղքն անեմ, հետո խոստովանեմ», միևնույն է, թե ասեր. «Այս մեղքն անեմ, հետո զղջամ: Աշխարհումս անվանի վիրաբույժներ շատ կան, բայց ոչ ոք իրեն բարձրից ցած չի գցում, որ հետո դուրս ընկած ոսկորը ուղղել տա մի ուրիշ վիրաբույժի: Կրկնված զղշումը հոգին մաշում է, որովհետև մեղանշելն ու զղշումը սովորական բան է դառնում, արվեստ է դառնում: Եթե արած մեղքիդ վրա զղջալուց հետո բոլորովին չես նորոգվում, զղշումդ զղշում չէ: Եթե այն նպատակով չես զղշում ու խոստովանում, որ մյուս անգամ չմեղանշես, եթե չես որոշում բոլոր ուժովդ մեղքի դեմ դուրս գալ, ապա զղջումդ ու խոստովանանքդ ոչ մի միտք, ոչ մի նշանակություն չունի: Այդ է պատճառը, որ Հիսուս ում բժշկում էր զգուշացնելով ասում էր. «Տե՛ս, դու բժշկվեցիր, էլ չմեղանշես, որ չլինի թե հետինն ավելի վատ լինի, քան առաջինը: Չլինի թե ավելի ծանր պատասխանատվության տակ ընկնես, որովհետև այն ժամանակ քեզինից կպահանջվի թե՛ հին և թե՛ նոր մեղքերիդ հաշիվը»:

Ի՛նքդ դատիր, մի՞թե ավելի մեծ պատժի չէ արժանի այն հանցավորը, որ դատավորից ներում է ստացել, բայց նորից ոտնատակ է տալիս օրենքը: Արժանի՞ է հայրական սիրուն այն որդին, որի հան-

ցանքը ներել է հայրը և կրկին վշտացնում է նրան առաջվա հանցանքներով: Ավելի ցավ չի՞ պատճառում ծնողական սրտին, երբ հայրն իր որդուն ձեռք է բերում նորից կորցնելու համար: Ձեռք բերած բարիքն ուրախություն է, իսկ ձեռք բերած և կրկին կորցրած բարիքը՝ կրկին ցավ: Այդպես էլ ով իր մեղքերի թողությունն ստանալուց հետո էլի առաջվա անկարգ կյանքն է անցկացնում, նա կրկին պատիժ է պատրաստում իր համար:

\*\*\*

Շատ մարդիկ դժվարանում են խոստովանել՝ ամաչելով իրենց մեղքերը քահանայի մոտ թվելուց: Բայց ամաչելու ոչինչ չկա, որովհետև մարդ ոչ թե իսկապես քահանայի առաջ է խոստովանում, այլ Աստծո առաջ: Հիսուսի առաջ, որ աներևույթ կերպով ներկա է խոստովանության ժամանակ: Քահանան կարգված է միջնորդ լինելու Աստծո և մարդու միջև, և երբ նա թողություն է տալիս, ինքը չէ, այլ Աստված է, որ թողնում է մեղքերը: Ինքը՝ քահանան էլ, չնայելով իր կարգի ու կոչման սրբությանը, նույնպես մի մեղանշական մարդ է և լինելով սրտերի բարեկամ՝ ներողամիտ է իր Տիրոջ պես: Եվ քահանայի առաջ ծնկի իջնելով՝ սրտով պետք է գնանք Հիսուսի մոտ, պետք է գնանք հավատով ու մանկական համարձակությամբ: Պետք է գնանք ոչ թե ինչպես Պետրոս առաքյալը, որ գնում էր Գեննեսարեթի ջրերի վրա, ոչ թե նրա պես պետք է նայենք մեր մարմնի ծանրությունը, ջրերի խորությունը և հողմի ուժին, այլ միայն պետք է նայենք Հիսուսին, որ իր Աջը տարածում է դեպի մեզ՝ մեղքերի ծովից մեզ հանելու համար, որ ամեն մեկիս շասի. «Թերահավատ, ինչո՞ւ երկմտցիր»:

## ԲԱՆ Ե

«Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, կբնակվի իմ մեջ, և ես՝ նրա մեջ»:

(Գովհ. 2:57)

Ահա, սիրելիս, ապաշխարեցիր, խոստովանեցիր, հիմա եկել ես վերջին մեծ գործի համար, եկել ես ճաշակելու: Միտքդ ի՞նչ է, քաղցա՞ծ ես, մի՞թե կկշտանաս նշխարի այն փոքր մասնիկով: Գինու մեջ թաթախած հացի այն փշրանքը ճաշ կդառնա՞ քեզ համար: Ո՛չ, միտքդ ուրիշ է, դու եկել ես հաղորդվելու: Բայց գիտե՞ս՝ հաղորդվելն ինչ է:

Հաղորդվել նշանակում է մասնակից լինել ոչ թե հասարակ հացի, սովորական ճաշի, այլ հոգևոր հացի, մի այնպիսի փառավոր ճաշի, որ ինքը՝ Հիսուսն է պատրաստել քեզ համար, մի այնպիսի շտեմնված, չսոված ճաշի, որտեղ կոչնատերն իր հյուրերին հացի փոխարեն իր մարմինն է տալիս և գինու փոխարեն՝ իր արյունը: Եվ այդ սեղանը, որ բացվում է քեզ համար, սովորական, հասարակ մարդու սեղան չէ, թագավորական ճոխ սեղան է՝ լի Աստծո ամեն բարությամբ, մի աստվածային սուրբ սեղան, որի վրա ճաշ պատրաստողը և հենց ինքը՝ ճաշը, Աստված է:

Ի՞նչ երևելի բան պետք է լիներ, եթե մի թագավոր, սեղան նստած, իր ամանից բաժին ուղարկեր մի աղքատի, ինչքան ավելի, եթե իր թևից մի կտոր կտրեր և տար նրան ուտելու: Իսկ Հիսուս Հաղորդության սուրբ խորհրդի մեջ մեզ կերակրում է ոչ թե Իր սեղանից մի բաժին կամ իր մսից մի կտոր ուղարկելով, այլ տալով իր ամբողջ մարմինը, արյունը, հոգին և աստվածությունը: Մեր Փրկիչը մեզ հետ մեկ լինելը բավական չհամարեց միայն մարդանալով, այլ ուզեց, որ սբ. Հաղորդությամբ ամեն մեկիս հետ առանձին միանա, դրա համար Իր անձը խառնեց, շաղվեց մեզ հետ, որ մեկ բան դառնանք, որովհետև ամբողջությամբ սիրեց մեզ:

Եթե Հիսուս մեզ հրամայեր, որ ինչ բարիք կցանկանանք մեր հոգուն, խնդրենք Իրենից, ո՞ւմ մտքով կանցներ նրանից խնդրել, որ իր մարմինն ու արյունը տա մեզ: Բայց Ինքը լավ գիտեր, որ մեր հոգին կենդանի պահելու համար ամենալավ ու օգտակար կերակուրն Ինքն է, ուստի ՅՅ տարի մեզ հետ ու մեր մեջ ապրելուց հետո ուզեց մշտապես անբաժան լինել մեզնից և երկինք գնալուց առաջ չկամենալով, որ Իր և մեր միջև Իրենից զատ մի ուրիշ հիշատակ մնա, հաստատեց Հաղորդության սուրբ խորհուրդը: «Նա իր ամբողջ ամենակարող զորությունը,— ասում է սրբերից մեկը,— դրանից ավելի բան չէր կարող տալ մեզ: Նա դրանով մեզ համար բաց արեց իր սիրո գանձարանը և ոչ միայն բաց արեց, այլև դատարկեց բոլորովին»:

Բայց քանի՞ անգամ պետք է հաղորդվել: Առաջին քրիստոնյաներն ամեն օր հավաքվում էին միատեղ ու հաղորդվում, քանզի գիտեին՝ հաղորդությունն այն հացն է, որ Հիսուս սովորեցրեց մեզ խնդրել. «Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»: Գիտեին, որ սովորական հացը մարմնի կենդանությունն է պահպանում, իսկ հաղորդության հացը՝ հոգու կենդանությունը: Գիտեին, որ գերազանց հացն ուտելով՝ կարող էին հավիտյան ապրել: Բայց հաղորդության տված օգուտները մարդը միանգամից չի զգում, այլ շուտ-շուտ հաղորդվելով՝ հետո է նկատում: Շուտ-շուտ և արժանապես հաղորդվողին նունն է պատահում, ինչ որ երեխային: Երեխան իր մեծանալը չի նկատում, բայց երբ մի տարի առաջ հագած շորը նորից է հագնում, տեսնում է, որ կարճ է գալիս իրեն, ապա զգալի կերպով իմանում է, որ ինքը մեծացել է:

Այո՛, առաջին քրիստոնյաներն ամեն օր էին հաղորդվում, բայց հիմա՞: «Ինչ խելագարություն է,— ասում է սբ. Ոսկեբերանը,— Քրիստոս այդ սուրբ հացը մեզ համար հանապազօրյա հաց սահմանեց, բայց շատերը դարձրել են տարեկան հաց»: Այդ իր ժամանակվա մարդիկ, իսկ մեր ժամանակ կան շատ մարդիկ, որոնք ոչ թե տա-

րին մեկ անգամ, այլ հինգ տարին մեկ անգամ են հաղորդվում, իսկ շատերը չեն էլ հաղորդվում: Եթե այն խելագարութունն է, հապա այս ի՞նչ է: Կարելի է դու ասես. «Ես այն պատճառով եմ ուշ-ուշ հաղորդվում, որ ինձ սառած եմ զգում Աստծո սիրուց»: Միևնույնը չէ՞, եթե ասես. «Ես կրակին չեմ մոտենում, որովհետև ինձ մրսած եմ տեսնում»: Կարելի է քեզ անմեղադիր դարձնելու համար պատճառ բերես քո անարժանութունը, բայց այդպես մտածելով դու հրաժարվում ես բժշկից, որովհետև հիվանդ ես: Այնինչ «բժիշկը ոչ թե առողջներին է հարկավոր, այլ հիվանդներին»: Եվ եթե շուտ-շուտ հաղորդվելուն արժանի չես, ուշ-ուշ հաղորդվելուն ինչպե՞ս արժանի կլինես, եթե մի տարվա մեղքերիդ թիվը շատ ես համարում հաղորդվելուդ համար, երկու տարվա մեղքերիդ թիվն ավելի չի՞ լինի: Չէ՞ որ միշտ այդպես ուշացնելով պետք է այնքան ուշանա, որ ամենևին արժանի չես լինի հաղորդվելու: Զարմանալի է: Աստված ինչ որ մեզ համար վնասակար համարելով արգելում է, այն անում ենք, իսկ ինչ որ օգտակար է համարում, նրանից փախչում ենք: Ադամին ու Եվային ասաց. «Այս պտղից չուտեք», կերան, մեզ ասում է. «Առե՛ք, կերե՛ք», չենք ուտում:

Առաջին քրիստոնյաներն ամեն կողմից Ձիթենյաց լեռն էին գնում՝ այն սուրբ տեղը համբուրելու, ուր Քրիստոսի համբարձվելուց հետո մնացել էր նրա ոտքերի հետքը: Իսկ հիմա ամբողջ Քրիստոս բազմած է սուրբ սեղանի վրա, և ոչ ոք չի ուզում մոտենալ նրան: Այս պատճառով նա գանգատվում է. «Ի՞նչ օգուտ ունես դու, — ասում է, — Իմ արյունից, ի՞նչ օգուտ ունեմ ես՝ պատրաստելով քեզ համար այս երկնային կերակուրը, երբ դու, սովալլուկ լինելով, հեռու ես փախչում իմ հացը չուտելու համար: Ո՛հ, ի՞նչ զուր է կորչում իմ աշխատանքը, այս կենսատու դեղն ի՞նչ զուր պատրաստեցի քեզ համար, երբ հիվանդ լինելով հրաժարվում ես ընդունելուց»:

Այնինչ սրբերից մեկն այնպես էր վառվում հաղորդվելու ցանկությամբ, որ հաղորդութան օրը սաստիկ գանգատվում էր ժամերի

ուշ անցնելուց, և երբ միայն մի ժամ էր մնում, «Մի ժամ միայն մնաց,— ասում էր,— Հիսուս ահա շուտով գալու է ինձ մոտ»: Իսկ մաքրասուն կույսերից մեկն ասում էր. «Եթե հաղորդվելուս օրը հարկավոր լիներ անցնել թշնամյաց սրերի կամ երկնքի մրրկալի կայծակների միջով, ոչ մի երկյուղ չէր կարող ինձ արգելել մոտենալ սուրբ սեղանին»: Ինչո՞ւ էին այդպես բորբոքված հաղորդվելու սիրով, որովհետև լավ գիտեին, որ մեկ անգամ հաղորդվելով հոգին ավելի է շահում, քան թե ամբողջ շաբաթ լուկ հաց ու ջրով պահք պահելով: Այդ պատճառով պետք է, որ անպակաս հաղորդվեն երկու տեսակ մարդիկ՝ կատարյալները և անկատարները: Կատարյալները, որ միշտ կատարելություն մեջ մնան, և անկատարները, որ կատարելության հասնեն: Ուժեղները պետք է հաղորդվեն շտկարանալու համար, տկարները՝ ուժեղանալու համար, հիվանդները՝ հոգևոր հիվանդությունից բժշկվելու համար, առողջները՝ չհիվանդանալու համար:

Ով հաղորդվելու համար հարկավոր պատրաստություն չի տեսել, այդ օրն իսկ դեռևս ժամանակ ունի պատրաստվելու: Եսայի մարգարեն մարգարեանալուց առաջ տեսիլք է տեսնում, որ վկայության խորանի Սրբություն սրբոց կոչված տեղում, ուր միշտ վառ էր պահվում երկնքից իջած կրակը, սերովբեններից մեկն այդ կրակից ունելիով մի փոքրիկ կտոր է վերցնում ու իր բերանը դնում՝ մեղքերն այրելու և սիրտը մաքրելու համար: Դրանից հետո Եսային մարգարեական շնորհ է ստանում: Մեր հայրապետ Շնորհալին այդ բանն այսպես է երգում շարականի մեջ. «Տե՛ր Հիսուս,- ասում է,- քո աստվածային կայծերին, այսինքն՝ մարմնիդ և արյանդ անարժանությանմբ մոտեցանք ու պարտապան եղանք»: Հիմա մտածի՛ր դու, եթե աստվածային կայծը վերցնելու համար լուսեղեն հրեշտակն ունելի կարիք ուներ, հապա մենք ի՞նչ պատրաստությանմբ պետք է մոտենանք՝ այն մեր մեջ ընդունելու: Եվ եթե զատկական գառն ուտելու համար Հիսուս «մի փառավոր զարգարված վերնատուն» էր փնտրում՝ Իրեն մեր ներսն ընդունելու համար, ինչպիսի՛ փառաց

տաճար կցանկանար ունենալ: Եթե Մովսես մարգարեն օրենքի տախտակները պահելու համար տապանակ պատրաստելիս ազնիվ, անփուտ<sup>1</sup> փայտ էր ընտրում ու մաքուր ոսկով պատում, դու ինչպես պետք է պատրաստես քեզ՝ օրենքներ Տվողին ընդունելու: Եթե հարյուրապետը վայել չէր համարում Հիսուսին իր տանն ընդունելու, եթե Հովհաննես Մկրտիչն իրեն արժանի չէր համարում նրա կոշիկի կապերը արձակելու, հապա դու՝ թշվառությամբ, անգիտությամբ և շարությամբ լի մի չնչին արարած, ի՞նչ պատրաստություն պետք է տեսնես: Եվ Հիսուս ինչ փառքով որ փառավորվեց Թաբոր լեռան վրա, ինչ փառքով որ այժմ բազմած է Հոր աշակողմում, նույն փառքով է գտնվում նաև հաղորդության նշխարի մեջ:

Մովսես մարգարեն Քորեբ լեռան վրա տեսավ մի թուփ, որ վառվում էր, բայց չէր այրվում: Նա ուզեց մոտենալ՝ այդ հրաշալի երևույթը լավ տեսնելու, հանկարծ թփի միջից լսեց մի ձայն, որ ասում էր. «Մովսես, Մովսես, կոշիկներդ հանի՛ր, կանգնած տեղդ սուրբ է»։ Մի՞թե նույնքան հրաշալի չէ այն սկիհը, որին դու մոտենում ես: Թուփը վառող կրակն Աստված, ինքը Հիսուսն էր, և այդ սկիհի մեջ հացի ու գինու տեսակով նույն աստվածային կրակն է գտնվում, որ արժանավոր ճաշակողին մաքրում, զտում, կենդանացնում է, իսկ անարժան ճաշակողին այրում, կիզում, ոչնչացնում է: Հանի՛ր ուրեմն կոշիկներդ, արձակի՛ր հոգիդ կաշկանդող բոլոր մեղսական կապերը և այդպե՛ս մոտեցիր սրբություն տանելու:

Մոռացի՛ր քեզ շրջապատող ամեն երկրավոր բան, այժմ քեզ նայում է քո պահապան հրեշտակը, քեզ նայում են բոլոր երկնային զորությունները: Դու այժմ ասես թե կանգնած ես վերջին դատատանի առաջ, այժմ վճռվելու է քո վիճակը, և դու հաղորդվելու ես՝ կա՛մ հավիտյան ապրելու, կա՛մ հավիտյան մեռնելու: Ուրեմն ասա՛ քեզ ու քեզ. «Տե՛ր Հիսուս, հույսս դնելով Քո անսպառ բարության և անսահման ողորմության վրա՝ ես գալիս եմ ինչպես հիվանդն իր

---

<sup>1</sup> Չփտող:

Փրկչի մոտ, ինչպես քաղցածն ու ծարավածը կյանքի աղբյուրի, ինչպես աղքատը երկնային թագավորի, ինչպես արարածն իր Արարչի մոտ: Ինչ եմ ես, որ մոտենում եմ քեզ, և ինչ ես Դու, որ հաճում ես խոնարհվել դեպի ինձ՝ ինձ համար կենաց հաց և հոգևոր փրկություն դառնալու: Հոգիս բորբոքվում է մարմինդ ընդունելու ցանկությամբ, սիրտս ծարավ է սրտիդ հետ միանալու: Ինչպես կարելի է ճանաչել Քեզ ու չսիրել, Տե՛ր, ինչպես կարելի է սիրել ու չմիանալ Քեզ հետ: Զարթնեցրո՛ւ սիրտս թմրությունից, որ հոգով ճաշակեմ քաղցրությունդ, լուսավորի՛ր աչքս, որ լավ տեսնեմ այդ մեծ խորհուրդը, ամրացրո՛ւ ինձ, որ չտատանվեմ հավատիս մեջ: Մեղավոր եմ, Տե՛ր, առաջին մեղավորն աշխարհիս վրա, բայց այլևս չեմ ուզում մեղավոր մնալ: Հավատում եմ Քեզ, Տե՛ր, օգնի՛ր անհավատությանս: Քեզ չեմ համբուրում Հուգայի համբուրով, քեզ չեմ փոխի ողջ աշխարհի հետ, չեմ ծախի Քեզ ոչ մի գնով, միայն օգնի՛ր ինձ, որ անդատապարտ հաղորդվեմ Քո սուրբ խորհրդին: Լուսավորի՛ր միտքս, փոխի՛ր սիրտս, ուղղի՛ր կյանքս, սանձի՛ր կրքերս և թագավորի՛ր վրաս իբրև Աստված»:

Հաղորդվելուց հետո եկեղեցին ձայն է տալիս. «Դուք, որ հավատով ընդունեցիք աստվածային, սուրբ, երկնային, անարատ և անապական խորհուրդը, շնորհակալ եղեք Տիրոջը»: Սա մի գոհանալու հրավեր է, երախտագետ լինելու հորդոր է: Հիրավի, ով որ չի հիշում իր ստացած բարիքը, նա ոչ միայն արժանի չէ ավելի մեծ բարիք ստանալու, այլև արժանի չէ հենց նրան, ինչ որ արդեն ստացել է: Օրինակներ են եղել, որ մարդ իր անձը գոհել է բարեկամի համար, բայց լսե՞լ ես երբևիցե, որ մեկը մեռած լինի իր թշնամյաց համար, իր թշնամյաց փոխարեն: Ամեն մեղավոր Աստծո թշնամին է, բայց Աստված մեռավ մեզ համար, մեր փոխարեն: Եվ այնպես մեռավ, ինչպես այժմ չեն մեռնում նույնիսկ ավազակները, Հիսուս մեռավ խաչի մահով, անարգ ու խայտառակ մահով: Լսե՞լ ես, որ մարդ մեռնելիս կտակի, որ իր մարմինը կտոր-կտոր անեն, բաժանեն քաղ-



ցածներին, որ նրանք սովամահ չլինեն, իր արյունը խմեցնեն մեռնողներին, որ նրանք շունչ առնեն, կենդանանան: Իսկ Հիսուս, ինչպես Սիոնի վերնատան մեջ կտակեց իր աշակերտներին, ամեն օր նորից գենվում է եկեղեցու սուրբ սեղանի վրա՝ մաս-մաս կտրատվելով, և մենք ճաշակում ենք, որ մեր հոգին հավիտյան չմեռնի: Ահա թե որքան մեծ է մեր ստացած բարիքը, բայց ինչպե՞ս պետք է շնորհակալ լինենք:

Շնորհակալությունը պետք է հավասարվի ստացած բարիքին. զոհաբերությունը պետք է պատասխանել զոհաբերությամբ: «Մենք էլ Հիսուսի վերքերի փոխարեն պետք է վերքե՞ր կրենք, նրա արյան փոխարեն մեր արյո՞ւնը թափենք»,— կհարցնես դու: Ոչ, չսարսես դրանից, արյան հոտն իսկ սոսկում է պատճառում մեզ: Մեր ժամանակներում հավատացյալին այլևս խաչը չեն բարձրացնում, այլ խաչով են պսակում: Մենք ունենք ուրիշ վերքեր, ուրիշ շարշարանք, ուրիշ մահ: Կա մի ուրիշ Գողգոթա, կա մի ուրիշ խաչ, որի վրա կարող ենք բարձրանալ ու խաչվել: Մեր սրտերում բուն դրած շարունակները մեռցնելն է այն մահը, որ պահանջում է մեզինից Հիսուս: Մաքուր, անբիծ կյանքն է այն խաչը, որի վրա իբր շարշարվելով խաչվում է մեր սիրտը: Միմյանց օգնելը, իրար սիրելը, սիրով ուրախանալն է այն սուրբ կյանքը, որ պահանջում է մեզինից անարյուն զոհը: «Մենք շատ ենք,— ասում է առաքյալը,— բայց միասին կազմում ենք մի մարմին, որովհետև մի հացից ենք հաղորդվում»: Մի հաց ենք ուտում, ուրեմն ամենքս էլ միևնույն զգացմունքը պետք է ունենանք, միևնույնը մտածենք: Մի բաժակից ենք խմում, ուրեմն մեկ սիրտ պետք է ունենանք, մեր սրտերը պետք է միատեսակ բաբախեն, մի հոգի պետք է լինենք շատ մարմինների մեջ, ինչպես Հիսուս բնակվում է մեր մեջ, մենք էլ՝ նրա մեջ: Ինքն էլ այդ հրավերն է կարդում, այդ խոստումն է տալիս մեզ. «Ով ուտում է Իմ մարմինը և խմում է Իմ արյունը, նա Իմ մեջ կբնակվի, ես էլ՝ նրա մեջ»:



# ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԳ

## ԲԱՆ Ա

«Դրա համար տղամարդը պիտի թողնի հորը և մորը ու պիտի գնա իր կնոջ ետևից. և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»:

(Մատթ. ԺԹ:5-7)

*Մարդուս կյանքում շատ անցքեր են գալիս ու անցնում նրա գլխով, բայց դրանց մեջ նշանավորը երկուսը մեկ լինելու շրջանն է, ամուսնությունն է: Ամուսնությունն աշխարհում այնքան հարկավոր բան է, որ Աստծո գործերի մեջ երկրորդ տեղն է բռնում: Ինչպես որ ծնողներն իրենց չափահաս որդու համար տան և ուրիշ կարևոր պատրաստություններ տեսնելուց հետո ուղղակի նրան ամուսնացնելու հոգան են քաշում, այդպես էլ Աստված աշխարհի մեծ տունը պատրաստելուց և տան տիրոջը՝ առաջին մարդուն՝ Ադամին ստեղծելուց հետո անմիջապես նրան ամուսնացնելու մասին է մտածում: «Լավ չէ, որ մարդը մենակ լինի», - ասում է Աստված: Բայց ինչքան մարդիկ կան, որոնք լավ են համարում մենակ մնալ, մենակ ծերանալ, այն էլ ոչ թե իրենց կյանքն ու միայնությունն ի փառս Աստծո անցկացնելու համար, ո՛չ, այլ այն պատճառով միայն, որ Աստծո մտածածի հակառակ ասում են. «Լավ է, որ մարդը մենակ լինի»: Յոթ հազար տարի առաջ ստեղծված Ադամի և ներկայիս ադամների միջև մեծ զանազանություն չկա: Հին Ադամը միայնակ էր փափկության դրախտի մեջ, մի՞թե նոր ադամները նույնպես միայնակ չե՞ն աշխարհիս հազար վեց հարյուր միլիոն մարդկանց մեջ, երբ ապրում են առանց կողակից եվայի: Այդ պատճառով Աստված, թշվառութ-*

յուն համարելով մարդուս իր միայնությունը. «Ստեղծենք,— ասում է,— սրա համար իր նման մի օգնական»:

Եվ այս անգամ Աստված կավից չի ստեղծում օգնական, այլ խոր թմրություն է գցում առաջին մարդու վրա, հանում է նրա կողոսկրներից մեկը և դրանից ստեղծում նրա նմանին: Զարթնում է Ադամը թմրությունից, տեսնում է օգնականին և մարգարեական շնորհ ստանալով ասում է. «Այս նոր մարդն իմ ոսկորներից հանած մի ոսկոր է, իր մարմինն էլ՝ իմ մարմնից, սա պետք է կոչվի ինձ կին, օգնական, ընկեր, որովհետև ինձնից է առաջ եկել»: Իսկ Աստված, իր Աջը դնելով երկուսի գլխին, օրհնում է նրանց, ինչպես կարող է օրհնել միայն ինքը՝ Աստված, և ասում է. «Ահա ես երկուսիդ միացնում եմ, մեկ եմ դարձնում, էլ դուք երկու չեք, այլ միավորված, մի մարմին, ուրեմն աճեցե՛ք, բազմացե՛ք երկնքի աստղերի չափ, երկրի ավազի չափ, շատացրե՛ք Իմ պատկերն ու նմանությունը, լցրե՛ք աշխարհը ծայրից ծայր: Ծովեր ու ցամաքներ, շնչավոր ու անշունչ արարածներ դնում եմ ձեր իշխանության տակ, ձեր ձեռքի տակ, տիրեցե՛ք դրանց, իշխեցե՛ք և փառավորեցե՛ք ձեր Ստեղծողի անունը»:

Եվ ինչպես չպետք է փառավորի մարդս Աստծուն, երբ Աստված առաջ փառավորեց մարդուն և փառավորեց ոչ միայն նրան ստեղծելուց հետո, այլև ստեղծելուց էլ առաջ: Ինչպե՞ս էր հայտնում Աստված իր միտքը. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի երկրի գազանների վրա»: Տե՛ս, ինչքան է բարձրացնում մարդուն: Դեռ չստեղծած՝ պսակ է դնում գլխին, դեռ կյանք չտված՝ փառքով է փառավորում, դեռ լույս աշխարհ չհանած՝ թագավորական աթոռն է բարձրացնում: Մարդիկ երկար աշխատությունից և մեծամեծ ծառայություններ անելուց հետո են պատիվներ ու պարգևներ ստանում, իսկ Աստված ուղղակի է պսակում պատվով, որ ցույց տա, թե այդ պատիվն ու բարձրությունը ոչ թե իր արժանավորության համար է տրվում, այլ մի շնորհ ու ողորմություն է, որ Աստված թափում է նրա վրա:

Գանք հիմա մարդկային ընկերությունը: Մեզանում ի՞նչ նպատակով է լինում ամուսնությունը: Ահա տասը-տասներկու տարեկան աղջկա մայրը շտապում է ամուսնացնել իր զավակին: Ինչո՞ւ, արդյոք մի առանձին պահանջ զգալով, Աստծո օրենքին հետևելով. ո՛չ, այլ նրա համար միայն, որ որքան հնարավոր է շուտ ճանապարհ դնի իր դստերը: Ահա երիտասարդի մեկն ուզում է ամուսնանալ: Ինչո՞ւ: Այսինչ աղջկա օժիտի վրա աչք տնկած լինելով: Երկրորդն ուզում է կնություն առնել այսինչ աղջկան, որովհետև ծնողների միակ ժառանգն է: Երրորդն այսինչ աղջկան է ուզում, որովհետև աներոջ պաշտպանությունն է փնտրում: Չորրորդն այսինչ աղջկան է ուզում առնել, որովհետև այնպիսի շրջանի է պատկանում, որ իր շահերին ձեռնտու է: Իսկ ամենքն առհասարակ ամուսնանում են զգայական նպատակներով, բնության պահանջներին բավարարություն տալու նպատակով: Սակայն դրանք ամուսնության իսկական նպատակին ամենևին չվերաբերող երկրորդական նպատակներ են և ավելի միջոցներ են, քան բուն նպատակներ: Այդ նպատակների և ամուսնության բուն նպատակների միջև մեծ տարբերություն կա:

Ամուսնությունը երկու գլխավոր նպատակ ունի: Առաջին նպատակը պարզ կերպով ասված է Ստեղծողի այս խոսքի մեջ. «Ստեղծենք սրա համար իր նման մի օգնական»: Ուրեմն մարդու ամուսնանալու իսկական և սուրբ նպատակն է գտնել իրեն մի սրտացավ օգնական, մի հավատարիմ ընկեր, որպեսզի օգնեն միմյանց, բաց անեն միմյանց իրենց սրտերը, միմյանցով մխիթարվեն այս «տրտմության հովտում» և իրենց ուսերի վրա հավասարապես կրեն կյանքի լուծը: Երկրորդ նպատակը նույն պարզությամբ ասված է Աստծո այս հրամանի մեջ. «Աճեցե՛ք և բազմացե՛ք», այն է՝ զավակ ծնելը: Բայց զավակ ծնելն էլ պետք է հասկանալ ոչ այնքան ծնողների հարստության ժառանգ և հորը հաջորդ ունենալը, որքան արքայություն համար հոգիներ շատացնելը, «անկյալ հրեշտակների» տեղը լցնելը: Ամուսնության այս երկրորդ նպատակը արդյոք հայտնի ու բարձրաձայն չի՞ հանդիմանում այն մի քանի ծնողների անօրեն ու

տմարդի արարքը, որոնք, ուղղակի հակառակ գնալով Աստծո դրած նպատակին, ամեն կերպ աշխատում են զավակ շունենալ, ունեցած ժամանակ էլ արգանդի մեջ ոչնչացնում են ապագա մարդուն:

Եվ թեպետ մարդս իր անմեղությունը կորցնելուց հետո մեղանշական դարձավ, սակայն այդ դեպքում էլ ամուսնությունը զորեղ միջոց եղավ այն ցանկական մոլորությունների առաջն առնելու համար, որոնք սրբվեցին ջրհեղեղով և սողոմական կրակով: Առաքյալն էլ դրա համար նույն բանն է առաջարկում. «Բայց, չպոռնկանալու համար, յուրաքանչյուր մարդ թող իր կինը ունենա, և ամեն կին՝ իր մարդը», այսինքն՝ ով որ չի կարող զսպել իր կրքերը, կովել իր զգայարանների դեմ, մարմնական մեղքերից զգուշանալու համար թող կին առնի, որ ազատվի գալիք փորձություններից:

Ամուսնությունը շատ կողմերով է գովելի: Առաջին՝ գովելի է, որովհետև նրա սահմանողն Աստված է, ոչ թե մարդը: Երկրորդ՝ որովհետև սահմանվեց մարդու անմեղության ժամանակ: Երրորդ՝ որովհետև Աստված ամուսնությունը սրբությանը պահող ընտանիքն ազատ պահեց ջրհեղեղից, իսկ ամուսնության դեմ մեղանշողները կորան ջրհեղեղով: Չորրորդ՝ որովհետև Քրիստոս Ինքն Իր ներկայությանը ամուսնությունը պատվեց Կանա փոքրիկ քաղաքի հարսանիքում, որտեղ գործեց առաջին հրաշքը՝ ջուրը գինու փոխելով և այդպիսով հարսանիքի գինին շատացնելով: Հինգերորդ՝ ամուսնությունը գովելի է այն հանդիսավոր օրհնության համար, որ տալիս է եկեղեցին ամուսնացողներին. «Եւ յաղագս միաւորութեան սոցա ծնան՝ նահապետք, քահանայք, թագաւորք, մարգարէք, առաքեալք, վարդապետք, մարտիրոսք, հայրապետք, ճգնաւորք, կուսանք, միանձուռնք»: Աստծո ընտրյալների մի ամբողջ լեգեոն կասեմ ես: Վեցերորդ՝ ամուսնությունը գովելի է նրանից ստացվող պատվական պտղի համար, որովհետև ամուսնությունից ծնվում են այս աշխարհի որդիները, որոնք հետո, որդեգրվելով երկնավոր Հօրը, լինում են Աստծո որդիներ: Յոթերորդ՝ որովհետև Քրիստոս ամուսնությունը սրբացրեց և դարձրեց եկեղեցու խորհուրդ:

Եվ մարդիկ ինչո՞ւ են հեռու փախչում այսքան գովելի, այսքան պատվական, այսքան սուրբ գործից: Որ հակառակ գնալով ամուսնություն աստվածադիր նպատակին՝ սանձարձակ կյանք վարեն, անբարոյական տիղմի մեջ թավալվում են, որ Սողոմ-Գոմորի օրինակը շատացնեն, ջրհեղեղի դարը վերանորոգեն:

Քրիստոս ինչպե՞ս սրբացրեց ամուսնությունը: Ամուսնություն մասին Քրիստոս ասում է.

1. «Տղամարդը,- ասում է,- պետք է թողնի հորն ու մորը և գնա իր կնոջ հետևից»: Հորն ու մոր պատիվը չհասկացող որդին, անկասկած, շատ կհավանի Քրիստոսի այդ հրամանը՝ մտածելով, որ նա հրամայում է մոռանալ, ուրանալ հորն ու մորը, արհամարհել, անպատվել նրանց, չհիշել նրանց երկար ու ձիգ տարիների ծնողական խնամքը, նրանց կրած վշտերն ու նեղությունները և հետևել միայն իր կնոջը, հետևել նրա քայլերին, նրա մտքերին, նրա կամքին: Բայց ո՞չ, շատ կսխալվեն այդպես մտածողները: Այն Աստվածը, որ հորն ու մորը պատվելն իր տասը պատվիրաններից մեկն է դարձրել, ինչպե՞ս կհրամայեր թողնելով ծնողներին՝ անպատվել նրանց: «Թողնի հորն ու մորը» ասելով Քրիստոս ուզում է ասել՝ եթե հայրն ու մայրը, որոնք որդու ամենամերձավորներն են և ամենասերտ կապով կապված են նրա հետ, իրենց շահերի համար կամենան վնասել որդու ամուսնական կապին, որդին ահա միայն այդ դեպքում պետք է թողնի նրանց և գնա իր կնոջ հետ:

Սրան հակառակ «Պատվիր քո հորը և մորը» պատվիրանը ցույց է տալիս, որ ամուսնությունը չպետք է լինի առանց ծնողների համաձայնության, որովհետև «ծնողների օրհնությունը շինում է զավակների տունը»: Որդին մի՞թե հորն ու մորը պատված է լինում, երբ առանց նրանց համաձայնության, մանավանդ նրանց կամքին հակառակ, ամուսնանալու խոսք է տալիս մեկին: Եթե մի տղա կամ աղջիկ ուզենա ինքնագլուխ պայմաններ կապել սրա կամ նրա հետ, ինքնակամ փոխ տալ, պարտք անել, լավ արած կլինի՞ և արածը ծնողներին անպատվություն չի՞ լինի: Կարելի է ասեն. «Աստված

մեզ ազատութիւնն է տվել, ում հետ ուզենանք, կամուսնանանք»: Եթե այդպես է, ուրեմն Աստված որդիներին ազատութիւնն է տվել իրենց ծնողներին անպատվելու: Ո՛չ, չի տվել այդ ազատութիւնը, մանավանդ թե բոլորովին հակառակն է հրամայել, հրամայել է պատվել ծնողներին՝ ավելացնելով պատճառը. «Որ բարության հանդիպես և երկար կյանք ունենաս»: Հիրավի, հաճախ տեսնում ենք, որ ծնողներին արհամարհող որդիները թշվառ կյանք են ունենում իբրև ամուսիններ՝ կա՛մ միմյանց չսիրելով, կա՛մ միմյանց վրա կասկածներ ունենալով, կա՛մ մեջները տարածայնութիւնն անպակաս լինելով, կա՛մ որդի չունենալով, կա՛մ ունեցած որդին այս ու այն պակասության տերը լինելով, վերջապես մի կողմով անբախտանում են:

2. «Եվ երկուսը մի մարմին պիտի լինեն»: Թեպետ առաջ էլ ամուսիններից յուրաքանչյուրը մի մարմին էր, բայց Աստծո սահմանած օրենքի համար անկատար մարմին էր, որդեծնության անընդունակ: Իսկ ամուսնանալուց հետո Աստված կամենում է, որ նրանք լինեն մի մարմին, միմյանցից անբաժանելի, ինչպես նույն մարմնի անդամներ, ինչպես ամուսնական սայլը տանող մի զույգ եզներ: Կինելով մի մարմին՝ պետք է լինեն և մի սիրտ, մի հոգի: Այդ պատճառով ավելացնում է. «Ուրեմն ոչ թե երկու, այլ մի մարմին են»:

3. «Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդ թող չբաժանի»: Այսինքն՝ ում որ Աստված լծեց, լծակից արեց, միավորեց, մեկ դարձրեց, թող նրանք մարդկային վճռով և իշխանությամբ չհեռանան միմյանցից՝ նոր-նոր կապեր հաստատելով այլոց հետ: Աստված անասուններին էլ արու և էգ ստեղծեց, բայց որովհետև նրանց մեջ անլուծանելի, անբաժանելի անվանական կապ չհաստատեց, ուստի Սուրբ Գիրքը նրանց մասին չի ասում «արու և էգ ստեղծեց նրանց», այլ միայն մարդու մասին է ասում, որպեսզի տղամարդն իր կնոջ հետ չվարվի ո՛չ նրանց պես, լոկ անասնական ցանկութիւն կատարելու, այլ միայն զավակ ծնելու և անասնական կապով սնուցելու համար:

\*\*\*

Քրիստոս ամուսնությունն ինչպե՞ս դարձրեց եկեղեցու խորհուրդ: Ամուսնությունը, որ փափկության դրախտում կատարվեց «Այս այժմ ոսկոր է իմ ոսկորներից» խոսքով, Աստծո Բանի՝ մարմնանալու և մարդկային բնությունն իր աստվածության հետ միավորելու խորհուրդն էր, այսինքն՝ եկեղեցին, որ հարսն է, միավորվեց Քրիստոսի հետ, որ փեսան է: Ուրեմն փեսայի և հարսի միավորությունը նման է Քրիստոսի և եկեղեցու միավորությանը: Ինչպես որ Ադամի կողից ստեղծվեց Եվան, այնպես էլ նոր Ադամի՝ Քրիստոսի կողից բխած արյունից և ջրից կազմվեց եկեղեցին, որ պետք է հասկանալ ոչ թե քարից, փայտից կառուցված նյութական եկեղեցին, այլ քրիստոնյա ժողովուրդներին: Ինչպես Աստված առաջ քնեցրեց Ադամին ու հետո նրա կողոսկրից ստեղծեց Եվային, այդպես էլ առաջ քնեցրեց Հիսուսին խաչի վրա և ապա նրա կողից կառուցեց եկեղեցին՝ տալով հոգիները լվացող ջուրը՝ մկրտության նյութը, և հոգիները սնուցող կենդանացնող արյունը՝ հաղորդության նյութը: Եկեղեցին, այո՛, Քրիստոսի հարսն է, նշանաբան լինում է մկրտության ժամանակ, իսկ հարսանիքը լինելու է երկնքում: «Երանի՛ նրան, ով ճաշ կուտի երկնքի արքայության մեջ»:

Ինչ ուրախություն կարող է հավասարվել այն ուրախությանը, որ մարդուս պատճառում է գավակներով բոլորված ընտանիքը, որի մեջ թագավորի ու թագուհու պես բազմած են հայրն ու մայրը՝ տան երկու հաստ սյունները: Դա այն երջանիկ բոլակներից մեկն է, որ չեն ունեցել անզավակ ամուսինները, որ չի զգացել անամուսին, անօգնական ամուսին: Խոսքով չի կարելի նկարագրել այդ տեսարանը, կարելի է միայն զգալ: Բավական է միայն գիտենալ, որ որդիները ծնողների շարունակությունն են, նրանց մի-մի պատճենն են, և որ նրանք ծնողների, և ծնողները նրանց մեջ են բնակվում: Բայց ամուսնության տված օգուտները շատ-շատ են:



Ամուսնուիշյամբ մարդս զանազան իրավունքներ է ձեռք բերում, իր պատիվն է ավելացնում, սիրալիրությունն է ընդարձակում, մոլորությունների առաջն է առնում, այլևայլ պիտեերի ու հիվանդությունների մուտքն է փակում: Տղամարդու և կնոջ բարքերի, մտքերի ու սովորությունների մեջ զգալի փոփոխություններ են մտնում: Բարքերը մեղմանում են, ազնվանում, մտքերը՝ ընտելացվում, խորանում, սովորությունները՝ փոխ առնվում, դեն ձգվում: Մի նշանավոր աստվածաբան ասում է. «Այն մեծ բարիքը, որ Աստված կարող է տալ տղամարդուն, բարի և բարեպաշտ կին ունենալն է, այնպիսի մի կին, որի հետ կարելի լինի ապրել խաղաղ, և որին մարդ կարողանա վստահել իր ամբողջ ունեցածը, մինչև անգամ իր կյանքը: Ես ավելի կցանկանայի խեղճ լինել կնոջս հետ, քան թե առանց նրա աշխարհիս առաջին հարուստը»:

Ամուսնուիշյունը նաև երկարացնում է մարդուս կյանքը: Մահն այնքան ամուսնացածների մեջ չի պատահում, որքան ամուրիների մեջ: 25 տարեկան ամուրին կարող է մեռնելու այնքան պատճառներ ունենալ, որքան 50 տարեկան ամուսնացածը: Ամուսնացած, ընտանիքում ապրող մարդն ավելի քիչ է հակամետ խելագարվելու, գողություն և անձնասպանություն անելու, քան թե ամուրին, մենակ ապրողը: Կնոջ ու որդիների ազդեցությունը մարդուս հետ է պահում զանազան հանցանքներ գործելուց: Հաշվված է, որ մեկ միլիոն ամուսնացած և որդիների տեր ամուսիններից ամեն տարի հանցանք են գործում 180 հոգի, մեկ միլիոն անզավակ այրիներից՝ 360 հոգի, և մեկ միլիոն ամուրիներից՝ 400 հոգի:

Ամուսնուիշյան գործում թե՛ տղայի և թե՛ աղջկա համար ամենակարևոր հարցն ամուսնու ընտրությունն է, որովհետև մարդ կամ կին ընտրել նշանակում է ապագա ընտրել: Երբ մարդ մտածում է, թե շատերը որքան թեթև են վարվում այդ ծանր գործում, պետք է զարմանալ, որ հանգամանքի բերումով աշխարհումս քիչ են պատահում դժբախտ ամուսնուիշյուններ: Ամուսնուիշյունը մարդուս կյանքում մի նոր և անհայտ քայլ է, որ տանելու է կամ դեպի երջանկուիշ-

յուն, կա՛մ դեպի թշվառութիւն: Մի գիտնականի ասելով ամուսնութիւնը կա՛մ դրախտ է, կա՛մ դժոխք, միջինը չկա:

Կա ամուսնութիւն, որ կառուցող, շենացնող է, կա, որ քանդող, ոչնչացնող է: Կա ամուսնութիւն, որ մարդուս պատիւն ավելացնող է, անունը փառավորող է, կա, որ պատվից զրկող, անունն արատավորող է: Կա ամուսնութիւն, որ ընտանիքի բոլոր անդամներին իրար հետ է կապում սիրո ոսկե շղթայով, կա, որ ամուսիններին միմյանց դեմ է հանում: Ամուսնութիւն կա, որ տունը դարձնում է խաղաղ նավահանգիստ, կա էլ, որ ալեկոծյալ ծով է դարձնում, ամուսնութիւն կա, որ մի փոքրիկ թագավորութիւն է իր հավատարիմ ու հնազանդ հպատակներով, ամուսնութիւն էլ կա, որտեղ ո՛չ մեծ է երևում, ո՛չ փոքր: Ամուսնութիւն կա, որի վրայից Աստծո օրհնութիւնն անպակաս է, ամուսնութիւն էլ կա, որից Աստված միանգամայն երեսը դարձրել է: Շատ սակավ է պատահում, որ մարդ կարողանա սկզբից գուշակել, թե միմյանց հակառակ այդ երկու վիճակներից ամուսնացողներին որն է բաժին ընկնելու: Առհասարակ ամուսնացողների ապագան ծածկված է լինում անհայտութեան թանձր քողով: Այդ պատճառով ահա մեծ զգուշութիւն է հարկավոր մարդուս, երբ վճռում է կյանքում այդ ամենամեծ քայլն անել:

Մի հայր, ինչքան էլ խոհեմ ու խելոք լինի, աղջկան տղայի տալու համար դարձյալ առանց ուրիշների խորհրդի չպետք է շարժվի: Նա, որ մտադիր է իր աղջկան ամուսնացնել, իր գավախի վիճակը կապել մի օտար տղայի վիճակի հետ, պետք է առանձնանա և այնպես ամփոփվի իր մեջ, որպես թե մտածելիս լինի իր անունը, պատիւը, հանգստութիւնը և կյանքը կորչելուց ազատելու մասին, որովհետև ամեն բան իր լավ կամ վատ ընտրութիւնից է կախված:

Բայց մեզանում ինչպե՞ս են անում: Սովորաբար աղջկա տերը հարուստ տղա է փնտրում, տղայի տերը՝ հարուստ և գեղեցիկ աղջիկ: Փող և արտաքին տեսք. մարդուս ներքին արժանավորութիւնը երկու կողմից էլ անտես է արվում: Մոռանում են, որ թե՛ փողը, թե՛ արտաքին գեղեցկութիւնը ժամանակավոր են: Բախտի անիվը

ծովի, փողը ձեռքից կգնա, մի ավերիչ հիվանդություն պատահի, գեղն ու փայլը կանցնի, երկու դեպքում էլ կմնա մարդը՝ իր դատարկություններ, իր ոչնչություններ: Բայց այդպես չէր մտածում մի այրի ազնվական, որ ո՛չ ինքն ուզեց ամուսնանալ, ո՛չ զավակին ուզեց ամուսնացնել: Երբ նրան հարցրին պատճառը, պատասխանեց. «Որովհետև ոմանք իրենց աղջկան առաջարկեցին՝ հարուստ օժիտ ունենալու համար, ոմանք՝ ազնվական լինելու, ոմանք էլ՝ գեղեցիկ լինելու համար: Մեկը չգտնվեց, որ իր աղջկան առաջարկեր՝ առաքինի լինելու համար»:

Մեզանում տղան տարուբերվում է աղջկա գեղեցկության և նրա օժիտի միջև, նա փնտրում է կա՛մ երկուսը միասին, կա՛մ քիչ գեղեցկություն՝ շատ օժիտով, շատ գեղեցկություն՝ քիչ օժիտով, սակայն շատ հաճախ փողի ուժը հաղթում է գեղեցկության հրապույրին: Բայց մի տղա, որի ուզածը գլխավորապես օժիտն է, փողն է, ոչ թե իրեն կին է առնում, այլ առևտուր է անում «մարդ» ասված ապրանքով, ուստի հենց որ փողը ձեռքից գնում է, կինը նրա համար մնում է որպես մի ավելորդ բեռ, որից ուզում է օր առաջ ազատվել: Վատ բան չէ օժիտը, դա այն բաժինն է, որ հայրն իր կարողությունից ազատ կամքով տալիս է աղջկան: Բայց երբ տղամարդն այդ կամավոր տուրքը մի հարկ է դարձնում, մի պահանջ և ամուսնանալու գլխավոր պայման, այդ ժամանակ կինը դառնում է մի ապրանք, և օժիտը՝ նրա արժեքը, նրա արժանավորությունը:

Հունաց մեջ օրենք սահմանվեց, որ հայրերն իրենց աղջկան օժիտ չտան, որպեսզի նրանց կին առնողները նրանց առնեն միայն առաքինության համար, և աղջիկներն էլ առաքինությունը համարեն իրենց օժիտը: Դրա համար ինչպես հիմա շատերը չքավորության պատճառով չեն ամուսնանում, այդպես էլ այն ժամանակ իրենց մոլություն պատճառով չէին կարողանում ամուսնանալ: Երջանիկ ժամանակներ էին, որովհետև աղջիկները չէին տրամում օժիտ չունենալու համար, հայրերն էլ չէին տրամում օժիտ տալը չկարողանալու համար: «Անիծյալ լինի,— ասում է իտալացիների իմաստուն կայսր

Մարկոս Ավրելիոսը,— ով որ ոսկի ու արծաթ մտքրեց Հռոմ, ով Հռոմը հարստացրեց գանձով և աղքատացրեց առաքինությամբ»:

Հին ժամանակներում Կ.Պոլսի եկեղեցիներից մեկում մի տուփ էր կախված, որի մեջ ամեն նոր ամուսնացած մարդ փող էր գցում, եթե մի տարվա ընթացքում չէր զղջացել իր ամուսնության համար: Եվ այդ տուփը համարյա միշտ լիքն էր լինում: Ի՞նչ կպատահեր, եթե հիմա մեզանում էլ սահմաններն մի այդպիսի տուփ. անկասկած, միշտ դատարկ կլիներ: Ինչո՞ւ Կ. Պոլսում այդպես չէր, որովհետև այնտեղ օրիորդները դաստիարակվում էին քրիստոնեական ոգով, և նրանց ներշնչվում էր առաքինության զգացումը, որը մեր ժամանակի կանանց մի անծանոթ բան է:

Գեղեցկություն փնտրելը վատ բան չէ, բայց երբ մարդն ավելի գեղեցիկ կին է փնտրում, քան համեստ, այդ ժամանակ դա սխալ հաշիվ է, որովհետև վերջում զղջալու շատ բան կունենա: Մի տղամարդ, որ ամուսնանում է մի կնոջ հետ միայն նրա գեղեցիկ տեսքի համար, դրանով հրապարակորեն վաճառքի է հանում իր անունը և վտանգի է ենթարկում իր կյանքը: Այդպիսի ողորմելին շատ ու շատ կրքերի պիտի համբերի իր կնոջ կողմից: Նա պետք է համբերի նրա հպարտությանը, որովհետև գեղեցկությունն ու խելագարությունը կողք կողքի են գնում, պետք է համբերի նրա ամբարտավանությունը, որովհետև գեղեցիկ կինը կամենում է ամենքին նախագահ լինել, պետք է տանի նրա ծախսերը, որովհետև դատարկ գլուխն ու սիրուն դեմքը երկու որդեր են, որոնք կրծում են մարդուս կայքն ու կյանքը: Այդպիսի կնոջ ամուսինն ստիպված է տանել նրա կովասիրությունը և գոռոզությունը, որովհետև ամեն գեղեցիկ կին կամենում է, որ տան մեջ միայն ինքը լինի հրամայող, ստիպված է տանել նրա փափկությունը, որովհետև ամեն գեղեցիկ կին կամենում է ուրախությունների մեջ անցկացնել իր կյանքը: Եվ մի կին, որ ամուսնանում է միայն իր գեղեցկության հույսով, թող պառավության ժամանակ սպասի չարաչար կյանքի, որովհետև նա, որ սիրվում էր միայն գեղեցկության համար, վերջը պետք է արհամարհվի տգեղության համար:

Սուրբ Գիրքն էլ այդպես է նայում գեղեցկությունը. «Կնոջ գեղեցկությանը չպետք է խաբվես»: Հիրավի, մի՞թե անմիտ չէ այն մարդը, որը, տունն առնելու միտք ունենալով, պատահած տան միայն արտաքինն է քննում ու առնում՝ առանց նրա ներսի կողմերը գննելու: Այսպես էլ նա, որ իր համար կյանքի ընկեր է ընտրում, այնքան աղջկա արտաքին գեղեցկությանը չպետք է նայի, որքան նրա ներքին արժանավորությանը, այն է՝ նրա համեստ կյանքին, նրա մեղմ բնավորությանը, նրա գովանի վարքին, նրա ընտիր բարքին, խելացի մտքին, անկեղծ սրտին, անախտ հոգուն: Եթե աղջիկը չունի այդ արժանավորությունները, ինչքան էլ սիրուն տեսք և հարուստ օժիտ ունենա, դարձյալ մարդ չպետք է առնի այդպիսի մի աղջկա, եթե չի ուզում մի այդպիսի ծանր խաչ առնել իր ուսին, որ պարտավորված լինի մինչև մահ կրել: Բայց եթե աղջիկն արտաքին գեղեցկության հետ ներքին արժանավորություններ էլ ունենա, այդ ժամանակ համարձակ պետք է առնել այդպիսի աղջկան: Իսկ եթե հարկ լինի ընտրություն անել գեղեցիկ, բայց քիչ առաքինի աղջկա միջև, այդ ժամանակ առաքինությունը միշտ վեր պիտի դասել, որովհետև գեղեցկությունը գեղեցիկ ծաղկի նման է, որ առավոտը կարմիր է, սիրուն ու հոտավետ, երեկոյան թառամում, փչանում է, այնինչ՝ առաքինությունն անթառամելի է: Առաքինի կինը տան հոգին, տան պահապան հրեշտակն է: Ամենաազքատ տունն անգամ, որտեղ գտնվում է մի առաքինի, աչալուրջ և ժիր կին, դառնում է խաղաղության ու երջանկության օթևան:

Այդպես է ասում և Սուրբ Գիրքը. «Առաքինի կին, խելացի տանտիկին գտնել նշանակում է գանձ գտնել, առաքինի կինն անգին գոհար է և թանկագին, քան պատվական ակները»: Վերջապես «կինը միայն մի կողմով կարող է գեղեցիկ լինել, բայց սիրելի լինել հազար կողմով», որովհետև «սիրելին ոչ թե գեղեցկությունն է, այլ շնորհքը»: Այն ժամանակ է գովելի մարմնի գեղեցկությունը, երբ հետո ունի մտքի ու սրտի գեղեցկություն: Ինչպես ծաղկի գույնն առանց անուշ հոտի գովելի չէ, այդպես էլ գեղեցկությունը՝ առանց

համեստության: Ինչպես ծաղիկն առանց պտղի անօգուտ է, այդպես էլ գեղեցկությունը՝ առանց առաքինության:

Լավ կինը նա է, ով տնարար է, ինչպես ասում է առաքյալը. «Ուզում եմ, որ այդ երիտասարդ կանայք ամուսնանան, որդիներ ծնեն, տնարար լինեն»: Այդպիսի կինը տան կառավարության մեջ չափավոր ու հեռատես կլինի: Լավ կինն ինչքան էլ հարուստ լինի, անպատճառ իր տան առաջին խոհարարը պետք է լինի, տան ու խոհանոցի իսկական կառավարիչը պետք է լինի: Լավ կինը գործունյա, աշխատասեր պետք է լինի. այդպիսի կինն իր տան պատիվն է, իր մարդու պարծանքը: «Ժրաշան կինն իր ամուսնու պսակն է»,– ասում է Սուրբ Գիրքը: «Նա ոտքի է ելնում արշալույսին, տնեցիներին կերակուր է տալիս և գործի է դնում նաժիշտներին .... Իր մեջքին պինդ գոտի կապած՝ նա թևերը մխրճում է գործի մեջ և ճաշակում է աշխատանքի քաղցր հաճույքը, և ողջ գիշերն էլ չի հանգչում նրա ճրագը»:

Լավ կինը չպետք է լինի ունայնասեր, ամեն նորաձևության կուրորեն հետևող, չպետք է լինի պճնասեր: Լավ կինն ունեցած հարստությունը պետք է ծախսի ոչ թե իր արդուզարդի, իր ոսկեղենի վրա, այլ իր զավակների կրթության վրա և փոխանակ թանկագին ակնեղենով մեծամտանալու՝ իր դաստիարակած զավակներով պետք է պարծենա: Կանանց անմիտ ու ավելորդ ծախսերի դեմ բացի իմաստուն Սողոմոնից ձայն է բարձրացնում և Եսայի մարգարեն: Նրանց «գունգոլյն, բեհեզյա և ծիրանի հագնելիքը, նրանց լկտի կերպարանք ստանալը, զանազան ներկերով երեսի գույնը փոխելը և հոնքերը ծարուրելը<sup>1</sup>» հեգնելով ու հանդիմանելով՝ նա ավելացնում է. «Արտաքին մարդը գեղեցկացնելով ներքինը չի գեղեցկանում, և տգեղ ստեղծված պատկերը մարդ չի կարող փոխել»:

Ամուսնու ընտրության գործում մենք մի լավ դաս ունենք առնելու հունաց Թեոփիլոս կայսրից: Նրա մայրը, որ խելացի ու բարե-

---

<sup>1</sup> Ներկել:

պաշտ տիկին էր, Կ. Պոլիս տանել տվեց շնորհքով ու արքայավայել օրիորդներ և իր որդուն ասաց.

– Եթե ուզում ես ամուսնանալ, որ թագավորութանդ ժառանգ ունենաս, քեզ կին չի պակասի, բերել կտամ, տե՛ս, քննի՛ր, ում կհավանես, առ քեզ կնության:

– Բայց, մայրի՛կ,– պատասխանեց կայսրը,– կանայք տղամարդուց լավ են ճանաչում կանանց: Ես կարող եմ սխալվել, ուստի մի քիչ լույս, մի քիչ տեղեկություն տո՛ւր ինձ, որ այսպիսի ծանր գործում չսխալվեմ:

– Շատ լավ,– ասաց մայրը և մի թուղթ տվեց նրան, որի մեջ գրված էր յուրաքանչյուր աղջկա անունը, ազգը, հայրենիքը, բարքը և ունեցած արժանավորությունները: Թեոփիլոսն անգիր սերտեց ցուցակի մեջ գրվածները: Եկավ ընտրության ժամանակը, և բոլոր օրիորդները հավաքված էին պալատական դահլիճում: Կայսրը ներս մտավ, սկսեց ամեն մեկի հետ խոսել ու հարցեր տալ և մի քանիսին սիրտը կպավ՝ նրանց գեղեցկության, զվարթության և վայելչախոսության համար: Բայց վերջն ընտրեց Թեոդորա անունով մի օրիորդի, որը թղթի մեջ գրվածներից ամենապարկեշտը, ամենալավ կրթվածն էր, թեև գեղեցկության կողմից մյուսներին չէր հասնի: Աչքը, որ իր մասն էր ուզում, Թեոփիլոսի մտքի դեմ պատերազմեց, բայց միտքը հաղթություն տարավ, և կայսրն իրեն կին ընտրեց ամենալավ օրիորդին: Պսակվելուց հետո Թեոդորան գործով արդարացրեց Թեոփիլոսի ընտրությունը, որովհետև իր խելքով ու առաքինությամբ եղավ ոչ միայն մի զարմանալի թագուհի, այլև Թեոփիլոսի համար ընտիր խորհրդական ու ժողովրդի համար՝ խնամատար մայր:

\*\*\*

Ամուսնական գործում միշտ միջնորդի կարիք է գգացվում, որը, դժբախտաբար, շատ անգամ փոխանակ միմյանց քիչ թե շատ համապատասխան ամուսիններ հանդիպեցնելու՝ միայն իր ստանալիք վարձատրության մասին է մտածում, ուստիև շատերի թշվա-

ուսման պատճառ դառնում: Նա ամեն միջոց սուրբ է համարում, միայն թե ամուսնական գործը հաջողեցնի: Դրա համար նա իր մեջ խեղդում է խղճի ձայնը, զինվում է ստախոսության բոլոր զենքերով, «սրում է իր լեզուն, որի տակ թույն կա պահված», և սկսում է ամուսնական առևտուրը: Նրա կախարդիչ լեզուն նույն օձի լեզուն է, որ խաբեց, իր ցանցերի մեջ գցեց առաջին մարդկանց:

Միջնորդն իր նկարագրության մեջ չեղած արժանավորություններ է, որ հանդես է բերում վարդի գույներով: Տղայի տանն աղջկա գեղեցկությունն է գովում, աղջկա տանը՝ տղայի հարստությունը: Նրա լեզվով տգեղը գեղեցիկ է դառնում, հիմարը՝ իմաստուն, սատանան՝ հրեշտակ, պառաված աղջիկը՝ մանկահաս, անատամ ծերը՝ երիտասարդ, անգրագետը՝ ուսում առած, չափավոր ապրուստի տերը՝ պալատների տեր: Մի խոսքով՝ պատահած թշվառ ամուսնությունների մեծ մասը կատարվել է անխիղճ ու խաբեբա միջնորդների ձեռքով: Քանի՛-քանի՛ ամուսիններ, նույնիսկ առաջին ամիսներին սարսափով նկատել են, թե ինչ անդնդի ծայրին են կանգնած իրենք, թե ամուսնու փոխարեն ինչ պատուհաս են բերել իրենց տուն: Այնուհետև երբ ամեն գաղտնիք բացվում է, սկսվում է մի դժոխային կյանք՝ անվերջ վեճեր, անհաշտ ատելություն, և ամուսնական սալը գնում է՝ լուծը ծռված, անիվը կոտրած, ցեխի մեջ խրված:

Ամուսնու ընտրության գործում մարդս այնքան էլ ազատ չէ, որովհետև ամեն հավանած աղջկա հետ չի կարող կապվել: Եկեղեցին դրա համար սահման է որոշել, որից այն կողմ չի կարելի և չպետք է անցնել: Նայելով ամուսնացող զույգի մերձավոր կամ հեռավոր ազգականությանը՝ ամուսնությունները լինում են կանոնավոր կամ անկանոն, ուրիշ խոսքով՝ հաս կամ չհաս: Այսպես, այն անձիք, որոնք արդեն կապված են միմյանց հետ արյունակից ազգականության կապերով, չպետք է կապվեն ամուսնական կապով, որովհետև արդեն կապված են բնական սիրո և հարգանքի կապերով, որոնք ամուսնությամբ կարող են խզվել, ոչնչանալ: Այդպիսի ա-



մուսնություններն անբնական ու պիղծ են և Աստծո օրենքը խախտող:

Երբ Հիսուսն ասում է, «Պետք է թողնի հորն ու մորը և գնա իր կնոջ հետևից», դրանով ոչ միայն այն է ուզում ասել, որ ծողները որդիների ամուսնությանը չխանգարեն իրենց շահերի համար, այլև այն, որ մարդս պետք է իրեն ամուսին ընտրի ոչ թե իր հոր տանը և իր գերդաստանի մեջ, այլ օտարի տանը, օտար ընտանիքում: Կուսակաշտ ազգերն անգամ բնական զգվանք են զգում այդպիսի անբնական ամուսնությունից: Այդ է պատճառը, որ մեր սուրբ հայրապետերը ժողով են կազմել և արգելել մերձավոր ազգականների ամուսնությունը: Չնայելով դրան՝ մեզանում շատ անհասկացող ծնողներ ամեն հնար գործ են դնում չհաս ամուսնությունները հաս անելու համար, միայն թե իրենց շահերը չվտանգվեն, ազգականի հարստությունն ուրիշի ձեռքը չանցնի: Սակայն այդ դեպքում վատը միայն այն չէ, որ հայրապետական օրենքի սահմանն է ավերվում, եկեղեցու կանոնն է արհամարհվում, այլև հարյուրավոր դեպքերում փորձով տեսնված է, որ երբ միևնույն ազգականության միջև ամուսնություններ են պատահում, փոխանակ դրսից եկող նոր անձանց հետ ամուսնական կապ հաստատելու, այդպիսի մերձավոր, արյունակից, ազգակից ամուսնությունից կա՛մ ամենևին զավակ չի լինում, կա՛մ ծնված զավակները հայտնի կերպով վնասներ են կրում՝ լինելով արատավոր, պակասավոր ոչ միայն մարմնի, այլև մտքի կողմից: Այդպիսիների որդիները լինում են խեղ, ի ծնե կույր, խուլ, խելագար և այլն: Եվրոպայում մի քանի ազնվական ցեղեր, իրար միջև ամուսնանալով, միանգամայն անհետացել են աշխարհի երեսից, ամբողջ սերունդներ են ջնջվել:

Ամուսնացողներն ինչքան ազգակցությամբ պետք է հեռու լինեն միմյանցից, այնքան կարևոր է, որ խելքով ու հասկացողությամբ մոտ լինեն միմյանց: Հիրավի, եթե նրանք հաճախ պետք է միասին խորհուրդ անեն, դատեն ու վիճեն, եթե պետք է միասին պատրաստեն իրենց ապագան, եթե պետք է միասին զավակ մեծաց-

նեն ու կրթեն, վերջապես պետք է մի փոքրիկ ընտանեկան թագավորություն կազմեն, ուրեմն պարզ է, որ նրանք չեն կարող օրինավոր գույգ և միմյանց կյանքի ընկեր լինել, չեն կարող «մի մարմին», մի սիրտ և մի հոգի կազմել, եթե մոտավորապես միանման խելք ու զարգացում չունենան: Իմաստունի մեկն ասում է. «Այն տղամարդը, որ ամուսնացած է մի այնպիսի կնոջ հետ, որ խելքով ու զարգացմամբ իրենից ցածր է, շարունակ զգում է, որ իր կիսն իրեն ցած է քաշում, չի թողնում բարձրանալ, առաջ գնալ իր ուժերի չափ»:

Շատ ցավալի բան է, որ տղամարդու և կնոջ միջև մեծություն ու փոքրության, իշխանության ու հպատակության հարց է բարձրանում: Ցավալի է, որովհետև նրանց միջև դրա մասին խոսք անգամ չպետք է լինի, քանի որ ամուսիններից մեկը և՛ հրամայող է, և՛ հնազանդվող, և՛ մեծ, և՛ փոքր: Ամուսնական սայլը վարողը, տունն ու ընտանիքը կառավարողը պետք է լինեն սերն ու պատկառանքը, ոչ թե տերն ու անարգանքը: Եթե տղամարդն ու կինը, միմյանց լրացնելով, պետք է մի ամբողջություն կազմեն, եթե երկուսն էլ իրենց մեջ կրում են Աստծո պատկերն ու նմանությունը, ուրեմն նրանց մեջ մեծ ու փոքր չկա, տեր ու ծառա չկա. նրանք հավասար են: Հավասար են բանականությամբ, հավասար են մի ավազանից ծնված լինելով, հավասար են Աստծուն որդեգրվելով, հավասար են որդեծնության համար միակերպ կարևոր լինելով: Տղամարդու և կնոջ հավասարությունը երևում է և կնոջ ստեղծվելու եղանակից: Աստված կնոջը մարդու գլխից չստեղծեց, որ նրա գլուխը չհամարվի, ոչ էլ նրա ոտքերից ստեղծեց, որ հավասար լինի նրան: Քահանան նրանց պսակելիս ձեռք ձեռքի է տվել, նրանք մի գծի վրա են կանգնել եկեղեցում, մի խաչ, մի Ավետարան են համբուրել, մի բաժակից են խմել օրհնած գինին: Այսպես և առաքյալը ոչ մի տարբերություն չի դնում մարդու և կնոջ միջև. «Ուրեմն խտրություն չկա. Չի՛ք,– ասում է,– ո՛չ արուի և ո՛չ էգի»:

Մարդկային բոլոր արժանապատվություններով հավասար լինելով տղամարդուն՝ կինը, այսուամենայնիվ իր սեռին հատուկ տկա-

րություններով, իր անպաշտպան լինելով, իր սեփական օգուտի համար ստորագրվում է իր մարդուն, ինչպես թույլը՝ ուժեղին, ինչպես սահողը՝ պինդ կանգնածին: Աստված ինքն էլ է այդպես նայում տղամարդուն և կնոջը: Ընտանիքի մեջ նախապատիվը, առաջինը տղամարդն է: Նա իր կնոջ գլուխն է, նա տան տերն է: Այդպես ենք կարդում Սուրբ Գրքում: Մարդն իշխում է կնոջ վրա, որովհետև մեղանչելուց հետո դրա կարիքն զգացվեց: Կինը մեղանչելուց առաջ համապատիվ էր տղամարդուն, այդ էլ դարձյալ երևում է նրա ստեղծվելու եղանակից: Ինչպես մարդուն ստեղծելիս Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով նմանությունս», այնպես էլ կնոջը ստեղծելիս ասաց. «Նրա նմանությունս մի օգնական ստեղծենք նրա համար»: Իսկ մեղանչելուց հետո կնոջն ասում է. «Քո ամուսնուն պիտի ենթարկվես, և նա պիտի իշխի քեզ վրա»: Ուզում է ասել. «Ես քեզ ստեղծեցի մարդուդ հավասար պատվով, բայց դու չմնացիր քո պատվի մեջ, այսուհետև եղի՛ր նրա իշխանության տակ, նա՛ կլինի քո ապավենը, ամրությունը և նավահանգիստը»: Առաքյալն էլ, տղամարդուն իշխող ճանաչելով, հրամայում է. «Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպես կհնազանդվեն Տիրոջը»:

Բայց Աստված այդ իշխանությունը տղամարդուն այն պատճառով չի տվել, որ նա, միշտ իր ուզածն անելով, ի չարը գործ դնի: Աստծո սահմանած օրենքը պահանջում է, որ ինչքան մեկը բարձր է կանգնած ուրիշներից, այնքան նա ավելի է պարտական նրանց ծառայելու. «Ով ձեր մեջ մեծ է,– ասում է Հիսուս,– նա՛ պետք է լինի ձեր ծառան»: Ինչո՞ւ, որովհետև մեծություն և իշխանության մեջ ավելի պարտքեր ու պարտականություններ կան, քան թե իրավունքներ ու հրամաններ: Մեծությունը, բարձրությունը մի պարտականություն է, որ մարդս պետք է գործ դնի ոչ այնքան իր փառասիրությունը գոհացնելու, որքան այլոց բարյաց համար: Իշխանությունը ծառայություն է: Ինքը՝ Հիսուսը, որ ամենքիս տերն ու իշխանն է, «Ես չեմ եկել,– ասում է,– ձեզանից ծառայություն պահանջելու, այլ ձեզ ծառայելու», ինչպես և ցույց տվեց Սիոնի վերնատանը:

Տղամարդը տեր է տան մեջ, նշանակում է նա է նաև առաջին պատասխանատուն Աստծո և մարդկանց առաջ այն ամեն բանի համար, ինչ որ պատահում է տանը՝ թե՛ լավ, թե՛ վատ: Տղամարդը կնոջ գլուխն է, նշանակում է նա պետք է օրինակ տա նրան ամեն լավ բանում: Դրա համար Աստված նրան ավելի ուժ ու կարողություն է տվել, քան թե կնոջը: Դրա համար նա խոստացել է պսակվելիս վկա ունենալ Աստծուն, պահապան հրեշտակներին, սուրբ եկեղեցին, սուրբ խաչն ու Ավետարանը, քահանայից դասը և ժողովրդի երամբ: Թե տղամարդն ինչպես պետք է օգուտ քաղի իր այդ իշխանությունից, դրա համար նրան օրինակ է տվել ոչ թե սովորական մի մարդու, ոչ թե սրբերից մեկին և ոչ իսկ հրեշտակապետերից մեկին, այլ հենց Իրեն՝ Քրիստոսին: «Որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոս գլուխն է եկեղեցու»,— ասում է առաքյալը: Տղամարդն այնպես է իր կնոջ գլուխը, ինչպես Քրիստոս եկեղեցու գլուխն է: Բայց մեկ լավ մտածիր, թե այդ եկեղեցու համար նա ինչպես նվաստացավ, չարչարվեց և ինչպիսի մահվան մատնեց իրեն, ինչպես շարունակ հոգում է այդ եկեղեցու մասին և պաշտպանում աշխարհային փոթորիկների դեմ:

Այո՛, տղամարդը կնոջ գլուխն է, բայց կինը նրան տրված չէ իբրև ստրուկ: Ինքը՝ եկեղեցու գլուխ Քրիստոսը, եկեղեցուն, այսինքն քրիստոնյաներին ո՛չ ստրուկ և ո՛չ էլ ծառա է անվանում, այլ եղբայր ու բարեկամ: Կինը ոչ միայն իր մարդու ամենամերձավոր բարեկամն է, այլև նրա մարմինը: Եվ ո՞վ խնամք չի տանում իր մարմնի վրա, ո՞վ է ատում իր մարմինը, այն էլ մի այսպիսի մարմնապաշտ ժամանակ: Եթե Քրիստոսի պատվերի համաձայն մարդս պետք է սիրի ամեն կողմնակի մարդու և նույնիսկ իր թշնամուն և այն էլ իր անձի պես, իր աչքի լույսի պես, մի՞թե ուրեմն նա ավելի չպետք է սիրի նրան, ով ամբողջ աշխարհում ամենամերձավորն է իրեն, որի հետ Աստված և եկեղեցին նրան միացրել են ամենասերտ կապով, անլուծանելի կապով:

Մեկ լավ մտածիր, թե ինչ է արել կինը՝ իր մարդուն այդչափ մոտենալու համար: Նա իր ամուսնու պատճառով թողել է իր ծնողական հարկը, իր հայրական օջախը, որ սնել, մեծացրել է իրեն, թողել է ծնողական հոգատարությունն ու գգվանքը, սերն ու պաշտպանությունը և եկել, անձնատուր է եղել իր մարդուն, հավատով, հույսով ու սիրով մտել է նրա թևի, նրա պաշտպանության տակ և այդ պատճառով նրանից է սպասում իր բարօրությունը, իր երջանկությունը: Մի՞թե այս ամենն անելուց հետո նա չպետք է դառնա նրա ուրախությունը, և տղամարդը մի անխիղճ բռնակալ չի՞ լինի, եթե դառնացնի նրա հույսով լի կյանքը:

Կինը թույլ է տղամարդուց, նշանակում է նրանում որևէ պակասություն նկատելու ժամանակ տղամարդը պետք է նրան անի ամեն զիջողություն, պետք է հետը զգույշ և խոհեմ վարվի, ինչպես մի դյուրաբեկ ամանի, ինչպես «մի տկար անոթի» հետ: Ամո՞թ այն տղամարդուն, որը վիրավորում է իրենից թույլ մի մարդու, և հազար ամոթ նրան, որ վիրավորում է իր կնոջը, իր կյանքի ընկերոջը: «Մարդիկ, սիրեցե՛ք ձեր կանանց և մի՛ դառնացրեք նրանց»,– ձայն է տալիս առաքյալը: «Տղամարդիկ,– ասում է՝ ձեր կանանց հետ խիստ մի վարվեք, որովհետև այն վիշտն ու վիրավորանքը, որ մեզ փոքր ու չնչին է երևում, կնոջ համար ծանր ու անտանելի է»:

Տղամարդը, իր կնոջ գլուխը լինելով, պետք է լինի ոչ թե մի անմիտ, այլ խելացի գլուխ. չէ՞ որ գլուխը մարմնի ամենապատվավոր ու կառավարիչ մասն է: Նա, իբրև իշխող ու հրամայող, իր կնոջից չի կարող այնքան պատիվ ու հարգանք վայելել, որքան իբրև հավասար ու բարեկամ, այնքան խստությունմբ չի կարող սիրվել նրանից, որքան կակուղ վարմունքով:

Անկարելի է այս աշխարհում ճշմարիտ ու կատարյալ երջանկություն գտնել, անկարելի է գտնել նաև ամուսնական կյանքում. ամուսնական կյանքն էլ իր վշտերն ու թշվառություններն ունի: Ամուսնական կյանքի մեծ նշանակությունը երևում է այլևայլ անակնկալ դեպքերում, տղամարդու և կնոջ միջև ծագած անբավականություն

յունների մեջ, կայքի ու կարողութեան կորստի, ծանր հիվանդութիւնների ժամանակ, երբ հայրն ու մայրը ստիպված են լինում իրենց որդու հոգեվարքի ժամանակ կանգնել նրա անկողնու մոտ:

Ամուսնական կյանքը միշտ վարդեր չի բուսցնում, փշեր էլ ունի: Դու պատահել ես մի այնպիսի կնոջ, որ թեթևամիտ ու պնդազլուի է, շռայլ ու անկարգ, քո խաչն է, պետք է կրես: Ամուսնութեան ոսկի կանոնն է. «Համբերի՛ր և կրի՛ր»: Դու պատահել ես մի այնպիսի տղամարդու, որ բարկացկոտ է, գինեմոլ է, թղթամոլ, հայհոյող, պետք է տանես: Ինչի՞ համար էին այն հարցերը, որ պսակելիս քահանան խաչը ձեռքին դիմում էր մեկ փեսային, մեկ հարսին. «Տե՛ր ես, հնազա՞նդ ես»:

«Տե՛ր ես» խոսքով եկեղեցին ուզում է ասել. «Տե՛ս, որդյա՛կ, այս րոպեիս դու ձեռքդ տվել ես այս աղջկան, բայց վաղը կարող է լույս ընկնել մի ուրիշ աղջիկ, որ կկամենա քո սիրտն իր կողմը շրջել: Կա՞րող ես մերժել երկրորդին և անձնատուր լինել սրան, կարող ե՞ս համարձակ ասել նրան. «Ո՛չ, ես իմ ձեռքը, իմ սիրտը, իմ հոգին տվել եմ իմ կնոջը»: «Հնազանդ ե՞ս» խոսքով եկեղեցին ուզում է քեզ ասել. «Տե՛ս, որդյա՛կ, դու համաձայնեցիր ձեռքդ տալ այս երիտասարդին՝ հույսդ դնելով սրա հարստութեան վրա, կարծելով, թե սա քեզ ոսկե վանդակում կպահի և չի թողնի, որ ոտքդ քարի դիպչի: Բայց կարող է պատահել, որ սրան աղքատութիւն լինի վիճակված, կարո՞ղ ես այնքան խելացի լինել, որ համբերութեամբ տանես վրադ տեղացող հարվածները, կարո՞ղ ես այն աստիճան հավատարիմ լինել, որ մերժելով մերժես այն հարուստին, որ կաշխատի իր կողմը գրավել քո սիրտը»:

Կարճ ասենք, եկեղեցու պահանջն այս է, որ տղամարդը պատվի, սիրի ու պաշտպանի իր կնոջը, կինը հնազանդվի, սիրի ու պատվի իր մարդուն: Աստված, տղամարդուն ուժ տալով, նրան տվել է նաև բեռան ծանր մասը, կնոջը գորով ու քաղցրութիւն տալով, նրան տվել է այն ամենը, ինչով որ նա թեթևացնելու է ամուսնու բեռը և այդպիսով նրա համար պետք է դառնա անխառն ուրախու-

Թյան մի անսպառ աղբյուր: Այս լավ հասկանալու դեպքում կյանքի դառնությունները կմեղմանան երկուսի համար ևս, և փշերն անզոր կլինեն նրանց վնասելու:

Բայց սեր ասվածը պետք է լավ հասկանալ: Կան, այո՛, այնպիսի ամուսիններ, որոնք սաստիկ սիրում են միմյանց, այնպես որ մի օր իրար շտեմնելը ցավ է պատճառում իրենց: Սակայն եթե լավ քննենք, կտեսնենք, որ դա լուրջ զգայական սեր է, մի բուռ զգացմունք, մի զորեղ կիրք, որ ավելի մոլություն է, քան թե սեր: Եվ ով իր կնոջը սիրում է այդպիսի սիրով, իսկապես ծածուկ շնացող է: Մի ազնվական այն աստիճան էր սիրում իր կնոջը, որ նրան միշտ մոտն ունենալու համար խեղճին հետը ման էր ածում գոտուց կապած: Ասորիների Սարգանաբալ թագավորն էլ այնքան էր սիրում իր կանանց, որ մոտներից չէր հեռանում և նրանց պես էր ապրում, նրանց պես կանացի շորեր հագնում և ճախարակ մանում: Մի՞թե դա ճշմարիտ սեր է: Ո՛չ, դա անարգ, ախտավոր սեր է, որ արժանի իսկ չէ սեր կոչվելու. ինչպես սիրահարների սերը, որ կարճ է տևում և շուտ վերջանում, որովհետև այնքան է տևում, որքան տևում է սիրահարական ախտը: Այդպիսի մարդ ու կին, թեպետ սկզբում թվում է, թե սաստիկ սիրում են միմյանց, բայց որովհետև իրենց սերը լուրջ զգայական սեր է, հենց որ զգացմունքները դադարում, սառչում են, իրենք էլ սառչում են միմյանցից և սկսում են ատել միմյանց:

Սակայն ամուսինների սերը ճշմարիտ սեր լինելու համար պետք է լինի զուտ սեր, հոգևոր սեր, սուրբ սեր, որ Աստուծուց գա և առ Աստված վերջանա: Առաքյալն էլ, տղամարդկանց հորդորելով սիրել իրենց կանանց, ասում է. «Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց», բայց որպեսզի նրանք սոսկ զգայական, անասնական սերը չհասկանան, իսկույն օրինակն էլ հետն է տալիս. «Ինչպես և Քրիստոս սիրեց եկեղեցին»: Իսկ Քրիստոս եկեղեցին, այսինքն՝ քեզ, ինձ, ամենքիս սիրում է մաքուր սիրով, հոգևոր սիրով, ուրեմն մարդ ու կին էլ պետք է այդպիսի սիրով սիրեն միմյանց: Եվ ի՛նչ սիրուն պատույներ կտա այդպիսի սերը, եթե, հիրավի, ունենան ամուսինները: Այդ

սուրբ սերը մեջները խաղաղությունն ու խնդությունն կպահպանի, քրիստոնեաբար կապրեն, միմյանց կծառայեն, միմյանց կօգնեն, երկնքում էլ հավիտյան միասին կլինեն: Ահա այդ սուրբ սերն է խնդրում քահանան պսակի օրհնության մեջ՝ ասելով. «Տե՛ր, սուրբ պահիր սրանց ամուսնության անկողինը, որպեսզի... միավորվեն հեզության հոգով, սիրեն միմյանց պարկեշտ վարքով, անբիծ հոգով, առանց լկտի ամոթի»:

\*\*\*

Տղամարդը կնոջ վրա ունեցած իշխանությունը լիովին չպետք է գործադրի, եթե հարկ չկա, որովհետև բռնությունը միշտ ատելի է: Տան մեջ հայտնի պետք է լինի, թե ով է գլուխը, բայց թե մարդու և կնոջ միջև տերը ով է, չպետք է որոշակի լինի: Բավական է, որ կինն իմանա, թե տղամարդն իշխանություն ունի իր վրա և թե կարող է գործ դնել այն, երբ կինը մոռանա նրա գոյությունը: Այսուամենայնիվ չպետք է թույլ տալ, որ կինն իշխի տղամարդու վրա, որովհետև մի կին, որ ընտանիքում գլուխ է համարվում, միշտ հակառակ է գնում իր ամուսնուն: Տղամարդը միշտ պետք է գործի դնի իր արդարացի իրավունքը կնոջ վրա, բայց մի այնպիսի քաղցր ու սիրալիր կերպով, որ նա ավելի զվարճություն զգա մարդուն հնազանդվելով, քան թե ինքը նրան հրամայելով: Երբ դու սիրելով կիշխես կնոջը վրա և կինդ սիրելով կհնազանդվի քեզ, ոչ թե երկյուղից կամ ծառայաբար, այն ժամանակ ո՛չ նա թույլ կտա իրեն հակառակվել քեզ, և ո՛չ դու երկյուղից կբռնանաս նրա վրա, այն ժամանակ երկուսիդ միջև կկայանա սիրո և երկյուղի մի գեղեցիկ զուգախառնություն:

Տղամարդկանց և կանանց միջև ծագող անբավականություններն առաջ են գալիս գլխավորապես կանանց ինքնիշխանությունից: Սրա համար իմաստունի մեկն այս միջոցն է ցույց տալիս կնոջը. «Ուզո՞ւմ ես սովորեցնեմ քեզ հրամայել մարդուդ. ինչքան նա վատ վարվի հետդ, դու միշտ լա՛վ վարվիր հետը, ակնածություն արա, հնազանդվի՛ր նրան ամեն բանում, այդպիսով սիրտը կշահես և



կիշխես վրան»: Երանելի Օգոստինոսի մայրն էլ, երբ ուրիշ կանայք գանգատվում էին իրենց ամուսիններից, «Մանձեցե՛ք լեզուներդ,– ասում էր ժպտալով,– որովհետև կանայք իրենց ամուսիններին ընդդիմություն չպետք է անեն, այլ նրանց հետ վարվեցե՛ք քաղցրությամբ ու հեզությամբ, ինչպես ձեր տիրոջ հետ, այդ ժամանակ խաղաղ կապրեք»: Առաքյալի ասած հնազանդությունն էլ, թե «Կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին, ինչպես իրենց տիրոջը», պետք է կնոջ կամքից առաջ գա, ոչ թե ստիպմամբ:

Իսկ մի նշանավոր տիկին իր աղջկան, որ Ֆրանսիայի մի մասի իշխանուհին էր, այսպես էր խրատում. «Չկարծես, թե ամուսնությունդ քեզ պետք է հաստատ ու կատարյալ խաղաղություն պատճառի: Ամենալավ ամուսնությունն այն է, որ մարդ ու կին սիրով տանում են միմյանց պակասությունները, որովհետև դեռ տեսնված չէ մի այնպիսի ամուսնություն, որի մեջ անբավականություն ծագած չլինի: Հոժարությամբ տար մարդուդ բնավորությունը: Քո պարտավորությունն է հնազանդվել նրան և եթե այդպես անես, նրա սրտին կիշխես: Մի՛ սպասիր, որ նա այնքան սիրի քեզ, որքան դու ես սիրում նրան. սովորաբար տղամարդիկ կանանց չափ զգայուն չեն: Ամուսնությունը մի առևտուր է, որի մեջ դու միշտ վնաս կանես: Երբ քո կամքը զոհես նրա կամքին, միևնույնը մի՛ պահանջիր նրանից, որովհետև տղամարդիկ կանանցից ազատ են մեծանում: Մայրերը շատ են սխալվում, երբ իրենց աղջիկներին հասկացնում են, թե ամուսնացած ժամանակ անձնիշխան լինեն: Նրանց պետք է հասկացնեն, թե երբ ամուսնանան, իրենց պարտավորությունը հեզությունն ու հնազանդությունն է: Աստված, մեզ ավելի շնորհալի ու փափուկ ստեղծելով, ուզում է, որ տղամարդկանցից ստացած պաշտպանության և օգնության փոխարեն ազնիվ ու հաճոյական կերպով վարվենք նրանց հետ ու ակնածենք: Ուժն ու քաջությունը տղամարդկանց բաժինն է, հեզությունն ու քաղցրությունն էլ մերը պետք է լինի: Ուրեմն հնազանդվենք իշխելու համար: Քո ամուսնանալուց օրից, ի՛մ սիրելի դուստր, վերջանում է իմ հեղինակությունը: Այսու-

հետև մայրդ քո բարեկամն է միայն, բայց խանդակաթ, միսիթարիչ բարեկամդ, և հնարավոր է, որ դեռ շատ օգտակար լինի քեզ: Մեծ բախտավորություն է քեզ համար, որ իմ ուժի սահմանը ճանաչում եմ: Եթե մի այնպիսի բան խնդրես ինձանից, որ հակառակ լինի ամուսնուդ կամքին, չկարծես, թե կկատարեմ: Քո պարտքն է հնազանդվել ամուսնուդ, ոչ թե ինձ, եթե միայն նրա հրամանները դեմ չեն առաքինությունն ու պատվին»:

## ԲԱՆ Բ

«Չունեն ավելի մեծ ուրախություն, քան այն, երբ լսում եմ, թե իմ որդիները ճշմարտությամբ են ընթանում»:

(Գ Յովհ. Ա:4)

Ամուսնական կյանքը շատ պարտքեր է դնում մարդուս վրա, բայց դրանց մեջ գլխավորը որդիներ կրթելու և դաստիարակելու պարտքն է, որովհետև մեծացնելով լավ որդիներ՝ մարդս հասարակությանը տալիս է լավ անդամներ, ազգին ու եկեղեցուն՝ լավ զավակներ, Աստծուն՝ լավ հոգիներ: Այդ է պատճառը, որ Փիլիպպոս անունով մի կուսպաշտ թագավոր իր որդու՝ ծննդյան օրն Արիստոտել փիլիսոփային մի նամակ գրեց այս խոսքերով. «Ինձ որդի ծնվեց: Ծնորհակալ եմ աստվածներին, որ քո ժամանակ ծնվեց, որովհետև քո ձեռքի տակ դաստիարակվելով՝ արժանի պետք է լինի ինձ և իր ժառանգելիք թագավորությանը»:

Նույն Արիստոտելն ասում է. «Նրանք, որոնք լավ են դաստիարակում իրենց որդիներին, ավելի իրավունք ունեն հայր կոչվելու, քան թե նրանք, որոնք ծնել են նրանց, որովհետև ծնողները միայն կյանք են տալիս նրանց, իսկ դաստիարակները՝ լավ կյանք»:

---

\* Ալեքսանդր Մակեդոնացի՝ Քրիստոսից 356 տարի առաջ:

Բայց դաստիարակությունը բոլոր արվեստներից ամենադժվարն է և ամենավսեմը: Ամենադժվարն է, որովհետև ուրիշ ամեն արվեստի նյութը փայտն է, քարը, երկաթը և այլ անշունչ առարկաներ, իսկ դաստիարակության նյութը ինքը՝ բանական մարդն է: Եվ դաստիարակն այնքան մարդու մարմնի հետ գործ չունի, որքան նրա հոգու, սրտի և կամքի հետ: Ամենավսեմն է, որովհետև ուրիշ ամեն արվեստ մարդուս միայն երկրավոր բարիքներ է տալիս, իսկ դաստիարակությունը՝ միաժամանակ և՛ երկնավոր, և՛ երկրավոր բարիքները:

Լավ որդիների տեր լինելը ծնողների երջանկությունն է, բայց այդ երջանկությունը վայելելու համար նրանք հազար ու մի նեղություններ ունեն կրելու: Այն նշանավոր բոպեից, երբ ամուսինները, երկնավոր օրհնության պտուղն ստանալով, ցնծում են իրենց նորածին երեխայի վրա, հենց այդ բոպեից նրանցից պահանջվում է կատարել ծնողական մեծ-մեծ ու ծանր պարտականություններ: Նոր ծնված զավակի հետ ծնողական տուն են մտնում անքուն գիշերները, անհանգիստ աշխատանք և անվերջ ծախսեր: Սակայն դրանք բոլորն էլ քաղցր են, որովհետև ծնողական սերն այդ բոլոր դժվարությունները թեթևացնում է:

Մարդը, որն Աստծո ստեղծագործության թագն ու պսակն է, պետք է այնպիսի ձիրքեր, այնպիսի շնորհներ ունենար, այնքան կատարյալ լիներ, որ մյուս բոլոր արարածներից շատ բարձր կանգներ: Բայց այն օրից, երբ անմեղ վիճակից մեղանշական դարձավ, թեպետ առաջվա պես միտքն իմացող, կամքն ազատ և սիրտն զգալուն մնաց, սակայն մեջն այնպիսի փոփոխություններ առաջ եկան, որ մարդն այլևս այն կատարյալ արարածը չմնաց, այլ մեծ կարիք զգացվեց ուղղվելու և նորոգվելու: Մահկանացու մարմինը, ընկնելով այլևայլ հիվանդությունների, ցավերի ու վշտերի մեջ, զանազան խնամքներով ու դեղերով կարողացավ իր գոյությունը պահպանել, իսկ անմահ հոգին փրկության իրավունքն ստանալուց հետո էլ ճշմարիտը, բարին ու գեղեցիկը ճանաչելու, զգալու և կամենալու

համար մնաց արտաքին օգնության կարոտ: Ոչ մի ծնող, ինչ պատճառներ էլ բերելու լինի, չի կարող հրաժարվել այդ մեծ կարիքը հոգալուց, այդ մեծ պարտքը կատարելուց:

Մնողը կամ դաստիարակը երեխային շատ բան ունի սովորեցնելու, բայց գլխավորապես ճիշտ նկատել ու ըմբռնել, ուղիղ մտածել ու դատել, իրավունքն ու պարտքը ճանաչել: Իսկ դրա համար մեծ հմտություն է հարկավոր, որովհետև մարդուս միտքը սկզբնական մեղքից մթնելուց հետո առանց քրիստոնեական հավատի լույսի չի կարող իսկական բարին տարբերել բարի երևացողից, ճշմարիտը՝ ստից, գեղեցիկը՝ տգեղից: Ճշմարիտ է, գիտությունը, ուսումը մարդուս մարդ է դարձնում, բայց «մարդը միայն քրիստոնեությունը է ճշմարիտ մարդ»,– ասում է մի գիտնական: Եվ թեպետ քրիստոնեական դաստիարակությունը գլխավորապես բարոյական դաստիարակություն է, բայց շատ կսխալվեն նրանք, ովքեր այդ պատճառով մտածում են, թե այդ դաստիարակությունը մարդուս չի կրթում այս աշխարհի համար: Ոչ, քրիստոնեական դաստիարակությունը մի ընդհանուր խրատ ու կրթություն է, որ իր գործունեությունը տարածում է ամբողջ մարդու վրա, որովհետև նրա ուզածը մարդուն ճշմարիտ մարդ դարձնելն է: Մեր ժամանակի ամենավտանգավոր սխալներից մեկն այն է, որ մարդիկ մտքի զարգացման վրա ավելի շատ են ուշք դարձնում, քան թե սրտի զարգացման վրա: Բայց չի կարելի մեկը մյուսից անպատիժ բաժանել, քանի որ Աստծո ձեռքը մեր հոգու խորքում երկուսն էլ միավորել է. «Հարկ էր այս անել և այն չթողնել»:

\*\*\*

Մնողների գործն է երեխայի գլխում ոչ միայն լուսավոր մտքեր և սրտում ընտիր զգացմունքներ տնկել, այլև առաջն առնել խավար մտքերի ու ստոր զգացմունքերի: Այդ նպատակներին հասնելու համար նրանք իրենց գործը շատ հեռվից պետք է սկսեն՝ շսպասելով երեխայի հասունանալուն: Սկզբնական կրթությունն ու դաստիարակությունը պետք է սկսել երեխայի կյանքի երկրորդ կամ երրորդ տա-

րուց: Այդ հասակի երեխան կակուղ<sup>1</sup> մոմ է, որի վրա մարդ ուզենա, Քրիստոսի կերպարանքը կտպի, ուզենա, սատանայինը: Այդ հասակը հալած մետաղի նման է, որ նայելով, թե ինչ ձևի ամանի մեջ է թափվում, այն ձևն էլ ստանում է: Դիողինես փիլիսոփան, որ դաստիարակ էր կարգված Քսենիադես անունով մի մեծատան որդիների վրա, ասում էր. «Իմ գործը ճիշտ բրուտի գործ է: Ինձ տված է մի կակուղ կավ, կարող եմ նրանից դուրս բերել ինչ ուզենամ, իսկ երբ անոթն այրվի, այն ժամանակ ուշ կլինի, վնասված տեղն էլ չի կարելի ուղղել: Երեխաներն էլ, քանի փոքր են, կակուղ են, ամեն բան սիրով են ընդունում, բայց երբ մեծանան, ուղղելը դժվար կլինի»: Սբ. Բարսեղ հայրապետն էլ ասում է, որ իր ժամանակ մայրերը չափում էին երեք տարեկան երեխայի հասակը՝ մտածելով, թե ինչ հասակ որ ունի այդ տարիքում, չափահաս ժամանակ երեք դրա չափը կունենա: «Ավելի լավ չէ՞ր լինի,– ասում էր մի նշանավոր հոգևորական,– որ այսպես մտածեին, թե երեք տարեկան երեխան ինչ պակասություններ որ ունենա, չափահաս ժամանակ երեք և նույնիսկ տասն այդքան պակասություններ կունենա», որովհետև նրա խոստերն էլ նրա հետ են աճում, արմատանում և ավելի խորը թափանցելով՝ մինչև նրա ոսկորների ծուծը, մինչև սիրտն են հասնում: «Ուրեմն,– ասում է այժմյան մի հայտնի դաստիարակ,– ով երեք, չորս, շատ-շատ հինգ տարեկան հասակից չի օգտվում՝ երեխային տալու այն ամենը, ինչը որ լավն է, ճշմարիտը, գեղեցիկն ու բարին, նա շատ մեծ հանցանք է գործում, որովհետև այդ հասակում ամեն բան խոր արմատներ է գցում երեխայի մեջ, որոնք երբեք չեն ջնջվում»:

\*\*\*

Հնազանդությունը դաստիարակության հիմքն է: Եթե երեխան չի հնազանդվում քեզ, եթե իր կամքը չի դնում քո կամքի տակ, եթե չի թողնում, որ դու իշխես իր վրա, այդ ժամանակ բոլոր ջանքերդ զուր

---

<sup>1</sup> Փափուկ, նուրբ, փխրուն:

կանցնեն: Երեխան շատ բան կկամենա, տեղի-անտեղի շատ պահանջներ կանի, բայց դու նրա բոլոր ցանկությունները չպետք է կատարես: Նա կաղաչի, լաց կլինի, դու պետք է անդրդվելի մնաս: Իմաստունի մեկն ասում է. «Գիտե՞ս՝ որդուդ անբախտացնելու ամենազորեղ միջոցը որն է. ամեն անգամ նրա կամքը կատարելը: Առաջ ձեռնափայտդ է ուզում, ապա ժամացույցդ, հետո առաջիցդ թռչող թռչնիկը, վերջում էլ ինչ որ տեսնի»: Երբ երեխան մի բան է ուզում, բայց ուզում է անհամբեր կամ հրամայական կերպով, քաղցրությամբ պետք է նրան ասես. «Ցավում եմ, որ պետք է մերժեմ ուզածդ, որովհետև այդ կերպով ուզելուդ համար չեմ կարող տալ»: Կարելի է այս խոսքն առաջին անգամ չհասկանա, բայց, անշուշտ, կնկատի քո հաստատ որոշումը և թող իմանա, որ լացն ու աղաղակն անօգուտ բաներ են: Իսկ ձայնը դադարելուց հետո, երբ այլևս ուզածի կատարելուն չի սպասի, կարող ես նրան հայտնել, թե հիմա ուզածդ կարելի է կատարել: «Երեխայի առաջին արցունքը մի տեսակ աղաչանք է,– ասում է մի փիլիսոփա,– բայց եթե չզգուշանաս, հրամաններ կդառնան»: Այս հիման վրա կակուղ սրտի տեր մայրը, որն ամեն անգամ զիջում է իր երեխայի կամքին, ապագայի համար անթիվ շարիքներ է դիզում. նրա ներկա գթությունն ապագայի համար մի ճշմարիտ անգթություն է: Ուստի Սողոմոնն ասում է. «Եթե զավակներ ունես, խրատի՛ր նրանց, մանկությունից խոնարհեցրո՛ւ նրանց պարանոցը»<sup>1</sup>: Իմաստուն դաստիարակ Ֆենելոնն այդպես էր վարվում Ֆրանսիայի մի թագավորի որդու հետ: Երբ երեխան բարկանում, աղաղակում էր, դաստիարակը թողնում էր, որ փոթորիկն անցնի, որովհետև այդ ժամանակ բանականությունն իրեն կորցնում է: Ամբողջ ընտանիքը, նրա պատվերի համաձայն, թագավորազնի հետ այլևս չէր խոսում. դասն էլ վերջանում էր, և երևում էր, որ ոչ ոք չպետք է մոտենա իրեն: Բայց այդ միջադեպը երկար չի տևում: Թագավորազնը, իր մենակությունից ձանձրացած, գալիս, ներում է խնդրում:

<sup>1</sup> Սեջբերումը Սիրաքի գրքից է /7, 25/ (ԺԱթ. խմբ.):

\*\*\*

Երբեք չպետք է ասել, թե սա մի չնչին պակասություն է, չարժե ուշք դարձնել դրա վրա: Բայց դաստիարակության գործում մեծ ու փոքր, նշանավոր ու աննշան պակասություններ չկան, այլ ամեն ինչի վրա ևս պետք է նայել իբրև ապագա մեծ շարիքի վրա: Փոքրիկ կայծն արժանի չէ անգամ, որ մարդ ուշք դարձնի վրան, բայց եթե իսկույն չհանգցնես, ահագին հրդեհ կարող է առաջ գալ: Ջրի մի կաթիլը չնչին բան է, բայց երբ շարունակ կաթում է, քարն անգամ ծակում է: Այս մտքով է, որ մի գերմանացի մեծ մարդ ասում է. «Հանդգնություն է միլիոն գողանալը, բայց ավելի մեծ հանդգնություն է կոպեկ գողանալը: Ինձ թվում է, թե հանցանքի մեծանալով մեղքը փոքրանում է»: Եվ ճշմարիտ է, դժվարն առաջին քայլն է. առաջին փորձն անելու համար մարդու մեջ ինչ անվստահություն, ինչ մտատանջություն, ինչ ներքին կոհվներ պետք է տեղի ունենան: Սակայն հենց որ առաջին փորձն արված է, երկրորդն ու հետևյալներն ինքնըստինքյան հեշտանում են: Այս պատճառով երեսայի մեջ նկատված առաջին անհնազանդությունը, առաջին սուտը, առաջին հպարտությունը պետք է տեղնուտեղը, ծլի մեջ ոչնչացնել, որպեսզի ողջ հոգին չվարակի, բնավորություն չդառնա: Ահա մի լավ օրինակ:

Հունաց մեծ Թեոդոս կայսրը, որին եկեղեցին սրբերի շարքն է դասել, մի օր մտավ իր որդու պարապմունքի սենյակը՝ նրա դաստիարակությունը տեսնելու: Տեսավ, որ դաստիարակ Արսեն սարկավազը ոտքի վրա է, իսկ Արկադ մանուկը դաս է սովորում՝ թագը գլխին դրած: Կայսրը զայրացած հարցրեց.

– Այս ի՞նչ բան է. աշակերտը նստած է, ուսուցիչը՝ կանգնած:

– Թող ծանր չթվա քեզ, տե՛ր իմ արքա,– պատասխանեց Արսենը,– քանզի անկարելի է, որ նստած սովորեցնեի թագավորի որդուն, որն իր հոր աթոռակիցն է:

Այդ ժամանակ կայսրն Արկադի գլխից դեն նետեց թագը և նրան հրամայեց բաց գլխով կանգնել ուսուցչի առաջ, իսկ Արսենին ստիպելով նստեցրեց աթոռի վրա՝ ասելով.

– Իմ որդին այն ժամանակ արժանի կլինի ինքնակալության, երբ գիտության հետ էլ կկրթվի աստվածապաշտության և ընտիր քաղաքավարության մեջ:

\*\*\*

Առհասարակ երեխան հետաքրքրվող բնավորություն ունի, որ բան սովորելու, գիտություն ձեռք բերելու նշան է: Հազիվ թե սկսում է թոթովել, նրա գլխում անթիվ հարցեր են ծագում իր տեսածների ու լսածների վերաբերմամբ: Բույսերը, կենդանիները, երկնային լուսատուները, ամպը, անձրևը, որոտը, փայլակը, մի խոսքով ողջ բնությունը և նույնիսկ բնության Արարիչը գրավում և գրգռում են նրա հետաքրքրությունը՝ անվերջ նյութ տալով նրա հարցերին: Իսկ ծնողները, փոխանակ նրա հետաքրքրությունը գոհացնելու, նրա ծարավը հագեցնելու, նրան խրախուսելու և օգուտ քաղելու նրա այդ առաջին ձգտումներից, սկզբում սովորաբար տալիս են անորոշ և առանց բացատրության պատասխաններ, ապա համբերասպառ լինելով ասում են. «Դեռ դրա ժամանակը չէ, այդ բոլորը հետո կսովորես, երբ մեծանաս, ուսումնարան գնաս»: Բայց երեխային հանդարտեցնելն այդպես հեշտ չէ. նա նորից է սկսում հարցեր առաջարկել: Ասում է ու կրկնում և չի դադարում, մինչև վերջապես նրա մեջ չեն ճնշում այդ բնական պահանջը: Այնուհետև երեխան, որի բնական ձգտումներին այդպես անխիղճ կերպով հակառակվում էին, կորցնում է ընդունակությունը և բոլորովին դադարում է հարցեր առաջարկելուց: Այդ ժամանակից նրան այլևս ոչինչ չի հետաքրքրում, նրա ուժերը տկարանում են, ներսի կրակը մարում է և հոգով թառամում: Բայց որովհետև նա պարապ մնալ չի կարող, ուստի նրա գործունեությունն ակամա ուրիշ կողմ է շրջվում՝ ուղղվելով այն կողմը և անելով այն ամենը, ինչը որ զուր է, ինչը որ վնասակար է:



\*\*\*

Սակայն ծնողների անհոգությունն անպատիժ չի մնում: Հրեից մեջ մի քահանայապետ կար՝ Հեղի անունով: Այդ բարի ծերունին երկու որդի ուներ, որոնք չափազանց անկարգ էին: Հայրը բավականանում էր միայն ասելով. «Որդի՛ք, լավ բան չեմ լսում ձեր մասին, մի՛ արեք, որդի՛ք»: Բայց որդիների անկարգության չափն անցնելու պատճառով ժողովուրդն այլևս չէր գնում Ուխտի Տապանակին երկրպագելու և զոհելու: Դրա համար Աստված հորն ու որդիներին միասին պատժեց՝ նրանց ջնջելով երկրի երեսից:

Արած ծառայությունը մի կերպ կարելի է վարձատրել, բայց լավ խրատին հատուցում չկա: Շատ անգամ մի լավ խոսքը կյանքի ուղեցույց է դառնում: Հարություն անունով մի տղա ամեն կիրակի գնում էր մի ծերունու նավակի մոտ՝ ձուկ որսալու: Մի անգամ էլ, երբ երկուշաբթի օրով գնաց, ծերունի նավարարը, նրա երեսին ապտակելով, ասաց. «Այսօր գործի օր է, փողո՛ց գնա»: Այդ օրից նա սիրով կպավ իր գործին և մեծանալով դարձավ իր ժամանակի հարուստ, նշանավոր ու բարերար մարդը Կ. Պոլսում: Ղազեզ Արթենի կամ Հարություն Պեզճյանի մեծամեծ գործերն այսօր էլ հայտնի են բոլոր տաճկահայերին:

Ազգով ղպտի մի երիտասարդ եգիպտացի կար՝ Անտոն անունով, ծնողները մահացան, որոնք շատ հարուստ էին, Անտոնը 18 տարեկան էր: Նա շուտ-շուտ եկեղեցի էր գնում: Մի օր Ավետարան կարդալու ժամանակ, նա լսեց Հիսուսի այս խոսքը, թե. «Եթե ուզում ես Աստծո բոլոր պատվիրանները կատարած լինել, նրա կամքով կառավարված լինել այս աշխարհում, գնա՛, ծախի՛ր բոլոր ունեցածդ և տո՛ւր աղքատներին»: Անտոնը, դուրս գալով եկեղեցուց, գնաց տուն, իր բոլոր հարստությունը ծախեց ու բաժանեց աղքատներին և քաշվեց, գնաց Եգիպտոսի անապատը, որտեղ իր սրբակրոն կյանքով դրեց անապատական կյանքի հիմքը՝ դառնալով հայր Ճգնավորաց: Իսկ եկեղեցին նրան դասեց սրբոց դասը, ինչպես

գովաբանելով երգում է մեր շարականը. «Պարծանք եկեղեցույ և ուրախութիւն հրեշտակաց, ո՛վ սուրբ հայր Անտոն»:

\*\*\*

Դաստիարակութիւնը մեր ժամանակ այնքան կարևոր ու անհրաժեշտ գործ է համարվում, այն աստիճան է իր վրա գրավում քրիստոնյա, լուսավոր աշխարհի ուշադրութիւնը, որ ահագին հատորներ են հրատարակվել ծնողների դյուրութեան համար, և դրանց բոլորի նպատակն այն է, որ ծնողները կարողանան առաքյալի հետ ասել. «Նրանից ավելի ուրիշ ի՞նչ մեծ ուրախութիւն պետք է ունենամ, որ տեսնեմ, թե իմ որդիքս ճշմարտութեամբ, այսինքն՝ Հիսուսի ցույց տված ճանապարհով են գնում այս կյանքում»: Իսկ այդ ճանապարհը գտնելուց առաջ մեզ հարկավոր է իմանալ, թե ծնողներն ինչ միջոցներ, ինչ զգուշութիւններ պետք է ունենան նրանց առաջին, մանկական քայլերն այդ կողմն ուղղելու համար: Մարդս իր մեղանշական բնութեամբ ավելի շարի կողմն է հակված, քան բարու, ինչպես ասում է Սուրբ Գիրքը. «Որովհետև մարդկանց միտքը մանկուց շարի ծառայութեան մեջ է»: Եվ եթե նա սկզբից ընկնի անհոգ ձեռքերի մեջ, ապա պարզ է, որ երբեք չի կարող գտնել քրիստոնյայի համար գծված ճանապարհը: Թեպետ երեխայի այս կամ այն կողմը հակվելու վրա ազդեցութիւն ունեն բոլոր իրեն շրջապատողները, բայց նա ընկնում է ավելի նրա ազդեցութեան տակ, որի ձեռքին ինքը գտնվում է, մանավանդ որի կաթով է սնվում: Այդ պատճառով շատ ցանկալի է, որ նրա մայրը կամ դայակը լինեն զվարթ բնավորութեան տեր, որպեսզի երեխան էլ ուրախ, զվարթ բնավորութիւն ստանա: Իսկ այդպիսի բնավորութիւն ունենալն այն օգուտն ունի, որ երեխան վատ կրքեր ու շար ցանկութիւններ չի ունենում, և Աստված սիրում է այդպիսի մարդկանց, ինչպես ասում է Սուրբ Գիրքը. «Աստված սիրում է ուրախ և առատաձեռն մարդուն»:

Մարդկային բնութիւնը և մարդու սրտի որպիսութիւնը լավ քննած իմաստուններն ասում են, որ զվարթ սիրտ ունեցող երեխանե-

րը թշնամանալու և շարության այնքան ընդունակ չեն, ուստի և նախանձը, ագահությունը, փառասիրությունը, վրեժխնդրությունը, կեղծավորությունը և ուրիշներին վիրավորելու շար ցանկությունը չեն կարող արմատ գցել զվարթ սրտերի մեջ: Զվարթ սիրտ ունեցող երեխաների հետ ծնողները ինչ միջոցներ էլ գործ դնեն, համարյա միշտ և հեշտ կարող են նպատակին հասնել: Ճշմարիտ է, զվարթ երեխաները մի քիչ ավելի վառվռուն բնավորություն են ունենում և ավելի դուրսափոփոխ, մոռացկոտ, անհաստատ ու անհամբեր են լինում, բայց որովհետև դրանք սրտի շարությունից առաջ եկած պակասություններ չեն, ուստի եթե ծնողները մի փոքր ավելի ուշք դարձնեն, հեշտ կարող են ուղղել նրանց, որովհետև զվարթ երեխաներն ավելի դուրսաթեք են: Իսկ եթե նրանք սրտի զվարթությունն արհամարհեն կամ վնասակար համարելով աշխատեն երեխային զրկել իր զվարթ զբաղմունքից, չափազանց հանդարտ պահել և երկար ժամանակ մենակ նստեցնել, դրանով երեխայի սրտում կդնեն պաղտության ու տրամուլթյան հիմքը: Նա կդառնա անհանգիստ ու դժգոհ, ընկերությունից հեռու փախչող և մենակության ու լռության անձնատուր եղող մի մարդ: Երեխային այդպես չդժբախտացնելու համար ծնողները ոչ միայն պետք է աշխատեն նրա զվարթությունը պահպանել, այլև այդպիսի սիրտ չունեցող երեխայի մեջ էլ զվարթություն արթնացնել:

Դրա հոգացողությունը շատ վաղ պետք է սկսել՝ հազիվ երեխան մի քանի շաբաթական դարձած ժամանակից: Ուզո՞ւմ ես երեխայիդ մեջ արմատավորել այդ զվարթությունը, նրա վրա նայի՛ր սիրալիր ժպիտով և կտեսնես, որ դեմքն աշխուժանում է ու փայլում, և քո փաղաքշանքին մի հրաշալի ժպիտով է պատասխանում: Դրան հակառակ՝ մռայլ ու կնճռոտ երեսով նայիր նրան և կնկատես, որ իսկույն հայացքը մռայլվում է, և դիմագծերը՝ կնճռոտվում: Եվ այդպիսի վարմունքի շուտ-շուտ կրկնվելով նա խորամանկ, եսամոլ ու չարահոգի է դառնում:

Կան այնպիսի մարդիկ, որոնք առաջին նայվածքից ուղղակի գրավիչ են դառնում, ասես թե մարդ վաղուց է ճանաչում նրանց:

Այդպիսիները բացսիրտ ու խոնարհ են լինում և ուզում են ամենքին պիտանի լինել: Ինչի՞ց է այդ: Նրանից, որ նրանք մանկությունից հանձնված են եղել մայրական գորովագութ խնամքին, շրջապատված են եղել բարեպաշտ ու համակրելի մարդկանցով, որոնք գուցե շատ էլ բարի զգացմունքներ են սերմանել: Դրան հակառակ՝ կան և այնպիսի մարդիկ, որոնք նրանց սրտում բարի են, բայց առաջին անգամ նայողի մեջ համակրություն չեն շարժում, նրանց նայվածքը սրտից չի բխում, սրտի վրա չի ազդում, գրավիչ չէ: Այդպիսիք իրենց նկատմամբ անտարբերություն, մինչև անգամ արհամարհանք են առաջ բերում: Այդ էլ նրանից է, որ մանկական տարիներին սիրալիր ժպիտները չեն քաղցրացրել նրանց կյանքը: Խիստ վարմունքը, շարունակ հանդիմանությունը և մռայլոտ դեմքերը նրանց մեջ ճնշել են այն ամենը, ինչ որ պետք էր խրախուսել:

Շատ կարևոր է և բնական պահանջ, որ երեխան մեծանա իր մոր գրկում, ոչ թե օտարի: Աշխարհիս երեսին չկա մեկը, որ կարողանա մոր տեղը բռնել: Ստնտուն իր օտարությունը ոչ միայն դաստիարակության գործում երեխային պիտանի ու բարեկամ չէ, այլև վնասակար ու թշնամի, քանի որ նա լուրջ մի վարձկան է, որ չի կարող իր անձը դնել երեխայի վրա, ինչպես անում է հարազատ մայրը: Հարազատ մոր քաղցրահայաց ժպիտները և գորովալիր փայփայանքները բարերար ազդեցություն են ունենում երեխայի վրա, կենդանացնում են նրա ողջ գոյությունը: Իսկ վարձկան ստնտուտի նայվածքը, ժպիտներն ու համբույրները չոր ու ցամաք են, չեն կաշում երեխային, չեն սփոփում նրա վշտերը, նրա մեջ սեր ու գութ չեն ներշնչում, նրան չեն դնում այն հոգեկան վիճակի մեջ, որ միայն մայրը կարող է տալ: Օտարի գգվանքն ու համբույրներն ավելի խանգարում են լավ լավ հատկությունների զարգանալուն, քան թե նպաստում: Կավ հատկություններն ու ընտիր զգացմունքները կարող են աճել միայն քնքուշ մոր հոգացողությունը: Մի խոսքով, եթե երեխան իր մոր գրկում չի մեծացել, դա նրա համար մեծ դժբախտություն է:

\*\*\*

Առաջին զգացումը, որ պետք է առաջ բերել երեխայի մեջ, կրոնական զգացումն է: Այդ զգացումը մարդուս մեջ առաջ է գալիս այն ժամանակ, երբ նա, միտքն իր Ստեղծողի վրա դարձրած, նրա մասին մտածելիս մի ներքին ուրախություն է զգում, սիրով ու հաճություն մեջ է հիշում նրա՝ իր վրա ունեցած հայրական խնամքը և ասես թե միանում է նրա հետ: Այդ զգացումը շատ է հարկավոր մարդուս՝ առաքինի վարք ստանալու և ներքուստ խաղաղ ու հանգիստ մնալու համար: Այդ պատճառով պետք է այդ սուրբ զգացման սերմը որքան կարելի է վաղ ցանել երեխայի մատղաշ արտում, քանի դեռ նրա տեղը մի ուրիշ, ախտավոր զգացում չի զբաղեցրել: Պետք է շտապել, որովհետև առաջին տպավորությունները մյուս բոլոր տպավորություններից երկար են տևում: Մի աման, որի մեջ առաջին անգամ մի հոտավետ բան է դրվել, դրա հոտը երկար ժամանակ բուրում է: Ճշմարիտ քրիստոնյան այն ուրախությունն ու զվարճությունը, որն զգում է կրոնական մտածությունների և աստվածաշատությանը նվիրած թոպեներին, ուրիշ ժամանակ չի կարող զգալ:

Երեխայիդ մեջ այդ սուրբ զգացումը զարթնեցնելու համար մի ամառային փառավոր գիշեր նրան ցույց տուր կապույտ երկնակամարը՝ անթիվ, փայլուն աստղերով, կամ արշալույսից առաջ տար մի ընդարձակ դաշտավայր կամ թե բարձրացրու մի բլրի վրա, նկատել տուր արևը, որը, կամաց-կամաց, ասես թե իրեն ծածկող լեռների տակից դուրս գալով, իր ճառագայթներով կյանք և ուրախություն է սփռում ողջ բնության վրա: Հասկացրու նրան, որ այդ ամենը մի ստեղծող ունի՝ մասամբ նման մեր հոգուն, որ մտածում, դատում և շարժում է մեր անգամները, որին մենք չենք տեսում, սակայն զգում ենք նրա գործերով: Ամբողջ աշխարհի և մեր ստեղծողը նա է, այն գերագույն էակը, որին և անվանում ենք Աստված:

Աստծո մեծության, կարողության և իմաստության մասին երեխային հասկացողություն տալու համար զբոսանքի ժամանակ, դաշտերի ու ձորերի, արոտավայրերի ու անտառների կողմը պտտե-

լիս ծնողները պետք է շարժեն նրա հետաքրքրությունը, ճիշտ տեղեկություններ տան տեսած բաների մասին: Օրինակ՝ մեղուների ու մրջյունների ժրուխտի ու աշխատասիրության, այս կամ այն թռչունի հյուսած բույնի, այս կամ այն ծաղկի գեղեցիկ տեսքի ու ախորժեղի հոտի, ջրի և օդի ուժի մասին և այլն: Տեսնելու է, թե ինչպես է շարժվում նրա սիրտը, ինչպես է հիացած ու ապշած՝ սկսում սիրել ու երկրպագել այդ բոլորի Ստեղծողին:

Նրան պետք է հասկացնել ճշմարիտ քրիստոնյայի պարտքերը, որոնք պարզ արձանագրված են Ավետարանի յուրաքանչյուր տողում: Պետք է աշխատել, որ նա սովորի քիչ-քիչ գործադրել ավետարանական կանոնները՝ «Պատվի՛ր քո հորն ու մորը, սիրի՛ր ոչ միայն բարեկամիդ, այլև թշնամուդ, ուրիշների հանցանքները միշտ ների՛ր, ով քեզանից բան խնդրի, տո՛ւր, ինչ ուզում ես, որ ուրիշները քեզ անեն, դու էլ այն արա նրանց, ուրիշների գայթակղության պատճառ մի՛ դառնա, խոնարհեցրո՛ւ քեզ, որ բարձրանաս»:

\*\*\*

Բնությունն ինքը պարզ է, և ամեն բանում պարզությունն է սիրելի: Այդ պատճառով թե՛ աղքատիկ խրճիթում և թե՛ հոյակապ պալատում ծնված երեխան ուղղակի առաջին օրերից պետք է ընտելանա պարզ կյանքին: Պարզ մեծացած մարդը մարմնով ու հոգով առողջ ու զորեղ է լինում, նա փափուկ ապրած մարդկանց պես ամեն կողմից չի շարժվում, այլ հաստատ է ու պինդ, ինչպես հաստաբուն կաղնին: Բայց մեզանում երեխային նույնիսկ ծնված օրից շրջապատում են ամեն տեսակ քնքշություններով, նորածնին փաթաթում են կակուղ, մետաքսյա թանկագին լաթերի ու վերմակների մեջ և պառկեցնում աղվամազի ու բամբակի վրա, և ամենքը, ըստ կարողության, աշխատում են մանկական սենյակը, մահճակալը կամ օրորոցը դարձնել փափկության մի դրախտ: Բայց Պողոս առաքյալն ասում է. «Որ սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձեսցէ ապականութիւն», որովհետև ինչպես փափուկ զգեստից ցեց է գոյա-

նում և փչացնում զգեստը, այդպես էլ փափկասուն մարմնից ծնվում են զզվելի մոլուխյուններ և ապականում հոգին:

Սակայն հին հույները պարզ կյանքի օգտակարության վրա այնպես չէին նայում, ինչպես մեր ծնողները: Տերությունը պետք է կազմված լիներ միայն առողջ և ուժեղ մարդկանցից, այդ պատճառով ծնողներն իրենց նորածին երեխաներին ուղարկում էին կառավարությանը, որտեղ նրանց քննում էին և առողջակազմներին վերավարձնում էին ծնողներին, իսկ թուլերին ուղղակի ծովը զցում: Երեխաները ծնողների մոտ էին մնում մինչև յոթ տարեկան դառնալը: Տանը նրանց մեծացնում էին պարզ և շարքաշ կյանքի վարժեցնելու համար, պահում էին կիսամերկ ու քնեցնում եղեգի կոշտ անկողնու վրա: Յոթնամյա դառնալով նրանք պատկանում էին տերությանը, որը նրանց վրա խիստ հսկողություն էր սահմանում: Նրանց սովորեցնում էին դիմանալ քաղցին ու ծարավին, ցրտին ու շոգին, մինչև անգամ ցավերին ու տանջանքներին: Տարին մեկ անգամ ծնողների ներկայությամբ նրանց ծեծում էին, իսկ ծնողները, փոխանակ մորմոքվելու այդ տեսարանից, նրանց խրատում էին անտրտունջ դիմանալ: Այդ ժամանակ լաց լինելը մեծ ամոթ էր համարվում, այնպես որ շատ երեխաներ ծեծից մեռնում էին՝ առանց մի ձայն հանելու: Պարզ կյանքին ընտելանում էին նաև փիլիսոփաները, որոնցից Կրատես անունով մեկը, թեպետ անվանի ազնվական տոհմից էր, ամուսնը հաստ վերարկու էր հագնում, ձմռանը՝ բարակ: Իսկ Դիոգինեսն ամառ-ձմեռ հագնվում էր թեթև, ման էր գալիս բոբիկ և արձանների մոտով անցնելիս բաց կուրծքը քսում էր նրանց պղնձյա ու մարմարյա սառը պատվանդաններին: Նաև աշխատում էր, որ իր խնամքին հանձնված երեխաները չսովորեն ընտիր կերակուրներին, թանկագին հագուստներին, կակուղ անկողնուն ու քաղցր քնելուն:

Մեզանում շատ են սիրում քնքշացնել երեխաներին, որոնց հագցնում են թանկագին հագուստներ, բայց որոնք ծնողների անհոգությունից վերջը սրիկաների թիվն են շատացնում: «Ով փափկասուն է լինում մանկուց, — ասում է Սողոմոնը, — պիտի ծառա

դառնա», որը և կեստ առ կեստ կատարվում է ժամանակին: Իսկ Մարկոս Ավրելիոս կայսրն այդպես չէր մտածում: «Ես ավելի հանգիստ ու ապահով կլինեմ,– ասում է,– եթե իմ որդիներն սկզբում լինեն իբրև գռեհիկ և վերջում իբրև հարուստ կայսեր որդիներ, քան թե սկզբում լինեն իբրև հարուստ կայսր, իսկ հետո ապրեն իբրև աղքատ զինվորներ: Իտալիան իսկապես այն պատճառով ավերվեց, որ իտալացիք իրենց որդիներին մեծացնում են ոչ թե աշխատանքի ու նեղությունների մեջ, այլ փափկությունների մեջ»: Իր աղջկա մասին նա ասում է. «Դայակները նրան երկու տարի կաթ տվեցին, դարձյալ մի երկու տարի էլ մայրը, անօգուտ փափկություններ, իսկ ես, իբրև բարի հայր, կամենում եմ պատիժներ տալ քսան տարի»: Հերոդոտոս անունով մի շատ նշանավոր հույն պատմում է, թե պատերազմի դաշտում քննություններ անելիս նկատել է, որ պարսիկների գլուխների գանգերը շատ հեշտ էին ջարդվում, այնինչ եգիպտացիներինը քարից անգամ պինդ էին: Դա մի հայտնի ապացույց է, որ պարսիկները փափուկ կյանք են վարել, իսկ եգիպտացիք՝ պարզ կյանք:

\*\*\*

Փափկասեր կյանքի տված մի մեծ վնասն էլ երկչոտությունն է: Երեխան բնականապես համարձակ է ու անվեհեր: Դա պարզ երևում է ամեն անգամ, երբ նա, ուշք չդարձնելով ոտքը կոտրելուն, գլուխը ջարդելուն, ամեն բան ոտքի տակ է տալիս իր իրավունքները ձեռք բերելու, իր իրավունքները գործադրելու համար: Բայց ծնողներն ասես գիտակցելով երկյուղ են գցում երեխայի սիրտը, որն աշխարհ է եկել «երկրին տիրելու և իշխելու»: Սակայն երկչոտ մարդը ոչ միայն չի կարողանում տիրել ու իշխել, այլև իր պարանոցը սիրով դնում է օտարի լծի տակ և հոժարությամբ ստրկանում՝ թողնելով իր ազատ ոգին: Երեխայի սիրտը երկյուղ գցելու ուղղությամբ մեծ խնամքով աշխատում են մանավանդ մայրերը, որոնք նրա օրորոցը շրջապատում են երկյուղով ու սարսափներով: Երեխային քնեցնելիս ինչ երկյուղ ազդող գազանի անունով ասես որ չեն սպառնում խեղճին, իսկ երևա-



կայությունը գործելու միջոցին հեքիաթներում էլ յոթգլխանի դևեր, պոչավոր սատանաներ ու քաջքեր չեն մնում, որոնցով չցցեն նրա ուղեղը: Բայց ահ ու դողի մեջ մեծացած երեխայից ի՞նչ պետք է սպասել, եթե ոչ մի երկչոտ տղամարդ, որ արժանի իսկ չէ տղամարդ կոչվելու: Երկչոտ մարդու քայլերն անհաստատ են, գործերը՝ անվստահ: Այդպիսի մարդը քաշվում է հասարակության մեջ ազատ, համարձակ շարժվելուց, սեփական կարծիքը հայտնելուց՝ կարծելով, թե իրեն կծաղրեն: Քաշվում է մի առևտրական գործի մեջ մտնելուց՝ վախենալով, որ վնասվի և այլն:

Այդ կողմից աննման էին հույն մայրերը: Նրանք, փոխանակ մերոնց պես երեխայի մեջ սպանիչ երկյուղ ներշնչելու, օրորոցի մոտ իրենց մանկիկներին ականջին նրանց պապերի ու նախնյաց քաջություններն էին պատմում: Հույն մոր համար մեծ ամոթ էր համարվում երկչոտ որդի ունենալը, և եթե այդպիսի մեկը փախչում էր պատերազմի դաշտից, մայրը սուգ էր մտնում և տնից դուրս չէր գնում, որ ուրիշ մայրերի չերևա: Մի անգամ մի հույն երիտասարդ պատերազմի դաշտից փախել, տուն էր վազել և մորը պատմել, թե իր ընկերներն այնտեղ մեռան: Մայրը քարը վերցրեց և նետեց որդու վրա՝ ասելով. «Թշվառական, բոթաբե՞ր ես եկել գլխիս»: Մի ուրիշ կին որդուն պատերազմ ուղարկելիս մի վահան տվեց ու ասաց. «Կա՛մ վահանը ձեռքիդ, կա՛մ վահանիդ վրա», այսինքն՝ կա՛մ պետք է հաղթես, քաջի պես վահանը ձեռքիդ գաս, կա՛մ քաջությամբ մեռնես, որ վահանիդ վրա բերեն քեզ: Մեկ ուրիշ կին, լսելով, որ որդին մեռավ պատերազմում, իսկույն հարցրեց. «Արդո՞ք իբրև հաղթո՞ղ մեռավ», և երբ ասացին՝ Այո՛, ասաց. «Հենց դրա համար ծնեցի, որ մեռնի հայրենիքի համար»: Երբ մի այլ կնոջ հայտնեցին, որ որդին մեռավ պատերազմում, ձայն տվեց. «Նղբորը կանչեցե՛ք, տեղը կանգնի»:

Եթե երեխային հարկավոր է երկյուղ ազդել, ապա նրան պետք է սովորեցնել միայն Աստծո երկյուղը: «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»,— ասում է իմաստուն Սողոմոնը: «Ով,— ասում է,— ուզում է իմաստուն լինել, նա ամենից առաջ պետք է ու-

նենա Աստծո երկյուղը»։ Ինչո՞ւ։ Սարգիս Շնորհալին պատասխանում է. «Իմաստության մայրը Աստծո երկյուղն է, իսկ որդիները՝ բուրբ առաքինությունները»։ Իսկ մի նշանավոր մարդ ասում է. «Ես վախենում եմ միայն Աստծուց, մեկ էլ այն մարդուց, որ չի վախենում նրանից»։ Եվ Աստծո երկյուղ ասելով պետք է հասկանալ աստվածսիրություն, որովհետև ով սիրում է Աստծուն, վախենում է նրանից։ Աստվածավախ մարդու վրա դարձրած է Աստծո աչքը՝ վրան հսկելու, ուղղված է նրա ականջը՝ խնդրածը լսելու։ «Ուր Տիրոջ երկյուղն է,– ասում է սբ. Բարսեղ հայրապետը,– այնտեղ պատվիրանների պահպանությունն է, և ուր պատվիրանների պահպանությունն է, այնտեղ ոչ մի հանցանք չի կարող լինել»։ Այսինքն՝ ով Աստծո երկյուղն ունենալով սիրում է նրան, հավիտենական կյանք է պատրաստում իր համար, ինչպես ավելացնում է Սուրբ Գիրքը. «Տիրոջ երկյուղը կյանքի աղբիւր է»։

\*\*\*

Փափկասեր կյանքի տված մյուս մեծ վնասն էլ անգործությունը, ծուլությունն է։ Անգործ մարդու միտքն ու սիրտը միայն շար մտքեր ու շար ցանկություններ կարող է ծնել։ Այդ պատճառով իմաստունի մեկն ասում է. «Անգործ մարդը սատանայի գործարան է, և ծուլը՝ դժոխքի սյուներից մեկը»։ Մեզանում փողոցներն ու զբոսավայրերը լիքն են պարապ տղաներով ու սրիկաներով, իսկ Խտալիայի մայրաքաղաք Հռոմում օրենքով տասը տարեկան պարապ տղային պատժում էին, և եթե մի հանցանք էր գործում, հորն էլ հետն էին պատժում։

Չափազանց անգործությունը մի վնասակար ժանգ է, որ փչացնում է մեր բոլոր պատվական ձիրքերը, խեղդում է առաքինության հոռետերը<sup>1</sup> և ծնում է բազմաթիվ մոլություններ՝ նման այն անմշակ արտերի, որոնք միայն փուշ ու տատասկ են աճեցնում։ Անգործութ-

---

<sup>1</sup> Սերմեր։

յամբ չէ՞ր, որ Դավիթը, որին Աստված անվանում է «ըստ սրտի իմոյ»<sup>1</sup> թագավոր, մեկ ընդհանուր առաքինությունը կորցրեց և մեծ հանցանքով մեղանշեց: Մարգարեն շնության մեջ էր, մարգարիտը՝ աղբի մեջ: Բայց չէր գգում, թե մեղանշել է, որովհետև երբ կառուպանը խմած է, կառքը որ կողմն ուզում է, գնում է, այդպես էլ հոգին ու մարմինն են: Եթե հոգին թմրում է, մարմինը տիղմի մեջ է թավալվում: Մինչդեռ նրա գորավարները դրսում պատերազմ էին մղում, ինքն իր սրտի մեջ մեկ անպարտելի թշնամու հանդիպեց: Եվ երբ գորքերը քաղաքներ էին առնում, Դավիթը, իր պալատում մեկ անգգույշ նայվածքից հաղթված, կորցրեց իր անմեղությունն ու փառքը:

Հակոբոս առաքյալն ասում է. «Ով մարմնով շարչարվում է, դադարում է մեղանշելուց»<sup>1</sup>, այսինքն՝ աշխատասեր մարդը մեղքի մեջ չի ընկնի: Որովհետև Սարգիս Շնորհալիս ասում է. «Ամեն տեսակ մեղքերի բազմությունը ծովությունից է, որ մտնում է մարդու մեջ, և մանավանդ մարմնի գիրությունից, որովհետև երբ մարմինն սկսում է փափկանալ, հանգիստ վայելել և մտքի ուզածի պես շրջել, այն ժամանակ էլ մի մեղք կամ ախտավոր կիրք չկա, որ նրանից չծնվի: Անգործությունը մայրն է ամենայն թշվառություն»:

Հռոմի քաղաքացիներից ոչ ոք չէր կարող քաղաքի փողոցներում շրջել առանց ձեռքին իր պարապմունքի նշանն ունենալու, որով պետք է հասկացվեր, որ նա կառավարվում է ոչ թե ուրիշների քրտինքի գնով, այլ իր ձեռքի աշխատանքով: Այդ օրենքը հավասարապես պարտադիր էր ամենքի համար: Կայսրն իր առջևով մի վառված շահ էր տանում, պալատականը՝ մի կացին, քահանան՝ մի սաղավարտ, դատավորը՝ մի գավազան, փաստաբանը՝ մի գիրք, զինվորը՝ մի սուր, դարբինը՝ մի մուրճ և այլն:

Հունաց խաղերի ժամանակ մի փիլիսոփա ինչ որ հագած ուներ՝ վերարկուն, շապիկը, գլխարկը, կոշիկները, ձեռքի գիրքը, բոլորն իր ձեռքով էր կարել ու պատրաստել: Երբ տեսնողները զարմանքով

---

<sup>1</sup> Մեջբերումը Պետրոս առաքյալի թղթից է /Ա Պետ. 4 /1/ (ծնթ. խմբ.):

հարցրին, թե նա որտե՞ղ է սովորել այդքան տեսակ-տեսակ արվեստներ, պատասխանեց. «Մարդկային ծուլությունը պատճառ եղավ, որ մի արվեստ բաժանվեց մի քանի մասերի, որովհետև այն, ինչ որ հիմա գիտեն ամենքը միասին, պետք է իմանար ամեն մեկն առանձին»:

Սակայն, ինչքան էլ որդին լավ մեծանա, խելք ու շնորհք ստանա, եթե բարձր անարատություն չունենա, եթե բարոյական մարդ չլինի, նրա ամբողջ իմաստությունն ու շնորհքը կորցնում են իրենց արժեքը:

Բարոյականությունն ամեն ազգի պատիվն ու զորությունն է: Այդ պատճառով Մարկոս Ավրելիոսը, գանգատելով անբարոյականացած Հռոմից, ասում է. «Երեք տարում կարողացա նորոգել սրա բոլոր ավերված շենքերը, բայց երեսուն տարում չկարողացա ուղղել սրա մեկ թաղի բարքը: Էտնա հրաբուխը սիցիլիացիներին այնքան չի վնասում, որքան մի անհամեստ կին՝ հռոմեացիներին: Ո՛վ Հռոմ, չեմ ողբում վրագ, որ պալատներդ ավերվել են, պարիսպդ փլվել է, անտառներդ այրվել, բնակիչներդ քչացել են, այլ ողբում եմ և կրկին ողբում՝ տեսնելով քեզ՝ քո հայրերի առաքինությունից, քո մայրերի դաստիարակությունից գուրկ: Կորավ, կործանվեց մեր հայրենիքը, երբ մեր որդիների դաստիարակությունը պակասեց, տղաները լրբացան, աղջիկներն ամոթխածությունը մի կողմ դրին, և մայրերն անպարկեշտ դարձան»:

Իսկ մեր ժամանակի Ֆրանսիայի հարազատ մտածող գավակը\*, տեսնելով նախկին հզոր ու փառավոր Ֆրանսիայի անկումը, որ գլխավորապես առաջ է եկել բարքերի ապականվելուց, տեսնելով հայրենիքին սպառնացող վտանգը, նոր մարդիկ ու նոր բարքեր է փնտրում՝ ձայն տալով. «Ինչպե՞ս կցանկանայի, որ կազմվեր առաքինի մարդկանց և առաքինի կանանց մի նոր հասարակություն»:

Բարքերի ապականությունը, բացի անգործությունից, առաջ է գալիս նաև աչքի առաջ ունեցած վատ օրինակներից: Շատ անգամ

---

\* Էմիլ Զոլա:

ընկերները, ծառաները մի ժամվա մեջ փչանալու կամ կորչելու պատճառ են դառնում այն բարիքի, որը երեխայի սրտում տնկելու համար մի քանի տարվա աշխատանք է պետք եղել, և նրա տեղը մի այնպիսի որոմ են ցանում, որ ո՛չ ժամանակը, ո՛չ աշխատանքը չեն կարող դուրս հանել, ջնջել: Բարքերի ապականությունն առաջ է գալիս նաև ծնողների անխոհեմ, անզգույշ վարվելուց: Երեխան ամբողջովին կայանում, կազմվում է նրանից, ինչ որ նրան են տալիս տունը և ուսումնարանը: Մենք շատ անգամ երեխային պատժելով հարցնում ենք. «Ինչպե՞ս համարձակվեցիր այդպես անել»: Եթե երեխան կարողանար մեզ պատասխանել, անպատճառ կասեր. «Այդ բանը ես քեզ մոտ եմ նկատել, հայրի՛կ, բայց դու մոռացել ես, իսկ ես մտքումս պահել էի և հիմա նույնը կրկնեցի՝ չիմանալով, որ արածս վատ բան է»:

Երեխաները ծնողների մոտ նկատած բանն այդպես հիշում են ամբողջ կյանքում, ուստի նրանք շատ զգույշ պետք է լինեն: Բայց շատ ծնողներ իրենց անվայել արարքներ են թույլ տալիս որդիների ներկայությունը՝ մոռանալով, որ ամեն մի անզգույշ շարժում, ամեն մի անհամեստ խոսք մի սև բիծ է գոյացնում երեխայի մաքուր, անարատ սրտի վրա: Խոսք են բաց անում ամուսնություն մասին, զանազան անցքեր են պատմում այս ու այն բարեկամի կամ ծանոթի ամուսնական կյանքից, քննում ու քննադատում են նրանց ընթացքը, խոսում են իրարից սառելու, այլոց հետ կապեր հաստատելու մասին, զավակների առաջ այնպիսի բաներ են հանդես բերում, որոնց մասին նրանք շատ ուշ պետք է հասկացողություն կազմեին, և այդպիսով ժամանակից առաջ բաց են անում նրանց միտքը, կայծ են գցում նրանց սիրտը, որ, հետզհետե աճելով, բորբոքվում է ներսում: Այնուհետև պակասը լրացնում են ընկերները: Իսկ մատողաշ օրիորդները, փոխանակ իրենց մոր ծնկի տակ մեծանալու, հայրերի անհոգությունից և մայրերի փափուկ պահելուց թողնում են արդար աշխատանքը և անում են անարդար զբոսանքներ՝ անձնատուր լինելով անվայել մտածմունքների և աչք տնկելով անպարկեշտ տեսարան-

ների վրա: Ուստի զարմանալի չէ, որ շատ այդպիսիները վերջը «մուր են քսում» ծնողական տան վրա:

Եվ որովհետև մարդն իր հասարակության և առհասարակ մարդկային ընկերության մի անդամն է, որի հետ կապված է կյանքի այլևայլ հանգամանքներով, այդ պատճառով պետք է իմանա նաև ամենքի հետ օրինավոր վարվելու և իրեն ուրիշների մեջ կառավարելու կերպը, ուրիշ խոսքով՝ պետք է ունենա քաղաքավարություն: Բարոյականությունը մարդուն սովորեցնում է, թե ինչ պետք է անել, իսկ քաղաքավարությունը, թե ինչպես պետք է անել:

Քաղաքավարությունը փափուկ զգացմունքների և ընդհանուրի բարին սիրելու արտահայտությունն է, այն նշանը, որ ավելացնում է մարդուն առաքինության հարզը՝ մեր գործերը մեր խոսքերի հետ այնպես համաձայնեցնելով, որ ոչ ոք չվիրավորվի իր զգացմունքների մեջ: Քաղաքավարությունը մի պարտք է, որ մեզ ստիպում է ծառայություն մատուցել ուրիշներին և զգայուն լինել ուրիշներից ստացած նույնիսկ ամենափոքր ծառայության համար: Քաղաքավարությունը հաճելի է դարձնում ընկերական կյանքը և միմյանց հետ համաձայնեցնում այն ամենը, ինչ որ պարտավոր ենք անել ուրիշներին և մեզ: Քաղաքավարությունը, իբրև ընկերության կապ, այնքան մեծ ազդեցություն ունի, որ փրկի սոփաներն անգամ զբաղվեցին դրանով: Նրանք միաձայն հաստատում են, որ առանց քաղաքավարության մարդիկ միայն կովելու համար պետք է հավաքվեին: Ուրեմն կա՛մ պետք է առանձին ապրել, կա՛մ քաղաքավարի լինել:

Ինչ որ շնորհքն է դեմքի համար, նույնն էլ քաղաքավարությունն է մտքի համար: Անկիրթ, անքաղաքավարի մարդու վրա առաքինությունը մի թանկագին քար է, որ, լավ դրված չլինելով, կորցնում է իր փայլի ամենամեծ մասը: Քաղաքավարությունը կրթված մարդու կնիքն է, առաքինության համեստությունը, պարկեշտության փայլը և ընկերական կյանքի ազն ու անհրաժեշտ պայմանը:

\*\*\*

Ճշմարիտ է, ծնողների սրբազան պարտքն է խրատել իրենց որդուն, բայց իրենց կենդանի օրինակն ավելի շատ բան է սովորեցնում, քան անվերջ խրատներն ու հորդորները: Խոսքը ձայն է, գործերը՝ որոտմունք: Ծնողներն այն կաղապարն են, որի վրա կերպարանվում է զավակների դյուրաթեք բնությունը: Նրանցից է կախված զավակներին՝ մարդ կամ անասուն դառնալը: Բայց եթե հայրը որդուն է խրատում դասերը պատրաստել, իսկ ինքը կլուբ է շտապում կամ գինետունը, եթե նրան հորդորում է ազնիվ լինել, իսկ ինքը հայտնի խարդախի մեկն է, եթե խրատում է, որ նա իր եղբոր ու քրոջ հետ սիրով վարվի, իսկ ինքը միշտ ծեծում է իր կնոջը, նա այդպիսով մի ձեռքով կառուցում է, մյուսով քանդում, որովհետև լավ խրատել, բայց վատ ապրել, նշանակում է ինքն իրեն դատապարտել: Մարկոս Ավրելիոսը, իր որդուն հանձնելով 14 իմաստունի դաստիարակությանը, ասաց նրանց. «Տալով ձեզ իմ որդուն՝ ես տալիս եմ ձեզ իմ թագավորութունից ավելի: Տվե՛ք որդուս բարի օրինակ, որ ավելի օգտակար է նրան, քան շատ ուսումը»:

Մատթեոս ավետարանիչն ասում է. «Հիսուս սկսեց անել և ուսուցանել»<sup>1</sup>: Ինքը՝ Հիսուս, ասում է. «Իսկ ով կկատարի և կուսուցանի, երկնքի արքայություն մեջ նա մեծ կհամարվի»: Ուրեմն եթե ծնողներն ուզում են լավ դաստիարակված որդի ունենալ, ինչ որ խրատում են, այն իրենք գործերով պետք է կատարեն: Կավ դաստիարակված որդին ավելի լավ է, քան թե տարին եկամտի վրա 20 կամ 50 հազար ավելանալը: Եվ մի հայր, որ մեռնելիս թողնում է խեղճ, բայց իմաստուն որդի, թողնում է հարուստ որդի, իսկ նա, որ թողնում է հարուստ, բայց անկիրթ որդի, թողնում է աղքատ որդի: Եթե իմաստունը բախտի զանազան բերումներում սահում է, պինդ է բռնում իրեն, որ չընկնի, իսկ տգետը, թեպետ փոքր բաներում անգամ չի էլ սահում, սակայն ընկնում է: Այդ պատճառով Հովհաննես

---

<sup>1</sup> Մեքբերունը Գործք Առաքելոցից է /1. 1/ (ծմբ. խմբ.):

առաքյալն ասում է. «Նրանից ավելի ի՛նչ մեծ ուրախություն պետք է ունենամ, որ լսեմ, թե իմ որդիները ճշմարտությունամբ, այսինքն՝ առաքինությունամբ են կյանք վարում, հավիտենական օթևաններում տեղ պատրաստում»:

## ԲԱՆ Գ

«Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հաիվտենական կյանքի համար»:

(Յովհ. ԺԲ:25)

Ամեն օր աչքներիս առաջ մեռելների դիակներ ենք տեսնում, որոնք մեզ՝ մահը մոռացածներս, համոզում են մի հայացք գցել մահվան վրա: Ինքներս էլ մեռնողների այդ բազմության մեջ ենք, բայց ոչ մի բանի մասին այնքան քիչ չենք մտածում, որքան մահվան մասին, և որովհետև ոչ մի բան այնքան շուտ-շուտ չենք տեսնում, որքան մահը, ուստիև այնպես շուտ չենք մոռանում, ինչպես մահը: Սակայն եթե աշխարհումս օրենք չլիներ, եթե եկեղեցում Ավետարան չլիներ, եթե սրտներս մեջ խիղճ չլիներ, բավական էր միայն, որ մի հայացք գցեինք մարդու անշնչացած դիակի վրա, որ իմանայինք, թե աշխարհումս մեր առաջին և գլխավոր մտածելու բանը ոչ թե լավ ուտել-խմելն է, այլ մահն է միայն:

Իրան հակառակ՝ մեզանում մարդիկ մտածում են. «Եղբայր, ուտենք, խմենք, շատ հոգսերի ետևից չընկնենք, առանց դրան էլ կյանքը կարճ է»:

Այսպես մտածողներն Ստեղծողին մեղադրում են ժլատության մեջ, իբր թե կարճօրյա է ստեղծել մարդուս: Այո՛, մարդուս կյանքը շատ կարճ է, բայց մարմնասերների և ոչ թե հոգեսերների համար: Իսկապես, ոչ թե Աստված ժլատ է, այլ մարդս է շուտյ. մենք ժամանակը վատնում ենք, ոչ թե գործածում: Ժամանակը վատնելով՝ ցույց ենք տալիս, որ մենք կանք, գոյություն ունենք, իսկ



ժամանակը գործածելով ցույց ենք տալիս, որ ապրում ենք: Ժամանակ վատնելը գոյություն է, ժամանակ գործածելը՝ կյանք: Մագերի ճերմակելը, երեսի խորշոմները, ճակատի կնճիռները դեռ ապացույց չեն, որ մարդս շատ է ապրել: «Այդպիսին,– ասում է իմաստունը,– ոչ թե շատ է ապրել, այլ շատ է կացել»: Մեր անցկացրած կյանքը կյանքի մի փոքրիկ մասն է միայն, մնացած մեծ մասը ժամանակ է, ոչ թե կյանք:

Մեր կյանքը շատ երկար է, եթե վարենք ինչպես հարկն է, իսկ երբ անհոգության և զեխության մեջ ենք անցկացնում, մահվան եկած ժամանակ, որի մասին ոչինչ չէինք մտածել, տեսնում ենք, որ մեր կյանքն անցել է: Ուրեմն մեզ ոչ թե կարճ կյանք է տված, այլ ինքներս ենք կարճացնում մեր կյանքը, ոչ թե քիչ ժամանակ ունենք, այլ ժամանակն ենք վատնում: Ինչպես որ մի մեծ գումար անպիտան մարդու ձեռքին կարճ ժամանակում վատնվում է, իսկ օրինավոր մարդու ձեռքին՝ աճում, այնպես էլ մեր կյանքն աճում է ու երկարում, եթե վարում ենք ինչպես հարկն է: Հիրավի, կյանքն ինչպես կարող է երկար թվալ հեշտասեր, անառակ մարդուն, որը ցերեկը կորցնում է մտածելով, որ գիշերը շուտ կհասնի, գիշերը կորցնում է վախենալով, որ լույսը շուտ կբացվի: Ուստի այդպիսի ողորմելին, անպատրաստ գտնվելով մահվան համար, անակնկալ կերպով ընկնում է նրա ճանկը: Վերջապես ի՞նչ նշանակություն ունի երկար կյանքը, երբ մենք այնպես սակավ ենք օգտվում նրանից՝ մեզ ուղղելու համար: Ավա՛ղ, երկար կյանքը մեզ փրկելու փոխարեն մեղքերի բեռն է դիզում մեզ վրա: Թող մեկ օր ապրենք, բայց լավ ապրենք. նա է երկար ապրել, ով առաքինությամբ է ապրել, ով քրիստոնեաբար է ապրել:

Տեսնենք՝ հին փիլիսոփաներն ինչ են ասում մահվան մասին: Արիստոտելն ասում է. «Ճշմարիտ փիլիսոփայությունը մահվան մասին մտածելն է»: Ուզում է ասել, եթե այնքան իմաստուն լինես, որ երկնքի աստղերը համբես, ծովերի խորքը քննես, բայց մահն աչքիդ առաջ չունենալով՝ կյանքդ չկարգավորես, հետին գյուղացուց ան-

գամ տգետ ես: Պլատոնը ձայն է տալիս. «Մարդ ինչքան շատ մտածի մահվան մասին, այնքան ավելի իմաստուն կլինի»: Ինչո՞ւ, որովհետև Սուրբ Գիրքն ասում է. «Հիշի՛ր վերջդ և հավիտյան չես մեղանչի»: «Մահը մի խաղ է, որի մեջ եթե խաղացողները զգաստ լինեն, քիչ կվնասվեն և շատ կշահվեն», – ասում է մի իմաստուն:

Բայց ի՞նչ են ասում նրա մասին սրբերը: Մեկը ձայն է տալիս. «Ո՛վ փափագելի մահ, տառապանքի վե՛րջ, հանգստյան սկի՛զբ, ո՞վ է քեզ շուգողը»: Մյուսը, թե. «Կյանքիս վերջ տալով՝ վերջ եմ տալիս Աստծուն վշտացնելու»: Երրորդը, իր տան մեջ մի նկար տեսնելով, որի մեջ պատկերված էր մեռելի կմախք՝ ձեռքին մանգաղ՝ հասկացնելու համար, թե մահը մարդիկ է հնձում, կանչեց մի նկարչի և հրամայեց, որ մանգաղը ջնջի և տեղը մի ոսկի բանալի պատկերի, որով ուզում էր ավելի վառվել մահվան սիրով, որովհետև մահն է, որ կարող է մեր առջև բանալ արքայության դուռը՝ Աստծուն տեսնելու: Աստծուն տեսնելու փափագն էր, որ աստվածազգյաց սուրբ Իգնատիոսին ասել տվեց. «Եթե գազանները հրաժարվեն կյանքս խլելուց, ես պետք է գրգռեմ նրանց, որ լափեն ինձ»:

Իսկ մենք՝ աշխարհասեր մարդիկս, մահվան անունն անգամ չենք ուզում լսել, թեպետ հաստատ համոզված ենք, որ նա ծեծելու է ամեն մեկիս դուռը: Մեր ամեն բարիքն ու շարիքն անստույգ են, մահն է միայն ստույգ: Անդիմադրելի է մահը. կարելի է կրակին, ջրին և սրին դեմ կանգնել, թագավորներին անգամ հակառակվել, բայց երբ մահը մոտենում է, ո՞վ կարող է նրան հակառակվել: Ֆրանսիայի թագավորներից մեկը կյանքի վերջին րոպեներին ասում էր. «Իմ բոլոր իշխանությամբ չեմ կարողանում հրամայել, որ մահը մի ժամ էլ սպասի ինձ»: Ամենքս էլ, երբ ծնվում ենք, մեր վզներին մի չվան է անցկացվում, և որքան ոտք ենք փոխում, այնքան մահին ենք մոտենում: Այս տողը գրելիս անգամ կյանքիցս մի մաս է վերցվում, և ես դեպի մահն եմ վազում: Ինչպես մեկ օր ծնվածների ցանկում պետք է գրվենք, այնպես էլ մեկ օր մեռելուց ցանկում պետք է գրվենք: Այս միտքը լավ հասկացնելու համար մի եպիսկոպոս մի մե-

ուելի գանգի վրա այսպես էր գրել տվել. «Ինչ որ դու ես, ես էլ էի, ինչ որ ես եմ, դու էլ պետք է լինես»:

Հին ժամանակների մտածող մարդիկ շատ լավ էին հասկացել մահվան նշանակությունը և գիտեին, որ մեր կյանքը կանոնավորելու և ամեն բան դեպի վերջին նպատակն իմաստնաբար ուղղելու համար մահից լավ խրատ, լավ խորհուրդ չենք կարող ունենալ, ուստի ոչ միայն հասարակ մահկանացուները, այլև թագավորներն անգամ մահն աչքի առաջ ունենալու մտքով մի-մի կանոն էին սահմանել իրենց համար: Այսպես, հունաց Փիլիպպոս թագավորն իր սպասավորներից մեկին հրամայել էր, որ ամեն առավոտ իր մոտ երեք անգամ կրկնի. «Հիշի՛ր, Փիլիպպո՛ս, որ դու մարդ ես և մեռնելուդ ժամանակ ամեն բան թողնելու ես այստեղ»:

Մաքսիմիանոս կայսրը մեռնելուց շորս տարի առաջ մի դագաղ շինել տվեց, որն ուր գնում էր, հետն էր տանում՝ լսելու նրա անբարբառ խոսքը, թե. «Մտածի՛ր, որ մեռնելու ես»: Արևելյան վեհապետերն իրենց կայսերական նշանների հետ ձախ ձեռքին կրում էին ոսկե թերթերով մի մատյան՝ հողով լցրած, որ օրինակով ցույց տան իրենց մահկանացու լինելը և այն վճիռը, թե. «Որովհետև հող էիր և հող էլ կգառնաս»:

Մի խոհեմ երիտասարդ, կամենալով իր վարքը կանոնավորելու համար մի զորավոր միջոց գտնել, գնաց մի իմաստունից խորհուրդ հարցնելու: Նա պատասխանեց. «Գնա՛ գերեզմանները, մեռելներին հարցրո՛ւ և նրանցից սովորի՛ր, որովհետև երբ տեսնես, որ մեռելներն այլևս այն շունեն, ինչ որ ունեին, և թե իրենց կյանքով վերջացան իրենց բոլոր երջանկությունները, այդ ժամանակ կսովորես արհամարհել ունեցածներդ և ամենևին չնպարտանալ դրանցով»: Այդ պատճառով փիլիսոփաներից ոմանք մեռելների գանգից էին ուտում-խմում՝ միշտ հիշելու, որ իրենք էլ մեռնելու են: Մի խոսքով՝ բոլոր փիլիսոփաները համաձայն են այն մտքի հետ, որ ողջ փիլիսոփայությունն այլ բան չէ, քան մտածմունք մահվան մասին: Իտալիացի Իգաբելլա կայսրուհու թաղման ժամանակ, երբ նրա դա-

գաղը բաց արին, երկյուղից ու գարշահոտությունից ամենքը փախան: Իսկ նրա մերձավոր պալատականներից մեկը կանգնեց և խոր մտածմունքով նայելով ասաց. «Ուրեմն դու իմ կայսրուհի՞ն ես. դու ա՛յն ես, որի առաջ այնքան մեծամեծներ ի նշան հարգանաց ծուներ էին դնում: Ո՛վ Իզաբելլա թագուհի, ո՞ւր է քո այնչափ փառավորությունը, գեղեցկությունը: Ուրեմն այսպե՛ս են վերջանում աշխարհիս մեծություններն ու թագերը: Եթե այդպես է, ես այս օրից ուզում եմ այնպիսի տիրոջ ծառայել, որն անմահ է»: Այդ օրից նա բոլորովին անձնատուր եղավ խաչված Հիսուսին և ուխտեց կուսակրոն դառնալ, եթե կինը մեռնի: Շուտով կինը մեռավ, ինքը կուսակրոն դարձավ, իսկ հետո եկեղեցին նրան սրբոց դասը դասեց:

\*\*\*

Բայց մեր դարի մարդիկ, որոնք ժամանակ վատնելը կյանք են համարում և վայելչությունների մեջ լողալը՝ լավ կյանք, որոնք ապրում կամ, ուղիղն ասած, շնչառություն են անում՝ լոկ հարստություն դիզելու և փառք ու պատիվ ձեռք բերելու համար, ննջեցյալի դիակի վրա մի ափ հող թափելու միջոցին անգամ չեն մտածում մահվան մասին: Սակայն քանի որ մարդիկ այդքան անհոգ են, Սուրբ Գիրքը ձայն է տալիս. «Ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ՝ իբրև զծաղիկ խոտոյ: Խոտն ցամաքեցաւ, և ծաղիկն թօթափեցաւ»: «Մարդուս գանձն էլ, փառքն էլ անցավոր է,– ասում է,– խոտի ծաղկից ոչնչով ավելի չէ, մարդս, փառքի մեջ հազիվ փթթած, իսկույն խամրում է, փչանում: Եվ նրա փառքը ոչ միայն ավելի հեշտ է թառամում, քան խոտի ծաղիկը, այլև սարդի ոստայնից անգամ չնչին բան է: Ստվերի, երազի նման է մարդուս փառքն էլ, կյանքն էլ: Ավելի հեշտ կարելի է հուսալ, որ գիրք մնա ջրի վրա, քան թե մարդուս մեծությունը՝ իր վրա: Մարդս այնքան հեշտ է վնասվում և շուտ մեռնում, որ անձրևի պղպջակից անգամ շուտ է պատռվում ու անհայտանում: Եզեկիա թագավորը հոգեվարքի ժամանակ ասում էր. «Եղև հոգի իմ առ յինչն իբրև ոստայն սատարաց՝ մերձ ի հատանել»: «Կյանքս,– ասում է,–

ոստայնակների թելի պես կտրվելու մոտեցավ»: Հիրավի, քանի՛-քանի՛ մարդիկ ոստայնակների պես հյուսում, չափում, սարքում են և սկսում են գործել իրենց աշխարհային խորհուրդները, բայց հանկարծ գալիս է մահը և ամեն բան կտրում, վերջացնում:

Այո՛, մարդս շատ անհոգ է ապրում, իսկ մահը, որ նրանից միայն մի մատնաչափ է հեռու, ժամեժամ սպասում է նրան, որովհետև մարդուս կյանքը կայի և շկայի միջև է. այս բոլորիս կա, մյուս բոլորիս չբանում է: Ի՞նչ տարածություն կա նավորդների ու մահվան միջև, եթե ոչ երկուսի միջև եղած տախտակի հաստությունը: Ի՞նչ կա բարկացողի ու մահվան միջև, եթե ոչ սուրբ պատյանից հանելու շափ շնչին ժամանակ: Ի՞նչ կա զինվորի և նրա մահվան միջև, եթե ոչ հրացանի գնդակի և իր մահվան միջև եղած տարածությունը: Այնչափ կարճ է մեր կյանքը, որ համարյա նրա առաջին ծայրից երևում է մյուս ծայրը. մտնում ենք կյանք, որ իսկույն դուրս գանք այնտեղից: Եթե այս կարճ կյանքը երկար է թվում անհոգ, անբախտ մարդկանց, այդ նրանից է, որ դեռ ապրում են, բայց երբ կվերջանա, այն ժամանակ կիմանան, թե ինչքան կարճ էր:

Եվ երբ ասում է «ամենայն մարմին», ուզում է ասել ոչ թե մեկի մարմինը դյուրաթառամ խոտ է, իսկ մյուսինը՝ մի պատվական ու մնայուն բան, այլ ամեն մարդու մարմին՝ թե՛ մեծատան, թե՛ աղքատի, թե՛ ծառայի, թե՛ տիրոջ, թե՛ ռամիկի, թե՛ թագավորի, թե՛ մարդու և թե՛ կնոջ: Բոլորն էլ հավասարապես թառամելու են և զրկվելու իրենց փառքից, այն էլ ավելի հեշտ, քան որևէ ծաղիկ և ինչպես ոչինչ չեն բերում այս կյանք, այնպես էլ ոչինչ չեն կարող տանել երկրավորներից, որովհետև մարմնի քայքայվելով դրանք էլ փչանում, ոչնչանում են: Սոկրատես փիլիսոփան ասում էր. «Իմ ամբողջ գործն այս է՝ ծերերին ու երիտասարդներին հասկացնել, որ շկապվեն ո՛չ մարմնասիրության և ո՛չ աշխարհունուս եղած մի այլ բանի հետ, այլ միայն իրենց հոգիների հետ»:

Առաքյալն էլ ասում է. «Սերը այս աշխարհի հանդէպ՝ թշնամություն է Աստծու դեմ»: «Ով,— ասում է,— սիրում է այս աշխարհը, նա

Թշնամի է Աստծուն, որովհետև գնում է նրան հակառակ»: Հիրավի, ի՞նչ շահ ունեցավ ավետարանական մեծատունն իր հագած բեհեզից ու ծիրանիից կամ վայելած առատ սեղանից և ուրախությունից: Եվ կամ ի՞նչ վնաս ունեցավ աղքատը, որ կերակրվում էր նրա սեղանի փշրանքներով, որի մարմինը որդնալից եղավ, և վերքերը շներն էին լիզում: Ոչ մի վնաս, այլ ավելի օգուտ, որովհետև նրան շներից հետո հրեշտակները գրկեցին, և մեծատան դռան շեմքից հետո Աբրահամի գոգում էր հանգստանում: Իսկ մեծատունը բեհեզից և ծիրանիից հետո դժոխքի գիրկն ընկավ և առատ սեղանից ու առվի պես հոսող գինուց հետո մի կաթիլ ջրի կարոտ մնաց, և սակայն անարժան գտնվեց, որովհետև ով Աստծուն թողած իր անձն է սիրում, այդպես իր անձն էլ, իր հոգին էլ կորցնում է հավիտյան, Հիսուսի ասածի պես. «Որ սիրէ զանձն իւր՝ կորուսցէ զնա»: «Ո՛վ ապերջանիկ երջանկություն,— ասում է սբ. Ոսկեբերանը,— որ մեծատանը տարավ հավիտենական թշվառություն, ո՛վ երջանիկ ապերջանկություն, որ աղքատին տարավ հավիտենական երջանկություն»:

Այդպիսի մեծատան մեկն էր նաև Դիոգինեսի տերը, որ իր ճոխ ու շռայլ ապրուստն արդարացնում էր՝ ասելով. «Չէ՞ որ ամեն բան մեզ համար է ստեղծված, մենք էլ որ չվայելենք այս փարթամությունները, էլ ո՛վ պետք է վայելի»:

— Սխալվում ես՝ կարծելով, թե ամեն բան քեզ համար է ստեղծված,— պատասխանեց փիլիսոփան,— լսի՛ր, մի առակ ասեմ քեզ: Հարուստի մեկը մի մեծ խնջույք սարքեց և բոլոր երկրներից ու ազգերից ամեն կոշման, սեռի ու հասակի մարդիկ հրավիրեց: Նա իր հյուրերի կամքին թողեց տեսակ-տեսակ կերակուրներ՝ բոլորն էլ առատ-առատ, և ամեն մեկին տվեց այն, ինչ որ նրան ավելի օգտակար էր: Ամենքն ուտում-խմում էին և շնորհակալություն էին ասում կոշնատիրոջը: Բայց արի տես, որ հյուրերի մեջ գտնվեց մեկը, որ չէր բավականանում նրանով, ինչ որ դրած էր իր առաջ: Նա իրենից հեռու դարսած ափսեներն էլ ձեռք գցեց՝ չմտածելով, որ ինքը միայն մի ստամոքս ունի, և որ մի քանի կերակուրներ դարաված էին թուլյ

ու հիվանդոտ հյուրերի համար: Եվ այդ ազահն սկսեց ուրիշների կերակուրներն էլ խելել, լափել և այնքան կերավ, որ սկսեց փսխել: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կասի կոչնատերը մի այդպիսի հյուրի:

Պատասխանի չսպասելով՝ Դիոգինեսը շարունակեց. «Հարուստ ու առատաձեռն կոչնատերը բնությունն է, հյուրերը բոլոր մարդիկն են, իսկ ազահ՝ հյուրն այն մեծատունն է, որ իր ուտելիքն ու խմելիքը դիզում է աշխարհի ամեն կողմերից և բնակելով հյուսիսում՝ ուզում է՝ ինչ էլ լինի, կերակրվել հարավի պտուղներով, իսկ ձմռանն ուտել ամառվա մրգեր: Թող ամեն մարդ վերցնի այն, ինչ որ դրված է իր առջև, ուտելիս էլ այնքան ուտի, ինչքան հարկավոր է քաղցը հագեցնելու համար, այդ ժամանակ ամենքս բնության սեղանից վեր կկենանք կուշտ ու առողջ»:

\*\*\*

Աստծուն թշնամի չլինելու համար մարդս պետք է իր մարմնի հետ խիստ վարվելը մի փրկարար կանոն դարձնի, որ հոգուն չվնասի. մարմինը պետք է պահպանել, բայց չծառայել նրան: Թող կերակուրը դադարեցնի քո քաղցը, ըմպելիքը զովացնի ծարավդ, հագուստը պաշտպանի ցրտից, տունը՝ վատ եղանակից, մնացած բոլոր բաները, որոնք անօգուտ են, դե՛ն նետիր, որովհետև դրանց մեջ է թաքնված հոգուդ դեմ պատրաստված որոգայթը: Դավիթը մարմինը համարում է հոգու «բանտը», Սիմեոն ձերունին՝ հոգու «կապանքը», Անաքսագորաս փիլիսոփան՝ հոգու «ամանը»: Երբ նրան հարցրին, թե որտեղ թաղենք քեզ, պատասխանեց. «Ես ո՛չ մեռնելու եմ, ո՛չ էլ թաղվելու, իսկ իմ ամանը ուր էլ գցեք, կարելի է»:

Հարուստները չպետք է մոռանան, որ իրենք են ժողովրդի համար, ոչ թե ժողովուրդն իրենց համար: Աստված թշվառների պաշտպանությունը նրանց է հանձնում իբրև իր բարիքները բաժանողների, ուրեմն նրանք իրենց իրավունքներից զրկվում են, երբ միայն իրենց անձի օգուտն են փնտրում: Աստված հարուստներին բարձրացնում է ուրիշների վրա, ինչպես արևը՝ երկրիս վրա, որպեսզի

բարերարեն ողջ աշխարհին: Քո շնորհիվ ազատված մարդը, որի իրավունքը պաշտպանեցիր, պարտապանը, որին փոխ տվեցիր, ծառան, որի հետ բարեսրտությամբ վարվեցիր, որբերը, որոնց արցունքը սրբեցիր, աղքատները, որոնց հաց տվեցիր, սրանք բոլորը պետք է մի-մի նախանձելի գովասանքներ լինեն քեզ համար և ամեն տեղ հուշակեն առաքինություններդ: Պետք է կոչվես «հայր աղքատների, որբերի և այրիների»: Ինչ սիրուն տիտղոս, պետք է համարվես ամենքի տերն ու բարեկամը, ամենքն էլ քեզ պատահած ձախորդության ու հիվանդության համար պետք է վշտանան, քո վայելած բարիքների և ուրախությանդ վրա ուրախանան:

Իսկ դու, անմահ հոգիդ մոռացած, մահկանացու մարմնիդ ես ծառայում: Բայց լավ իմացիր, որ թեկուզ տանդ ծածկը ոսկու պես փայլի, առաստաղը՝ գոհարի պես, հատակը՝ հայելու պես, թեկուզ անթիվ-անհամար հարստության տեր լինես, այդուամենայնիվ կգամի օր, երբ դու այդ բոլորը ցավով ու ակամա կթողնես այստեղ: Այդ ժամանակ վերջապես կհասկանաս, թե ինչքան արհամարհելի բաներ էին դրանք, այդ ժամանակ կնմանվես երեխաների, որոնց աչքին իրենց խաղալիքները մեծ բաներ են. նրանք գետափի գույնզգույն խիճերով են ուրախանում, դու ոսկու և թանկագին քարերի խելագար ես դարձել: Ո՛վ է ասում՝ հարստություն մի՛ հավաքիր, հավաքիր, երբ Աստված թափում է ճանապարհներիդ, բայց հավաքիր տանդ, ոչ թե հոգումդ, հավաքիր երկնքում, ոչ թե երկրում: Թող քո հարստությունը լինի Աստված, որովհետև ում համար Աստված ամեն բան է, նրա համար աշխարհս ոչինչ է: Նա, ով միայն իր մասին է մտածում և ամեն բան իր օգտին ծառայեցնում, չի կարող երջանիկ ապրել: Եթե ուզում ես ինքդ ապրել, ուրիշին ապրեցրու: Ինչո՞ւ ունեցածներդ այդպես պինդ ես պահում, չգիտե՞ս, որ դու դրանց պահպանն ես միայն, Աստված քեզ պահ է տվել, դրանք ուրիշ տերեր էլ ունեն: Առաքյալն ասում է. «Ի՞նչ բան ունես, որ ստացած չլինես»: «Ունե՞ս, – ասում է, – մի այնպիսի բարիք, որ Աստծուց ստացած չլինես, հիշի՛ր արդար Հոբի խոսքը՝ Տերը տվեց և Տերը ետ առավ»: Ու-



գո՞ւմ ես, որ գանձդ քոնը լինի, բաժանի՛ր: Փողի լավությունն այն ժամանակ է երևում, երբ քո իշխանությունից դուրս գալով բաժանվում է: Մի՛ մոռացիր, որ ինքդ էլ ուրիշների պես աղքատի մեկն ես. մերկ ենք ծնվում, աշխարհ մտնում, մերկ էլ դուրս ենք գալու այստեղից: Միայն առաջին մարդը չէր, որին Աստված հարցրեց՝ ո՞ւր ես: Եթե դու էլ Աստծո ճանապարհներից շեղված չլինես, եթե խիղճդ թմրեցրած չլինես, քո մեջ միշտ կլսես նույն Աստծո ձայնը, որ քեզ հարցնում է. «Ո՞ւր ես, ո՞վ մարդ: Եզր ճանաչում է իր տիրոջ մսուրը, գազանն անտառում լսում է իմ ձայնը, իսկ դու թաքնվել ես: Ո՞ւր ես, ո՞վ մարդ»: Բայց դու չես կարող լսել այդ ձայնը, որովհետև քո աստվածը «ոսկե հորթն» է, որ քեզ տվել է ոսկի և հարստություն, բայց չի տվել առաքինություն: Սակայն երկար չես կարող պաշտել այդ աստծուն, շուտով կխփի մահվանդ ժամը, այդ ժամանակ ահա կբացվի հոգուդ մերկությունն ու դատարկությունը:

\*\*\*

Երբ մի փիլիսոփայի հարցրին, թե աշխարհումս որն է ամենափափազելի բանը, պատասխանեց. «Երջանիկ մահ՜ը», որովհետև ինչ օգուտ լավ սկսելուց, եթե լավ չես վերջացնի: Այս պատճառով Մարկոս Ավրելիոսն ասում է. «Ես ավելի կցանկանայի թշվառ կյանք ունենալ և փառավոր մահ՜, քան թե թշվառ մահ՜ և փառավոր կյանք»: Բայց երջանիկ մահվան նշանակությունն այդպես չէր հասկացել Լյուդացոց Կրեսոս անունով մի հայտնի թագավոր: Սա սաստիկ բորբոքված էր տեսնելու հույն փիլիսոփա Սոլոնին: Երբ նա ներկայացավ Կրեսոսին, որ իր բոլոր զարդերով ու փառքով բազմած էր արքայական գահի վրա, ոչ մի զարմանք ցույց չտվեց այդ մեծաշուք տեսարանի վերաբերմամբ:

– Ի՞մ հյուր,— ասաց նրան Կրեսոսը,— ինձ հայտնի է քո իմաստությունը, համբավդ ամեն տեղ տարածված է, գիտեմ, որ շատ երկրներ ես անցել, ասա՛ տեսնեմ, երբեկից տեսե՞լ ես ինձանից շքեղ հագնված մի մարդու:

– Այո՛,– պատասխանեց Սոլոնը,– աքաղաղները, փասիաններն ու սիրամարգները քեզանից շքեղ են հագնված, որովհետև նրանց պերճ հագուստը բնական է, իրենք հոգս չեն քաշել իրենց զարդարանքի վրա:

Այս անակնկալ պատասխանն ապշեցրեց Կրեսոսին: Հրամայեց, որ բաց անեն բոլոր գանձերը և ցույց տան Սոլոնին իր պալատի պես-պես թանկագին սպասները: Ապա կանչեց նրան ու հարցրեց.

– Երբևիցե տեսե՞լ ես մի մարդու, որ ինձանից երջանիկ լիներ:

– Այո՛,– կրկնեց Սոլոնը,– տեսել եմ աթենացի Տելլոսին, որ իբրև առաքինի մարդ ապրեց բարեկարգ տերության մեջ, թողեց երկու առաքինի որդի ու կարողություն և հաղթություն տանելով՝ զենքը ձեռքին մեռավ հայրենիքի համար և երջանկացավ, որի համար էլ աթենացիք կանգնեցրին նրա արձանը:

Կրեսոսը, ավելի ևս զարմանալով, Սոլոնին ապուշի մեկը համարեց և հարցրեց.

– Կա՛մ, Տելլոսից հետո ո՞ւմ ես երջանիկ համարում:

Պատասխանեց.

– Ժամանակին երկու եղբայրներ կային՝ Կլեոբիսն ու Բիտոնը, երկուսն էլ քաջալանջ երիտասարդներ: Նրանց մայրը, որին նրանք սիրում էին խանդակաթ սիրով, քրմուհի էր մի մեհյանում: Մի տոնախմբության ժամանակ այդ կինը պետք է գնար մեհյան՝ զոհ մատուցելու, բայց որովհետև եզների հոգնած լինելու պատճառով ուշացել էր, ուստի որդիները ըծվեցին սայլին և նրան տարան մեհյան: Ամբողջ ժողովուրդը լիաբերան գովում էր նրանց, թեպետ նույն գիշերը երկուսին էլ մեռած գտան իրենց անկողնում:

Այդ ժամանակ Կրեսոսը զայրացած ասաց.

– Իսկ դու ինձ այդ երջանկացած եղբայրների հետ էլ չե՞ս դասում:

Սուրճը պատասխանեց.

– Արքայդ Լյուդացոց, դու մեծ հարստության և շատ ժողովրդների տեր ես, սակայն մարդուս կյանքը փոփոխական է, ուստի անկարելի է հաստատ որոշել մեկի երջանկությունն իր մահից առաջ:

Մրա վրա Կրեսոսը խոժոռվեց և այլևս չուզեց տեսնել նրա երեսը: Այդ ժամանակներին Կրեսոսը պատերազմի դուրս եկավ պարսից Կյուրոս թագավորի դեմ, բայց հաղթվեց ու բռնվեց: Երբ նրան տարան Կյուրոսի մոտ, նա հրամայեց շղթայակապ անել նրան, դնել մի բարձր խարույկի վրա, որ այրվի թագավորի ու բոլոր պարսից աչքի առաջ: Երբ կրակը կաշուժ էր փայտին, այդ ողբալի բոպեին Կրեսոսը հիշեց Սուրճին, հոգոց հանեց ու ասաց. «Ո՛վ Սուրճն, Սուրճն, Սուրճն»:

Կյուրոսը զարմացավ դրա վրա ու հարցրեց.

– Այդ ո՞ր աստծուն է օգնություն կանչում իր թշվառության մեջ:

Կրեսոսը չպատասխանեց, բայց երբ ստիպեցին, որ խոսի, սրտի դառնությունից ճնշված՝ ասաց.

– Ավա՛ղ, հիշեցի ես այն մարդուն, որին թագավորները միշտ իրենց մոտ պետք է պահեին և նրա խորհուրդներն իրենց գանձերից ու մեծություններից ավելի հարգեին:

Եվ պատմեց Սուրճի վերջին խոսքը: Կյուրոսը խղճահարվեց, հրամայեց հանգցնել կրակը՝ մտածելով, որ իրեն էլ կարող է պատահել այդպիսի թշվառ մահ: Արձակեց նրա շղթաները, մեծություն տվեց և նրա խորհուրդներով էր շարժվում:

\*\*\*

Հիսուս ասում է. «Ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հաիվտենական կյանքի համար»: «Ով,— ասում է,— ատում է այստեղ իր անձը, չի կատարում նրա կամքն ու ցանկությունները, նա այն պահում է հավիտենական կյանքի համար: Անձն ատել տա-

լով Հիսուս պահանջում է, որ մարդս մահացնի իր «երկրավոր անդամները»: Այդ անձնուրացությունը, այդ կամքուրացությունը, այդ մահացմունքը հիրավի մի գերազանց մարտիրոսություն, մի շտեմսոված կամավոր նահատակություն է: Ուրիշ նահատակություններ միանգամից են լինում. մարդ մեռնում է, վերջանում: Բայց դա այնպես չէ, քանի քրիստոնյան կենդանի է, պետք է ամեն օր, ամեն ժամ անի այդ մարտիրոսությունը, պետք է արհամարհի, սպանի իր կամքն ու զգայությունները:

Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչպես է լինում անձնուրացությունը:

Սուրբ կրոնավորներից մեկն ասում է. «Անձդ կուրանաս, եթե այս բաներն անես: Եթե ուզում ես լավ տեսնել, ա՛չքդ հանիր, եթե ուզում ես լավ լսել, խո՛ւ եղիր, եթե ուզում ես լավ խոսել, հա՛մը եղիր, եթե ուզում ես լավ սիրել քեզ, ատի՛ր, եթե ուզում ես լավ ապրել, մահացրո՛ւ քեզ, եթե ուզում ես հարուստ լինել, եղի՛ր աղքատ, եթե ուզում ես փափուկ ապրել, տանջի՛ր քեզ, եթե ուզում ես ապահով լինել, եղի՛ր միշտ երկյուղի մեջ, եթե ուզում ես բարձրանալ, խոնարհեցրո՛ւ քեզ և պատվի՛ր նրանց, որոնք արհամարհում են քեզ: Եթե ուզում ես բարիք ստանալ, համբերությամբ տա՛ր շարք, եթե ուզում ես հանգստանալ, աշխատի՛ր, եթե ուզում ես օրհնվել, անեծքներ ընդունի՛ր: Օ՛, որքան մեծ իմաստություն է այս բաները գիտենալը, և որովհետև մեծ է, ուստի ամենքին չէ տված»:

Այդպիսի մի անձնուրացություն քեզ կարող է ծանր թվալ, ես մի թագավորի օրինակ կբերեմ: Կար մի ճգնավոր, որ 40 տարի բնակվել էր անապատում սրբակրոն կյանքով: Սա ցանկացավ իմանալ, թե աշխարհիս վրա արդյոք կա՞ իրեն հավասար մեկը, ուստի խնդրեց Աստծուն, որ ցույց տա իրեն, թե ով է: Աստված նրան պատասխանեց. «Քո չափ սրբակցաց է և Թեոդոս կայսրը, որովհետև իր արքայական մեծության մեջ անգամ պակաս չէ քեզանից խոնարհության և անձը սանձահարելու կողմից»:

Ճգնավորը շուտով գնաց կայսեր մոտ և խնդրեց նկարագրել իրեն, թե ինչպիսի կյանք է վարում: «Մի մեծ բան չեմ արել ես,

հայր,— պատասխանեց թեոդոսը,— արածս այս է միայն, որ շատ ողորմություն եմ տալիս, շատ պաս պահում, քուրձ ունեմ հագած, սուրբ եմ պահում ամուսնական անկողինը և արդար դատաստան անում»:

Ճգնավորը նրա կենցաղավարությունը շատ հավանեց, բայց իրեն թվաց, թե իր արածներն ավելի մեծ բաներ էին, քան նրանը, «որովհետև,— ասում էր իր մեջ,— իմ բոլոր հարստությունս թողնելն ավելի է, քան թե սրա մեծամեծ ողորմությունները, իմ պահեցողությունն ավելի է, քան սրա մի քանի օրով մսեղենից հրաժարվելը, կյանքումս կնոջ երեսի շնայելս ավելի է, քան թե սրա ողջախոհությունը»: Այդ պատճառով սկսեց խիստ աղաչել կայսրին, որ ոչինչ չծածկի իրենից: Այդ ժամանակ թեոդոսն ասաց. «Պետք է իմանաս, հայր սուրբ, որ երբ ձիարշավ, թատրոնական ներկայացում կամ մի այլ խաղահանդես է լինում, և ես ներկա եմ լինում, շատ հեռու եմ նստում և անձս զրկում եմ այդ հանդեսները տեսնելուց»: Կսելով այս՝ ճգնավորը սոսկաց կայսրի այդպիսի մեծ ճգնություն վրա: Իսկ թեոդոսն ավելացրեց. «Այս էլ իմացիր, որ ես իմ ձեռքի աշխատանքով եմ ապրում՝ ունենալով լավ ձեռք և գրածներս ծախելով»: Ապուշ դարձավ ճգնավորը՝ այդպիսի աղքատություն տեսնելով այդքան հարստության մեջ և այդպիսի ժուժկալություն՝ այդքան հեշտությունների մեջ և հասկացավ, որ այդ անձնուրացությունն է նրան ավելի սիրելի դարձրել Աստծուն, քան իրեն:

Ինչպես որ նավագնացության ժամանակ թարմ ջուր վերցնելու համար, մարդիկ ափին կանգնած ժամանակ խեցիներ են փնտրում, բայց աչքերը երբեք չեն հեռացնում նավից, որպեսզի նշան տված ժամանակ ամեն բան թողնեն ու դեպի նավը շտապեն, այդպես էլ դու պետք է վարվես այս աշխարհում: Ուշք ու միտքդ կենտրոնացնելով Աստծո վրա՝ երկրավոր բաներդ այնպես պետք է կարգադրես, որ սիրտդ դրանց կպած չմնա, և որ դրանք չխանգարեն քո դիտավորությունը: Որքան թողնես մարմնապաշտությունդ, որքան հեռանաս ինքդ քեզանից, այնքան կմոտենաս Աստծուն:

Ուրիշ հնար չկա: Աստված մի անգամ քեզ դրախտից դուրս արեց, հիմա դու նրա կամքին հակառակ նոր դրախտ ես ուզում կառուցել: Մեկ մտածի՛ր, եթե այնտեղից այստեղ ընկար, հապա այստեղից ո՞ւր ես ընկնելու: Մի՞թե կարծում ես, թե այդ փափկուկթյուններդ, այդ գանձերդ մի օգուտ են բերելու քեզ: «Խ՞նչ օգուտ է մարդուն, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի»,– ասում է Հիսուս: («Խ՞նչ օգուտ ես ունենալու, եթե ողջ աշխարհը ձեռք բերելու լինես, սակայն հենց դրանով հոգիդ հավիտյան կորցնես»): «Հնարավո՞ր է արդյոք, որ մեկը կրակը պահի իր գոգի մեջ և շորը չայրի»,– ասում է Սուրբ Գիրքը: Մարդ կարո՞ղ է գոգում կրակ հավաքել և շորերը չայրել: Ինչպես որ իր գոգում կրակ հավաքողն իր զգեստը, իր մարմինն է այրում, այնպես էլ ով ոսկի է գանձում, իր անձի, իր հոգու համար մշտնջենավոր կրակ է հավաքում: Այս առիթով մի հռչակավոր մարդ ասում է. «Ձեմ կարողանում հասկանալ, թե մարդ, իր ոսկին ու արծաթը սնդուկի մեջ պինդ պահելով, ի՞նչ զվարճություն պետք է զգա: Եթե ես տարվա վերջում մի մեծ գումար եմ ունենում եկամտուտի ավելացած, անհանգիստ եմ լինում, ասես թե առատորեն կերակրվելուցս հետո առաջս նորից կերակուր լինեին բերած»:

Այո՛, այս աշխարհում, այս ժամանակավոր կյանքում մարդս պետք է վարվի այնպես, ինչպես հրավերքի սեղանի նստած ժամանակ: Եթե կերակուրը բերեն, դնեն կողքիդ, ձեռքդ պարզի՛ր և հարգանքով վերցրու մի մասը: Եթե կերակուր մատուցողը կողքովդ անց կացավ, մի՛ կանգնեցրու նրան, և քանի որ կերակուրը քեզ չի մոտեցել, սկզբից ցույց մի՛ տուր, որ քաղցած ես, այլ սպասի՛ր: Երբ դու այդպես վարվես հարստության ու երկրավոր բաների հետ, միշտ կլինես հոգևոր լիության և ուրախության մեջ:

\*\*\*

Առաքյալն ասում է. «Քանի դեռ ժամանակ կա, բարին գործենք բոլորի հանդեպ»: Ժամանակն ամեն բանից թանկ է, որովհետև նրանով կարելի է ամեն բան ձեռք բերել, բայց այն ոչ մի բա-

նով չի կարելի ձեռք բերել: Սրբերից մեկն ասում է. «Ճշմարիտ է, ժամանակի, ինչպես և գետի հոսանքը չենք կարող դադարեցնել, բայց թե՛ մեկից և թե՛ մյուսից կարող ենք օգտվել»: Մենք մի անգամ ենք մեռնում, ուստի լավ պետք է մեռնենք, բարի, երջանիկ մահով, որովհետև ոչ մի հնար չկա մեր անցած կյանքը կրկին հետ բերելու: Մեր վատ մահը չենք կարող փոխել մի երկրորդ՝ լավագույն մահվան հետ: Կյանքի յուրաքանչյուր րոպեն անցնում է մի անգամ, ուստի ամեն անցնող րոպեի վրա պետք է նայենք ինչպես մահվան րոպեի վրա: Չպետք է նայենք միայն ներկայի վրա, ավելի հոգ պետք է տանենք ապագայի համար: Այնպես պետք է համարենք, թե այս երեկո մեռնելու ենք և մեր ամեն գործ պետք է այնպես անենք, իբր թե դա մեր վերջին գործն է: Մեր աղոթքը պետք է անենք վերջին աղոթքի պես, խոստովանությունը՝ վերջին խոստովանության, հաղորդությունը՝ վերջին հաղորդության պես: Ամեն օր պետք է պատրաստ լինենք մեռնելու, որովհետև եթե այսօր պատրաստ չենք, վաղն ինչպե՞ս կարող ենք պատրաստ լինել: Վաղվա օրն անհայտ է մեզ, ով ի՞նչ գիտի նրա մասին: Շատ էլ որ հայտնի լինի, համոզվա՞ծ ենք, որ կտեսնենք այդ օրը: Աստված ապաշխարողին թողություն խոստացավ, բայց մեղանշողին վաղվա օրը չխոստացավ. կարելի է՞ տա, կարելի է՞ չտա:

Եթե դու տեսել ես մի մեռնողի, հիշի՛ր, որ քեզ համար էլ է գալու այդ օրը: Լուսանալիս մտածի՛ր, թե կարելի է չտեսնես երեկոն, և օրը տարաժամելիս չպետք է կարծես, թե կտեսնես առավոտը: Երբ քո վերջին ժամը մոտենա, ամբողջ կյանքդ քեզ բոլորովին ուրիշ կերպ կերևա, և դու կցավես, որ այդպես անհոգ ես եղել: Ի՞նչ իմաստուն և երջանիկ է նա, ով միշտ ուզում է լինել այնպես, ինչպես կկամենար լինել մահվան րոպեին: Այս պատճառով քանի ժամանակը ձեռքիդ է, աշխատի՛ր մեռնել աշխարհիս համար, որ հետո ապրես Հիսուսի հետ: Այնպես ապրի՛ր, որ մահը քեզ անպատրաստ չհասնի: Շատերն են մեռնում հանկարծակի, ինչքան մարդ է աշխարհից հափշտակվում այն միջոցին, երբ չի էլ մտածում դրա մասին: Ի՞նչ հաճախ է լսվում

այսինչ մարդուն սպանեցին, այնինչը խեղդվեց, սա մեռավ հաց ուտելիս, նա մեռավ խաղալիս: Մի թագավոր, կամենալով հասկացնել մեկին, թե ինքն ինչ երկյուղով է նստած արքայական գահի վրա, նրան սեղան նստեցրեց՝ գլխի վերևում բարակ թելից մի սուր կախած: Խեղճ մարդը երկյուղից հազիվ կարողացավ մի քանի պատառ ուտել: Մենք ամենքս էլ նույն վտանգի մեջ ենք, որովհետև ամեն բոլոր կարող է մահվան սուրն ընկնել գլխներին: Իմաստունի մեկն ասում է. «Աննման ենք ծնվում, բայց նման ենք մեռնում»: Մահը պալատում ծնվածին հավասարեցնում է խրճիթում ծնվածին: «Կնա՛ գերեզմանները, — ասում է սբ. Բարսեղ հայրապետը, — տե՛ս, կարո՞ղ ես որոշել՝ ո՞րն է ծառան, ո՞րն է տերը»:

Մարդիկ ընդհանրապես երկյուղ են կրում մահից, բայց ում խիղճը մաքուր է, նա չի վախենա մահից, ավելի լավ է վախենալ մեղքից, քան թե մահից: Մի թագավոր մեռնելիս ասում էր. «Երանի՛ թե թագավոր չլինեի, այլ անապատում Աստծուն ծառայելով ապրած լինեի, այն ժամանակ այսքան չէի վախենա դատապարտվելուց»: Սակայն կան մարդիկ, որոնք ուրախությամբ են դիմավորում մահը, որովհետև իրենց միշտ պատրաստել են մահվան համար: Մի սբ. ճգնավորի մեռնելու ժամանակ հարցրին. «Ինչո՞ւ ես այդքան ուրախ»: Պատասխանեց. «Մահը միշտ աչքիս առաջ եմ ունեցել, ուստի հիմա, որ եկել է, ինձ համար նոր բան չէ»: Սրբերից մեկը, զգալով մահվան մոտենալը, սկսեց մխիթարվել՝ ասելով. «Դո՛ւրս արի, ի՛մ հոգի, դո՛ւրս արի այս մարմնից: 70 տարի հավատարմությամբ ծառայեցիր Աստծուն և դեռ վախենո՞ւմ ես»: «Թող նա վախենա մահից, — ասում է մեկ ուրիշը, — ով որ այս մահից պետք է անցնի դեպի երկրորդ մահը»: Չպետք է զարմանալ դրա վրա, որովհետև առաջին մահն այն է, որ հոգին բաժանվում է մարմնից, իսկ երկրորդ մահն այն է, որ հոգին բաժանվում է Աստծուց:

Բայց ի՞նչ պետք է անի մարդ, որ չվախենա մահից: Դրա համար պետք է արհամարհի կյանքը: Տե՛ս, երեխաներն ու խելագարները չեն վախենում մահից: Այո՛, դժվար բան է արհամարհել կյանքը,



որ շատերն այնքան են սիրում, որ ոչ մի բան նրանից թանկագին ու ցանկալի չեն համարում: Բայց կյանքը տրված է մեզ մեռնելու պայմանով: Ապրել չի ուզում նա, ով մեռնել չի ուզում: Ուզո՞ւմ ես այնպես անել, որ մահը քեզ համար մի արհամարհելի բան դառնա, սովորի՞ր ամեն բանի վրա արհամարհանքով նայել: Ուզո՞ւմ ես կյանքն ախորժելի դարձնել, մի կողմ դի՛ր նրա համար ունեցած հոգացողությունդ, պատրա՛ստ եղիր ամեն տեսակ մահվան: Անվտանգ է ապրում և ուրախ մեռնում նա, ով ամեն օր կյանքից հեռանում է, և ով մեռնելուց հետո էլ ուզում է ապրել: Չես կարող լավ ապրել, եթե ամեն օր շմեռնես: «Նրանի՛ մեռելոց, որք ի Տեր ննջեցին»: «Նրանի՛ նրանց,— ասում է առաքյալը,— որոնք մեռնելու միջոցին արդեն մեռած էին աշխարհային ցանկությունների համար»: Այդպիսիք ոչ միայն չեն վախենում մահից, այլև ուրախությամբ են դիմավորում այն, որովհետև մահը, փոխանակ նրանց հեռացնելու իրենց սիրած բաներից, միացնում է նրանց հետ՝ միացնելով նրա հետ, որ է «միայն բարի»:

Կյանքը մահից լավ համարելով, այն էլ ապարդյուն կյանքը, մենք ողջերի համար ուրախանում ենք, մեռելիների համար՝ սգում: Բայց եթե լավ մտածենք, ո՛չ մեռելիների համար պետք է զուր սգանք, ո՛չ ողջերի համար զուր ուրախանանք: Այլ պետք է սուգ անենք մեղավորների համար, ոչ միայն երբ մեռած լինեն, այլև երբ ողջ են: Պետք է ուրախանանք արդարների համար, ոչ միայն երբ ողջ են, այլև երբ մեռած են, որովհետև մեղավորները կենդանի մեռած են, իսկ արդարները, թեպետ մեռած, սակայն կենդանի են: Քանի որ մեղավորներն այստեղ են, ողորմելի են, որովհետև Աստծուն հակառակ են գնում, իսկ արդարները թեկուզ մեռնեն, երանելի են, որովհետև առ Աստված են գնում: Մեղավորը, որտեղ էլ լինի, հեռու է Աստծուց, իսկ արդարը թե՛ այստեղ լինի, թե՛ այնտեղ, միշտ Աստծո մոտ է: Սգանք այնպիսիների վրա, որոնք կարող էին լվանալ իրենց մեղքերը, բայց չկամեցան: Եվ դրանց վրա սգանք ոչ թե մեկ կամ երկու օր, այլ մեր ամբողջ կյանքում:

Մահը երկու լավություն է անում արդարներին. առաջին՝ ազատում է նրանց այն շարիքներից, որոնց մեջ ապրում են, երկրորդ՝ ժառանգել է տալիս արքայությունը, որին նրանք սպասում էին: Մահը երկու վնաս է հասցնում մեղավորներին. առաջին՝ զրկում է նրանց այն վայելչություններից, որոնցով հեշտանում էին, երկրորդ՝ մատնում է նրանց մյուս կյանքի տանջանքներին, որոնցից երկյուղ էին կրում: Այս պատճառով արդարները մեռնում են ուրախությամբ, մեղավորները՝ տրտմությամբ:

Շատ լավ են անում, որ մեռելների տապանների վրա գրում են. «Աստ հանգչի մարմին», որովհետև մարդս մեռած ժամանակ հանգստանում է այս աշխարհի տառապանքներից: Բայց եթե մարդիկ կարողանային արդարներին տարբերել մեղավորներից, այդ խոսքը պետք է գրեին միայն արդարների տապանների վրա, իսկ մեղավորների տապանների վրա ավելի լավ կլինեք, եթե գրեին. «Աստ տանջի մարմին», որովհետև մեղավորներն աշխարհիս վշտերից անցնում են դեպի հավիտենական տանջանքները, այսինքն՝ մահից դեպի մահ, ինչպես և արդարները՝ կյանքից դեպի կյանք:

Մարդկանց թաղման եղանակն իսկ հաճախ բարին շփոթում է չարի հետ: Տեսնում ես՝ բարեգործը թաղվում է անշուք, չարագործը՝ շքեղ փառքով, մեկին ծածկում է հողի մի թումբ, մյուսին՝ մի ոսկե-տառ արձան: Բայց մինչդեռ չարագործի դին հողով ծածկվելով անունն ու հիշատակն էլ հետն է թաղվում, բարեգործի գործն ու անունը տարեցտարի նորոգվում են և նրան փառավորում է այստեղ և անմահացնում հավիտենականության մեջ: Արձանները, կոթողները՝ քարից լինեն թե մետաղից, ավերվելու և փոշի են դառնալու: Մարդուս գործն է միայն, որ մնում է հավիտյան: Չարագործի արձանը մեռելի մեռած սրտի վրա է կանգնում, իսկ բարեգործի արձանը կենդանի սերունդների բաբախող սրտի վրա է կանգնում: Այս պատճառով Ս. Շահազիզյան բանաստեղծը խրատում է.

Արձան կանգնեցեք, որին չհասնի  
Ոչինչ մարդկեղեն սնափառություն.

Որպես արեգակ երբեք չմեռնի,-  
եվ այդ արձանն է առաքինություն:  
Այդ շնաշխարհիկ է այն սուրբ արձան,  
Որին ազնիվը գլուխ է խոնարհում,  
Որին բուրվառով խոստովանության  
Ազնիվ թոռները խոունկեր են ծխում:

Մարդս շատ չարիքներից կարող է զգուշանալ, իսկ մահից՝ երբեք, որովհետև մահվան դեպքում ամենքս անպարիսպ քաղաքներում բնակվածների պես ենք, ամեն կողմից մուտքը բաց է: Մահվան պես ստույգ բան չկա, բայց մահվան ժամի պես էլ անստույգ ոչինչ չկա: Աստված մեր մահվան օրը մեզանից ծածկել է՝ մեր բարին կամենալով, որովհետև եթե մարդիկ գիտենային իրենց մահվան օրը, ում մահը որ հեռու լիներ, նա բարի գործերի կողմից անհոգ կմնար՝ մտածելով, որ վերջին տարին կամ վերջին ամիսն էլ կարող է պատրաստվել և այդպիսով երկնքի արքայությունը մի էժանագին բան կհամարեր, որ մեծ ամբարշտություն է: Իսկ ում մահը մոտ լիներ, երկուդից այնպես կշփոթվեր, որ ոչ մի նոր բարիք չէր կարող անել:

«Ինչպես որ ազատ ու ապահով գնալու համար ճանապարհորդը պետք է իր զգեստի ծայրերը գոտու մեջ պնդացնի, ինչպես որ զինվորը պատերազմի գնալիս պետք է վրայից դեն նետի այն ծանրությունները, որոնք կարող են խանգարել զենք գործածելուն, ինչպես որ ծառան պետք է ճրագը վառած, ականջները սրած լինի, որ իմանա իր տիրոջ վերադարձը հարսանիքից, այնպես էլ,– ասում է Հիսուս,– ամենքդ ամեն ժամանակ պետք է արթուն ու պատրաստ լինեք ձեր վերջին օրվա համար. ո՞վ գիտե՞ ե՞րբ է գալու այդ օրը՝ ձեր մանկության առավոտը, այրություն մեջ գիշերը, թե՞ ծերություն երեկոյին, որովհետև ինչպես որոգայթը որսի վրա, մահը ձեզ վրա այդպես հանկարծակի է գալու, ուստի «բոլորին եմ ասում. արթուն կացեք»:



## ԲԱՆ Դ

«Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք»:

(Մատթ. ԻԵ:46)

Աստված մարդուս համար երկու կյանք է պատարասել. մեկը՝ զգայական, մյուսը՝ հոգևոր, մեկն ասպարեզ է, մյուսը՝ վարձատրության տեղ, մեկը դարձրել է ծով, մյուսը՝ նավահանգիստ, մեկը ժամանակավոր է, մյուսը՝ հավիտենական, մեկը ձեռքերիս է, մյուսին սպասում ենք: Բայց մարդս ստեղծված է ոչ այնքան ժամանակավոր, որքան հավիտենական կյանքի համար: Առաքյալն էլ է ասում. «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ»: «Եթե,– ասում է,– հույսներս միայն այս ժամանակավոր կյանքի վրա դրած լինենք, ապա ուրիշ բոլոր արարածներից էլ ողորմելի ենք»: Սրանից պարզ երևում է, որ բոլոր կենդանիները ստեղծված են միայն ժամանակավոր կյանքի համար, իսկ մարդը՝ հատկապես հավիտենական կյանքի համար: Հիրավի, մարդս ծնվելով գերեզմանին է մոտենում, իսկ գերեզմանից ծնվելու է մի նոր, անհնանալի և անվախճան կյանքի համար, որովհետև գերեզմանը մի փոս չէ, գերեզմանը կյանքի արգանդն է, որտեղից ծնվում է անմահությունը: Գերեզմանն այս և մյուս կյանքի սահմանն է, և մեռնողը այս աշխարհից դուրս գնացող անծայր քարավանի մեջ մի ուղևոր է: Հրեղեն է կառքը, լուսեղեն՝ երիվարը, անմարմին հրեշտակը վարում է կառքն ու քարավանը: Ո՛ւր են գնում ուղևորները, չգիտենք, բայց «Իմ Հոր տան մեջ բազում օթևաններ կան»,– ասում է Հիսուս: Ամեն մարդ այնտեղ մի կայարան ունի, ուր և իջևանելու է հավիտյան: Երբ մենք մի դիակ դնում ենք գերեզմանը, մի բուռ հող ենք հանձնած լինում Աստծո ձեռքը, Աստված այդ հողից նոր մարդ է ստեղծում նոր դրախ-

տի մեջ: Մահն ուրեմն մարդուս վախճանը չէ. մահն արարչագործութ-  
յան լրումն է և կյանքի հարատևությունը:

Հիսուս այդ հանդերձյալ կյանքն անվանում է «երկնքի արքա-  
յություն», «Աստծո արքայություն» կամ «հավիտենական կյանք»: Երկնքի կամ Աստծո արքայություն ասելով նա ուզում է մեզ հասկաց-  
նել, որ Աստծո կամքը կատարելը, ինչպես հրեշտակներն են կատա-  
րում երկնքում, մի անսպառ երանության աղբյուր է, մի արքայութ-  
յուն, մի երկնային թագավորություն: Իսկ հավիտենական կյանք ասե-  
լով ուզում է հասկացնել, թե այն կյանքը, որ ժառանգելու են մարդիկ,  
մի անվախճան երանություն է, որին երկրավոր բաներից ոչինչ չի կա-  
րող հավասարվել, «Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու  
սիրտը չընկավ»: Այդ երանությունը կարելի է ստանալ, բայց չի  
պատմվի: Սրբերից մեկը տեսիլք է տեսնում. տեսնում է երկնքից ի-  
ջած մի գեղեցիկ երիտասարդ՝ ձեռքին բռնած երեք պսակ՝ մեկը ոսկ-  
յա, մյուսը մարգարտյա, երրորդը կարմիր ու ճերմակ ծաղիկներից:  
Նա հարցրեց. «Ծախո՞ւմ ես այս պսակները, ես գիտեմ մի հարուստ  
մարդու, որ դրանց համար ուզածիդ չափ ոսկի կտա»: Երիտասարդը  
պատասխանեց. «Հավատա՛ ինձ, եթե դու բերես ողջ աշխարհի ոս-  
կին, այն ժամանակն էլ այս պսակի ծաղիկներից մի հատն անգամ  
քեզ չեմ տա, որովհետև այս պսակները հյուսված են երկնային գան-  
ձերից»: Այժմ մտածի՛ր, եթե արքայության մի հատ ծաղիկն այնքան  
թանկ է, որ աշխարհիս ամբողջ ոսկին չարժե նրան, ինչքան ավելի  
թանկ պետք է լինի ինքը՝ արքայությունը: Այդ արքայության համար  
էր, որ սրբերից շատերը ծախում էին իրենց ամբողջ ունեցածը և բա-  
ժանում աղքատներին՝ թողնելով տունը, ծնողներին և իրենց հոգու  
հատոր սիրելիներին: Կային և այնպիսիները, որոնք ոչ միայն ծախում  
էին, այլև ծախվում, ստրկանում էին: Վերջապես եթե այս անկատար,  
պակասավոր աշխարհն այնքան գեղեցիկ է ու հրապուրիչ, որ մենք ա-  
մենախորին ցավ զգալով ենք հեռանում սրանից, հապա ինչքան գե-  
ղեցիկ ու գրավիչ պետք է լինի այն կատարյալ ու հոգևոր աշխարհը,  
որ Աստված պատրաստել է իր սիրելիների համար: Այնուամենայնիվ

հավիտենական կյանքի բարիքները մենք չենք կարող ինչպես պետք է հասկանալ, որովհետև երկրավոր բարիքներից վեր ոչինչ չենք կարող ըմբռնել: Եթե ձիերը խոսք հասկանալին և լսեին, թե իրենց տերը մի լավ սեղան է պատրաստում, ուրիշ բան չէին իմանա, այլ միայն այն, թե լավ հարդ ու լավ գարի է լինելու, որովհետև գրանից զատ ուրիշ լավ բանի գաղափար չունեն: Եվ որովհետև մեր գոյություն վերջին կետն ու նպատակը հավիտենական երանությունն է, ուստի ինչպես Դավիթն իր սաղմոսների սկզբում, այնպես էլ Հիսուս իր քարոզների սկզբում երանության մասին է խոսում: Ինչպես եթե տան հիմքը ծուռ լինի, վրան շինվող պատն էլ ծուռ կլինի, այդպես էլ եթե հավիտենական երանությունը ծուռ հասկացվի, մեր բոլոր գործողություններն էլ, նրան նայելով, ծովելու են: Այս պատճառով Հիսուս, իր խոսքն սկսելով երանությունից, մեզ ճշմարիտ երանությունն է ցույց տալիս, որպեսզի մեր բոլոր գործերն ուղղվեն նրա ուղղության, նրա ձգած լարի համաձայն:

\*\*\*

Հավիտենական կյանքը մի լիակատար կյանք է, որովհետև այնտեղ արդարի աչքը զվարճանալու է այդ գեղեցկության տեսքով, միտքը՝ Ստեղծողին ճանաչելով, կամքը՝ լիապես սիրելով, վայելելով ու հրճվելով Աստծով: Մի խոսքով՝ հավիտենական կյանքը լիուլի և կատարյալ ուրախություն է, ինչպես ասում է Հիսուս. «Որպեսզի ձեր ուրախությունը լիակատար լինի»: Երբ հոգին հայտնապես տեսնի ու գրկի ծայրագույն բարին, այդ ժամանակ կատարելապես արբած կլինի սիրով և երջանկապես կընկղմվի Աստծո մեջ, Դավթի ասածի պես. «Նրանք պիտի հագենան քո տան լիությունից, և նրանց պիտի խմեցնես քո գրգանքի գետերից»:

Սրան հակառակ՝ մեղավորի համար չկա մի այնպիսի թշվառություն, որ այնտեղ չգտնվի, այնտեղ ճաշակելիքին չի պակասելու լեզի, ախորժակին՝ քաղց, լեզվին՝ ծարավ, աչքին՝ սարսափ, ականջին՝ զարհուրանք, քթին՝ գարշահոտություն, սրտին՝ տագնապ, երևակա-

յությանը՝ արհավիրք, անդամներին՝ ցավ, ստամոքսին՝ կրակ: Մահը, որից այնքան երկյուզ են կրում, այնտեղ մեղավորների համար ամենափափազելի բանը կլինի, սակայն այն էլ նրանց տվող չի լինի. «Եվ այն օրերին մարդիկ մահը պիտի փնտրեն, բայց չպիտի գտնեն»:

Այլ է այստեղ և այլ այնտեղ: Այստեղ չկա մի այնպիսի բարիք, որ այնտեղ չունենա իր վարձքը, և այստեղ չկա մի այնպիսի մեղք, որ այնտեղ չունենա իր առանձին տանջանքը: Այնտեղ կհասկանան, որ այս աշխարհում իմաստունը նա էր, ով արհամարհված էր Հիսուսի անվան համար: Այնտեղ հպարտները կստորանան, և ժլատները կմոռան: Չարքաշ կյանքի սովոր մարմինն այնտեղ ավելի զվարթ կլինի, քան փափկություն մեջ պահվածը: Հարստությունն արհամարհելն այնտեղ ավելի մեծ բան կերևա, քան այս աշխարհի բոլոր գանձերը: Խիստ կյանքն ու ճշմարիտ զղջումն այնտեղ ավելի փստրժելի կլինի, քան այստեղի բոլոր վայելչությունները: Այնտեղ բարի գործերն ավելի նշանակություն կունենան, քան այստեղի բարձր խոսքերը: Այնտեղ պարզ հնազանդությունն ավելի կգնահատվի, քան այստեղի ամբողջ իմաստությունը: Այնտեղ խղճի մաքրությունն ավելի ուրախություն կպատճառի, քան այստեղի ողջ փրկսովայությունը: Այնտեղ մի ժամվա տանջանքն ավելի անտանելի կլինի, քան այստեղ հարյուր տարվա ապաշխարանքը: Սովորենք ուրեմն այստեղ տանել մանր նեղությունները, որ այնտեղ ազատ լինենք մեծամեծներից: Չենք կարող և՛ այս աշխարհի ուրախությունները վայելել, և՛ Հիսուսի արքայությունը:

Ինքը՝ Հիսուս, երկու վիճակ ունեցալ՝ շարչարանաց և փառաց, բայց շարչարանաց վիճակը՝ երկրում, իսկ փառաց վիճակը՝ երկնքում: Մենք էլ նրա պես այս աշխարհում պետք է շարչարվենք, որ մյուս աշխարհում փառավորվենք: Չարչարանքն ու փառքը մի տեղում չի տրվում. կա՛մ այստեղ պետք է շարչարվենք, որ այնտեղ փառավորվենք, կա՛մ այստեղ պետք է փառավորվենք և այնտեղ շարչարվենք: Մի սուրբ կույս տեսիլք տեսավ. նրան երևաց Հիսուս՝ ձեռքին մի փշե պսակ բռնած, մյուս ձեռքին՝ մի վարդի պսակ, և

նրան ասաց. «Դո՛ւստր իմ սիրելի, այս երկու պսակներից մեկն ընտրիր, վերցրո՛ւ: Եթե հիմա վարդի պսակն առնես, վերջը քեզ փշե պսակը կմնա, իսկ եթե հիմա փշե պսակն առնես, ինչպես որ ես առա, հետո ինձ պես կփառավորվես, վարդի պսակը կառնես»:

\*\*\*

Արդարների փառքն էլ երկու տեսակ է. մեկը նրանց գործերի փառքն է, մյուսը՝ հատուցումների փառքը: Այժմ միայն արդարների հոգիներն են ստանում իրենց գործերի փառքը, հավիտենական կյանքում ստանալու են հատուցումների փառքը՝ հոգով ու մարմնով, հետևապես բարձրանալու են մի փառքից մյուսը՝ փառաց ի փառս: Եվ այսպես, ամեն առաքինություն այստեղ հանգստացնում է մարդուս միտքը, իսկ մահից հետո՝ հոգին, ապա հարությունից հետո՝ հոգին ու մարմինը միաժամանակ, բայց այստեղ՝ ինքնըստինքյան, այնտեղ՝ հատուցմամբ: Աստվածային մեծ վայելչության տեսությունը արդարների հոգիներին է տրվում իբրև հոգևոր առաքինության վարձ, իսկ արդարության անթառամ պսակը, այն է՝ զորեղությունը, պայծառությունը, անախտությունը և անմահությունը նրանց մարմիններին տրվում է իբրև մարմնավոր բարեգործությունների վարձ: Երկնքում, իրավ, լաց չկա, բայց եթե երանյալները կարողանային լաց լինել, ապա պետք է միայն այն բանի համար լային, թե ինչու իրենց երկրավոր կյանքում ժամանակ կորցրին, որով ավելի փառք կարելի էր վաստակել: Սբ. Ոսկեբերանն ասում է. «Մեղավորներն արքայությունից զրկվելու համար ավելի կցավեն, քան հավիտենական տանջանքների համար»:

Այդ տանջանքների մասին Մարկոս ավետարանիչն ասում է. «Ուր նրանց որդը չի մեռնի»: «Այդ որդը, որ չի մեռնում,— բացատրում է սրբերից մեկը,— խղճի խայթն է, որ կրծելու է դատապարտվածների սիրտը: Սակայն ուրիշ բոլոր խայթերից ավելի նրանց տանջելու են այս երեքը՝ 1. թե նրանք ի՛նչ չնչին բանի համար դատապարտվեցին, 2. թե ի՛նչ թեթև բան էր պահանջվում փրկվելու



համար և Յ. Թե ինչ մեծ բարիք կորցրին»։ Իսկ Սարգիս Շնորհալին ավելացնում է. «Եթե բոլոր արարածները հավիտենական կյանքից զրկվողի վրա մշտապես աղիողորմ կերպով ողբան, դարձյալ չեն կարող ողբալ այն բոլորի միայն մի մասը, ինչին որ արժանի է այդպիսի մի ողորմելին»։

\*\*\*

Բայց ի՞նչ է առհասարակ հավիտենականությունը։ Հավիտենականությունը, ինչպես և Աստծո մասին չի կարելի որոշակի ասել Թե ինչ է, այլ միայն Թե ինչ չէ։ Հավիտենականությունը ո՛չ ժամանակ է և ո՛չ ժամանակի մի մասը, որովհետև Թե՛ ժամանակը և Թե՛ նրա մասն անցավոր են, իսկ նա՝ անանց։ Այնպես որ ինչ որ մինչև օրս եղել է Կայենի տանջանքը մոտ 7000 տարի, նույնն է և այժմ, և ինչ որ այժմ է, նույնն է լինելու և այսուհետև։ Ողորմելի Հուդան 1860 տարուց ավելի է, որ տանջանքների մեջ է, բայց նրա տանջանքները միշտ նոր են սկսվում։ Առ հավիտենականությունից այնքան տարի, որքան կաթիլ կա ծովի ջրերում, որքան ավազահատիկ՝ երկրում, որքան աստղ՝ երկնքում, նա դարձյալ կմնա ամբողջական և անթերի։ Ավելի հեշտ է մի բոպեն համեմատել տասը հազար տարվա հետ, քան տասը հազար տարին՝ հավիտենականության հետ։ Դավիթը հավիտենականությունը նմանեցրեց պսակի, որով ուզեց մեզ հասկացնել, Թե ինչպես պսակը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ, այդպես էլ մեր բոլոր գործերը պսակվելու են հավիտենականությամբ, որ ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ։



## Եթե ննջել է, ապա կապրի

Ադամն իր պատվիրանազանցութեամբ մեզ ծնեց երկրում, Հիսուս իր խաչի մահով մեզ ծնեց երկնքում: Ադամը ծնեց մեզ իբրև մահվան որդիներ, Հիսուս ծնեց մեզ իբրև կենաց որդիներ: Ադամով մեռանք, Հիսուսով ապրեցինք: Ադամով ընկանք, Հիսուսով կանգնելու ենք:

Պողոս առաքյալը Հունաստանի մայրաքաղաք Աթենքում Հիսուսի Ավետարանը քարոզելիս սկսեց խոսել հարութեան և վերջին դատաստանի մասին: Բայց մեռելների հարութեան մասին լսելով ոմանք ուղղակի ծաղրեցին, ոմանք էլ հեզնելով ասացին. «Այդ էլ պահի՞ր, ուրիշ անգամ ասա»: Սակայն միայն կռապաշտ աթենացիք չէին, որ չէին հավատում հարութեանը, այլև մեր ժամանակի շատ քրիստոնյաներ կասկածում են հարութեան հույսի վրա, որովհետև եթե շնացողն իսկապես հավատար, որ հարութուն է լինելու և գործերի հատուցում, էլ ինչո՞ւ խոզի պես միշտ տիղմի մեջ կթավալեր: Եթե որկրամուրը հավատար հարութեանը, ինչպե՞ս չպետք է խրատվեր ավետարանական մեծատան օրինակից, որի սեղանը լի էր կերակուրներով, և թակուկները՝ գինով, բայց վերջը մի կաթիլ ջրի կարոտեց: Եթե հարուստը հավատար, ինչպե՞ս ծառա կդառնար մամոնային, կլացացնե՞ր այրիներին, կզրկե՞ր որբերին....

Եվ եթե հարութեան հույսը մի հաստատուն բան չլիներ, ո՞վ մանկությունից անձնատուր կլիներ կուսության ու ժուժկալության, ո՞վ կկռվեր ցանկության կատաղի ալիքների դեմ և կմահացներ իր երկրավոր անդամները: Ո՞վ առանց հարութեան հույսի կզրկեր իրեն իր բոլոր հարստությունից, կցրեր, կբաժաներ աղքատներին, իսկ ինքն աղքատությունը, սովով, ծարավով և մերկ կանցկացներ իր կյանքը, եթե չիմանար, թե մեկի փոխարեն հազարապատիկն է ստանալու հարութեան ժամանակ: Ո՞վ իրեն մինչև գետին կխոտարհեցներ և նախատինք հանձն կառներ, եթե հաստատ չիմանար, թե հարութ-

յամբ պատիվ ու բարձրություն է ստանալու և Հիսուսի հետ թագավորելու: Մ՛վ այրել կտար իրեն, մաս-մաս կտրատել կտար իր ողջ մարմինը, եթե չհավատար, թե հարությունյամբ կրկին նորոգվելու և ամբողջացնելու է իր փոշիացած ու ցրված մարմինը: Մ՛վ ողբի ու հառաչանքի, աղոթքի ու պահքի, արտասուքների և հսկումների մեջ կմաշեր իր կյանքը, եթե չիմանար, թե հարությունյամբ երկնային ու հավիտենական ուրախությունն է վայելելու:

Շատերը մտածում են՝ կարելի՞ քան է, որ մարդ հարություն առնի, մանավանդ ով ծովում խեղդվեց, ցամաքում գազանների կեր դարձավ, ով սրով խողխողվեց, կրակով այրվեց: Ասա՛ տեսնեմ, հարյուր տարի առաջ դու ո՞ւր էիր. չկայիր, իհարկե, ուրեմն նա, որ շեղածը եղած է դարձնում, եղածն ու ընկածը չի՞ կարող նորից կանգնեցնել: Նա, որ մեր ապրուստի համար ցանած ցորենը մեռած տեղից կենդանացնում է, կդժվարանա՞ հարություն տալ: Մովսեսի գավազանը փայտ էր, մարմին դարձավ, իսկ ընկած մարդը չպե՞տք է հույս ունենա կրկին կանգնելու: Ինչո՞ւ հապա Եսայի մարգարեն վկայում է. «Պիտի հառնեն ու կանգնեն մեռածները, որոնք գերեզմաններում են»: Վերջապես եթե հարություն չլինի, նշանակում է Աստված կա՛մ չի կարողանում, կա՛մ չի կամենում հարություն տալ: Բայց առաջին դեպքում մարդ պետք է ուրանա Աստծո ամենակարող զորությունը, երկրորդ դեպքում՝ նրա ամենաբարի լինելը:

\*\*\*

Քրիստոսի հարությունն ավետարանի հիմնական մասն է: Այդ պատճառով առաքյալն ասում է. «Եթե մեռելների հարություն չկա, ապա և Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է մեր քարոզությունը, ի զուր է և ձեր հավատը»: (Եթե Քրիստոս հարություն չի առել, մենք չենք կարող հարության հույս ունենալ, և մեր հավատքն անհիմն է):

Ասում են՝ ինչպե՞ս պետք է հարություն առնեն մեռելները, որովհետև մարմինն ահա մաշվում է և փչանում, մանրվում է ու փո-

չի դառնում, և երբ մարդ մտնում է հարյուր մեռել եղած գերեզմանը, միայն մի բուռ փոշի է գտնում: Դրան առաքյալը դարձյալ պատասխանում է. «Անմի՛տ, քո ցանածը չի կենդանանա, եթե առաջ չմեռնի, և երբ ցանում ես, այն մարմինը չես ցանում, ինչ որ ծնվելու է, այլ մերկ հատիկ, իսկ Աստված տալիս է նրան մարմին»: Եվ ինչպես այն հողից, որտեղ սերմ չի ձգված, ցորեն դուրս չի գա, այնպես էլ այն գերեզմանից, ուր մեռել չի թաղված, հարուժյան ժամանակ մարդ դուրս չի գա, որքան էլ փողերի ձայնը ներսում աղաղակի: Այսպես էլ մարդուս մարմինը մեռնելով ոչ թե պետք է ապականվի ու փշանա, այլ պետք է կերպարանափոխվի ու փառավորվի, որովհետև եթե ձայնը Հիսուսինն է, որ կանչելու է մեզ մեռելուց թշուրից, և եթե Սուրբ Հոգին է, որ ծնելու է մեզ «երկրի արգանդից», հասկանալի է, որ ինչպես մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածն էլ հոգի է լինելու: Նշանակում է հարուժյամբ ստանալու ենք ոչ թե շնչավոր, այլ հոգևոր մարմին: Եվ երբ առաքյալն ասում է. «Այլ է երկնավորների մարմինը, և այլ երկրավորների մարմինը», այդ այնպես պետք է հասկանալ, որ արդարների մարմինը հարուժյուն առած ու նորոգված ժամանակ իբրև փառավորված մարմին երկնավոր է կոչվում, իսկ մեղավորների մարմինը, որ չի նորոգվում, իր բնույթամբ կոչվում է երկրավոր մարմին: Ուստիև առաքյալն իր խոսքն ավելի պարզ դարձնելու համար ավելացնում է. «Բոլորս էլ պիտի ննչենք, բայց ոչ թե իսկապես բոլորս պիտի նորոգվենք»:

Եվ ի՞նչն է պատճառը, որ արդարները պետք է նորոգված հարուժյուն առնեն: Պողոսը պատասխանում է. «Եթե իր շարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին»: «Հարուժյուն պետք է առնեն,— ասում է,— որ Քրիստոսի փառքին մասնակից լինեն»: Ինչ մեծ երանույթյուն, ինչ ահագին պատիվ. այս անցավոր շարչարանքների փոխարեն ինչպիսի՛ փառքի են հրավիրվելու արդարները: Արդարները մասնակից են լինելու Նրա անսահման փառքին, որ չի տեղավորվում երկնքի և երկրի սահմաններում, որին ծովը տեսավ և վախեցավ, անտառները տեսան և դողացին, երկիրը

տեսավ և սարսուեց, արևը տեսավ և խավարեց: Մեր հողեղեն բնութ-  
յունը պետք է մասնակցի ահա մի այդպիսի շտենսված, չլաված  
փառքի: Եթե հազար տարի ապրեինք, մեր այդ կյանքը չէր համե-  
մատվի այն փառքի մի օրվա կյանքի հետ, որն սպասվում է արքա-  
յության մեջ:

\*\*\*

«Արդ, երբ որ մարդու Որդին գա իր փառքով և բոլոր  
հրեշտակները իր հետ, այն ժամանակ նա պիտի նստի իր փառքի  
գահի վրա»:

Այս խոսքերով Հիսուս ինքը վկայում է, որ միաժամանակ լինե-  
լու է դատաստան՝ մեռելների և ողջերի: Պատրաստ ենք մենք այդ  
դատաստանի համար, այնպե՞ս ենք ապրում, որ եթե հենց այս րո-  
պեիս սկսվի վերջին, տիեզերական դատաստանը, կարողանանք բաց  
ճակատով հանդիպել ամպերի վրա դեպի մեզ եկող Աստվածորդուն,  
որովհետև. «Ահագին է օրն դատաստանին,— ասում է շարականը,— և  
դողումն առաջին բեմին, սարսափին հրեշտակք, սասանի երկիր»:  
Բայց մենք ինչպե՞ս կարող ենք պատրաստ լինել, երբ մեր ողջ կյան-  
քում առաջին տեղը տալիս ենք ժամանակավոր բաներին, իսկ վերջին  
տեղը՝ հավիտենական բաներին՝ նման այն անհեթեթ նկարչին, ով  
նկարը միշտ սկսում էր ոտքերից, ուստի հաճախ պատահում էր, որ  
գլխի համար տեղ չէր մնում: Եթե մեկը քեզ մի մեծ գումար պետք է  
տա, աշխատում ես նրանից շուտով մի պարտաթուղթ ստանալ, ասե-  
լով. «Մ՛ի գիտե՛ ինչ կարող է պատահել»: Ինչո՞ւ նույն հեռատեսութ-  
յամբ չես վարվում և հոգուդ հետ, որ այդ գումարից շատ թանկ արժե  
քեզ համար: Եթե առնելիք գումարիցդ զրկվելու լինես, ամեն բան  
կորցրած չես լինի, և եթե կորցնես էլ, հույս կունենաս երբևիցե նորից  
ձեռք բերելու: Բայց եթե մեռնելով հոգիդ կորցնես, ամեն բան կորց-  
րած կլինես և հույս չես ունենա երբևիցե նորից ձեռք բերելու: Ուրեմն  
գոնե մի անգամ պետք է չզբաղվե՞ս նրանով, թե ինչ է պահանջվելու  
քեզնից ահեղ դատաստանի օրը:

Այնտեղ պահանջվելու է Աստծո պատվիրանները, նրա օրենքներն իմանալը: Այդ օրենքներն են Աստծո կամքը և օրենսգիրքը՝ Ավետարանը: Ոչ ոք չի կարող արդարանալ, պատճառ բերել, թե անձանոթ է այդ օրենքներին, որովհետև եկեղեցին մեզ ամեն օր լսելի է դարձնում այդ օրենքների հողվածները՝ ոչ միայն օրենսգիրքը հաճախակի բանալով, այլև առանձին բացատրություններով: Ողջ ժամերգությունը, ամբողջ աստվածպաշտությունը քարոզում է, «Փրկիչն աշխարհ է եկել, և Աստծո կամքը մեզ հայտնվել է»: «Բանն, զոր խօսեցայ,— ասում է Հիսուս,— նա դատեսցէ յաւուրն յետնում»: Ավետարանն ինքը պետք է լինի մեր մեղքերը հանդիմանողը, և առաջին հանցանքը, որ նա մերկացնելու է, լինելու է այն անուշադրությունը, որով մենք լսում էինք նրա խոսքերը: Ինչո՞վ պետք է արդարանանք: Ավա՛ղ, անկարելի է կաշառել կյանքի ու մահվան Դատավորին: Նրա ձեռքը կաշառքների սովոր չէ, նա սովոր է ողորմություն ստանալուն: Նա երկինքը ոսկու հետ չի փոխում, փոխում է առաքինություն հետ: Նա արդարություն է դատում ամենքին. ո՛չ թագավորին է կողմնապահություն անում, ո՛չ դռնապանին: Նա թույլ տվեց ծախել իրեն, երբ եկավ դատվելու, բայց թույլ չի տա գնել Իրեն, երբ կգա դատելու: Սուրբ կյանք, մաքուր խիղճ, ահա այն ամենը, որ կարող ենք տալ երկնավոր Դատավորին:

\*\*\*

Մտածենք մի անգամ, թե ում ենք հաշիվ տալու: Սովորական մարդ չէ, որին հաշիվ ենք տալու: Մենք նրան ենք հաշիվ տալու, որ ոչ թե երեսին է նայում, այլ սրտին, որ չգործած հանցանքներն է քննում և անհայտները տեսնում, որ վկայի կարիք չունի, որովհետև մեր բոլոր արածները հայտնի են նրան՝ թե՛ գործ, թե՛ խոսք և թե՛ մտածություն, ինչպես ասում է մեր Շնորհալի հայրապետը. «Յուզց են տալիս մարդկանց գաղտնի գործերը. բարի գործողները պսակի են արժանանլու, իսկ չարիք գործողները անշեջ կրակի են մատնվելու»:

Բայց, Տե՛ր, «Եթե արդարը հազիվ է ապրում, ապա ի՞նչ կլինի մեղավորի և ամբարշտի կյանքը»: Եթե արարածներիդ հետ քննութ-  
յան մեջ մտնես, ո՞վ կարող է արդարանալ: Արդար Հոբի ասածի պես  
երկինքն անգամ անարատ չէ քո առաջ, ոչ էլ անմարմին և մաքուր  
երկնային գորուծյունները, ուր մնաց թե մարդիկ: Որովհետև ո՞վ  
կարող է պարծենալ, թե սուրբ սիրտ ունի, կամ ո՞վ կհամարձակվի  
ասել, թե ինքը մեղք չունի: Ոչ ոք, ո՛չ արդարներից և ո՛չ իսկ սրբերից  
մեկը: Ահա ինքը՝ առաքյալն է հարցնում զարմացած. «Ո՞վ է, որ  
ապրում է և մեղք չի գործում», «որովհետև Դու ես միայն առանց  
մեղքի»,– ավելացնում է սբ. Եկեղեցին:

Դատաստանի համար պատրաստված չլինելու ընդհանրացած  
պատճառն այն է, որ երկնային Դատավորը դեռ շատ ուշ պետք է  
գա: Հիրավի, դարեր են անցնում այս մեղավոր աշխարհի գլխով,  
բայց Դատավորը չի երևում: Մեղավորներն ապրում են երջանիկ,  
արդարները՝ վշտերի մեջ, չարիքն ամեն կողմից գետի պես հոսում է  
ու ողողում աշխարհս, իսկ երկինքը, որ ընդունեց իր մեջ հաղթանա-  
կող Լմբիշին, չի բացվում, և մեղքի Հանդիմանողին չենք տեսնում, էլ  
ուր մնաց Նրա գալու խոստումը: Սակայն, որ լավ մտածենք, հա-  
պաղման յուրաքանչյուր բոպեն մեզ համար մի առանձին ողորմու-  
թյուն է: Դատավորի համար բոլոր հոգիները թանկ են, նա կցանկա-  
նա ամենքիս էլ արքայություն մեջ տեսնել, ուստի սպասում է. «Կա-  
րելի է՝ գղջում են մեղավորները»:

Մենք ինչպե՞ս կարող ենք իմանալ դատաստանի օրը, քանի  
որ իրենք՝ առաքյալները, չիմացան նույնիսկ Սուրբ Հոգու գալու օրը,  
քանի որ դրա «երբ լինելը չգիտեն ո՛չ հրեշտակները և ո՛չ իսկ Որ-  
դին, այլ գիտի միայն Հայրը»: Բայց մի՞թե կարելի է, որ դատավորը  
չիմանա դատելու օրը: Ո՛չ, Հիսուս, իհարկե, գիտեր, բայց մեզ՝ իբրև  
իր ծառաների, չուզեց հայտնել «Տիրոջ վերադարձի օրը», որպեսզի  
քնած չմնանք անհոգություն մեջ, այլ արթնություն մե և տքնություն  
հսկենք՝ աչքերս նրա ճանապարհից չհեռացնելով:

Սակայն բոլոր աստվածաբանների ասելով մեռնելուց հետո մարդս իսկույն ներկայանում է դատվելու: Առաջին դատաստանը տեղի է ունենում այն իսկ ընդհանրապես, երբ հոգին բաժանվում է մարմնից: Այսպես, Ադամը մեղանշելուց հետո իսկույն ստացավ մահվան վճիռը, բայց նա դառնություն բաժակը խմեց 930 տարի հետո: Այդպես էլ ամեն մարդու համար մեռած ընդհանրապես է տրվում իր դատաստանի կնիքը, իսկ վարձատրության կամ պատժի գործադրությունը վերապահվում է վերջին, համաշխարհային դատաստանին, որի երբ լինելը թեպետ հայտնի չէ, սակայն նրա մոտ լինելու մի քանի նախընթաց նշանները տրված են մեզ:

\*\*\*

Դատավորի գալուց առաջ երկնքից կրակ պետք է իջնի՝ այրելու, լափելու ամբողջ երկիրը և ինչ որ կա նրա վրա: Այնպես որ տներ, պալատներ, տաճարներ, գյուղեր, քաղաքներ, տերություններ մոխրակույտ պետք է դառնան. «Նրա առջև հուր պիտի բորբոքվի»: Այդ կրակով պետք է մաքրվի այս աշխարհի տունը, որ ոտնակոխ էր եղել մեղքից: Ապա փող պետք է փչվի, և մեռած մարմինները պետք է միանան իրենց հոգիների հետ, ինչպես երգվում է Շարականում. «Յորժամ հարկանի փող գալստեան քո, Տէ՛ր, յայնժամ և երկիրս դղրդեալ՝ վերաբերէ զննչեցեալսն, որք յԱդամայ»:

Ամենքը գնալու են Հրեաստան, Հովսափատու ձորը, որովհետև «այնտեղ պիտի նստեմ՝ դատելու բոլոր ազգերին»,– ասում է Հիսուս Հովել մարգարեի բերանով: Այնտեղ հրեշտակները մեղավորներին հեռացնելու են արդարների միջից, ինչպես ցորենը հարդից: «Եթե մեղավորներն ուրիշ տանջանք էլ չունենան,– ասում է սբ. Ոսկեբերանը,– միայն այդ ամոթը բավական է նրանց»: Որդին պետք է բաժանվի հորից, այրը՝ կնոջից, տերը՝ ծառայից, «մեկ կվերցվի, և մյուսը կթողվի»: Ի՞նչ կասես, սիրելի՛ս, ո՞ր կողմը պետք է վիճակվի քեզ այդ օրը: Կուզե՞ս աջակողմում գտնվել, թո՞ղ այն ճանապարհը, որ ձախակողմն է տանում:



Արդարները պետք է աջակողմում տեղավորվեն և փառքով վեր բարձրանան օդի մեջ, ամպերի վրա՝ ընդառաջ գնալու Հիսուսին, որ գալու է երկնքից: Իսկ մեղավորները մորթվող այծերի պես քշվելու են ձախակողմը՝ սպասելով դատավորին, որ հանդիսավոր կերպով դատավճիռ պետք է տա իր թշնամիներին: Հանկարծ երկինքը պետք է բացվի, և հրեշտակները պետք է իջնեն՝ ներկա լինելու դատաստանին, ինչպես ասում է Շնորհալին. «Եւ հրեղինաց դասք երկնայինք համանգամայն վայրաբերին»:

«Եվ ապա երկնքի վրա մարդու Որդու նշանը պիտի երևա»:

Ինչպես երբ մի թագավոր հանդիսապես մի տեղ է գնում, առջևից իր դրոշակն է ծածանվում, որով ամենքն իմանում են, որ թագավոր է գալիս, այդպես էլ սուրբ Խաչը, որ թագավոր Հիսուսի դրոշակն է, պետք երևա օդում մի այնպիսի շլացուցիչ լույսով, որ իր պայծառությամբ գերազանցելու է արևի լույսին, ինչպես երգվում է Շարականում. «Խաչն փայլի յարևելից եօթնպատիկ պայծառ, քան զարեգակն»: Խաչի նշանը տեսնելով՝ այն բոլոր սրբերն ու արդարները, որոնք խաչակից եղան Հիսուսին, իսկույն հավաքվելու են արքայական դրոշակի տակ իբրև հավատարիմ ու քաջ զինվորներ՝ նրանից պսակներ ստանալու, ինչպես ասում է Շնորհալին. «Հիւսիս պսակք զանագանեալք և պատմուճանք լուսափայլեալք. սուրբ վկայիցն ի գլուխ եդեալ և արդարոցն զարդարեալ»: Իսկ նրանք, որոնք չառան իրենց վրա Հիսուսի խաչը և մանավանդ իրենց կյանքով միաժամանակ անարգեցին խաչն ու խաչալին, պետք է կոծեն իրենց կրծքերը. «Եվ այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն»:

Իբրև Հիսուսի աթոռակիցներ՝ դատաստանին ներկայանալու են նաև առաքյալները և նրա հետ միասին դատելու են ամենքին: Ապա երևալու է հավիտենից Դատավորն իր փառաց աթոռով. «Եվ տեսցեն զՈրդի մարդոյ, եկեալ ընդ ամպս երկնից, զորութեամբ և փառօք բազմօք»: Դատաստանը լինելու է րոպեապես: Հիսուս, նախ դիմելով իր ընտրյալներին, ասելու է. «Եկե՛ք, Հորս օրհնածնե՛ր, ժա-

ռանգեցե՛ք արքայությունը, որ պատրաստված է ձեզ համար»: Եկե՛ք, այլևս ձեզ պատիժ ու տանջանքներ չկան, արդեն փրկված եք և փրկված հավիտյան: Օրհնո՛ւմ եմ իմ արյունը, որ թափեցի ձեզ համար, օրհնո՛ւմ եմ և ձեր արցունքը, որ թափեցիք ձեր մեղքերի համար: Եվ ընտրյալները մտնելու են արքայություն՝ ժառանգելու, օրհնելու և սիրելու Աստծուն հավիտյան. «Եվ արդարները պիտի գնան դեպի հավիտենական կյանք»:

Ապա դառնալով դեպի մեղավորները՝ Հիսուս ասելու է. «Կորե՛ք աչքիցս, անհիծյալնե՛ր, որ ձեր արքայությունը ձեր երկրավոր վայելչություններով շինեցիք, տանջվեցե՛ք հավիտենական տանջանքներով»:

Պատմում են, որ մի օր, երբ Իսպանիայի Փիլիպպոս Բ թագավորը Պատարագի ժամանակ եկեղեցում աղոթում էր, կողքին կանգնած երկու իշխանները բարձրաձայն խոսում էին: Նա առժամանակ չսող ձևացավ, բայց Պատարագի վերջում նրանց սաստկությունամբ ասաց. «Ո՛վ թշվառականներ, էլ չերևաք աչքիս»: Այս կարճ խոսքն այնքան խիստ թվաց նրանց, որ մեկը մեռավ ցավերից, իսկ մյուսն իր ամբողջ կյանքում խելագար մնաց: Ի՛նչ կլինի հապա երկնավոր թագավորից լավող այս ա՛հեղ բարբառի ուժը, թե. «Կորե՛ք աչքիցս, անհիծյալնե՛ր»: Եվ հեռանալով Աստծուց, որ ամբողջ բարություն աղբյուրն է, նրանք զրկվելու են այն ամեն բանից, ինչ որ կարող էր մխիթարական լինել իրենց համար. «Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք»:

\*\*\*

Իսկ մենք, սիրելի՛ս, քանի որ Տերն անցել, նստել է շնորհաց աթոռը, խոստովանությամբ մոտենանք նրա աթոռին և հարմար ժամանակին ողորմություն գտնենք: Այժմ շնորհներ է բաժանում, այժմ մեղքեր է ներում, այժմ վերքեր է բժշկում, այժմ հիվանդություններ վերացնում: Չսպասենք ա՛հեղ դատաստանին, երբ նա վեր կկենա շնորհաց աթոռից և կնստի փառաց աթոռը: Այն ժամանակ արդա-

րությամբ կչափի և իրավամբ կհատուցանի. «Կոչնատերն ահեղ, կոչողն ահաւոր, դատաւորն անաշառ, դատաստանն արդար, հրեշտակք անողորմ՝ դատեն զմեղաւորս»: Այժմ Աստված օգնական է ապաշխարողներին, այն ժամանակ ահարկու է լինելու արհամարհողներին: Այժմ հորից ավելի գթած է դարձի եկողների վրա, այժմ մորից ավելի է աղեկիզում մեղավորների վրա: Աղաչենք ուրեմն, որ մեզ հետ դատաստան չմտնի, աղաչենք մեր Շնորհալի հայրապետի բերանով. «Արդարութեամբ մի՛ դատեսցես, այլ գթութեամբ քով քաւեսցես»:



# ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

## ԲԱՆ Ա

«Ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի,  
և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի:  
(Ղուկ. ԺԸ:14)

«Ողջ աշխարհն ապրում է ստրկության մեջ, – ասում էր Դիոգինես փիլիսոփան, – ստրուկները հպատակվում են իրենց տերերին, տերերը՝ իրենց կրքերին»: Հիրավի, չկա մի մարդ, որ ստրուկ չլինի իր այս կամ այն կրքին. այնպես որ տիրելով երկրին և իշխելով բոլոր արարածների վրա՝ մարդս տկարանում ու ընկճվում է իր կրքերի առաջ, որոնք միշտ իշխում են նրա վրա և որոնց բանը նրա սիրտն է: Սիրտը կրքերի աշխարհն է: Աշխարհային գոռ<sup>1</sup> պատերազմները ոչինչ են սրտի անդնդային պատերազմների մոտ, ծովն իր կատաղի ալեկոծություններով մի խաղաղ տեսարան է սրտի դժոխային ալեկոծությունների առաջ: Սակայն կան կրքեր, որոնք առաքինություններ են, կան և կրքեր, որոնք մարդուս հոգին են ապականում: Ահա այդ վերջին տեսակի շար կրքերը մի-մի հոգեկան սիրտ են, որոնք սպանում, մահացնում են հոգին՝ զրկելով նրան Աստծո տեսությունից: Այդ պատճառով էլ մահացուցիչ կրքերից առաջ եկած մեղքերը կրոնական լեզվով կոչվում են մահացու մեղք, որոնք թվով յոթն են և հիշված են «Մեղայի» մեջ: Սրբերից մեկն ասում է. «Աստված ընդունակ չէ ցավերի, բայց եթե կարողանար

---

<sup>1</sup> Ահեղ, ահավոր:

ցավել, ապա մեկ մահացու մեղքն անգամ բավական էր, որ նա ցավից մեռներ»: Ինչո՞ւ: Որովհետև մահացու մեղքը մի անարգանք, մի անիրավություն է Աստծո դեմ:

«Մարդս հասարակական կենդանի է»,– ասում է այժմյան գիտնականներից մեկը, այսինքն՝ ստեղծված է հասարակությամբ ու հավասարությամբ ապրելու համար: Բայց երբ նա սկսում է իր վրա մեծ համարմունք<sup>1</sup> ունենալ և աշխատում է ուրիշներից բարձր երևալ, գերազանցել ուրիշներին, երբ փախչում է Աստծուն հնազանդվելուց և անիրավաբար կամենում է ուրիշներին իրեն հնազանդեցնել, նշանակում է նա վարակված է մի ամենավատթար հոգեկան ախտով, դարձել է մի հոգեեսպան կրքի ստրուկը, որը հպարտություն է կոչվում:

Մեզանից յուրաքանչյուրը մի որոշ շահով այդ կրքի ստրուկն է, որովհետև ամենքս էլ մեր մեջ քիչ թե շատ սնուցանում ենք այդ ախտը: Բավական է, որ խորը մտնենք ու քննենք սրտներս, իսկույն կտեսնենք, որ մի հակում ունենք եղածից ավելի երևալու: Կա այնպիսի մարդ, որ ինքն իրեն է գովում, բարձրացնում, բերանն այնպես չի բաց անում, որ իր մասին չխոսի, իրեն ուրիշներից վեր չդասի. «Ես ա՛յս արի, ա՛յն արի, եթե ես չլինեի, քարը քարի վրա չէր կանգնի»: Սակայն ինչպես որ մեծ առաքինություն է լինել երևելի և իրեն անպետք համարել, այնպես էլ մեծ մոլություն է լինել թշվառական և իրեն գովելի համարել: Ով որ իր սրտում իրեն պատվավոր է համարում ուրիշներից և իր հետ համեմատելով արհամարհում է նրանց, նման է այն մարդուն, ով իր տան մեջ իրեն է մեծարում՝ փոխանակ ուրիշներին մեծարելու, այսինքն՝ ռամիկ է և անարգ: Եվ որովհետև, ինչպես երևում է, ուրիշների մեծ համարմունքը փոքրացնում է իր համարմունքը, ուստի չբավականանալով իրեն բարձրացնելով՝ դեռ ուրիշներին էլ ստորացնում է իրենից, իրենից գատ ուրիշի մեջ գովելու բան չի գտնում: Կա և այնպիսի մարդ, որ այնպես գոռոզություն է խոսում, որ ասես թե բարձր սարերն իր

---

<sup>1</sup> Վարկ, հարգ, գնահատում, հարգանք:

ստեղծածն են, իրենից զատ ոչ ոքի բանի տեղ չէ դնում: Մի խոսքով ամեն մարդ ուզում է իր վիճակից բարձր երևալ. որդին ուզում է հորից գիտուն երևալ, ծառան ուզում է հրամայել, ստորադրյալը՝ իշխանավոր երևալ, աշակերտը՝ ուսուցիչ լինել, աղքատը՝ հարուստ, հարուստը՝ ազնվական, ազնվականը՝ իշխան: Բայց եթե դու տեսնեիր մի ձի կամ մի շուն, որ աշխատում է ձիերի կամ շների մեջ ամենքին գերազանցել, կարո՞ղ էիր ծիծաղդ զսպել: Եվ սակայն մի՞թե դու ավելի մեծ ծաղրի չես արժանի, երբ ուրիշների առաջ փքվում ես նրանով, որ հարուստ ես և շքեղ ես ապրում:

Ամեն մեղք փախչում է Աստծուց, միայն հպարտությունն է, որ ընդդիմանում է նրան, ուստիև Աստված ինքը հակառակ է հպարտներին, ինչպես ասում է Հակոբոս առաքյալը. «Քանի որ Աստված հակառակ է ամբարտավաններին»: Եվ հպարտությունը ոչ միայն մեղք է, այլև ամեն մեղքի պատճառն ու աղբյուրը, որովհետև մեղքն առհասարակ Աստծո պատվիրաններն անարգելն է, որ Սուրբ Գրքի ասածի պես առաջ է գալիս հպարտությունից. «Բոլոր մեղքերի սկիզբը հպարտությունն է»: Հպարտության ախտով վարակված են ամենքն անխտիր՝ հարուստն էլ, աղքատն էլ, տերն էլ, ծառան էլ, իշխանավորն էլ, ստորադրյալն էլ, աշխարհականն էլ, հոգևորականն էլ: Երանելի Օգոստինոսն ասում է. «Ուրիշ ամեն մոլուխներից զգուշանալու է մեղք գործելու ժամանակ, բայց հպարտությունից վախենալու է նաև բարեգործության ժամանակ, որովհետև հպարտությունն ինչ առաքինության մեջ որ մտնում է, նրան կա՛մ մոլուխն է փոխում, կա՛մ անպտուղ դարձնում»: Թուչնի պես է հպարտությունը. ինչպես գորեղ թուչնը մարդուս մարմնի բոլոր մասերն է թափանցում, այնպես էլ հպարտությունը հոգու վրա իշխելիս նրա բոլոր գործողությունների մեջ է թափանցում, բոլոր առաքինություններն ու բարեգործություններն ապականում: Աղոթքը, պահեցողությունը, ողորմություն տալը, ճգնելը գերազանց առաքինություններ են, բայց երբ դրանց մեջ ցուցամոլություն է մտնում, ամբողջ արդյունքը կորցնել է տալիս:

Շատերը հպարտանում ու պարծենում են իրենց մարմնավոր բարիքներով առողջությամբ, ուժով, գեղեցկությամբ և նույնիսկ հարստությամբ: Բայց դրանք բոլորը և նույնիսկ մարդուս կյանքը ժամանակավոր են, երբեմն էլ՝ վնասակար, որովհետև շատ անգամ մարմնի առողջությունը հոգու հիվանդության պատճառ է դառնում, և դրան հակառակ՝ ծանր հիվանդությունը զգաստացնում է հոգին: Ուստի երկնավոր բարիքների սերը մեզանում վառ պահելու համար Աստված այնպես է կարգադրել, որ երկրավոր բարիքներն իրենց վայելողի մահից էլ առաջ անհետանան: Երիտասարդական տարիները մարդուց խույս են տալիս ոչ միայն այն ժամանակ, երբ նա մեռնում է, այլև երբ նա կենդանի է. շատ չի անցնում, և ահա այդ հասակն իր ուժերով ու հրապույրներով տեղի է տալիս ուժասպառ ծերությունը: Այսպես էլ գեղեցկությունը տակավին կնոջ կենդանության ժամանակ է անցնում ու փոխվում տգեղության: Հարստությունը ոչ միայն անհետանում է հարուստի մահով, այլև նրան մենակ է թողնում՝ նրա կենդանության ժամանակ: Փառքը, պատիվն ու իշխանությունն էլ կարճատև են. իրենց վայելողներից էլ ավելի շուտ են մեռնում:

Պետք է գիտենալ, որ երկրավոր բարիքները երեք տեսակ են: Առաջինը՝ խելքը, հիշողությունը, ուժը, գեղեցկությունը և սրանց նման բաներն են, որ կոչվում են բնության բարիք: Երկրորդը՝ հարստությունը, պատիվը, իշխանությունը և այլն, որ կոչվում են բախտի բարիք: Եվ երրորդը՝ բարեպաշտությունը, առաքինությունը, խոսելու, գրելու, թարգմանելու ընդունակությունը, որ կոչվում են շնորհաց բարիք: Արդ, նայելով այդ հանգամանքներին՝ հպարտները լինում են երեք տեսակի:

Առաջին տեսակի հպարտները նրանք են, ովքեր այդ երեք տեսակ բարիքներն էլ ունեն, բայց չեն ուզում հասկանալ, չեն խոստովանում, որ բոլորն Աստծուց են ստացել: Կան և այնպիսիք, որոնք եթե մի քիչ փողի տեր են, կա՛մ ազնվական, կա՛մ քիչ-շատ իշխանություն ունեն և կա՛մ գեղեցիկ են, ասես թե ուրիշ տեսակ մարդիկ են, երկնքից զամբյուղով են իջել, և մյուս բոլոր մարդիկ ստեղծված

են իրենց պատիվներ տալու և ծառայություն անելու համար: Վա՛յ նրանց, ովքեր այդպիսիներին մի առանձին համարմունք ցույց չտան, մի քիչ պակաս քաղաքավարի լինեն, մեծ հանցանք գործած կլինեն: Այդպիսի ողորմելիները չեն մտածում, որ իրենք ոչինչ չունեն և ինչ էլ որ ունեն, Աստուծոց են ստացել, ինչպես առաքյալն ասում է. «Ի՞նչ բան ունես, որ ստացած չլինես. և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես»:

Ահա այսինչ պարոնը հազար հազարների տեր է դարձել, փորն ուռեցրել, քիթը վեր տնկել, առաջին բարևը միշտ ուրիշներից է սպասում, շատերի բարևին չի էլ պատասխանում, հին բարեկամներից երես դարձնում: Եթե կա մի բան, որի առաջ խոնարհվում ու երկրպագում է, այդ իր «ոսկե կուռքն» է, որին պատրաստ է զոհել ամեն բան, նույնիսկ իր հոգին: Եթե ամեն բանում առաջ իր անունը չհիշվի, եթե ամեն ժողովում առաջ իրեն տեղ չտրվի, եթե մի գործ առանց իր համաձայնության ձեռնարկվի, եթե նույնիսկ մի դպրոց, մի եկեղեցի առանց իր կամքի շինվի, պատրաստ է ամեն սկսածը ոչնչացնելու, ամեն շինածը քանդելու:

Տե՛ս, ահա այնինչ երիտասարդը մի քիչ ուսում է առել, մի երկու հոգված է գրել լրագրում, էլ հետը խոսել չի լինի. աշխարհումս ինչ գիտություն, ինչ իմաստություն կա, նրա գլխում է, ամենակարող է, ուզենա, երկրագնդի անիվը կշրջի: Ինչ լավ բան գրվել, ասվել է, մի խոսքով ինչ հառաջագիմություն եղել է, բոլորն իր խելքի, իր գրչի շնորհիվ է եղել: Սա էլ իր «ես»-ն է պաշտում, ուրիշներից էլ նույնը պահանջում:

Տեսնո՞ւմ ես այս կնոջը, որին Արարչի մատը փոքր ինչ խնամքով, ուրիշներից բավական տարբեր կերպով է հորինել ու նկարել: Բայց այդ թույլ էակն իր կազմի ու դեմքի ներդաշնակության մեջ իր Ստեղծողի անսահման ու աննման կատարելությունը տեսնելու, նրա գեղեցկության վրա հիանալու փոխարեն իր արտաքին փայլն իր ներքին կուռքն է դարձնում և ուրիշներից երկրպագության սպասում: Ում հայացքին հանդիպում է, կարծում է, թե ամենքն իր գե-



ղեցկութեամբ են զբաղված, ում վրա մի ակնարկ է գցում, կարծում է, թե նա տեղնուտեղը հալվում է: Այս պատճառով փքվում է իր մեջ, ամենքին բարձրից է նայում, կանանց արհամարհում, տղամարդկանց հազիվ է արժանացնում իր բարեկին: Հրավերքներում առանձին պատիվներ է պահանջում, երեկույթներին բոլորից ուշ է շնորհ տանում, որպեսզի ընդհանուրի ուշքը գրավի իր վրա, և նույնիսկ Աստծո տուն ներս է մտնում այն ժամանակ, երբ ժողովուրդը լցված է լինում, այն էլ ոչ թե այն պատճառով, որ շկարողացավ ժամանակին պատրաստվել, այլ որ ներս մտնի մի դշխոյի, մի թագուհու պես և ընդ որում, իհարկե, ոչ թե երկրպագութուն տալու, այլ դարձյալ երկրպագութուն ստանալու համար:

Երկրորդ տեսակի հպարտները նրանք են, ովքեր թեպետ խոստովանում են, որ ունեցած բոլոր բարիքներն Աստծուց են ստացել, միայն կարծում են, թե իրենց արժանավորութեան համար են տրված. այնպես որ երբ ունեցածներից զրկվում են, իրենց այնպես է թվում, թե Աստված անիրավ է իրենց նկատմամբ: Այդպիսիները միշտ քիչ են համարում ունեցածները՝ ավելի շատ ու մեծ բարիքների արժանի համարելով իրենց:

Երրորդ տեսակի հպարտները նրանք են, ովքեր չունեցած բաներով են պարծենում, ունեցածներն էլ եղածից ավելի են ցույց տալիս: Եթե փոքր են, մեծ են ուզում երևալ, եթե մի փոքր բարձր դիրք ունեն, ասես թե աստվածների ցեղից լինեն կամ արևի խնամիներ. միշտ իրենց գովասանքն են անում: Եթե մի չքավոր ազգական ունեն, նրա ազգականությունն իրենց պակասությունը համարելով չեն ուզում երեսը տեսնել, անունը լսել: Եթե հայրերը կամ պապերը հասարակ արհեստավոր են եղել, ամոթ են համարում նրանց անվան հիշատակությունը, ուզում են, որ խորը թաղված մնան:

Բայց հպարտութեան վրա ինչպե՞ս են նայում սուրբ հայրապետերն ու վարդապետերը: Նրանցից մեկն ասում է. «Հպարտությունը մի լեռ է՝ դրված մեր և արդարութեան Արեգակի միջև»: Մյուսը, թե. «Հպարտությունը նշան է հավիտենական դատապարտու-

թյան»։ Երրորդը, թե. «Քեպես Աստված բարկանում է ամեն մեղքի դեմ, բայց ավելի բարկանում է հպարտության դեմ»։ Չորրորդը, թե. «Հպարտությունը բոլոր մոլությունների մայրն է ու թագուհին»։ Պողոս առաքյալն էլ. «Փոքր մի խմոր,– ասում է,– ամբողջ զանգուածն է ապականում», այսինքն՝ մարդ ինչքան էլ շատ առաքինությունների տեր լինի, բայց եթե միևնույն ժամանակ հպարտությունը ներս է մտնում նրա հոգին, բոլոր առաքինություններն էլ փչացնում, ոչնչացնում է, փոքրիկ խմորիսաշի<sup>1</sup> նման, որ ամբողջ խմորը թթվեցնում է։ Իսկ Աստված այն աստիճան դեմ է հպարտին, որ ուղղակի հրամայում է. «Եթե մեկը հպարտությամբ ինչ որ գործ անի, թող վերանա իր ժողովրդի միջից»։ Ինչո՞ւ։ Որովհետև. «Ամեն մեծամիտ պիղծ է Տիրոջ առջև»,– ավելացնում է Սուրբ Գիրքը։

\*\*\*

Հպարտությունը երբեք անպատիժ չի մնացել։ Ով հպարտացել, բարձրացրել է իր անձը, ստիպվել է խոնարհվել։ Դրա օրինակը երկինքն է տվել երկրին։ Առաջին հպարտությունը, ուրեմն և առաջին մեղքը գործվել է երկնքում։ Գործվել է ոչ թե հողեղեն արարածների, այլ հրեղեն, այլ լուսեղեն արարածների մեջ, մեր անդրանիկ եղբայրների՝ անմարմին հրեշտակների մեջ։ Արուսյակն իր հետևորդներով հագիվ մեղանչեց, բոցավառ փայլակի պես իսկույն ընկավ երկնքից՝ իր ետևից քաշելով հրեշտակների երրորդ մասը, որոնք հաստատությունից անդունդն ընկան ինչպես աստղեր, որի մասին Եսայի մարգարեն ասում է. «Արդ, ինչպե՞ս երկնքից ընկավ Արուսյակը, որ ծագում էր առավոտեան»։ Իսկ Հիսուս, թե. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը», որովհետև թեպետ իր գեղեցկությամբ մի պատվական արարած էր, բայց զազրելի եղավ իր հպարտության համար։ Սակայն, ընկնելով երկնքից՝ նա զորացավ մարդկանց վրա։ Իր թագավորության ամփոփը, որ ու-

---

<sup>1</sup> Թթխմոր։

զում էր հաստատել երկնքում, հրեշտակների վրա, ստիպվեց հաստատել երկրում՝ մարդկանց սրտերի վրա՝ նրանց հնազանդեցնելով մեղքի ախտերին:

Այնուհետև սկսվեց մի համաշխարհային վարակ, հպարտացավ նախամարդ Ադամը, կամեցավ գիտուն լինել ինչպես Աստված, եղավ տգետ, ինչպես անասուն, ուստի երանելի Բեռնարդոսն ասում է. «Կարծեմ, եթե անասունները կարողանային խոսել, կասեին՝ Ահա Ադամը դարձավ մեզ նման մեկը»: Նույն վկայությունն է տալիս և Դավիթը՝ ասելով. «Մարդը պատիվ ուներ՝ և չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու նմանվեց նրանց»: Հպարտացավ նախամայր Եվան, որով թունավորեց իր բոլոր սերունդներին, ուստի կորցրեց լուսեղեն պատմուճանը և մահ մտցրեց աշխարհը: Հպարտացավ Կայենը, սպանեց Աբելին և երկնքի անեծքը բերեց իր գլխին: Հպարտացան աշտարակ շինողները, լեզուները խառնվեցին, և խաղք ու խայտառակ եղան: Հպարտացան սողոմացիք, երկնքից կրակ թափվեց նրանց վրա, և ողջ քաղաքը մոխրակույտ դարձավ: Հպարտացավ Նավը, հալածեց Հակոբին և կորցրեց անդրանիկությունն ու հոր օրհնությունը, որոնք հափշտակեց Հակոբը: Հպարտացան Հակոբի որդիներն իրենց եղբոր վրա, ուստի ստիպվեցին երեսների վրա ընկնել ու երկրպագել Հովսեփին Եգիպտոսում: Հպարտացավ փարավոնը և Մովսեսից խայտառակ կերպով հաղթված՝ խեղդվեց իր գորքով Կարմիր ծովի ջրերում: Հպարտացավ Գողիաթը և կործանվեց Դավթի առաջ: Հպարտացավ Նաբուգոդոնոսոր թագավորը, «Երբ գոռոզացավ նրա սիրտը, և նրա ոգին համարձակվեց ամբարտավանանալ, նա ընկավ իր թագավորական աթոռից, պատիվը վերացավ նրանից»: Մի խոսքով՝ հպարտությունը հրեշտակներին երկնքից և մարդուն դրախտից դուրս գցեց:

Բայց թե Աստված ինչպես է թագավորներին իր գործիքը դարձնելով իր ամենիմաստ կարգադրությունք խոնարհեցնում լեռնացած ամբարտավանությունը, դրա մի գեղեցիկ ու շոշափելի օրինակը մեզ տալիս է Սուրբ Գիրքը: Մարաց ու պարսից թագավոր Արտաշեսն

այնչափ էր սիրում Համան անունով մի պալատականի, որ նրան իրենից հետո երկրորդն էր դարձրել ողջ թագավորություն մեջ, այնպես որ երբ նա արքունիք էր մտնում, բոլոր մեծամեծները ոտքի էին կանգնում ու երկրպագում: Ոտքի չէր կանգնում միայն Մուրթքե անունով մի բարեպաշտ հրեա, որպեսզի Աստծուն տալիք պատիվը մարդուն տված չլինի: Դրա վրա Համանը կատաղեց և թագավորից բոլոր հրեաներին ջնջելու հրովարտակ ստացավ, որոնք այդ ժամանակ գտնվում էին Մարաստանում, ապա ուռած-փքված տուն գնաց և իր կնոջ խորհրդով կախաղան պատրաստեց, որպեսզի թագավորից հրաման ստանա և ամենից առաջ իր ատելի Մուրթքեին կախի:

Բայց այդ գիշեր թագավորի քունը շտարավ, ուստի լուսաբացին հրամայեց իր դպրապետին, որ բերի «հրովարտակի գիրը» և կարդա իր մոտ: Երբ դպրապետը կարդալով հասավ այն տեղին, ուր գրված էր Մուրթքեի արած բարերարությունը, թե նա ինչպես էր թագավորին հայտնել երկու ներքինիների՝ նրան սպանելու խորհուրդը, Արտաշեսը հարցրեց.

– Ի՞նչ վարձատրություն տվինք այդ մարդուն կամ ի՞նչ փառքի հասցրինք նրան իր այնչափ հավատարմության համար:

– Ոչինչ չես արել նրան,– պատասխանեցին սպասավորները,– և նա, ոչ մի վարձ չստացած, ամբողջ օրը նստած է արքունյաց դռանը:

Քանի դեռ թագավորն այս խոսակցություն մեջ էր, եկավ Համանը: Իսկ Արտաշեսը, որ ուզում էր պալատականներից մեկի հետ խորհուրդ անել Մուրթքեին վարձատրելու մասին, հարցրեց.

– Մարդ կա՞ սրահում:

– Համանը եկել, սպասում է այնտեղ,– պատասխանեցին:

– Թող նե՛րս գա,– ասաց թագավորը:

Երբ Համանը ներս մտավ, թագավորն ասաց նրան.

– Ի՞նչ պետք է անեմ այն մարդուն, որին ես կամենում եմ փառավորել:

Այս հարցումը ցնծությամբ լցրեց ամբարտավանի սիրտը, որ, ամենևին չկասկածելով, թե ինքն է այն մարդը, որին թագավորը կամենում է փառավորել, պատասխանեց.

– Այն մարդը, որին թագավորը կամենում է փառավորել, պետք է զարդարվի թագավորական զգեստով, գլխին դնի թագավորական թագ և հեծնի թագավորական ձին, ճիշտ այնպես, ինչպես հեծնում է ինքը՝ թագավորը: Ապա թագավորի փառավոր իշխաններից մեկը, բռնելով նրա ձիու սանձը, պետք է գնա նրա առջևից՝ բարձրաձայն աղաղակելով քաղաքի հրապարակներում. «Այսպես կանեն այն ամեն մարդուն, որին թագավորը փառավորում է»:

Թագավորն ասում է.

– Կա՛վ ասացիր. դե՛հ, ինքդ շուտով վե՛ր առ թագավորական զգեստն ու ձին, հեծնել տուր վրան իմ տան խնամակալ հրեա Մուրթքեին, բայց տե՛ս, չլինի թե ասածներիցդ մի բառ անգամ սխալ կատարես:

Ինչպես հանկարծակի կայծակնահար մեկը տեղնուտեղը քար կտրի, չկարողանա շարժվել, այդպես կապվեց գոռոզացած Համանի լեզուն, որ եկել էր Մուրթքեի մահը խնդրելու: Բայց ի՞նչ կարող էր անել, թագավորի հրամանն էր: Մուրթքեին թագավորավայել փառքով ձի հեծցրած՝ շրջեցրեց քաղաքի հրապարակներով և կրկին վերադարձրեց արքունիք: Իսկ ինքը՝ գլխիկոր և ամոթով լի, գնաց իր տուն:

Արտաշեսը լավ հասկացավ, որ Համանն ինքն էր ուզում խլել իր թագը և իր տեղը թագավորել, մանավանդ որ նույն միտքն իրեն հայտնեց իր տիկնանց տիկին Եսթերը, որ Մուրթքեի ազգականն էր: Ուստի հանեց Համանի մատից մատանին, դրեց Մուրթքեի մատը, մի նոր հրովարտակով ջնջեց իր առաջին հրամանը, որով պետք է կոտորվեին բոլոր հրեաները, Մուրթքեին շինեց արքունի դպրապետ, իսկ ինչ վերաբերում է գոռոզ Համանին, հրամայեց կախել նրան իր տանը այն փայտի վրա, որ նա պատրաստել էր Մուրթքեի համար:

«Բազում բռնակալներ գետին նստեցին,— ասում է Սուրբ Գիրքը,— և նա, որից չէին սպասում, թագ ստացավ»:

Հին ժամանակներում, երբ մի թագավոր հաղթում էր մի այլ թագավորի և գերի առնում, ամեն անգամ ձի հեծնելիս գերի առած թագավորին թեքում էր ձիու առաջը, նրան իր ոտքի պատվանդան դարձնում և վրան կոխելով՝ բարձրանում հեծնում էր ձին, և այդ արարքը շատ մեծ փառք էր համարվում նրա համար: Այդպես էլ այն մարդիկ, ովքեր ամբարիշտ կերպով բարձրանում են այս աշխարհում, մյուս աշխարհում լինելու են Հիսուսի ոտքի պատվանդանը, որովհետև Հիսուս, նրանց դատապարտելով, փառավորվելու է նրանցով, ինչպես ասում է Դավիթը. «Նստիր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ»:

\*\*\*

Հպարտությունն ամենատարածված ամենատարածված ախտն է և բոլոր մեղքերի մեջ առաջինն է, որովհետև ուղղակի Աստծո դեմ է, Աստծո փառքին է դիպչում: Բայց քանի որ ամեն փառք միայն Աստծուն է վայել, «Միայն Աստուծուն փառք և պատիվ»,— ասում է առաքյալը, ուստի հպարտությունը մի ապստամբություն ու պատերազմ է Աստծո դեմ: Ինքը՝ Աստված, ասում է. «Իմ փառքը ոչ ոքի չեմ տա»:

Հպարտությունից, ինչպես մահացու մեղքից, առաջ եկող բոլոր մեղքերը կոչվում են հպարտության մասեր, որոնք «Մեղայի» մեջ հիշվում են ընդհանուր խոսքով՝ «հպարտությանմբ և նրա տարատեսակներով» և այլն: Դրանց մեջ առաջինը փառասիրությունը կամ սնափառությունն է, այսինքն՝ պատիվ ու իշխանություն ունենալու անկարգ ցանկությունը: Հպարտությունն ու փառասիրությունը միմյանց նման ախտեր են, որոնցից, ինչպես մի օվկիանոսից, հոսում են ամենայն շարյաց գետերը, որովհետև երբ մարդ իր բան ու գործը դարձնում է սեփական գերազանցությունը, այդ ժամանակ արդեն ամեն բան նրա շուրջն է պտտեցնում: Իր բոլոր ուժերն ու ջանքե-

րը նրա վրա է գործ դնում, որ մարդկանցից գովասանքներ ստանա: Միշտ մտածում է, որ ինքն ավելի բանի է արժանի և մխիթարվում է այդ մտքով: Ուժերից վեր գործ է ձեռնարկում, ամեն գործի մեջ խառնվում է, անամոթաբար փքվում է, ուրիշներին արհամարհում է: Այլոց արարքն ամեն կերպ քննում է, անարդար դատում է և խիստ մեղադրում, ախտերը մեծացնում է, գովասանքը փոքրացնում: Չի կարողանում տանել, երբ ուրիշն ուղղում է իր պակասությունները, չի ուզում լսել, երբ մեկն իրեն որևէ խորհուրդ է տալիս: Այն բարիքը, որից ինքը զուրկ է, կարծում է, թե ունի, ունեցածն էլ եղածից մեծ է երևակայում: Երբ մեղուն մեղր է շինում, երբ ձին վազում է, երբ ծառը պտուղ է տալիս, էլ ուրիշ ոչնչի չի սպասում: Բայց մարդս ցանկանում է ծափահարություն, որ մատով ցույց տան՝ ասելով. «Ահա սա է»:

Սակայն ամեն բանի արժեքն իր մեջն է. ո՛չ գովելով է լավանում, ո՛չ պախարակելով վատանում: Երբ նայողներ չեն լինում, դրանով արևը զրկվո՞ւմ է իր լույսից, զրկվո՞ւմ է թուզն իր քաղցրությունից, ծաղիկը՝ իր տեսքից, թանկագին քարը՝ իր փայլից, երբ մարդիկ չեն գովում: Ազնիվ հոգու մեծ ապացույցն այն է, որ արհամարհում է մարդկանց գովասանքը և ինքն իրենից գո՞հ է: Ով փառք է փնտրում, նա զրկվում է փառքից: Ամեն բան, ինչ որ ունես, Աստծուն վերագրիր՝ թե՛ գոյությունդ, թե՛ կյանքդ և թե՛ խելքդ, բացի մեղքերիցդ քեզ ոչինչ չի մնա: Եվ երբ դու մի բան դառնաս, այն ժամանակ կիմանաս, որ ոչինչ ես: Քրիստոնյայի առաջին առաքիլությունն էր արհամարհել մարդկային գովասանքը, իսկ սնափառությունը մարդկային գովասանության հոժարությունն է: Փառքը փախչում է նրանից, ով նրա ետևից է ընկնում, և հետևում է նրան, ով փախչում է նրանից:

Մահացու մեղքերի դեմ Աստված տվել է և փրկվելու միջոցը, բժշկվելու դեղը: Հպարտության դեմ գործածվող դեղը խոնարհությունն է: Երբ Հիսուս ասում է. «Ով խոնարհեցնի իր անձը», դրանով ցույց է տալիս, որ մեզ խոնարհեցնելը մեր ձեռքին է, այսինքն՝ մեր պակասությունն ու նվաստությունը ճանաչելը մեր իշխանությունն ու

կարողությունն տակ է: Իսկ երբ ասում է «բարձրացնի», ցույց է տալիս, որ մեզ բարձրացնելը մեր իշխանությունից ու կարողությունից վեր է և վերաբերում է Աստծո կարողությանը, որովհետև ինչպես միայն Աստծո գործն է ստեղծելը, այնպես էլ միայն Նրա ձեռքին է բարձրացնելը, ուստի ասում է՝ Կբարձրանա, այսինքն՝ Աստծո ձեռքով կբարձրանա: Ուրեմն դու քեզ խոնարհեցնել կարող ես, ոչ թե բարձրացնել. հապա ինչո՞ւ այն չես անում, ինչ որ կարող ես, որ Աստված բարձրացնի քեզ, իսկ ինչ որ չես կարող, դեպի այն ես ձգտում, ուստի և անդնդի խորքն ընկնում:

Աբ. Ոսկեբերանն ասում է. «Առաքինությունների գլուխը խոնարհությունն է: Բայց այդ գլուխը ծամեր շունի, այլ մի այնպիսի գեղեցկություն ունի, որ մինչև անգամ Աստծուն էլ է խաբում, որ ասում է. «Ես ո՞ւր հանգչեմ, եթե ոչ՝ հեղերի և խոնարհների մեջ»: Խոնարհությունն այն հրաշալի սանդուղքն է, որով Աստված կարողացավ իջնել երկիր, և մարդը՝ անդունդներից երկինք բարձրանալ: Որովհետև մեր անկման պատճառը հպարտությունը եղավ, ուստի երբ Հիսուս կամեցավ մեզ կանգնեցնել, խոնարհությամբ ընդունեց մեր բնությունը, որ բժշկի հպարտության վերքերը և մեզ ցույց տվեց առաջին բարձրության ճանապարհը: Փարիսեցին, որ մեր անկման պատճառով ցավագարված էր, ընկավ, իսկ մաքսավորը, փրկության դեղը գտնելով, կրկին նույն վիճակին դարձավ: Ավելի պարզ խոսելով՝ խոնարհություն է, երբ համբերում ես եղբորդ նրա բարկության ժամանակ ու քեզ հանցավոր համարում, որովհետև չհամբերելն ու զայրանալը հպարտություն է: Խոնարհություն է, երբ ոչ թե ընկերոջդ նայում ես իբրև ծառայի, այլ ինքդ ես սպասավորում նրան, ինչպես ասում է Հիսուս. «Ես ոչ թե եկել եմ ծառայություն պահանջելու, այլ ծառայելու»: Խոնարհություն է, երբ մարդիկ փառավորում են քեզ ու պարգևներ տալիս, իսկ դու քեզ արժանի չես համարում փառավորության, այլ Աստծուն ես փառավորում՝ ասելով. «Այս Քո ողորմությամբ եղավ, ոչ թե իմ արժանավորությամբ»: Խոնարհություն է, երբ կամենալով մի բարեգործություն անել, մի սուրբ գործ ձեռնարկել՝ դու չես



սկսում անմիջապես, այլ տկարությունդ խոստովանելով նախ Աստծո օգնությունն ես խնդրում, ապա նոր կատարում նրան հաճելին:

Բոլոր սրբերն էլ միայն խոնարհությունք հաճո եղան Աստծուն: Աբրահամը, իր անձը խոնարհեցնելով, ասում է. «Հող եմ և մոխիր», ուստիև նահապետաց գլուխը եղավ: Դավիթն ասում էր. «Ես որդն եմ, նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդեան», ուստի Աստծո ընտրյալը դարձավ: Եսային, թե. «Վա՛յ ինձ, զի մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ», այդ պատճառով աստվածաբան կոչվեցավ մարգարեից մեջ: Հովհաննեսն ասում էր. «Արժանի չեմ նրա կոշիկների կապերն արձակելու», ուստիև արժանացավ ձեռնադրելու և մկրտելու Աստծո Որդուն: Պողոսն ասում էր. «Ես եմ տրուպն առաքելոց», ուստի դարձավ «ընտիր անոթ», երկինք թռավ ու դրախտը տեսավ: Զարմանք է. սբ. Կույսն այնչափ շնորհքներ, այնչափ կատարելություններ ուներ, իսկ Աստված դրանցից ոչ մեկին չնայեց, այլ միայն նրա խոնարհությանը. «Նայեց իր աղախնի խոնարհությունը»: Իրերի կարգը պահանջում էր, որ ասեր. «Նայեց իր աղախնի կուսությունը», որովհետև նախ ինքն էր կուսության սկիզբը և միմիայն գերազույն կույսը, և երկրորդ՝ խոսքը կուսությամբ հղիանալու վրա էր, սակայն ոչ թե կուսությունը, այլ խոնարհությունն է առաջ բերում, որովհետև Աստված կույսին սիրում էր ավելի խոնարհության համար, քան թե խոնարհին՝ կուսության համար: Եվ ինչպիսի՛ խոնարհություն: Մարիամը կարգվում է տիրուհի երկնի և երկրի, թագուհի հրեշտակաց, իշխանուհի տիեզերաց, դշխո փառաց, մայր ամենայն կենդանյաց և սնուցիչ ամենից Ստեղծողի: Եվ սակայն չնայելով այս բոլորին՝ մի սքանչելի խոնարհությամբ պատասխանում է հրեշտակին. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը»:

Իմաստուն ես, զիտուն ես, բայց եթե կամենում ես, որ քո զիտությունը քեզ օգուտ բերի, անհայտ մնա, թող քեզ այս աշխարհում ոչինչ չհամարեն: Ամենամեծ ու օգտակար խրատն այն է, որ մարդ լավ ճանաչի իրեն ու արհամարհի: Իր մասին ոչ մի լավ բան չերևակայելը և ուրիշներին իրենից բարձր համարելը մեծ իմաստություն է և

բարձր կատարելություն: Նա է ճշմարիտ մեծը, ով բարձր պատիվները բանի տեղ չի դնում: Մարդս իրեն չի վնասի՝ իրեն ուրիշից ստոր համարելով, բայց քեզ կարող է շատ վնասել, եթե դու քեզ գերադասես թեկուզ մի մարդուց: Եթե տեսնում ես, որ մեկը ծանր մեղքերի մեջ է ընկած, դու քեզ նրանից լավը չպետք է համարես, որովհետև չգիտես, թե ինչքան ժամանակ ես մնալու անմեղություն մեջ: Ո՛չ մարդկանց գովասանքն է քեզ սրբերի կարգը դասում, ո՛չ էլ նրանց բամբասանքը պատիվը պակասեցնում: Դու այն ես, ինչ որ կաս. ուրիշների քո մասին ասածները քեզ մազաչափ անգամ չեն բարձրացնի Աստծո առաջ: Եթե դու քո մեջ որոշես, թե դու ինչ ես, այն ժամանակ քեզ համար միևնույն կլինի, թե մարդիկ ինչ կասեն քո մասին:

Ամեն պարծանքների պարծանքը խոնարհությունն է: Եթե աղոթես, եթե պահես, եթե արտասովես, եթե ողորմես, եթե կույս մնաս առանց խոնարհության, արհամարհելի է: Ինչպիսի և ինչքան առաքինություններ էլ որ ունենաս, եթե այդ ամենի հետ խոնարհությունը խառը չէ, բոլորն ապարդյուն կանցնի: Ով իսկապես խոնարհ է, նա նման է Հիսուսին, որ Իր անօրինակ խոնարհությամբ հանդիմանեց աշխարհիս բոլոր խոնարհներին, և որ Իրեն խոնարհության տիպար ներկայացրեց՝ ասելով. «Սովորեցեք Ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ»: Կտավ սփածավ<sup>1</sup> աշխարհի Փրկիչը, խոնարհվեց իր աշակերտների հողեղեն ծնկների տակ և ծառայաբար լվաց նրանց ոտքերը: Ո՛վ իմաստուն, ո՛վ մեծատուն, գոնե պատկառի՛ր այս օրինակից, որովհետև դու, թեպետև խոնարհվում ես, սակայն իբրև մարդ ես խոնարհվում մարդու առաջ: Ուստի առաջալն ասում է. «Թո՛ղ չպարծենա իմաստունն իր իմաստությունմբ, հզորը՝ իր կարողությունմբ, և մեծատունը՝ իր հարստությունմբ, այլ պարծենա միայն Տիրոջը ճանաչելով և նրա արածն ըմբռնելով»:

Եթե խոնարհության նշան է, որ մարդ ուրիշներից բամբասավի ու շարախոսվի և սակայն համբերի, ուրեմն ի՞նչ պետք է ասենք Սուրբ

---

<sup>1</sup> Վերցնել, իր վրան առնել:

Գրիգոր Նարեկացու մասին, որ, չբավականանալով ուրիշներից բամբասովելով, ասես թե թշնամու դեմ էր զինվում անարգաբանություններ, երբ խիստ կերպով հարձակվում էր ու կռվում իր անձի դեմ: Եվ ինչ զարմանք, որ այդ սուրբն իր խորին խոնարհություններ ձեռք բերած ու բռնած լինի Աստծուն: Ինչպես արծիվը, թեպետ մանր աչքեր ունի, սակայն համարձակ նայում է վառվող արևին, այդպես էլ սբ. Նարեկացին, թեպետ իր աչքում ինքը շատ չնչին էր երևում, բայց կարողացավ տեսնել արդարություն Արեգակ Հիսուսին իր մոր գրկում: Մի խոսքով՝ խոնարհությունը մարդուս մեջ նման է լամպարի յուղին. դատարկի՛ր յուղը, լամպարն այլևս չի լուսավորի, ա՛ն մարդուց խոնարհությունը, էլ ոչնչով չի կարող հաճոյանալ Աստծուն:

Կանչենք ուրեմն սուրբ Եփրեմի հետ. «Փրկի՛ր ինձ, Տէ՛ր, մարդկային գովեստից՝ փառքից և մեծարանքներից. լոյս կարծելով խավարիս, ինձ, որ եղկելի և ողորմելի եմ, բարի են ասում: Համբավում են ինձ առաքիլնի, իսկ ես ողբալի եմ և անթիվ մեղքերով լի, ծածկի՛ր ինձ սուտ գովասանքների և երանությունների լույսով, որովհետև չգիտեն իմ մեղքերը»:

## ԲԱՆ Բ

«Որովհետև, ուր հակառակություն և նախանձ կա, այնտեղ կա անկարգություն և ամեն չար բան»:

(Հակ. Գ:16)

Հենց որ հպարտությունը նվաճում է մեկի միտքը, իսկույն նրանում ծնվում է նախանձը, որովհետև երբ մարդ փափագում է միայն իր գերազանցությունը, չի կամենում, որ մեկ ուրիշը հասնի իր բարձրությանը, հետո սկսում է հյուժվել, մաշվել, ինչպես իմաստուն Սողոմոնն է ասում. «Բարի սիրտը կյանք է մարդուս համար, իսկ նախանձը՝ ոսկորների փտություն է»: Ինչ բանի և ինչքան բանի որ

նախանձում է հպարտը, չի կամենում նույնը տեսնել ընկերոջ մեջ. ասես թե իրենից պակասում է այն, ինչ որ ավելանում է ուրիշին: Երբ սատանան, հպարտանալով ընկավ երկնքից, իսկույն նախանձեց մարդուն, որ չբարձրանա այնտեղ, որտեղից ինքն ընկավ: Այսպես, նախանձոտությունը հպարտության հետևանքն է: Եթե հպարտ չլինեիրք, նախանձոտ չէիրք լինի և եթե նախանձոտ ենք, դա ստույգ նշան է, որ հպարտ ենք:

Տեսնում ես՝ այսինչ քաղաքի կամ գյուղի բնակիչներն ինչ սիրով են ապրում իրար հետ, ինչքան հավատարմություն ունեն իրար վրա, որ ամենքը մեկի համար են կանգնած, մեկը՝ ամենքի համար, մինչև անգամ միմյանց համար պատրաստ են և անձնագոհության: Բայց ահա անցնում են տարիներ, հետ ես նայում, տեսնում ես, որ այլևս այն մարդիկ չեն, բոլորովին փոխել են բնավորությունները և անպիտանացել: Տեսնում ես՝ անդադար բողոքներ են անում, դատեր սկսում միմյանց դեմ, հասարակաց գործերը երեսի վրա են մնացել, ոչ մի բան գլուխ չի գալիս, անհոգությունն ու անտարբերությունը տիրել է գրեթե ամենքին, էլ մեծ ու փոքր չկա, ամոթ ու պատիվ ասածդ վերացել է, մարդիկ իրար չեն հավանում, միմյանց բամբասում են, իրար խեթ աչքով են նայում, մեկը մյուսի լավը չի ցանկանում, ընդհակառակը, ուրախանում է՝ նրա թշվառությունը տեսնելով: Մի խոսքով՝ առաջվա պատվական ժողովրդի մեջ այլևս սեր, միություն չկա, հավատարմությունը կորել է: Այս բոլորը տեսնելով՝ մարդիկ զարմացմամբ հարցնում են միմյանց՝ ի՞նչ է սրա պատճառը, ի՞նչ պատահեց, որ այս ժողովուրդը այսպես փոխվեց, վատացավ: Դրա պատճառը, սիրելի՛ս, սև նախանձն է: Հպարտությունը, ինքնասիրությունը ժողովրդի սրտից հանեց եղբայրասիրությունը և տեղը հակառակություն սերմանեց, և այդպես առաջ է գնում որդոց որդի՝ զրկելով մարդկանց իրենց բախտավորությունից, ավերելով տներ, գյուղեր և քաղաքներ:

Նախանձն ուրիշի բարեբախտության պատճառով կրած ցավն է, որովհետև ինչպես հպարտն ուրախանում է իր գերազանցության

համար, այդպես էլ նախանձոտը ցավում է այլոց բարեբախտության համար: Ուրիշներին գերազանցելու սիրուց նա նախանձում է իր նմաններին, որովհետև հավասար են իրեն: Նախանձում է իրենից բարձրերին, որովհետև գերազանցում են իրեն: Նախանձում է և իրենից ցածրերին, որ միգուցե հավասարվեն իրեն: Հիսուս այս վերջին պատճառով նախանձողներին գեղեցիկ կերպով դուրս է բերում հետևյալ առակի մեջ: «Մի տանուտեր կար,— ասում է,— առավոտյան գնաց, իր այգու համար մշակներ վարձեց՝ օրը մի դահեկան վճարով: Նա դարձյալ դուրս գնաց, մշակներ վարձեց 9 և 12 ժամին, նաև երեկոյան 5 ժամին: Երեկոյան պահին նա իր վերակացուին ասաց. «Կանչի՞ր բոլոր մշակներին և վերջիններից սկսելով տո՛ւր իրենց վարձը»: Նրանք, որոնք երեկոյան 5 ժամին էին եկել, մտեցան և ստացան մի-մի դահեկան: Այս տեսնելով առավոտյան եկողները մտածում էին, որ իրենք ավելի կստանան: Սակայն նրանք էլ մի-մի դահեկան ստացան և տրտնջալով տանուտիրոջ դեմ՝ ասացին. «Այդ վերջին եկողներն ընդհամենը մի ժամ են աշխատել, և դու հավասարեցնո՞ւմ ես մեզ հետ, մեզ, որ այս շոգ ու տոթ եղանակին ամբողջ օրը տանջվել, քրտինք ենք թափել»: Պատասխանելով նրանցից մեկին՝ նա ասաց. «Եղբայ՛ր, կարծեմ ես քեզ չեմ զրկում, պայմանավորված վարձից ոչինչ պակաս չեմ տալիս: Մի դահեկանով չվարձվեցի՞ր, ա՛ն քեզ հասանելիքն ու գնա, քո ի՛նչ գործն է, որ ես այս վերջին եկողներին էլ այնքան եմ տալիս, որքան քեզ»: Պարզ է, որ առավոտյան եկողները ոչ թե այն պատճառով էին ցավում, որ իրենց վարձից զրկվել էին, որից, իհարկե, չէին զրկվել, այլ այն պատճառով, որ ուրիշներն էլ էին հավասարվում իրենց՝ ստանալով ավելի, քան հարկավոր էր»:

Նախանձը հոգու ցեցն է, որ ուտում է զգայարանները, տոչորում է սիրտը, նեղում է միտքը, կտրում է քունը, ամբոխում է հոգին, դող է գցում մարմնի մեջ և վատ ժանգի պես ապականում է մարդու բոլոր բարեմասնությունները: Նախանձը մինչև անգամ մարդու կերպարանքն է փոխում, խարխլում առողջությունը: Այսպես, նա-

խանձոտը կրակով է եփում իրեն, այլ ոչ ուրիշներին, ուստի Ոսկեբերանն ասում է. «Ո՛վ նախանձ, լի ամենայն շարությամբ, անհանգչելի՛ կրակ»: Իսկ իմաստուն Սենեկան ձայն է տալիս. «Ո՛հ, ի՛նչ լավ կլիներ, որ նախանձոտներն ուրիշ բոլոր քաղաքներում էլ աչք ու ականջ ունենային, որպեսզի այլոց հաջողությունները տեսնելով ու լսելով՝ ավելի տանջվեին»: Յուրաքանչյուր մոլություն հակառակվում է մեկ առաքինության. օրինակ՝ հպարտությունը՝ խոնարհությանը, ազահությունը՝ առատաձեռնությանը, բարկությունը՝ հեղությունը, իսկ սա՝ բոլոր առաքինություններին, որովհետև ամեն առաքինության էլ նախանձում է: Այն օրից, երբ այդ մոլությունը մտնում է մարդու սիրտը, էլ ոչ մի շարությունից չի խորշում, չի խնայում անմեղին, չի վախենում մարդասպանությունից, նույնիսկ հայրասպանությունից: Նախանձն էր, որ շարժեց Կայենին Աբելի դեմ, Եսավին՝ Հակոբի դեմ, 11 եղբայրներին՝ Հովսեփի դեմ, որովհետև, ինչպես առաքյալն ասում է. «Ուր որ նախանձ ու կռիվ կա, այնտեղ են և անկարգություն ու ամեն շարությունները»: Անտիաթենես փիլիսոփան ասում էր. «Եթե մեկն ստիպի ինձ ընտրություն անել, ես ավելի լավ կհամարեմ ազուավ լինել, քան նախանձոտ, որովհետև ազուավները միայն մեռելների դիակն են ուտում, իսկ նախանձոտները կենդանի մարդկանց են պատառոտում»:

Նախանձն ապականում է մեր հոգին և ամեն բարի, մեծ ու ազնիվ բանի անրնդունակ ու անհարմար դարձնում: Նա, առանց մեր կողմից զգացվելու, հակառակվում է Աստծո նախախնամությանը, որ բարին բաժանում է այս աշխարհում իր իմաստությունը՝ ում որչափ որ հարկավոր է համարում: Նախանձն ուրիշ մարդու բախտավորությունը մեծ հանցանք ու շարագործություն է համարելու: Հիրավի, ով ամեն բարիք իրեն է սեփականում, նա հակառակ է Աստծո բարությունը, հակառակ է սրբերի վիճակին, որոնք ուրիշների բարիքն իրենցն են համարում, հակառակ է քրիստոնեական սիրուն, որ թշնամու բարյաց վրա անգամ ուրախանում է, հակառակ է վերջապես բնական օրենքին, որը մարդուն հրամայում է ցանկանալ ուրիշին այն, ինչ որ

իրեն է ցանկանում: Նախանձն ուղղակի եղբայրասիրության դեմ է: Մինչդեռ եղբայրասիրությունը պահանջում է, որ ուրիշներին բարիք ցանկանք, ամենքի բարյաց վրա ուրախանանք ինչպես մեր բարյաց վրա: Անիծյալ նախանձը ոչ միայն չի թողնում, որ ուրիշներին բարիք ցանկանք ու անենք, այլև նրանց բարյաց վրա տրտմեցնում է մեզ, ուստի նրանց վնասների վրա էլ ուրախացնում է: Ինչպես աչքացավ ունեցողը չի կարողանում նայել փայլուն առարկայի, այնպես էլ նախանձոտը հեռվից չի կարողանում տանել ուրիշի երջանկության փայլը: Սատանան նախանձում է միայն ուրիշներին, իսկ իր ընկերներից՝ ոչ ոքի: Բայց մարդս նախանձում է իր նման մարդկանց, որ սատանան անգամ չի անում: Փոքրոգի ու ցածր մարդու նշան է նախանձոտությունը, որովհետև դու չէիր նախանձի, եթե շտեսներ, որ ուրիշը գերազանցում է քեզ: Այ թշվառ նախանձոտ, դու ամեն տեղ քեզ չարակամներ, թշնամիներ ես տեսնում, բայց չարաչար սխալվում ես՝ միայն ինքդ ես քո չարակամն ու թշնամին, ուրիշ ոչ ոք: Ինքդ փոխվիր, այնքան քաջու-թյուն ունեցիր, որ ինքդ քեզ հաղթես, չար մտքերդ ու կասկածներդ գլխիցդ հանես, և դու կզարմանաս՝ տեսնելով, որ ամբողջ աշխարհը փոխվել է:

\*\*\*

Պատիժն ուրիշ հանցանքներից հետո է գալիս, իսկ այդ արատի առջևից է գնում, որովհետև նախանձոտն ուրիշի լավությամբ շարշարվում է, ուրիշի գիրանալուց՝ նիհարում, ուրիշի զվարթանալուց՝ թառամում: Այնպես որ այդ ախտով վարակվողը մեղանշում է և ընդամին պատժվում: Նա երբեք չի համարձակվում իր նախանձոտությունը խոստովանել, մանավանդ թե ամաչում, պատկառում է ունենալուց, ևս առավել՝ արտահայտելուց, որովհետև եթե մեկի նախանձոտ լինելը մի անգամ հայտնվի, կհաստատվի իր ստորությունը: Եվ ինչպես որ նախանձոտության պես իրեն ծածկել ցանկացող մեկ ուրիշ կիրք չկա, այդպես էլ նրա պես ծածկվելու անընդունակ մի կիրք դեռ հայտնի չէ, որովհետև մոլությունը շուտով ի հայտ է

բերում այդ արատը: Կան այնպիսիներն էլ, որոնք, չկարողանալով հրաժարվել ուրիշի դեմ խոսելուց, կարծում են, թե երբ ասում են «նախանձից չենք խոսում», իրենց նախանձն ի հայտ չի գալիս, սակայն անկարելի է, որ այդ միջոցով անգամ հաշոդուծյուն գտնեն: Նախանձը ոչ միայն ամենից ատելի, այլև ամենից անողորմ կրքերից մեկն է, մի ծանր պատիժ է նախանձոտի համար: Ինչքան ուրիշի փառքը և երջանկությունն ավելանում է, այնքան մարդուս նախանձը զորանում է, այնպես որ ողջ կյանքը դառնացնող մի թույն է դառնում: Այս է ահա պատճառը, որ նախանձոտ մարդիկ միշտ տխուր դեմք են ունենում: Շատ զարմանալի է, որ մարդ ուրիշի բարյաց համար իրեն շարժարում, տանջում է, բայց ի՞նչ պետք է անես, այդ է նախանձոտի ընթացքը՝ տրտմել, երբ ուրիշներն ուրախանում են, ուրախանալ, երբ ուրիշները տրտմում են: Նա մինչև անգամ վրդովում է այն անձանց հանգստությունը, որոնք գոհ են իրենց վիճակից՝ աշխատելով փոխել տալ նրանց գաղափարն իրենց վիճակի մասին, որով ցույց է տալիս, թե ինքը ոչ միայն նեղվում է նրանց ինքնագոհ վիճակից, այլև որ զգում ու վայելում են իրենց վիճակի քաղցրությունը: Առողջակազմ երիտասարդին, որի մեջ կյանք ու կենդանություն է եռում, ասում է. «Ոչ ոք չգիտե,– ասում է,– թե մարդ ինչքան կապրի. շատ անգամ տեսնում ես՝ երկաթի պես տղամարդը մի թեթև հիվանդությունից անկողին է մտնում: Մահն առողջ ու սկար չի հարցնում»: Գեղեցիկ կնոջը, որ փայլում է իր արտաքինով, ասում է. «Է՛հ, գեղեցկությունն ու ծաղիկը մեկ են. առավոտը ծաղկում են, երեկոյան՝ թառամում»: Հարուստին, որի տունը լի է ամեն բարիքով, ասում է. «Ոչ ոք չասի, թե իր ճրագը մինչև առավոտը լույս կտա. հարստությունն ու աղքատությունը քույր ու եղբայր են»:

\*\*\*

Բայց նախանձի էությունը մեզանում շատ սխալ է հասկացված: Պետք է զանազանել իրարից բարի և չար նախանձը: Երբեմն մենք տրտմում ենք ուրիշի բարյաց վրա՝ վախենալով, որ դրանով



նա մեզ կվնասի. օրինակ՝ չենք ուզում, որ մեր թշնամին իշխանութ-  
յան հասնի, որպեսզի մեզ չվնասի: Մա նախանձ չէ: Երբեմն տրտմում  
ենք ոչ թե ուրիշի բարյաց վրա, այլ այդ բարիքին անարժան լինելու  
վրա. այնպես որ եթե անարժան չլինեք, չէինք տրտմի: Մա էլ նախանձ  
չէ: Երբեմն տրտմում ենք ոչ թե ուրիշի բարիքը չուզենալով, այլ որ  
մենք չունենք նրա ունեցած բարիքը: Օրինակ՝ մեկն իր կատարելութ-  
յունների ու գիտություն համար բարձրություն է ստանում, մենք  
տրտմում ենք ոչ թե նրա բարձրության վրա, այլ թե ինչո՞ւ մենք էլ  
նույն կատարելություններն ու գիտությունը չունենք: Տեսնում ենք մի  
բարեպաշտ, խոնարհ, համբերող, եղբայրասեր մարդու և տրտմում  
ենք, թե ինչու մենք էլ չունենք այդ առաքինությունները: Մա բարի և  
սուրբ նախանձ է: Մի թագավորի գերեզմանի վրա կար հետևյալ ար-  
ձանագիրը. «Ինչ որ կարող էի անել քաղցրությամբ, վշտացնելով չա-  
րի: Ինչ որ կարող էի անել խաղաղությամբ, խստու-թյամբ չարի: Ինչ  
որ կարող էի անել հաշտությամբ, պատերազմով չարի: Ում որ կարող  
էի համոզել խնդրելով, սպառնալիքով չվախեցրի, ում որ կարող էի  
ուզղել առանձին, ուրիշների առաջ չհանդիմանեցի, ում որ կարող էի  
կարգի բերել խրատելով, ծեծել չտվի. մի մարդ չեմ պատժել, որին  
սկզբում երեք-չորս անգամ ներած չլինեի»: Մարկոս Ավրելիոս կայս-  
րը, կարգալով այս տապանագիրը, ասաց. «Ո՛չ Պոմպեոսին, ո՛չ Հու-  
լիոս կայսրին և ո՛չ Ակիպիոնին այնքան չեմ նախանձում նրանց նվա-  
ճած երկրների, տարած հաղթությունների համար, որքան նախան-  
ձում եմ այս թագավորի գերեզմանին»: Այս նախանձն է, որ Պողոս ա-  
ռաքյալը մեզ շարունակ հորդորում է ունենալ. «Բայց լավ է միշտ նա-  
խանձախնդիր լինել բարի բաներին»: Այս նախանձն էր, որ ունեին  
բոլոր սրբերը՝ կատարելության հասնելու համար:

Երբեմն էլ, հիրավի, տրտմում ենք ուրիշի բարյաց վրա, թե ին-  
չու այդ բարիքը նրան պատահեց, և նա գրանցով մեզանից վեր կամ  
մինչ անգամ մեզ հավասար եղավ: Ահա այս է բուն շար նախանձը,  
որ մի գարշելի ախտ է: Հակոբ նահապետի որդիները, տեսնելով, որ  
իրենց հայրը բոլոր եղբայրների մեջ Հովսեփ գեղեցիկին ավելի է սի-

րում ու նրա համար մի ծաղկյա պատմուճան է կարել տվել, սկսեցին նախանձել: Այս նախանձը հետզհետե այնքան գրգռվեց, որ նրանք մինչև անգամ ծախեցին իրենց եղբորը:

Նույն սև նախանձը բնակվում է ամեն մեկիս սրտում: Եվ երբ մեկը մի հաջողություն է հանդիպում կամ իր անտանելի վիճակից փոքր-ինչ թեթևանում, մեզանում բույն դրած նախանձն իսկույն շարժվում է, պղտորում ու սևացնում մեր սիրտը, ասես թե ինքներս մի բարիքից զրկվեցինք, մի թշվառություն մեջ ընկանք: Այդ նախանձն էր, որ Ադամին ու Եվային մեղանշել տվեց, ինչպես ասում է Սուրբ Գիրքը. «Մահը աշխարհ է եկել բանսարկուփ նախանձով»: Նախանձն էր, որ Կայենին գրգռեց սպանել իր եղբորը, որովհետև Աստված Աբելի զոհը նրա զոհից ավելի էր հաճել: Նախանձն էր, որ Սավուղին կատաղեցրեց Դավթի դեմ, որովհետև ժողովուրդն իր երգերի մեջ Դավթի քաջությունը թագավորի քաջությունից վեր էր դասում. «Սավուղը շարդեց հազար մարդ, իսկ Դավիթը՝ տասը հազար»: Նախանձը ոչ միայն ընկերոջն ընկերոջ դեմ, եղբորը եղբոր դեմ է դուրս բերում, այլև արարածներին՝ իրենց Արարչի դեմ: Ի՞նչը եղավ Հիսուսի այնքան շարշարանքների ու մահվան պատճառը, եթե ոչ ապերախտ Իսրայելի սև նախանձը, որը չծածկվեց նույնիսկ հեթանոս Պիղատոսից, «Քանզի գիտեր՝ թե նախանձից մատնեցին Նրան»: Այսպես, նախանձն Աստծո փառքն էլ է ոտքի տակ առնում, ժողովրդի օգուտն էլ, հոգու փրկությունն էլ, ուստի Պետրոս առաքյալը հորդորում է. «Ուրեմն դեն գցենք ամեն շարություն և նախանձ»: «Հրաժարվելով պետք է հրաժարվեք,- ասում է,- այդ աշխարհավեր շար նախանձից, որ բարի գործերը դադարեցնում է, շարերը՝ ծովացնում»:

\*\*\*

Սակայն ինչպե՞ս ազատվենք այդ ախտից, որ արդեն արյուն ու մարմին է դարձել մեզանում, որ մեր հոգու անբաժան մասն է կազմում, որ մեր զարթնելու միջոցին ինքն էլ է զարթնում մեզ հետ,

որ մեզ հետևում է մինչև խաղաղ քնի անկողինը և որ երազներում անգամ տանջում է մեզ: Հիրավի, ուզո՞ւմ ես ազատվել նախանձից, ազատվելու դուռն առաջդ է, փրկվելու բանալին՝ ձեռքիդ: Շատ հեշտ կարող ես ազատվել, միայն թե հաստատուն կամք ունենաս, միայն թե ինքդ քո դեմ զինվես, միայն թե մեծ նշանակություն չտաս աշխարհիս անցավոր, ժամանակավոր բարիքներին: Ուզո՞ւմ ես ազատվել նախանձից, արհամարհի՛ր ժամանակավորը և սիրի՛ր հավիտենականը: Բավական չե՞ն քեզ քո սեփական անհանգստությունները, դեռ ուզում ես ուրիշների բարիքներով է՞լ տանջվել, և դու ինչպե՞ս կարող ես հանգիստ վայելել քո սեփական բարիքները, երբ աննախանձ չես սիրում քո եղբոր, քո ընկերոջ, քո բարեկամի, քո թշնամու բարիքը: Դու տրտմում ես ուրիշի բարեբախտության վրա, բայց մեկ մտածի՛ր, թե ինչ անօգուտ, ինչ անխելք բան է ուրիշի բարյաց վրա տրտմելը. քո տրտմելով կարո՞ղ ես արգելել, որ նրան այդ բարիքը չպատահի: Եթե կարողանաս անգամ, բացի վնասից ի՞նչ օգուտ պետք է ունենաս: Նախանձը դեռ ոչ ոքի օգուտ չի տվել. նրա տված օգուտն այն կլինի միայն, որ փայտ կրծող որդի և երկաթ ուտող ժանգի պես սիրտդ ուտելով կմաշի: Հենց որ սրտումդ տհաճության, չկամության մի թեթև շարժում նկատես, պետք է իսկույն, ամեն կերպ աշխատես տեղնուտեղը մեռցնել, այդ ժամանակ սրտիդ մաքրությունն ու հանգստությունը կլինի ապահով, ուրախ տրամադրության հետ խառը: Ուրեմն շատ նշանակություն մի՛ տուր կարծեցյալ բարիքներին, երևակայական երջանկություններին և խորն ապահովի՛ր սրտումդ այս ճշմարտությունը, թե իմաստուն Աստված ինչ-որ չի կամեցել տալ քեզ, թեև դու շատ էլ ետևից ես ընկել, որ ունենաս, լավ իմացիր, որ այն քեզ համար, անկասկած, վնասակար է:

## ԲԱՆ Գ

«Ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի»:

(Մատթ. Ե:22)

*Ինչպես հպարտությունից նախանձ է առաջ գալիս, այդպես էլ նախանձությունից բարկություն է առաջ գալիս: Հպարտությամբ մարդս հեռանում է Աստծուց, նախանձով՝ ընկերոջից, իսկ բարկությամբ՝ նույնիսկ ինքն իրենից: Բարկությունը վրեժխնդրության կամ հակառակորդին ցավեցնելու մի անկարգ ցանկություն է:*

*Բարկությունը երկու տեսակ է՝ արդար և անիրավ: Արդարը զարթնեցնում է միտքը, անիրավը՝ աղմկում: Առաջինը հարկավոր է, երկրորդը՝ վնասակար: Ինչպես ջերմությունն ու տոթը հարկավոր են բույսերին, այդպես էլ արդար բարկությունը, որ առաջ է գալիս նախանձախնդրի լինելուց, հարկավոր է իշխանավորին և արդարասերին: Սբ. Ոսկեբերանն ասում է. «Առանց արդար բարկության՝ ո՛չ ուսում է առաջ գնում, ո՛չ դատաստան կայանում, ո՛չ էլ մոլություններ են սանձահարվում: Արդար բարկությունը խրատի մայրն է, իսկ անմիտ համբերությունը սերմանում է մոլություններ, սնուցում է ծուլություն և դեպի շարը հորդորում ոչ միայն շարերին, այլև բարիներին»: Եվ երբ առաքյալն ասում է. «Հոգո՛վ եռացեք, Տիրոջը ծառայեցե՛ք», դրանով դեպի արդար բարկությունն է հորդորում մեզ: Եթե հայրենիքին վնասելը հանցանք է, ուրեմն և համաքաղաքացուն և համազյուղացուն վնասելն էլ է հանցանք, որովհետև նա էլ հայրենիքի մասն է: Հետևապես եթե պաշտելի է ամբողջը, նվիրական է և մասը: Այսպիսով մարդը մարդուն դառնում է պաշտելի, որովհետև ամենքս մեծ քաղաքի քաղաքացիներ ենք: Բայց երբ մարդ տեսնում է Աստծո պատվիրաններն անզգամներից արհամարհված, այդ ժա-*

մանակ պետք է նրանց դեմ ոչ թե հեզուժյուն, այլ բարկություն գործ դնի՝ վառված եղիայի բարի նախանձով: Ինչպես Հիսուս, երբ Իրեն նախատում էին՝ դիվահար կոչելով, ներելով պատասխանում էր. «Իմ մեջ դե չկա»: Իսկ երբ Հոր և Հոգու դեմ էին խոսում, զայրանում էր և վրեժխնդիր լինում:

Ուրեմն բարկությունը միշտ միատեսակ չէ, հետևապես և միշտ հանցանք չէ. կա և արդար բարկություն, որ ոչ միայն մեղք չէ, այլև առաքինություն է: Խրատելու, մեկին ուղղելու և կարգի բերելու համար արտահայտված բարկությունը միշտ հաճելի է Աստծուն, եթե դրա շարժողը միշտ միայն եղբոր օգուտն ու Աստծո փառքն է, և եթե անկարգ կերպով ու անվայել խոսքերով չի լինում, որպեսզի բարկացող մեկին ուղղելիս ինքը չմեղանչի, ինչպես և Սուրբ Գիրքն է ասում. «Թե բարկանաք էլ, մեղք մի գործեք»: Մի խոսքով անհամբերությունից առաջ եկող բարկությունը մոլություն է, իսկ արդարասիրտությունից առաջ եկողը՝ առաքինություն:

Արդար բարկությամբ էր զայրացած Մովսեսը, երբ տեսնելով իսրայելացիների պատրաստած ոսկե հորթը, որին երկրպագում էին, ձեռքի քարեղեն տախտակները գետին գարկեց, փշրեց: Նույն բարկությամբ էր վառված ինքը՝ հեզ Հիսուս, երբ տեսավ Երուսաղեմի տաճարն առևտրի հրապարակ, աղոթքի տունը՝ ավագակաց որջ դարձրած, ուստի խարազան առավ ձեռքը և խփեց, կործանեց առևտրի սեղաններն ու ամենքին դուրս քշեց տաճարից: Արդար բարկությամբ էր բորբոքված և Լուսավորչի թոռը՝ սբ. Հուսիկ հայրապետը, որ, եկեղեցում ուրացող Հուլիանոս կայսեր դիվանկար պատկերը տեսնելով, առավ, ոտնակոխ արեց: Արդար բարկությամբ էր վառված և Ղևոնդ երեցը, որ, եկեղեցու պաշտամունքը թողած, ժողովրդի գլուխն անցած, մահակներով ջարդեց պարսից զորքը, որն ուզում էր իր ավերածությունների և հավատափոխ անելու առաջին փորձն անել Երզնկայի եկեղեցու դեմ:

Բայց այդպիսի գովելի բարկություն քշերն են ունենում, ուստիև այդպիսի մեկին տեսնելիս մարդիկ նրան անխոհեմ և կռվարար

են անվանում, որով և մեղանշում են շարաշար: Այնինչ առանց այդպիսի բարկության մարդ ո՛չ արդարապես կարող է վարվել, ո՛չ մոլութունը սանձել և ո՛չ քրիստոնեաբար դաստիարակել, մինչդեռ առաքյալն է պատվիրում. «Սաստի՛ր, հանդիմանի՛ր»: Հայրը, ուսուցիչը, քահանան, դատավորը, առհասարակ իշխողը, եթե հարկավոր ժամանակ անտարբեր գտնվեն, սառը մնան, մի փոքր չբարկանան, ոչինչ չի ուղղվի, այլ անկարգութունն առավել ևս կաճի: Մեկը քո առջև անվայել կերպով անպատվում է իր ծնողներին, ընկերոջ վրա հարձակված՝ անողորմաբար ծեծում է նրան, անարգում եկեղեցու սրբութունները և անլուր հայհոյանքներ է թափում. եթե դու անտարբեր հանդիսատես ես դառնում, չարը խափանելու համար չես գրգռվում, ձայն չես բարձրացնում, նշանակում է եղբորդ օգուտը քեզ փուլթ չէ, Աստծո փառքն ու սերը քո հոգը չեն, որովհետև սրբերից մեկն ասում է. «Անկարելի է, որ մարդ Աստված սիրի և տեսնելով նրա անարգվելը՝ անտարբեր մնա»: Այդպիսի դեպքերում անտարբեր ու անզգա մնալը, չբարկանալը թուլութուն է, առաքինութուն չէ: Հնարավո՞ր է, որ մեկն իր եղբոր անարգվելը տեսնի, ու կիրքը չշարժվի, այդպիսին եղբայրասեր չէ: Նույնպես եթե եկեղեցու, հավատի, Աստծո դեմ է խոսքեր լսում ու չի բարկանում, աստվածասեր չէ: Եվ երբ Հիսուս ասում է. «Ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի», պարզ ցույց է տալիս, որ եղբոր վրա բարկանալը հանցանք չէ, այլ մինչև անգամ կարևոր է: Սակայն զուր և անիրավ կերպով բարկանալն է, որ Հիսուս դատապարտության արժանի է համարում: Բարկութունը մարդուս մեջ մի բնական կիրք է, բայց երբ բարկացողը հետն էլ չար ցանկություն ունի, ընկերոջը վնասելու միտք ունի, այդ ժամանակ մեղք է և նույնիսկ մահացու մեղք:

\*\*\*

Երբ մեծավորն իր ստորադրյալի, տերն իր ծառայի, ծնողն իր զավակի վրա բարկանում է՝ ոչ թե նրա լավը կամենալով, ոչ թե

Աստծո փառքը փնտրելով, այլ լուկ կիրքը հագեցնելու և վրեժ առնելու դիտավորութեամբ, այդպիսի բարկութիւնն անկարգ է, տված հանդիմանութիւնն ու պատիժն էլ անօգուտ են լինում, ուստի այդպէս բարկացողը միշտ մեղանշում է ու դատապարտվում: Եթէ լավ մտածենք, կտեսնենք, որ մարդը և բարկութիւնն իրար հակառակ բաներ են: Մարդս ստեղծված է իր նմանին օգնական լինելու, բարկութիւնը՝ նրան կորցնելու համար: Մարդն աշխատում է իր նմաններին միասին ժողովել, բարկութիւնն աշխատում է ժողովվածներին իրարից հեռացնել: Մարդն օգուտի համար է, բարկութիւնը՝ վնասի համար: Նա անծանոթներին էլ է շտապում օգնել, մյուսը սիրելիներին անգամ չի խնայում:

Ի՞նչ է բարկութիւնը: Բարկութիւնը մի կարճատև ու թույլ անմտութիւն է, մի գործիք, որ ծարավ է արջան և պատուհասի, որ մոռանում է պատշաճավորութիւնը, չի հիշում բարեկամութիւնը: Բարկութիւնը նման է ավերակի, որն ինչի վրա որ կանգնած է, նրա վրա էլ կործանվում է: Բարկութիւնը բոլոր կրքերի իշխանն է: Ձկա բարկութիւնից ավելի շարատանջ և ինքնակործան ախտ: Հաշոդելիս խորխտանում է, դերև ելնելիս<sup>1</sup> կատաղում, և եթէ թշնամին ձեռքից փախչի, բարկացողն իր անձի դեմ է կռվում, իր մարմինը խաճատում<sup>2</sup>: Ինչպէս որ վերքերով ցավագնած մարմնին մատով կամացուկ դիպչելն անգամ զգալի է, այդպէս էլ բարկութիւնը մի կանացի ու տղայական ախտ է: Բարկութիւնը մարդուն ներսից վառելուց զատ արտաքուստ էլ է այլանդակում և տգեղացնում կերպարանքը: Նայում ես բարկացած մարդուն, էլ առաջվա մարդը չէ. հոնքերը կախ են ընկած, երեսը՝ դեղնած, շրթունքը՝ սևացած, ձայնը՝ խռպոտ ու խզված, աչքերը՝ կրակ դարձած, խոսքերը՝ հակառակ ու անախորժ, ինքը՝ դժնյա և տեսնողներին ահարկու: Բարկացողը բորբոքվում է, աչքերը փայլում են, երակները՝ լարվում, մազերը՝ ցից-ցից կանգնում, շրթունքը՝ սեղմվում, ատամները՝ կրճատում, բերանը՝

---

<sup>1</sup> Ձախողվել:

<sup>2</sup> Կծուտել:

փրփրում, ձայնը՝ ընդհատվում, վիզը՝ երկարում: Եթե կանայք իմանային, թե բարկությունն ինչքան է տգեղացնում մինչև անգամ իրենցից ամենագեղեցիկին, անշուշտ, իրենց ամբողջ կյանքում կզգուշանային բարկանալուց: Մարդը կարողանում է ուրիշ հանցանքներ իր մեջ ծածկել և ծածուկ սնուցանել, բայց բարկությունը դուրս է ցուանում, երևում մարդու երեսին և ամեն բան լափում կրակի պես, և որքան աշխատում ես չափավորել, այն ավելի է բորբոքվում: Ուրիշ ամեն հանցանք չափ ու սահման ունի, բայց բարկության համար անմատչելի ոչինչ չկա, ամեն բանի հասնում է և կատաղությամբ երկինքն է շոշափում:

Մենք ոչ միայն բարկանում ենք մեզ վիրավորողների վրա, այլև նրանց վրա, ում մասին մտածում ենք, թե կարող են մեզ վնասել և արդեն վնասած ենք համարում: Շատ անգամ մոռանալով, որ մեր գործը մարդկանց հետ է, հարձակվում ենք նույնիսկ անասունների ու անշունչ առարկաների վրա, պատառոտում ենք շորները, շպրտում ենք ամանները, կոտրում ենք գրիչը, պատռում թուղթը: Հաճախ մեզ կատաղեցնում է կա՛մ շուռ տված թասը, կա՛մ վատ դրված սեղանը, կա՛մ անշնորհք ծառան և ուրիշ շատ բաներ, որոնք արժանի իսկ չեն, որ մարդ դրանց պատճառով բարկանա: Մեր անհամբերության շնորհիվ շատ անգամ պատժի արժանի են համարվում սրբնթաց կամ համառ ձին, հաշող շունը, աղաղակող թռչունը, տարածամ թռչող ճանճերը: Եվ ի՛նչ անմտություն մեր կողմից, պատժում ենք անասուններին և անզգա առարկաները, որոնց ավելի էր վայել, որ մեզ պատժեին:

Ամեն մարդ իր թերություններն ունի, բայց վա՛յ նրան, որի մասը բարկացկոտությունն է: Այդպիսի մեկը մինչև չբժշկվի այդ վնասկար ու մահացուցիչ ախտից, երբեք չի կարող երջանիկ լինել: Մի հեղինակ ասում է. «Պետք է, որ Արարիչը լեռների ապառաժոտ խոռոչները պատրաստած լինի բարկացկոտ մարդու համար: Թող փախչեն այդպիսիք մարդկանց ընկերությունից և առանձնանան այդ խոռոչներից ամենամթինների մեջ: Ավելի լավ է, որ այնտեղ իրենց օրերը



Թշվառութեամբ անցկացնեն, քան թե ողջ աշխարհն իրենց հետ թշվառացնեն»: Բարկութեան միջոցին մարդ ինչ որ անի կամ ասի, գուրկ է բանականութիւնից: Սրա համար է, որ շատ անգամ, երբ մեր մտքի հուզմունքն անցնում է, մեր արածի կամ ասածի հիշատակը մի դառը զգացում է պատճառում մեզ: Բարկութեան մի վայրկյանը երբեմն դառնութեամբ է լցնում մեր ամբողջ կյանքը: Ով բարկանում է, կ'ամ անիրավ է, կ'ամ շուտով անիրավ պետք է դառնա, որովհետև դժվար կպատահի, որ բարկութեան ժամանակ մեր հակառակորդի դեմ մի այնպիսի խոսք չասենք, որի համար հետո չամաչենք ու չպարտավորվենք ներողութիւն խնդրել: Եվ հենց ներողութիւն խնդրելով, որ մի անհրաժեշտ պարտ է, խոստովանած կլինենք մեր անիրավութիւնը: Եվ բարկութիւնը մի՞թե անհետեանք է անցնում հենց իր՝ բարկացողի համար: Երբեք: Բուռն կրքերի մեջ մարդուս բարկութեան չափ վնաս բերող մի այլ կիրք գուցե չկա, որովհետև դրանից մեր առողջութիւնը վնասվում է, արյունը՝ ապականվում, մաղձը՝ վրդովվում, և մեր մարմնի մեքենայի կազմն այնպես է փոխվում, որ շուտով գերեզմանին ենք մոտենում: «Սրտմտութիւնն ու բարկութիւնը,– ասում է Սողոմոնը,– կարճացնում են մեր կյանքը»: Հիրավի, ինչքան մարդիկ են բարկութեան միջոցին ընկել, մեռել: Սաստիկ բռնութիւնից ոմանց երակները պայթել են, ուժգին գոչելուց ոմանց արյունը բերաններն է եկել, ոմանց աչքերը մաղձից խավարել են, և բարկութիւնը դարձել է շատերի հիվանդութեան կրկնվելու պատճառը: Բարկացողը միանգամայն մեղանշում է Աստծո, ընկերոջ և իր անձի դեմ: Աստծո դեմ մեղանշում է, որովհետև նրա պատվիրաններն է ոտքի տակ առնում, նրա իշխանութիւնն է հափշտակում, որովհետև Աստված ասում է. «Իմն է վրեժխնդրութիւնը, և ես կհատուցեմ»: Ընկերոջ դեմ, որովհետև եղբայրասիրութիւնն է ուրանում: Եվ իր անձի դեմ, որովհետև գործած մեղքերով իրեն զրկում է ոչ միայն արքայութիւնից, այլև երկրավոր հանգստից՝ կորցնելով նույնիսկ առողջութիւնը և հաճախ էլ կյանքը, ինչպես առաքյալն է ասում. «Նրանք, որ այսպիսի բաներ են գործում, Աստուծու արքայութիւնը չեն ժառանգելու»:

\*\*\*

Բարկացողը չի ընդունում, որ Աստված կա, և թե նա ունի դատաստան և հատուցում: Սուրբ Գիրքն ասում է. «Մարդու բարկությունը Աստուծու արդարությունը չի կատարում», այսինքն՝ մարդը բարկացած ժամանակ չի կարող վարվել Աստծո ուզածի պես, որովհետև մարդու բարկությունը լի է ամենայն շարությամբ և դառնությամբ, իսկ Աստծո արդարության մեջ դրանցից ոչ մեկը չկա: Աստծո արդարությունն առաքինության բոլոր գործերն են, մանավանդ հեզու-թյան, քաղցրության և երկայնամտության գործերը: Աբ. Ոսկեբերանն ասում է. «Աստված ուրիշ կենդանիներ ստեղծեց եղջյուրներով, ժանիքներով ու մագիլներով, իսկ մարդուն թողեց առանց այդ զենքերի, որպեսզի ինքը՝ Աստված, լինի նրա ուժը, ուստի վայել չէ, որ մարդս հոգով լինի գազանների նման, որոնցից այնքան գանազանվում է մարմնով»:

Սովորաբար մարդու բարկությունը երկու գլխավոր պատճառ ունի՝ անձնասիրություն և հպարտություն: Կինելով անձնասեր՝ կամենում ենք, որ ամեն բան մեր ուզածի պես լինի, մեր ուզածին հակառակ ոչինչ չպատահի, ուստի հենց որ մեր մտքի, մեր ուզածի դեմ մի բան է լինում, մեր կրքերն իսկույն շարժվում են: Կինելով հպարտ՝ ուզում ենք, որ ամենքը մեզ պատվեն և մեր արժանավորությունից ավելի համարմունք ունենան մեր նկատմամբ, ուստի հենց որ մի փոքր անարդու է մեզ, հենց որ կասկած ենք ունենում, թե մեզ արհամարհում են, իսկույն բռնկվում ենք: Ինչո՞ւ Սավուղն այնչափ բարկացավ խեղճ Դավթի վրա, որովհետև տեսավ, որ ժողովուրդը մեծ համարմունք ունենր ոչ թե իր վրա, այլ Դավթի վրա. Դավթի դափնիները դարձան իր դիվահարություն պատճառը: Ինչո՞ւ Նաբուգոդոնոսորը երեք մանուկներին գցել տվեց յոթնապատիկ սաստկացրած հնոցը, որովհետև նրանք հրաժարվեցին Աստծուն տալիք փառքը մարդուն տալ՝ չկամենալով երկրպագել նրա կուռքին, նրա եսին: Կանայք ինչո՞ւ առհասարակ այն աստիճան բարկացկոտ են լինում, որ Սուրբ

Գիրքն ասում է. «Լավ կլինի բնակել անապատում, քան լեզվանի կնոջ հետ», որովհետև անձնասեր են, ինքնահավան են, հպարտ են, որովհետև նրանք կարծում են, թե այն պատիվները, որ տղամարդիկ տալիս են իրենց իրենց սեռին հատուկ տկարության համար ու այլևայլ պատճառներով, իրենց արժանավորությունների ու կատարելությունների համար է, ուստի այնպես են հպարտանում, որ մի փոքրիկ անարգանք, մի թեթև անուշադրություն, մի չնչին տհաճություն բավական է, որ կրքոտվեն:

\*\*\*

Մեզնից ամեն մեկի մեջ թագավորի սիրտ կա: Ուզում ենք, որ ինքներս ամեն համարձակություն ունենանք ուրիշների վրա, իսկ ուրիշները՝ ոչ մի համարձակություն մեզ վրա: Ուստի շուտով վառվում ենք վրեժխնդրության ոգով, բայց վրեժխնդրության փափագը փոքրոգության և տկարամտության հետևանք է: Մեծահոգի, վեհանձն մարդը վեր է իր կրած անիրավություններից: Գիտունի մեկն ասում է. «Երբ մեկն իմ դեմ անիրավություն է գործում, աշխատում եմ ինձ այնքան բարձրացնել, որ նա այլևս չկարողանա ինձ հասնել»: Հիրավի, ի՞նչ կարող է թշնամուն ներելուց ավելի փառավոր լինել, մանավանդ բարձրության վիճակի մեջ: Կայսերական գահը բարձրանալուց հետո Ադրիանոսը, մի օր իր թշնամուն տեսնելով, ասաց. «Ես հիմա կայսր եղա, դու այլևս ինձնից վախենալիք չունես»: Եվ երբ ոմանք Հենրիկոս Դ-ին մի անգամ հորդորում էին, որ մի փոքր ավելի խիստ վարվի ապստամբած քաղաքների հետ, նա ասաց. «Վրեժխնդրության պատճառած գոհունակությունը վաղանցուկ է, իսկ ներողամտությունից ծագածը՝ հավիտենական»: Իսկ Պլատոն փիլիսոփան ասում է. «Իմաստուն մարդը մարդուն պատժում է ոչ այն բանի համար, որ մեղանչեց, այլ որ չմեղանչի, որովհետև անցյալը հետ բերելն անկարելի է, իսկ գալիքը կարելի է խափանել»:

Շատերը կարծում են, թե բարկությունն առանց մեր կամքի է առաջ գալիս, ուստիև կարելի չէ նրա առաջն առնել կամ սանձել:

Բայց դա սխալ կարծիք է, որովհետև դա, լինելով մի կամավոր հոգեկան ախտ, կարող է հաղթահարվել մեր ցանկություններով: Բավական է միայն, որ կամք ունենանք: Եթե իմաստունին հարկավոր լինի բարկանալ անպատեհ գործերի վրա, վրդովվել ու տրտմել անիրավությունների վրա, այդ ժամանակ նրանից ողորմելի մեկը չի գտնվի, նրա ամբողջ կյանքը կանցնի բարկանալով: Ինչո՞ւ: Որովհետև չի անցնի այնպիսի բուրբ, որ մի անարժան բան շտեմնի: Ամեն անգամ, երբ նա տանից դուրս գալու լինի, կպատահի անօրենների, ագահների, անառակների, անամոթների, որոնց ամբողջ երջանկությունն իրենց ախտն է, որ կողմն էլ նայելու լինի, միշտ զայրանալու արժանի մի բան կտեսնի, և եթե ամեն դեպքում էլ բարկանա, հոգին դուրս կգա, որովհետև ինչքան մարդ կա փողոցում, այնքան էլ ախտ կա նրանց մեջ: Եթե իմաստունը մի անգամ սկսի բարկանալ, այլևս երբեք դադար չի ունենա: Անիրավություններով լի է աշխարհս, և անընդհատ գործվող շարիքների դեմ ոչ մի դեղ ու դարման չի գտնվում: Մարդիկ մրցում են միմյանց դեմ, անիրավությամբ գլորում իրար: Օրըստօրե մեղքն աճում է, ամոթը՝ պակասում: Ոճիրներն այժմ ոչ թե ծածուկ են գործվում, այլ ակներև համարձակությամբ: Զայրացյալ ամբարշտությունը համաճարակ ախտի պես բռնել է ամենքի սրտերը, որովհետև անմեղությունը ոչ թե նվազել է, այլ իսպառ վերացել է: Եթե իմաստունին հարկ լինի ամեն անօրենություն տեսնելու կամ լսելու ժամանակ բարկանալ, ապա բարկությունը քիչ է, հարկավոր կլինի մոլեգնել, որովհետև մարդս ծնված օրից ավելի հոգևոր ախտերի է ենթարկված, քան մարմնավոր:

Ոմանք էլ կարծում են, թե անկարելի է բարկությունը բնաշինչ անել մարդու սրտից, որովհետև դա մարդու բնությունը հակառակ բան է: Սակայն չկա մի այնպիսի խիստ ու դժվար բան, որին մարդու միտքը չհաղթի, և չկա մի այնպիսի վայրագ կիրք, որը մարդս չհաղթահարի կրթությամբ, վարժությամբ: Ինչ բանի որ հոգին մի անգամ հրամայում է, այն միշտ կարող է ձեռք բերել այն: Եղել են մարդիկ, ովքեր սովորել են երբեք չծիծաղել, ոմանք իսպառ հրաժարվել են

գինուց և ջրից իսկ: Այս դժվարություններին վարժվելու համար ոչ ոք վարձի ակնկալություն չի ունեցել, ուրեմն մի՞թե մենք պետք է դժվարանանք համբերել, երբ հոգիներիս անսասան անդորրությունը մեծ երջանկություն է պատճառելու մեզ:

\*\*\*

Բարկություն դեմ երկու տեսակ դեղ կա. մեկը չբարկանալուն է, մյուսը՝ բարկությունը սանձահարելը: Ինչպես առողջապահության մեջ կան առողջությունը պահպանելու այլ միջոցներ, հիվանդությունը բուժելու այլ տեսակներ, այդպես էլ այլ միջոց կա բարկությունն արգելելու և այլ՝ նրան սանձահարելու համար:

Առաջին դեղը պետք է գործ դնել մանկական տարիներին: Պետք է իմանալ, որ ազատությունն ավելացնում է գոռոզությունը, ծառայությունն ընկճում է, գովասանքը խրախուսում է հոգին, բայց դրանից է առաջ գալիս և իր անձի վրա հույս դնելն ու բարկացկոտությունը: Այս պատճառով պետք է բռնել երկուսի միջին ճանապարհ՝ մերթ սանձը վայր դնել, մերթ խթանը: Երեխային պետք է հեռու պահենք փափկություններից, որովհետև մարդուս ոչ մի բան այնպես բարկացկոտ չի դարձնում, ինչպես փափուկ ու քնքուշ սնունդը: Այս է պատճառը, որ ծնողների միակ որդու սիրտն ավելի է փշանում, ապականվում: Ինչպե՞ս կարող է զրկանքներ տանել նա, որին մանկությունից ոչինչ չի մերժվել, որի արցունքը միշտ սրբելիս է եղել քնքշաբար խնամող մայրը, և որի կամքը միշտ կատարելիս է եղել ներողամիտ դաստիարակը: Շատ կարևոր հանգամանք է նույնպես, որ մանուկը սակավապետ և պարզ հագնվող լինի՝ մասամբ նման իր հասակակից ու դասակից երեխաներին, որովհետև ով մանկությունից է սովորում հավասարվել ուրիշներին, նա ամենևին չի գայրանում ուրիշի հետ համեմատվելիս:

Երկրորդ դեղը բարկության առիթների դեմ կռվելն է, այն է՝ շուտ չհավատալ և ժամանակ տալ: Լսելով, որ մարդիկ մեզ հետ անհրաժեշտ են վարվել, մենք շուտ չպետք է հավատանք դրան: Այո՛,

չպետք է հավատանք, ինչքան էլ գործը մեզ հայտնի ու ակներև երևա, որովհետև շատ անգամ սուտը ճշմարտության նմանություն է ունենում: Մի խոսքով՝ ամենալավ միջոցն է արհամարհել նույնիսկ բարկության առիթները և սկզբից իսկ հակառակվել դրանց, որովհետև եթե մեկը ձեռքերը տարածած ընկնելիս լինի անդունդը, ինչքան էլ աշխատի, այլևս չի կարող հետ պահել իրեն: Մեծահոգի չէ նա, ով դիմադրում է հակառակողին: Հիսուս դրա դեմ ասում է. «Եթե ներքե մարդկանց իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ կների ձեզ ձեր հանցանքները»: Եթե այս որոտը քեզ չզարթնեցի, ապա դու ոչ թե քնած ես, այլ մեռած: Եվ եթե մենք դժվարանում ենք ներել ուրիշներին, ի՞նչ կլինի, եթե ուրիշներն էլ մեզ չներեն: Պետք է ամեն բանի ժամանակ տալ, և ճշմարտությունն ինքն իրեն կհայտնվի: Եթե դու դատավոր լինեիր, ամենափոքր գործում անգամ առանց վկայի չէիր հավատա, սակայն բարեկամիդ մեղադրում ես նախքան նրա պատասխանը լսելը: Բայց ամենքին ուղղակի հավատալն անխոհեմության նշան է:

Ոչ մի բան քեզ չի վնասի, եթե ինքդ քեզ չվնասես: Բայց ինձ վնասողը, կասես, շատ չար է: Համբերի՛ր, ուրեմն նա քեզ վնասելու պատճառով ուրիշից կպատժվի: Եվ արդեն պատժված է, քանի որ մեղանչել է: Բայց նա խելք ունի, կասես, ինչո՞ւ չի ուղղվում: Ինքդ էլ խելք ունես, ինչո՞ւ չես ուղղում քո փոքրոգությունը, ինչո՞ւ բարությամբ չես հաղթում չարին: Ուրիշի հանցանքն աչքիդ առաջ է, իսկ քոնը՝ հետևում: Քո ամենաչար թշնամին քո բարկությունն է, որ ամենից շատ է կատաղեցնում քեզ, և դու նրանից պետք է սկսես վրեժխնդրությունդ: Ինչո՞ւ ես դրսում փնտրում հակառակորդներ, երբ մեծ հակառակորդդ տանդ է պահված: Պլատոնը, բարկանալով ծառայի վրա, խփելու համար բարձրացրած ձեռքը ցած թողեց՝ ասելով. «Կխփեի, եթե բարկացած չլինեի»: Ուզում էր առաջ բարկությունը պատժել, ո՛չ թե ծառային՝ ավելի շատ պատժի արժանի համարելով բարկացող տիրոջը, քան թե անկարգ ծառային: Պետք է պատժել հանցավորին, բայց առանց բարկանալու: Եթե մեկը մաքուր ու

քաղցրահամ ջրի աղբյուրը վատաբանի, մի՞թե այդ պատճառով այն այլևս մաքուր ջուր չի բխի, և եթե մեկը նրա մեջ ցեխ շարտի, իսկույն չի՞ լվանա ու չի՞ մաքրի: Մի եպիսկոպոսի լուսամուտի տակ մի ազնվական երիտասարդ ծաղրական խոսքեր էր ասում, բայց նա ոչինչ չէր պատասխանում: Այդ բանից ավելի գրգռված՝ նա հետո իր ծառաներին հրամայեց, որ բարձրաձայն ծաղրեն նրան: Երբ այդ էլ չօգնեց, իր շներին հաչել տվեց: Վերջը բարձրացավ նրա բնակարան, ներս մտավ սենյակ, որտեղ իր բոլոր ուժերը զուր սպառելով՝ դուրս գնաց: Ներկա եղողներից մեկը հարցրեց եպիսկոպոսին. «Ինչպե՞ս կարողացաք տանել այդչափ անպատվությունը»: Եպիսկոպոսը նրան պատասխանեց. «Ես և լեզուս պայմանավորվել ենք, որ երբ սիրտս վրդովվի, լեզուս լռություն պահպանի»:

Ուրեմն ինչո՞ւ ես կատաղում բնությանդ դեմ: Նույն բնությունից չէ՞ և ընկերդ, որի վրա զայրանում ես, չէ՞ որ քո անդամին ես անպատվում, մանավանդ Քրիստոսի անդամին, որովհետև ամենքս նրա մարմնի անդամներն ենք. «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ»: Ահա պարզ ասում է. «Ով իր եղբորն անարգում է, Հիսուսին է անարգում, Աստծուն է անպատվում»: Իսկ առաքյալն ասում է. «Եթե թշնամիդ քաղցած է, հաց տո՛ւր նրան, եթե ծարավ է, ջուր տո՛ւր. այդպես անելով՝ կրակի կայծեր թափած կլինես նրա գլխին»: Քեզ՝ մարդկանց մեջ հարգանք, նրան՝ անարգանք: Հիսուս ինչքան բարերարեց Իսրայելին, բայց նրանք հակառակն էին հատուցում: Երեսին թքում էին, ապտակում էին, փշով պսակում, եղեգով ծեծում, իսկ նա, խաչի վրա պրկված, նրանց համար աղոթում էր իր Հորը: Ճշմարիտ, հեզ հոգին միայն իրեն է հակառակվում, աշխատում է ներել ուրիշներին, իսկ մեղադրել միայն իրեն: Եթե մարդ ուզենա պատասխանել բարկացած մարդուն, ապա նրան ո՛չ Սամսոնի ուժն է բավական, ո՛չ Սողոմոնի իմաստությունը: Ահա թե ինչու պետք է լինել ներողամիտ և համբերող:

\*\*\*

Շուտ չպետք է բարկանալ, որովհետև ուշացած վրեժը կարելի է և հետո առնել, բայց արդեն առած վրեժը չի կարելի վերադարձնել: Ուշացնելը մի շատ գորավոր դեղ է բարկության դեմ: Չկա մի հանգամանք, որ բարկանալու առիթ չտա մեզ. սա օրինավոր չբարկեց ինձ, նա սիրով չընդունեց իմ համբույրը, երրորդն իսկույն ընդհատեց խոսքս, չորրորդը ճաշի չհրավիրեց, հինգերորդը խոժոռ դեմքով նայեց և այլն և այլն: Կասկածանքների համար երբեք պատճառներ չեն պակասի մեզ: Պարզասիրտ պետք է լինենք և բարեսեր: Վերին աստիճանի փափկասեր մարդիկ կան: Մեկը գանգատվում է, որ թեկն ընկնելիս<sup>1</sup> վարդի տերևների ծալքերն անհանգստացնում են իրեն, մյուսը, թե իր ականջը խլանում է հատակին քսվող աթոռի ճոխնչից և այլն: Այդպիսիք ինչպե՞ս կարող են հանգիստ սրտով տանել հրապարակավ ստացած նախատինքները:

Այն անիրավությունները, որոնց պատճառով զայրանում ենք, կա՛մ ի լրո գիտենք, կա՛մ ականջալուր ենք և կա՛մ ականատես: Շատ դյուրահավան չպետք է լինենք: Ոմանք սուտ են խոսում, որովհետև խաբված են, ոմանք էլ, որպեսզի խաբեն: Շատը զրպարտում է և չեղած տեղից անիրավություն հնարում, իբր կարեկցում է քեզ, շատն էլ շարակամ է, ուզում է սերտ բարեկամությունդ քանդել, շատն էլ անխիղճ լեզվագար է, երկուսիդ իրար դեմ դուրս բերելով՝ հեռվից զվարճանում է, ինչպես մի խաղի հանդիսատես: Ով ծածկաբար մի բան է քեզ ասում՝ ավելացնելով թե. «խոստովանանք լինի, մեր մեջ մնա», այնպես պետք է համարես, թե բնավ չի ասում: Բայց ավելի անիրավ ինչ կարող է լինել, եթե դու էլ հավատում ես ծածկաբար, սակայն բարկանում ես հայտնաբար: Իսկ այն մարդկանց, որոնց անիրավություններն անձամբ գիտես, պետք է այսպես դատես. եթե երեսա է, տարիքը պետք է ներես, որովհետև չգիտես անգամ, թե մե-

---

<sup>1</sup> Թիկնել



ղանչել է: Եթե հայրդ է, քեզ այնքան բարերարած լինելու փոխարեն թող մի քիչ էլ իրավունք ունենա քեզ վնասելու, կամ կարող է պատահել, որ այն, ինչի համար վիրավորված ես, մի ուրիշ տեսակ երախտիք է դեպի քեզ: Եթե կին է, դուրախաբ է: Ուրիշի ասելով է արել, միայն անիրավ մարդը կբարկանա այդպիսինի դեմ: Քեզանից վնասված լինելով է արել, ուրեմն ոչ մի անիրավություն չկա, որովհետև արածիդ հատուցումն ես ստանում: Դատավոր է, ավելի նրավձուխ հավատա, քան թե քոնին: Անբան անասուն է կամ անասունի նման, եթե բարկանաս, նրան կնմանվես: Բարի՞ մարդ է, բայց անիրավ է վարվել հետդ, մի՞ հավատա, չա՞ր է, մի՞ զարմանա, այն վրեժը, որ դու պետք է առնեիր, ուրիշը կառնի: Իսկ եթե թշնամյաց անիրավությունն դեմ ես վրդովվում, դրա պատճառն էլ քո անձնասիրությունն է՝ ուզենալով, որ քո անձը թշնամիներիդ անգամ անմատչելի լինի:

Դու չես կարողանում տանել, երբ թշնամիներդ վատ լուրեր են տարածում քո մասին և կասկածելի դարձնում: Ասենք, թե մեկը քեզ անառակ է անվանել, եթե ուղիղ է, ուղղվիր, եթե սուտ է, ծիծաղիր վրան: Որն ուզում է լինի, դու վրեժ մի՞ առնիր թշնամուցդ, այլ քե՛զ հանդիմանիր: Պետք է լավ իմանաս, որ մեր բարեկամները գովելով ու շոյելով ինչքան վնասում են մեզ, այնքան մեր թշնամիները զրպարտելով օգուտ են տալիս, միայն թե կարողանանք օգտվել նրանց զրպարտություններից: Ինքնասիրություն պատճառով մենք չենք տեսնում մեր պակասությունները, իսկ թշնամիներն ավելի ուշադրությունամբ են նայում մեզ վրա և իրենց շարունակամբ ստիպում են մեզ ուղղվել: Թող ոչ ոք չասի, թե իմ թշնամին մի վերին աստիճանի անուղղելի մարդ է: Բայց ինչքան էլ վատ լինի, դարձյալ վատ չի լինի Սավուղից, որ ոչ թե մի, այլ մի քանի անգամ փրկված լինելով Դավթի ձեռքով անթիվ փորձանքներ բերեց նրա գլխին: Իսկ դու ի՞նչ ունես ասելու քո թշնամու մասին: Հո՞ղ է խլել քեզնից, անցե՞լ է քո սահմանը, աղքատացրե՞լ է քեզ: Լավ, բայց նա չի խլել քո կյանքը, որի փորձն արեց Սավուղը: Եթե այդ փորձը մինչև անգամ արել

է, գոնե մի անգամ է արել, ոչ թե մի քանի անգամ, և եթե հենց մի քանի անգամ է արել, գոնե ոչ մի անգամ քո ձեռքը չի ընկել և չի փրկվել ու բարերարվել քեզանից: Սակայն Դավիթն այդ դեպքում էլ բարձր է քեզնից, որովհետև նա չէր լսել «Բյուր քանքարների» առակը, նա չէր լսել այս հրամանը. «Ներեցե՛ք մարդկանց իրենց հանցանքները»: Վերջապես նա Հիսուսին չէր տեսել խաչված և թանկագին արյունը թափված:

Բարկուծյան դեմ պետք է զինվես հեզուծյամբ: Երբ թշնամին ձեռքիդ է, վրեժ մի՛ խնդրիր նրանից, այլ արդարացրո՛ւ, որ ստիպվի իրեն մեղադրել: Դժվար բան չէր Անտիգոնոս կայսեր համար պատժել այն երկու զորականներին, որոնք արքունի վրանի մոտ նստած՝ բամբասում էին իրեն: Անտիգոնոսը լսեց և վրանի փեղկը թեթև շարժելով՝ ասաց. «Մի քիչ հեռացե՛ք, միգուցե կայսրը լսի»: Ուստի որպեսզի ամեն մեկի դեմ առանձին չբարկանաս, ամենքին ների՛ր, առհասարակ թողուծյո՛ւն տուր ողջ մարդկային ազգին, ապա թե ոչ եթե բարկանում ես ծերերի ու երիտասարդների վրա, որովհետև մեղանշում են, ապա բարկացի՛ր նաև մանկանց վրա, որովհետև մեղանշելու են: Անկարելի է, որ հողածին մարդը չբարկանա, բայց մեր սբ. Ներսես Ծնորհալին այն աստիճան հեզ էր ու խոնարհ, որ եթե մեկի վրա բարկանալու մի առիթ էր լինում, նա ոչ մի կիրք չէր ցույց տալիս, այլ հեզուծյամբ ու քաղցրուծյամբ ասում էր. «Լո՛ւյս, եթե ինձ չխնայեի, կբարկանայի քեզ վրա»:

Բարկանալու առիթներ միշտ կունենաս, բայց պետք է քեզ պատրաստես դիմադրելու: Երբ սաստիկ ուրախ լինես, սաստիկ վախեցի՛ր: Այն միջոցին, երբ քեզ թվում է, թե անձդ ապահով է, վնասատուներ քեզ չեն պակասում, նրանք պարզապես հանդարտ են ու լուռ. չարերն ամեն ժամանակ դարան են մտած քո դեմ: Դու պետք է պատրաստ լինես ամեն դեպքի համար: Իմաստուն նավապետը բոլոր առագաստները միասին դեմ չի անում հողմին, այլ պատրաստ պարաններ ունի՝ հարկավոր ընդհանրապես առագաստները հավաքելու համար: Խաղաղ ու ապահով լինելու համար դու չպետք է բարկա-

նաս ո՛չ հավասարի, ո՛չ մեծի և ո՛չ փոքրի վրա, որովհետև հավասարի հետ վիճելն անտեղի է և երկյուղալի, մեծի հետ՝ հիմարություն է, իսկ փոքրի հետ՝ ցածություն: Քեզ վնասողը կա՛մ քեզանից հզոր է, կա՛մ տկար: Եթե տկար է, խնայի՛ր նրան, եթե հզոր, խնայի՛ր քեզ: Վերջապես բարկությունդ կա՛մ ժամանակավոր է, կա՛մ մշտական: Եթե ժամանակավոր է, ավելի լավ չի՞ լինի, որ դու նրան թողնես, քան թե նա՝ քեզ, իսկ եթե մշտական է, տե՛ս, թե ինչ շարատանջ վիճակ ես պատրաստում քեզ համար, ինչ կյանք պետք է լինի նրա կյանքը, ով դատապարտված է մշտապես բարկանալու: Սակայն մեր բարկությունը ժամանակավոր լինի, թե մշտական, հավասարի հետ, թե անհավասարի, իմաստունի հետ, թե տգետի իմաստունին տեղի տանք, տգետին ներենք և ամենքին այս պատասխանը տանք. «Մարդկանցից իմաստագույններն անգամ հաճախ մեղանշում են, ուստի ներողամիտ լինենք միմյանց նկատմամբ. Հանգստանանք միայն այն մտքով, որ շարեր ենք՝ շարերի մեջ բնակված: Աշխատենք ամեն կերպ վեհանձն լինել, և կտեսնենք, որ այն ամենը, ինչի համար որ կռվում, վիրավորում ենք, արհամարհելիք են, անարգ և բարկանալու անարժան: Ինչի՞ համար են լինում սովորաբար վեճերն ու կռիվները, եթե ոչ փողի: Փողն է, որ զուր պարապեցնում է դատարանները, հայրերին գրգռում որդիների դեմ, բաժակներում թույն է խառնում, սուրը պատյանից հանել տալիս: Այո՛, դա է, որ մեր արյունով է շաղախվում, դրա համար մարդ ու կին ամբողջ գիշեր կռվում են, դրա համար է, որ թագավորները երկար ու ձիգ դարերի ընթացքում մեծամեծ աշխատություններ կառուցված քաղաքները հիմնովին տապալում են, որպեսզի հետո դրանց մոխրի մեջ ոսկի ու արծաթ փնտրեն»:

## ԲԱՆ Գ

«Այս աշխարհի հարուստներին պատվիրիր, որ չհպարտանան և չապավինեն սնուտի հարստությանը, այլ՝ Աստծուն, որ մեզ առատապես ամեն ինչ տալիս է վայելելու համար»:

(Ա ՏԻՄ. Զ:17)

Ի՞նչ են կուռքերը, եթե ոչ ոսկուց ու արծաթից կանգնեցված պատկերներ, և նրանց պաշտոն մատուցելն ի՞նչ է, եթե ոչ սիրել և երկրպագել նրանց իբրև աստծո: Արդ, չէ՞ որ այն նկարները, որոնց կռապաշտները երկրպագում էին, ոսկի էին: Ոսկին նույն բանը չէ՞ նաև այժմ, որին մենք ծառայում ենք և որին մենք զոհում ենք ոչ թե մեր ուստրերին ու դուստրերին, այլ մեր հոգին ու մարմինը. հոգին հոգսերի ու նեղությունների մեջ մաշելով և մարմինը շարաշար ծառայությունների մեջ սպանելով: Հոգով, մարմնով կորած ենք հոգսերի մեջ, գիշեր-ցերեկ անհանգիստ, ամենքին ատելի ու թշնամի դարձած: Վերցրո՛ւ մեջտեղից արծաթասիրությունը, և ամեն տեղ խաղաղություն կտիրի: Հենց որ դադարի հարստության տենչը, նրա հետ կդադարեն նաև հպարտությունն ու նախանձը: Երանելի Օգոստինոսն ասում է. «Ոսկին է, որին ազահությունը ցանկանում է, տառապանքը՝ փնտրում, և բազմահոգությունը՝ պահպանում: Ոսկին ունեցողի համար վտանգավոր է և առաքինությունը թուլացնող, շարտեր է և մատնիչ ծառա»: Ոսկով, հարստությամբ մարդ գրացիների նախանձն է գրգռում, ավազակներին արթնացնում, կյանքը վտանգում, զավակների մեջ ժառանգության համար ատելություն սերմանում և հիշատակն անիծելու պատճառ դառնում: Հարստությունը երկիրը լցնում է կեղեքիչներով, ծովը՝ ավազակներով, քաղաքները՝ ապստամբներով, տները՝ երկպառակություններով, դատարանները՝ անարդարություններով, երկիրը՝ մեղավորներով: Ուրիշ ի՞նչ վկայություն, ի՞նչ ապացույց ես ուզում այն բանի մասին, որ ազահու-

թյունը ծածուկ կռապաշտություն է: Ճշմարիտ է, դու կուռք չես պատրաստում, մեռելի պատկեր չես քանդակում, բայց այն ոսկին, որ դու խնամքով պահում, պատվում ես, թագավորական պատկեր չի՞ կրում. չէ՞ որ այդպիսով դու, Աստծո պատկերի պատիվը թողած, թագավորի պատկերն ես պատվում, սիրում:

Ասա տեսնեմ՝ ինչի՞ համար ես վաստակում, քրտնում, որ հարստություն ձեռք բերես ու գետնի տակ թաղե՞ս: Եթե մարմնավոր վայելքների ու հանգստության կամ ծերության հիվանդության պետքերի համար ես անում, լավ չես մտածում, որովհետև այդպիսով հույսդ կտրում ես Հիսուսից՝ կարծելով, թե նա չի նախախնամում ու չի հոգում մեր մասին, կամ մեր պետքերը հայտնի չեն նրան և կամ շունի այնքան զորավոր ձեռք, որ կարողանա լցնել մեր պետքերը: Բայց չե՞ս սխալվում: Նա, որ մեծը տվեց, փոքրն անտե՞ս կանի, հոգին տվեց ու մարմինը ստեղծեց, երևելի արարածներ պարզ և եզ մեզ և արքայություն խոստացավ, մի՞թե ուրիշ կարևոր պետքերից կզրկի քեզ: Կարելի է ասես. «Ձավակներին համար եմ աշխատում, նրանց ապագան ապահովում»: Թող այդպես լինի, բայց ես քեզ կասեմ, եթե զավակներդ աշխատասեր են, բարեբարո և արժանի, որ նրանց համար գանձես, նրանք կարող են քո թողած սակավ ժառանգությունը էլ ապրել, մանավանդ թե աճեցնել: Իսկ եթե զեխ են ու շռայլ, և քիչը բավական չէ նրանց, ապա արժանի էլ չեն ոչ մի ժառանգության, ուստի ինչքան ավելի թողնես, այնքան ավելի շատացրած կլինես նրանց անկարգ կենցաղավարության նյութը: Այդպես մտածողներին Հիսուս ասում է. «Ինչո՞ւ եք հոգում ապագայի մասին»: Հիրավի, եթե մեկը վառի լամպարի պատրույզը՝ կամենալով, որ նա վառ մնա մինչև այս կամ այն ժամը, իհարկե, ժամանակի տևողության համեմատ էլ կհոգա յուրի մասին, թե որքան կհարկավորվի վառած լամպարին անունդ տալու համար, ապա թե ոչ, հակառակը կպատահի. լամպարը կհանգչի: Այդպես էլ Աստված, որովհետև մի անգամ վառել է մեր կյանքի ճրագը՝ սահմանելով մեզ ապրել մի որոշ ժամանակ, ուստիև նրա համեմատ էլ կերակուր և հան-

դերձ է պատրաստել, հետևապես մեր հոգացողությունն ավելորդ է: Ձէ՞ որ ով վառել է ճրագը, նրա գործն է նաև յուզ պատրաստելը:

Եթե ուղիղն ուզում ես, երանելին ոչ թե նա է, ով հարուստ է, այլ նա է, ով հարստության կարիք չունի, որովհետև այն բոլոր բարիքները, ինչպիսիք են կայքը, մեծությունը, իշխանությունը և այլն, որոնք ուրախացնում են մեզ իրենց գրավիչ տեսքով, որոնց վրա մարդիկ աչք են տնկում, անստույգ են և կորստական, անկարելի է դրանք հաստատուն ունենալ, և դրանց պահպանությունն իսկ մեծամեծ հոգսերի կարոտ է: Ուստի առաքյալն աշխարհիս մեծատուններին պատվիրում է, որ չհպարտանան իրենց հարստությամբ և հույս չդնեն դրա վրա: «Եթե անարգի միջից դուրս հանես պատվականը, կլինես ինչպես իմ բերանը»: «Եթե,— ասում է,— Աստված Երեմիա մարգարեի բերանով, կարողանաս ցույց տալ մոլորվածներին, թե որն է պատվականը, որն է իսկական բարիքը և որը կարծեցյալը, դրանով իմ բերանը եղած կլինես, այսինքն՝ ինձ մեծ ծառայություն արած կլինես»: Մրն է ուրեմն, պատվականը, և ո՞րը՝ անարգը: Անարգ են ժամանակավոր իրերն ու վայելքները, որոնք մեր աչքին պատվական են երևում, որովհետև ի՞նչ են ոսկին ու արծաթը, եթե ոչ հողից ստացված հող, որոնց պատվական է երևացնում միայն մարդու սխալմունքը: Նույն մտքով Հիսուս ասում է. «Եվ եթե օտարինը եղող բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերը ո՞վ կտայ ձեզ»: «Եթե, ասում է, ձեր չեղած բաները չեք կարողանում պահել, ձեր եղած բաները ո՞վ կտա ձեզ»: Բոլոր մարմնավոր բարիքները մեզ օտար են և անցավոր, իսկ մերն այն է, որ մնալու է մեզ հավիտենապես: Աղաղակում են մերկերը. «Ձեր պահարանների ձողերից կախած այնքան հանդերձներն ի՞նչ օգուտ ձեզ. մերն է այն, ինչը որ ձեզ ավելորդ է: Ինքներդ անգթաբար հավիշտակում եք մեզանից, իսկ հետո ցեցի կերակուր դարձնում»:

Մարդս ստեղծված էր մերկ և չէր ամաչում, որովհետև չիմացված մերկությունը չէր կարող ամոթ պատճառել: Իսկ հետո, երբ մեղանչեց՝ դեն ձգելով անմեղություն ծածկույթը, որ բավական ծած-

կում էր նրան, այդ ժամանակ ամոթը ծածկելու համար հարկավոր եղավ արտաքին հանդերձ: Բայց հանդերձը, որ առաջ տրված էր իբրև պատիժ, այժմ գործածվում է իբրև գերազանց արժանավորում: Մարդիկ, մանավանդ կանայք, աշխատում են ունենալ ոչ թե այնպիսի հանդերձ, որ մերկուծյունը ծածկի, այլ այնպիսին, որ տեսնողի աչքը հրապուրի և միտքը պղտորի: Հագնում են մետաքսյա հանդերձներ, եթե դրանք կարելի է միայն հանդերձ անվանել, որ ո՛չ մարմնի, ո՛չ էլ ամոթի պատասպարան են, և մի կին, որ հագնում է այդպիսի թափանցիկ հանդերձ, չի կարող երդվել ճշմարտությանը, թե մերկ չի: Ավելորդ զարդերը, միշտ հայելուն նայելը և արդուզարդի սեղանից շհեռանալը թույլ խելքի նշան է: Դու պետք է ամաչես արտաքին զարդերիցդ, երբ մտածես, որ դրանցով ծածկվում ես: Մարդկանց մեծ սխալն այն է, որ ուզում են հագուստով փայլել, իսկ հոգիներն ապականված թողնել, խիղճները՝ մեռած: Բայց եթե Հիսուսի զարդերից զուրկ ես, ոսկով ու մարգարտով էլ որ զարդարվես, միշտ տգեղ կլինես:

– Վայ՛ ձեզ, վայ՛ ձեզ, հարուստներ,— ասում էր Դիոգինեսը պղտորված հոգով: Նայում եմ ես ձեր պալատների, այգիների, պատկերների, արձանների, ոսկու, արծաթի ու փղոսկրի վրա, ձեր խաղերի ու թատրոնների վրա և դրանց հետևում տեսնում եմ հագար ու բյուր քաղցած, սառած մարդիկ, որոնք մի անկյուն չունեն անձրևի դեմ պաշտպանվելու համար, որովհետև դուք բնակվում եք մարմարիոնի պալատներում: Նրանք ոչինչ չունեն իրենց մերկուծյունը ծածկելու համար, որովհետև դուք փայլում եք շքեղ հագուստների մեջ, ոչինչ չունեն ուտելու համար, որովհետև դուք մի խնջույքում լափում եք հազարավոր մարդկանց շաբաթական ուտելիքը. ինչ ասես, որ չէի տա, եթե կարողանայի շարժել ձեզանից մեկի գուլթը:

– Բայց մեկ մտածի՛ր, թե որքան մարդ է կերակրվում մեր գործարաններում, որքան գործ ենք տալիս խեղճերին,— պատասխանեց մի հարուստ երիտասարդ:

– Մի՛ ասա ինձ այդ,– շարունակեց փրիստոփան,– հրկիզված տեղում էլ կարելի է կրակ ճարել՝ լամպարը վառելու համար, բայց ոչ ոք հրդեհը բարեգործություն չի համարի: Հապա դուք չպե՞տք է գործ դնեք ձեր հարստությունը՝ կերակրելու համար այն մարդկանց, որոնք տանջվում են ձեր ծուլության, սնափառության և շռայլության համար: Մտածի՛ր, թե ինչքան թշվառներ բոլորովին չեն կարողանում բավականություն տալ քո ցանկություններին, ինչքան հիվանդներ են մեռնում աղքատության և զրկանքների մեջ, ինչքան որբեր են մնում հոգատարության կարոտ: Մեկ մտածի՛ր, թե քանի հազար մարդ պետք է ամեն բանի կարոտ ապրի միայն այն պատճառով, որ քեզ պես մեկը կարողանա ապրել՝ ամեն տարի հարյուր հազարներ ծախսելով: Հարյուրավոր մարդիկ չեն կարողանում իրենց սովալլուկ զավակների համար այնքան հաց ճարել, որքան դուք ամեն օր հրամայում եք գցել ձեր շների առաջ: Մտածի՛ր և խելքի՛ արի:

Սակայն մինչդեռ չբավորները նախանձում են ու երանի տալիս մեծատուններին, Սուրբ Գիրքը ձայն է տալիս. «Մեծամեծներն աղքատացան ու սովի մատնվեցին, բայց ովքեր Տիրոջն են փնտրում, նրանցից ոչ մի բարիք չի պակասելու»: Եթե այս խոսքերը հենց այսպես ընդունենք, շատ սխալ դուրս կգա: Շատ կան անիրավ հարուստներ, որոնք հենց այդպես հարուստ էլ մեռնում են՝ աղքատության մասին հասկացողություն իսկ չունենալով: Սրանից է, որ տեսնելով, թե այսինչ հարուստն ինչպես է հարստության մեջ ծերանում և մինչև կյանքի վերջին րոպեն ապրում լիության և առատության մեջ և հոգին ավանդում է աղվամազե և մետաքսե անկողնում՝ շրջապատված մեծ ընտանիքով, և գերեզման է իջնում մեծ փառքով ու շքով: Մեկ ուրիշը, որ գիտե, թե ինչ ծանր մեղքերի տեր է նա, տեսնելով այս բոլորը, մտածում է. «Ինձ լավ հայտնի է, թե այս մարդն ինչ շարիքներ է հասցրել, սակայն ծերացավ փարթամության մեջ մեռավ սիրելիներով շրջապատված, հուղարկավորվում է ահագին բազմությունամբ և թաղվում այսպիսի շքեղ հանդեսով: Այո՛, ինձ լավ հայտնի են սրա արածները, բայց և այնպես ահա վերջն ինչ



փառավոր է. ուրեմն խաբե՞լ է ինձ Սուրբ Գիրքը՝ ասելով. «Մեծամեծներն աղքատացան ու սովի մատնվեցին»։ Ե՛րբ աղքատացավ սա, ե՛րբ քաղցեց: Լսում եմ նաև մյուս խոսքը, թե. «Բայց ովքեր Տիրոջն են փնտրում, նրանցից ոչ մի բարիք չի պակասելու»: Սակայն ահա ես ամեն օր եկեղեցի եմ գնում, ամեն օր ծունր դնում, ամեն օր փնտրում եմ Տիրոջը, այսուամենայնիվ ոչինչ չունեմ: Իսկ սա չէր փնտրում Աստծուն, սակայն այսպես երջանիկ մեռավ»:

Բայց մի՞ գայթակղվիր, մի՞ դատիր այդպես, Սուրբ Գրքի խոսքերի ոգին պետք է հասկանալ, ոչ թե բռները: Դու նրա աղքատանալն ու քաղցելը ոչ թե երկրավոր, այլ երկնավոր մտքով պետք է հասկանաս: «Այդ ի՞նչ բարիքներ են, որ պետք է ստանամ ես», – հարցնում ես դու: Դրանք, սիրելի՛ս, չեն տեսնվում մարմնավոր աչքով, այլ տեսանելի են սրտին: Ահա պարզեմ քեզ: Ասենք, թե դու ունես երկու ծառա. մեկը՝ վայելչակազմ, գեղեցիկ, բայց խաբեբա ու գող, մյուսը՝ անհեթեթ, տգեղ, բայց հավատարիմ ու ազնիվ: Ասա տեսնեմ՝ դու նրանցից որի՞ն կսիրես: Եթե հարցնես մարմնավոր աչքիդ, ապա գեղեցիկ խաբեբան սիրելի կլինի, իսկ եթե սրտիդ աչքին հարցնես, այն ժամանակ տգեղ հավատարիմը կգերադասի: Ահա այն բարիքը, որ աչքին անտեսանելի է, իսկ սրտին՝ տեսանելի, և որն ինքդ էլ բարձր ես դասում տեսանելի բարիքից: Իսկ եթե մեկը հարուստ լինի այդպիսի հոգևոր բարիքներով, նա խե՞ղճ կլինի: Իհարկե ոչ, որովհետև դու նրան ինչպե՞ս խեղճ կանվանես, երբ նրա սիրտն ամեն տեսակ առաքինությունների մի գանձարան է: Այժմ դրա հետ համեմատիր նրան, որ հարուստ է, բայց որի սիրտը լի է ամենայն չարությունք, և ասա. «Նրանցից ո՞րն է աղքատն ու քաղցածը, ո՞րն է լիացածն ամենայն բարությունք»: Այսպես ուրեմն, հարուստներն աղքատ են ու քաղցած, որովհետև զուրկ են հոգևոր բարիքներից: Իսկ ես դեռ ավելին կասեմ, նրանք աղքատ են նաև երկրավոր բարիքների կողմից, որովհետև երբեք ոչնչով չեն կշտանում, ինչքան էլ ունենան, միշտ քիչ է նրանց համար: Ահա այն հարուստն

էլ, որի մասին խոսում էիր, աղքատ էր, եթե իր ողջ կյանքում ունեցածից միշտ ավելին էր ուզում ունենալ:

Դու տրտնջում ես՝ ասելով. «Այսինչ հարուստը նեղում, կեղեքում է ամենքին, իսկ մյուսն ապրում է չափավոր ու արդարությամբ, սակայն չարքաշ կյանք է վարում»: Այդ է գայթակղեցնում քեզ, բայց հենց դրա մեջ է Աստծո մարդասիրությունը: Եթե նա այստեղ բոլոր շարերին պատժեր և բոլոր բարիներին վարձատրեր, ապա վերջին դատաստանը մեզ հարկավոր չէր լինի: Եթե այստեղ ամենքն ստանալին այն, ինչին որ արժանի են, ապա ինչպե՞ս կհավատալին հարությանը: Այս պատճառով Աստված ոմանց պատժում է, ոմանց չի պատժում, ոմանց վարձատրում է, ոմանց չի վարձատրում: Եվ այդ անում է թե՛ մեկի, թե՛ մյուսի բարյաց համար: Ոմանց պատժելով ջնջում է նրանց մեջ հանցանքը, իսկ նրանց պատժելով մյուսներին ավելի խոհեմ է դարձնում: Եթե մեղանչելուց հետո Աստված իսկույն ամենքին պատժելու լիներ, այն ժամանակ մարդկային ազգը վաղուց բնաջինջ եղած կլիներ: Ուստի երբ տեսնես, որ մեկը կողոպտում է, անիրավությամբ հարստանում և դրա համար չի պատժվում, ինքդ էլ բա՛ց արա քո խիղճը, քննի՛ր քո կյանքը, հետազոտի՛ր մեղքերդ և լավ կհասկանաս, որ առաջինը հենց քեզ ձեռնտու չէ պատժվել յուրաքանչյուր մեղքի համար: Շատերը հենց այն պատճառով են ամբողջ ուժով աղաղակում ուրիշների դեմ, որ նրանց մեղքերը քննելուց առաջ չեն քննում իրենց մեղքերը, այլ իրենցը թողնելով զբաղվում են այլոց մեղքերով: Եվ երբ տեսնես, որ արդարը պատիժներ է կրում, մինչ մեղավորը մնում է անպատիժ, հիշի՛ր արդար Հոբին, որից արդար և որի նման արդար դեռ մեկը չի եղել: Հիշի՛ր՝ ինչքան զրկանքներ կրեց նա, ինչքան և ինչպիսի ցավերի ձեռքից տանջվեց և մտածի՛ր, որ Աստված, երբ մարդուս թույլ է տալիս շարչարվել, նրան չի թողնում, այլ կամենում է պսակել ու փառավորել:

Մարդկանց վիճակի անհավասարությունը երկրավոր կյանքի բաժինն է: Աստծո խորհուրդներն անհասկանալի են մեզ. «Ինչքան,– ասում է Աստված,– արևելքը հեռու է արևմուտքից, այնքան իմ խոր-

հուրդները հեռու են ձեր խորհուրդներից»։ Շատ անգամ Աստված հաջողություն է տալիս շարերին, մինչդեռ բարեպաշտ ու ազնիվ մարդիկ տառապում են ու տանջվում։ Բայց մարդս Աստծո կառավարման եղանակները շատ է շփոթում միմյանց հետ։ Աստծո՝ մեզ անհասկանալի կառավարումը ցույց է տալիս, որ այս աշխարհը փորձի վիճակ է, ոչ թե վարձի, և որ բոլոր անհավասարություններն ու կարծեցյալ կատարելությունները մյուս աշխարհում ուղղվելու են։ Աստված ուզում է, որ ցորենն ու որոմը միասին աճեն։ Աստված շարերին ու բարիներին զատ-զատ երկրներ չտվեց, այլ միասին, խառը բնակեցրեց, որ բարիներն ավելի ընտիր երևան շարերի մեջ, և շարերն առաքինության ձգտեն։ Ուստի և Նոյի վրա զարմանում ենք ոչ թե նրա համար, որ արդար էր, այլ որ իր ամբողջ շար ազգի մեջ պահպանեց իր արդարությունը, երբ արդար լինելու ոչ մի օրինակ չուներ իր առաջ։ Եթե շարերն ու մեղավորները ջնջվեն աշխարհից, այդ ժամանակ արդարների ու սրբոց առաքինության, մանավանդ համբերության և միշտ առ Աստված դիմելու և Նրանից օգնություն խնդրելու նյութը կվերջանա։ Երբ արդարները ոչ ոքից ոչ մի նեղություն չեն կրում, հանդարտության մեջ մնալով՝ նեխվում են, ինչպես կնեխվեր ծովը, եթե շարունակ չալեկոծվեր։

\*\*\*

Եվ որ լավ քննենք, ավելորդ հարստությունն այնքան էլ փափագելի բան չէ, և աղքատը հարուստին ոչ մի բանում նախանձելիք չունի։ Ահա մի թեթև համեմատություն։ Հարուստն ունի ընտիր գինի և արհեստական կերպով ու մեծ ճաշակով պատրաստված ըմպելիքներ, իսկ աղքատի համար բաց են բնական ջրերի բոլոր աղբյուրները։ Հարուստներից շատերը շոայլ կյանքի պատճառով առողջության խանգարվելուց մեծ մասամբ չեն կարողանում ջուր խմել, իսկ աղքատն իր ողջ կյանքում ազատ վայելում է այդ հեղուկը՝ բերանը ջրերի աղբյուրներին դնելով ինչպես մեղրի ծորակներին և ստանալով իսկական ու մաքուր բավականություն։ Իսկ օդն ու արևի ճառագ

գայթերը հարուստների հետ հավասարապես վայելում են նաև աղքատները, մանավանդ ոչ աղքատները՝ ավելի շուտ վայելելով օդի թարմությունը, նրա հասարակ մասն են թողնում հարուստներին: Քունը, որ բոլոր բավականություններից ավելի ախորժելի ու անհրաժեշտ է և բոլոր կերակուրներից ավելի օգտակար, աղքատն ավելի լավ է վայելում, քան հարուստը: Հարուստի քունը դժվարին է ու կարճատև, իսկ աղքատինը՝ թեթև ու խորը: Ամեն տեսակ հիվանդությունները սովորաբար տանջում են հարուստներին, որոնք ճոխ են ապրում, և որոնց վրայից զանազան անուշահոտություններ են բուրում, և ոչ թե աղքատներին, որոնք աշխատում են, գործում են և իրենց պարենը ձեռք բերում ամենօրյա վաստակով: Այդ պատճառով հարուստները թշվառ են նույնիսկ մուրացկաններից: Հաճախ կակուղ անկողնում պառկած, ծառաներով ու աղախիններով շրջապատված հարուստը, լսելով, թե աղքատն ինչպես է ձայն տալիս փողոցում ու հաց խնդրում, սկսում է լալ, հոգոց հանել և ավելի շատ ցանկանում է նրա պես աղքատ լինել և առողջ, քան թե հարուստ ու հիվանդ: Եթե աղքատը հայր չդառնա, մեծ ցավ չէ նրա համար, իսկ հարուստը, ինչքան բազմապատկում է կարողությունը, այնքան ավելի է վշտանում անորդիությունը և որովհետև ժառանգ չունի, ուստի ոչ մի բանից բավականություն չի ստանում, կյանքից ոչ մի համ չի առնում: Եթե աղքատն անորդի էլ մեռնի, նրա ժառանգությունը, իր շնչինությունը վեճեր չհարուցելով, անցնում է իր ազգականներին, իսկ հարուստի ժառանգությունը, իր վրա հրապուրելով ամենքի աչքը, հաճախ անցնում է իր թշնամյաց ձեռքը: Բավականությունն ու անգործությունը, բարի անունն ու առողջությունը, հոգու գործությունն ու քիչ հակամիտությունը դեպի մեղքն ավելի աղքատների մեջ կգտնես, քան թե հարուստների:

Աղքատը ո՛չ գողերից երկյուղ ունի, ո՛չ ավագակներից կասկած, ո՛չ դաշտաբույսերի մասին է հոգում, ո՛չ լեռների արոտի, ո՛չ հովիվների նենգությունից է վախենում, ո՛չ գազանների հափշտակությունից, ո՛չ բռնավորների բռնությունից է սարսում, ո՛չ իշխան-

ների հարկից, ո՛չ նախանձոտներն են նրան նախանձում, ո՛չ զրպարտողները զրպարտում, ո՛չ իշխանների ահն է զարհուրեցնում նրան, ո՛չ տերերի սաստը: Աղքատը ո՛չ շինությունների պետք ունի, ո՛չ սնդուկների ու փականքների, ո՛չ տրտմություն կա աղքատի հիվանդության ժամանակ և ո՛չ աղմուկ նրա մահվան ժամանակ:

\*\*\*

Սակայն հարստությունը մարդուս տրված է ոչ թե երկրի մեջ թաղելու, այլ ուրիշներին բարերարելու համար: Բայց երբ մարդ իր հարստությունը գործ է դնում ո՛չ ուրիշների, ո՛չ իսկ իր պետքերը լցնելու համար և ավելի սիրում է ապրել կարոտություն մեջ, քան թե դադարեցնել իր գանձերի աճը և կամ մի բան պակասեցնել դրանցից, այդ ժամանակ նա ազահ է և իր արածը՝ ազահություն: Երանելի Օգոստինոսն ասում է. «Փողի ազահությունն ազահի կոկորդը չի փակում, այլ լայնացնում է»: Եվ Սուրբ Գիրքը, թե. «Ազահները նման են ծակ անոթի, որ լցվում», այլև ներկա գիտնականներից մեկը, թե. «Ոսկին այնքան հոգիներ է սպանել, որքան երկաթը մարմիններ չի սպանել»: Իսկ առաքյալն ազահությունը համարում է «Ամենայն չարեաց արմատ» և «կռապաշտություն»: Ազահը հանգիստ չունի և ինչից որ ավելի է զարհուրում, այն է մուրացկանությունից, հենց դա է հարձակվում նրա վրա. ցերեկը հոգսերով է մաշվում և գիշերն ահաբեկ լինում: Աստծուց չի վախենում, մարդկանցից չի ամաշում, չի խնայում հորը և չի ճանաչում մորը, նեղում է այրուն, կողոպտում է որբերին և պատրաստ է ամեն շարիք գործելու: Սրբերից մեկն ասում է. «Ուրիշ մոլություններ ծերանում են ծերի հետ, միայն ազահությունն է, որ մանկանում է նրա հետ»: Ազահությունը կռապաշտություն է, որովհետև ինչ որ մարդս պետք է տա Ստեղծողին, այն է՝ հավատ, հույս և սեր, ազահն այն տալիս է փողին՝ ավելի հավատալով իր հարստությանը, քան Աստծուն՝ իր հույսը դնելով հարստության վրա, որ մի կերպ հույսն Աստծուց կտրել է նշանակում, և ծառայելով հարստությանը, որ Աստծուն ուրանալ է նշանա-

կում: Արիստոտելն ասում էր. «Աղքատը շատ բանի է կարոտ, իսկ ազահը՝ ամեն բանի», ուստի Օգոստինոսն ավելացնում է. «Մարդ իր թշնամուն ազահությունից ավելի մեծ չարիք չի կարող ցանկանալ»: Եսայի մարգարեն աղաղակում է. «Վա՛յ նրանց, որոնք տանը տուն են կցում և ազարակին ազարակ միացնում, որպեսզի ընկերոջն արտաքսեն. բայց մի՞թե երկրի վրա մենակ դուք եք ապրելու»: «Վա՛յ նրանց,- ասում է,- որոնք ունեցած հարստությամբ երբեք չեն բավականանում, այլ միշտ ավելի են ուզում ձեռք բերել. տունը տան վրա, տեղը տեղի վրա են ավելացնում, կարծես աշխարհումս մենակ պետք է բնակվեն»: Այդպիսիք մահու չափ են մեղանշում, որովհետև ունեցածները չկորցնելու համար իրենց Աստվածն են կորցնում, ինչպես շատ քրիստոնյաներ հալածանքների ժամանակ հավատներն ուրացան՝ հարստությունները չկորցնելու համար, «որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից»,– ասում է առաքյալը: Ազահները ծանր մեղանշում են Աստծո դեմ, որովհետև աշխարհիս բաները վեր են դասում Աստծուց, մեղանշում են ուրիշների դեմ, որովհետև մի քիչ փողի համար ոտքի տակ են տալիս արդարությունն ու եղբայրասիրությունը, և իրենց դեմ, որովհետև անցավոր հարստության համար իրենց գրկում են հավիտենական կյանքից՝ հոգիները մատնելով սատանային: Ազահների դեմ ինքը՝ Հիսուս է ձայն բարձրացնում. «Տեսեք, որ զգուշ լինեք ամեն տեսակ ազահությունից, որովհետև մարդու կեանքը իր կուտակած հարստության մեջ չէ», այսինքն՝ մարդուս թե՛ ժամանակավոր, թե՛ հավիտենական կյանքը նրա հարստությունից չէ կախված: Եվ մի՞թե խենթ չեն նրանք, ովքեր, այդպես մոտ ապրելով իրենց գանձի հետ, հեռու են մնում իրենց Աստծուց: Կա մարդ, որ փառք ու պատվի խենթ է, կա, որ հեշտովյունների խենթ է, կա էլ, որ երկրի դիրտն<sup>1</sup> է սիրում: Եվ սրանք համարձակվում են խենթ համարել սրբերին, որոնք արհամարհեցին աշխարհիս բարիքները, որպեսզի հավիտյանս փրկված լինեն: Այդ-

---

<sup>1</sup> Փխբ. հասարակության տակալք:

պիսիքն չեն մտածում, որ, ընդհակառակը, Աստված իրենց իմաստութունն է խենթութուն համարում. «Որովհետև այս աշխարհի իմաստութունը՝ հիմարութուն է Աստուծու առաջ»: Դիմոկրիտոս փիլիսոփան մշտածիծաղ մի մարդ էր, բայց այդ սովորութունը նրա մեջ մի բնական հատկութուն չէր, այլ առաջ էր եկել նրանից, որ խորն էր քննել մարդկային տկարութունը, որ ծաղրի արժանի բազմազան խորհուրդներ է ծնում մեզանում:

Ազահի հոգին փողի մեջ է. Աստուծուն թողած՝ փողն է պաշտում: Նա ոչ միայն գուր, այլև ստությամբ է հիշում Աստծո անունը և սուտ երգվում, նա կիրակին սրբությամբ չի անցկացնում, եկեղեցի չի գնում, պատարագ չի տեսնում, որովհետև ուշքն ու միտքը փող դիզելու մեջ է: Ծնողներին թողնում է ամեն բանի կարոտ, նրանց հիվանդացած ժամանակ բժիշկ ու դեղ չի բերում, որ փողը ձեռքից չգնա: Մի քիչ փողի, մի քիչ հողի համար ուրիշի և իր մահվան պատճառն է դառնում. քանի՜-քանիսի՛ն ստիպում է իրենց պարկեշտութունը ծախել, ինչքան սուտ վկայութուններ է տալիս փողի համար, ինչպես է աչք տնկում ուրիշի ունեցածի վրա և այլն և այլն: Եվ որովհետև այս բոլորը դեմ են Աստծո տասը պատվիրաններին, ուրեմն ազահն ինքը դեմ է գնում Աստծուն: Թագավորներն անգամ չեն կշտանում երկրիս բարիքներով: «Ինչ որ աչքս ուզեց, ինձ չգրկեցի դրանից»,– ասում է Սողոմոն իմաստունը: Այսինքն՝ ինչ վայելչություն որ կարող է լինել աշխարհումս, բոլորն էլ վայելեցի. իմ ունեցած հարստությունս ոչ ոք չի ունեցել, բայց այս բոլորը տեսած ու վայելած լինելուց հետո էլ ոչ միայն երջանիկ չեմ, այլև ինքս ինձնից ձանձրացած՝ փորձով համոզվել եմ, որ «Ունայնություն ունայնությանց, ամեն ինչ ունայն է», աշխարհիս բոլոր հարստութունները, պատիվներն ու վայելքները դատարկ բաներ են եղել, սուտ են և հիմարութուն: Ուստի սրբերից մեկն ասում է. «Եթե երիտասարդները հետ կանգնեն անառակությունից, և ծերերը՝ ազահությունից, ողջ աշխարհը սուրբ կդառնա»: Վերջապես ազահության համար է ասում Հիսուս. «Վայ՛ ձեզ, մեծատուներիդ», «դժուարությամբ մեծա-

տունը կմտնի երկնքի արքայություն»։ Ճշմարիտ հարուստը նա է, ով հրաժարվում է իր վրա իշխելուց և իրեն ճանաչում է միայն իբրև Աստծո՝ իրեն տրված հարստության մատակարարը. այդպիսի հարուստներին ահա սուրբ հայրերն անվանում են քսակ հոգևոր։

Հիրավի, ինչպիսի բարբարոսական անզգամություն կլինեք, եթե մի հպատակ սուր հաներ իր տիրոջ դեմ, որն այդ սուրն ահա նոր է կապել նրա մեջքին, սակայն մարդկային ազգը հաճախ այս բարբարոսությունը գործ է դնում իր Աստծո դեմ։ Մենք շատ անգամ կամենում ենք Աստծուն վշտացնել այն հարստությամբ, որ նա տվել է մեզ՝ իրեն ճանաչելու և սիրելու համար։ Ոչ մի բարիք չպետք է սիրենք, այլ միայն այն, որը հասցնում է մեզ երկնավոր նպատակների։ Եթե աղքատությունը մեզ տանում է առ Աստված, ապա այն մեզ համար ավելին արժե, քան աշխարհիս բոլոր գանձերը։ Եթե հարստությունը մեզ հեռացնում է Աստծուց, պետք է խորշենք նրանից, ինչպես անիրավությունից։ Եթե անարգանքներն ու ձախորդություններն ավելի օգտակար են մեր փրկության համար, օրհնվի՛ դրանց գալուստը։ Եվ եթե պատիվներն ու փափկությունները մեզ մոռացնել են տալիս հավիտենական երանությունը, թող չզան մեզ վրա հավիտյան։ Երանելի Ամբոսիոսն ասում է. «Աստված ավելի հեշտ ներում է մի հեթանոսի, որը միայն իր կուռքն է պաշտում, քան թե մի քրիստոնյայի, որն իր Աստծո հետ ուրիշ բաներ էլ է պաշտում»։ Աստված նույն միտքը Եղիա մարգարեի բերանով այսպես է հայտնում մեզ. «Մինչև ե՞րբ պիտի կաղաք երկու ոտքով։ Եթե Տերը Աստված է, գնացե՛ք նրա ետևից, և եթե Բահաղն է, նրա՛ ետևից գնացեք»։ Այսինքն՝ ի՞նչ օգուտ ձեր կաղիկաղ ման գալուց. ես ձեզ կարոտ չեմ, ուրեմն որոշեցե՛ք ինչ որ ուզում եք՝ կա՛մ Ինձ Աստված ճանաչել ու միայն Ինձ պաշտել, կա՛մ եթե ուզում եք Ինձ հետ մեկ ուրիշին էլ Աստված ճանաչել, Ինձ թողե՛ք, նրա՛ն պաշտեք։



## ԲԱՆ Ե

Քանզի ողորմածությունը բարձրագույն պարծենուն է դատաստանի դիմաց:

(Հակ. Բ:13)

*Մի հարուստ, ըստ երևույթին, արդար երիտասարդ, որ իր ասելով սրբությունք էր կատարում Աստծո բոլոր պատվիրանները, ավելի կատարյալ լինելու համար հարցրեց Հիսուսին, թե Աստծո արքայություն մտնելու համար ուրիշ ի՞նչ է հարկավոր: «Վաճառիր քո ունեցվածքը և տո՛ւր աղքատներին»,– պատասխանեց աղքատացյալ Հիսուս՝ ցույց տալու համար, որ աղքատությունը հիմն է ամենայն կատարելության: Բայց Հիսուսի ասած աղքատը լավ պետք է հասկանալ: Կա աղքատ, որ կամավոր աղքատ է, ոչ թե ստացվածքի աղքատ, ինչպես էին Աբրահամը, Հոբբը, Դավիթը և այլն: Կա միայն ստացվածքի աղքատ, սրանք սովորական աղքատներն են, որոնք ակամա են կրում աղքատությունը: Կա և այնպիսին, որ և՛ կամավոր աղքատ է, և՛ ստացվածքի աղքատ: Այդպես են այն մարդիկ, որոնք չեն կամենում իրենց ունեցածի տերը լինել և ոչինչ չեն պահում իրենց մարմնի պետքերը հոգալու համար, այլ իրենց հանձնում են Աստծո նախախնամությանը: Ահա այստեղ այդ վերջին տեսակի աղքատների մասին է խոսում Հիսուս: Նա չի ասում վաճառիր բոլոր ունեցածդ և տո՛ւր ազգականներիդ, որպեսզի նրանց սերը չկապի քեզ, այլ տո՛ւր աղքատներին, որոնցից փոխարենն սպասելիք չունես:*

*Եթե առաքյալի ասածի պես «Ամեն չարիքի մայրը արծաթասիրությունն է», ուրեմն աղքատությունն է մայր ամենայն բարյաց: Ինչպես որ հարստությունն ամեն անառակության հիմքն է, այդպես էլ աղքատությունը ողջախոհության ու խոնարհության հիմքն է: Ողորմությունը կամ, ավելի ընդարձակ խոսքով, բարերարությունը մարդուս հոգևոր կյանքի նշանն է, որովհետև ինչպես անդամների*

շարժումները շնչավոր կյանքի նշան են, այդպես էլ բարերարությունը հայտնի նշան է, որ մարդը հոգեպես կենդանի է: Սուրբ Գիրքն ասում է. «Ինչպես կանաչ տերևը ծառերի պայծառությունն է, այդպես էլ մարդու աղքատասիրությունը նրա բարերարությունն է, որ նրան իրավունք է տալիս կոչվելու մարդ կատարյալ»:

Ողորմությունը փրկում է մարդուն շատ վտանգներից: Ողորմությունը մարդուն մաքրում է ու սրբում. «Ողորմություն տվեք, և ահա ամեն ինչ ձեզ սուրբ կլինի»: Ողորմությունը զոհի պես մարդուս հաշտեցնում է Աստծո հետ, ինչպես առաքյալն է ասում. «Մի՛ մոռացեք բարեգործությունը և ձեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՛ պատարագներն են հաճելի Աստծուն»: Իսկ սբ. Ոսկեբերանը, թե, «Ողորմությունը փետրավոր և ոսկեթև է. աղքատներին բաժանվելիս՝ ոսկեղեն թևերով երկինք է սլանում»: Ողորմությունը, այսինքն՝ ողորմության նյութը, ցրվելով պահվում է, պահելով ցրվում է, ինչպես և ցորենը, որ պահելով փտում է, իսկ արտերում ցրվելով՝ պահվում է: Վերջապես ողորմությունը մարդուս ունեցածը շատացնում է: «Տվե՛ք և կտրվի ձեզ», «Երանելի է մանավանդ տալը՝ քան առնելը»:

Ինչ որ աղքատներին ենք անում, Քրիստոս այն համարում է իրեն արած այն պատճառով, որ ինքը՝ Քրիստոս, մեզ համար նվաստացավ ու աղքատացավ, հետևապես բոլոր նվաստներն ու աղքատները Քրիստոսի վիճակի պատկերն են, ուրեմն և մեզ Քրիստոս են ներկայացնում, իսկ մենք, որովհետև Քրիստոսի պատկերը պատվելով Քրիստոսին ենք պատվում, ուրեմն աղքատներին պատվելով ու բարերարելով՝ Քրիստոսին ենք պատվում ու բարերարում: Իսկ այն առաքինությունները, որոնցով աղքատը կարող է հասնել սրբության, սրանք են՝ աղքատը պետք է համբերությամբ տանի նվաստությունը և անարգանքը, քաղցն ու ծարավը, պետք է միշտ աշխատի և օրապահիկը հոգալու համար մուրա, կարոտության մեջ ապրի, տեսնի լիացածներին, իսկ օրական պարենի կարոտ մնա, սակայն ոչ միայն շտրտնջա, այլև երկրպագի Աստծո օրենքները:

Ֆրանսիայի Լյուդովիկոս Թագավորն ասում էր. «Աղքատները երկինքն ստանում և փառաց պսակը պատրաստում են իրենց համբերությամբ, իսկ հարուստները՝ աղքատներին որպես Քրիստոսի անդամների ողորմելով, սիրելով ու պատվելով»: Այդ Թագավորն աղքատներին ամեն օր սեղանակից էր անում իրեն և լվանում նրանց ոտքերը, իսկ ինքը նրանց կերակուրների մնացորդներով էր բավականանում: Մեր Աշոտ Գ Թագավորն էլ, որ իր ամբողջ գանձը կարոտյալներին ու աղքատներին բաժանեց, այն աստիճան բարեպաշտ ու ողորմած էր, որ առանց իր սեղանի շուրջը մի աղքատ կամ հաշմանդամ ունենալու չէր կարողանում հանգիստ ճաշել: Քաղաքի բոլոր կաղերին, կույրերին ու բորոտներին իր հետ սեղան էր նստեցնում և հոգում ամենքի պետքերը: Շատ քաղաքներում աղքատանոցներ շինեց, ուր շատ անգամ այցելում էր ու անձամբ ծառայում: Իր այս ողորմածության համար էլ ազգը նրան Ողորմած անունը տվեց: Այսպես էր անում և մեր սբ. հայրապետ Մեծն Ներսեսը, որի հայրապետանոցն աղքատների ու օտարների հյուրանոցն էր: Նա, թեպետ Հայաստանի բոլոր գավառներում աղքատանոցներ շինեց և դարմանում էր աղքատներին, բայց և այնպես իր կողքին ամեն օր բազմում սեղանակիցներ էին լինում՝ կաղեր, կույրեր ու կարոտյալներ: Ինքն էր իր ձեռքով լվանում, մաքրում ամենքին, օծում, պատվում էր յուրաքանչյուրին, կերակուր տալիս և ողջ ունեցածը նրանց վրա գործածում: Հոռմի Տիտոս կայսրն այնքան առատ էր բարերարում, որ նրա մոտից ոչ ոք դատարկ դուրս չէր գնում: Երբ մի անգամ դրա համար բարեկամները մեղադրեցին նրան, նա պատասխանեց. «Լավ չէ, որ ինքնակալի մոտից մարդ տրտում երեսով հեռանա», և եթե մի օր մեկին չէր բարերարում, այդ օրը կորած էր համարում և իրեն կայսր չէր համարում: Եվ երբ մի օր նրա մոտ մարդ չգնաց բան խնդրելու, ասաց. «Մի՞թե ամբողջ աշխարհը հարուստ է դարձել, որ ոչ ոք ինձանից բան չի խնդրում»: Արտաշես Թագավորի աջ ձեռքը երկար էր, որ ոմանք բնական պակասություն էին համարում, իսկ ինքն ասում էր. «Մեծ մարդկանց ձախ ձեռքը պետք է կարճ լինի՝

իբրև արդարութեան օրինակ, իսկ աչը՝ երկար՝ իբրև ողորմածութեան նշան»:

Սակայն, որպեսզի քո տված ողորմութիւնը, քո արած բարերարութիւնը պտուղներ տա, պետք է այսպէս վարվես.

1) Չպետք է քննես, թե այսինչ մուրացիկը ճշմարիտ աղքատ է, թե՞ սուտ, որովհետև թեպէտ մեկը, աղքատ ձևանալով, իրավունք չունի ողորմութիւն ստանալու, բայց դու չպետք է գրկես քեզ ողորմածութեան օգուտներից, երբ այդպիսի մեկին ողորմութիւն ես տալիս, ձեռքդ է սխալվում, ոչ թե սիրտդ: Քրիստոս քո սրտի մեջ լավ է տեսնում, ինչ որ տվիր նրան: Կարող է պատահել, որ դու մի օր փրկութեան հասնես տված ողորմութեանդ համար, իսկ նա վտանգվի՝ քեզանից անարժան կերպով ողորմութիւն ստանալու համար: Ուստի դու չգիտես և չպետք է քննես, տո՛ւր ամեն խնդրողի, ինչպէս պատվիրում է Հիսուս. «Տո՛ւր նրան ով քեզանից խնդրում է».

քննութիւնն ավելորդ է: Չլինի թե երբ ձեռքդ կարճացնես, ճշմարիտ մուրացիկներն էլ գրկվեն քո ողորմութիւնից:

2) Տված ողորմութիւնդ, արած բարերարութիւնդ պետք է լինի ի փառս Աստծո և ոչ թե ի փառս մարդկանց: Պետք է բարերարես ոչ թե մարդկանցից փառավորվելու համար, այլ որ պարտավոր ես բարերարել: Մարդուս իր կյանքը տրված է աչ ու ձախ բարերարելու համար: Գիշերային քնից հետո առավոտյան արշալույսը բացվում է միայն բարեգործութեամբ անցկացնելու համար, ինչպէս մեր սուրբ հայրապետներն են մեզ հասկացնում առավոտյան աղոթքների մեջ. «Որ ստեղծեցիր ցերեկը՝ բարեգործութիւն անելու համար և գիշերը՝ մեր տկարացյալ բնութեանը հանգիստ քուն մտնելու համար»: Բարերարելու սրբազան ու վսեմ պարտքը մեզ վրա դրված է նույնիսկ քրիստոնյա անունը կրելու օրից: Մկրտող քահանան նոր մկրտած մանկան ձեռքերը սուրբ մյուռոնով դրոշմելիս ի՞նչ է մաղթում. «Այս կնիքը Հիսուս Քրիստոսի անունով թող պատճառ լինի բարեգործութեան, ամեն տեսակի առաքինի գործերի և առաքինի կյանքի»:

3) Ողորմությունը չպետք է անպատճառ ծածուկ տալ՝ սխալ հասկացած լինելով Հիսուսի այն խոսքը, թե. «Թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը»: Ուրիշի ներկայութեամբ ողորմություն չտալը ո՛չ ծածուկ ողորմություն է ո՛չ էլ Հիսուսի պահանջած եղանակը: Կարելի է բազմության առաջ տալ, և դա դարձյալ ծածուկ տալ կհամարվի, դրան հակառակ՝ կարելի է և ամենքի աչքից ծածկված տալ, և դարձյալ հայտնի տված կհամարվի, որովհետև բանը ոչ թե տալու եղանակի մեջ է, այլ տալու դիտավորութեան մեջ: Հարյուրավոր աչքերի առաջ տալն էլ ծածուկ տված կհամարվի, եթե միայն տվողի նպատակը ոչ թե ուրիշներին ցույց տալն է, այլ կարոտյալին օգնելը, իր սուրբ պարտքը կատարելը: Կարելի է և այնպես տալ, որ միայն ստացողը տեսնի, սակայն եթե տվողի նպատակն այն է, որ աղքատից շնորհակալություն ստանա, այդպես տալը կլինի իսկապես հայտնի տալ: Ճշմարիտ ողորմությունը, ճշմարիտ բարերարությունն այն է միայն, որ լինում է ի փառս Աստծո, Աստծո անունը փառավորելու համար:

4) Պետք է զգուշանալ, որ ողորմությունը սխալ ճանապարհով չարվի: Երբ դու ողորմություն ես տալիս աղքատին, բայց մշակին զրկում ես իր վարձից, ճիշտ չես վճարում գնած ապրանքիդ արժեքը, լրիվ չես հատուցում պարտատիրոջդ պարտքը: Երբ դու, մեկին օգնելով, մյուսին վնասում ես, երբ մեկին տալիս ես, մյուսից խլում, մի ձեռքով կառուցածդ մյուսով քանդում ես: «Ձե՞ս իմանում,— ասում է երանելի Օգոստինոսը,— որ քո այդպիսի անհամերաշխ վարմունքի վրա ոմանք խնդում են, ոմանք՝ ողբում: Մի երկուսը գոհանում են, բայց մեծ մասը հայհոյում, և Աստված արդյոք ո՞ւմ պետք է լսի կամ ո՞ւմ ավելի պետք է լսի»: «Ձեր կողմից զրկվածն աղաղակում է,— ասում է Սուրբ Գիրքը,— և հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին»: Այո՛, չկա մի այնպիսի բան, որ այնպես բարկացնի Աստծուն, ինչպես աղքատին զրկելը, որբին ու այրուն անիրավելը:

Մեր կյանքում, որ լի է բազմազան թշվառություններով, միշտ որևէ տեղ, որևէ ժամանակ մարդու առաջն են գալիս ողորմածություն և անհավատություններ: Ոչ ոք չի կարող արդարանալ ողորմություն չտալու համար՝ ասելով՝ Ողորմած լինել չէի կարող, ուստի չեղա, որովհետև ամեն մարդ իր կարողության շափ կարող է մի բան տալ կարոտյալին, իսկ ով ոչինչ չունի, կարող է մի բաժակ ջուր տալ, կարող է հիվանդին մխիթարել, բանտարկյալին այցելել: Այս պատճառով է, որ Հիսուս միայն կերակրելն ու հագցնելը չի պահանջում, որպեսզի ով մի կողմով չկարողանա բարերարել, մյուս կողմով բարերարի: Երբ տգեատին կտոմորեցնես, երբ տարակուսյալին խրատ ու խորհուրդ կտաս, երբ ընկերոջդ հանցանքը կներես, երբ մոլորյալին կհանդիմանես, երբ ընկերոջդ պակասությունը համբերությամբ կտանես, այդպիսով կատարած կլինես նույն առաքինությունները, որոնք կոչվում են բարերարություն: Հրեաները որբերին ու այրիներին պատուարում, կերակրում էին, նեղյալներին մխիթարում և ամենքի կարոտությունը լրացնում: Բայց Հիսուս ասում է. «Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան օրենսգետներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայությունը չեք մտնի», որովհետև եթե միայն հրեայի արդարությունը կատարենք, եթե միայն նրա շափ բարերար լինենք, ապա Հիսուսի գալուստը զուր է մեզ համար: Չէ՞ որ մենք այժմ՝ աղքատ թե մեծատուն, ամենքս էլ Հիսուսով մի մարմին ենք և միմյանց անդամներ: Եսայի մարգարեն հորդորում է. «Բրդեա՛ քաղցելոց սրտի մտօք, և զաղքատս անյարկս տա՛ր ի տուն քո, և եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանի՛ջի՛ր և տառապելոյ զագի քո զերեսս մի՛ դարձուցաներ, յայնժամ կարդայցես, և Աստուած լսէ քեզ, և մինչև քո աղաղակեալ իցէ, ասէ, հասեալ եմ»: Ինքը՝ Հիսուս, ասում է. «Աղքատներին տրված ողորմության փոխարեն ես եմ պարտական»: Եվ ի՞նչ գեղեցիկ փոխատվություն: Դու Աստուծուն փոխ ես տալիս իբրև ամեն բանի կարոտ մարդու, իսկ նա հատուցում է քեզ իբրև Աստված, անկարոտ ամենայնի: Դու տալիս ես նրան կորստական ոսկի, նա տալիս է քեզ մեղաց թողություն: Դու տալիս ես նրան մի կտոր

հաց, նա՝ «ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի. և այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որը ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա»: Դու տալիս ես նրան մի բաժակ ջուր, նա՝ «Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մեջ կլինի բխող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար»: Դու տալիս ես նրան հագուստ, նա ծածկում է քեզ առաջին լուսեղեն պատմուճանով: Դու տալիս ես նրան տուն, նա ժողովում է քեզ երկնքի արքայություն մեջ: Դու փառավորում ես նրան խոսքով, նա փառավորում է քեզ գործերով, թագ դնելով գլխիդ՝ զարդարում է և արժանացնում լուսեղեն առագաստին: Տեսնո՞ւմ ես ուրեմն, որ Աստված ոչ թե իր համար, այլ մեզ համար է պահանջում մեզանից մեր բարեգործությունները:

Մեկ մտածի՛ր, թե այն Աստված, որ երբ դու մեկին դեռ մի պատառ հաց անգամ չէիր տվել, քեզ այդքան հարստություն տվեց, քո ողորմությունն ստանալուց հետո մի՞թե կզլանա իր գանձերն առաջդ բանալու: Մի՞թե ավելի շատ չի տա քեզ, երբ ինքն էլ կառնի քո տվածից: Ճրագի լույսն էլ այդպես է. եթե նրանից ուրիշ ճրագներ ես վառում, լույսն ավելի առատանում է, ոչ թե պակասում, ուստի եթե կամենում ես լույսն ավելացնել, պակասեցրո՛ւ: Այսպես է մտածում մեր սբ. Գրիգոր Նարեկացին էլ, որ Աստծո մասին ասում է. «Տալիս ավելի ես հարստանում, քան առնելիս»: Առատահոս ջրհորից եթե ամբողջ օրը ջուր հանես, ավելի առատ ու վճիտ ջրեր կբխի, այդպես էլ քո հարստությունը ողորմածությունից ոչ միայն չի նվազի, այլև ավելի հորդառատ կբխի: Այսպիսով ողորմածությունն ուրիշ բոլոր արվեստներից ավելի շահավաճառ արվեստ է: «Ո՛վ մարդ,— ասում է Հիսուս,— տո՛ւր հաց, տո՛ւր ջուր, եթե կամենում ես, որ Աստված քո պարտապանը լինի, ոչ թե դատավորը»: Խնդրելուց առաջ պետք է շտապես տալ մանավանդ այնպիսիներին, որոնք ամոթից ծածուկ տեղերն են շրջում: Ահա այդպիսի բարեկամներ ճարիր քեզ հավիտենական օթևանների համար: «Ուստի,— ասում է սբ. Ներսես Շնորհալին,— այս անցավոր կյանքի համար հավիտենական

կյանքը մի՛ կորցրու, որովհետև թեպետ, Քրիստոս ասաց. «Դժվար կ'մտնի մեծատունը երկնքի արքայությունը», բայց եթե դու քո մեծությունն Աստծո կամքի համաձայն գործածես, դժվարը քեզ համար կհեշտանա: Չէ՞ որ Աբրահամն էլ մեծատուն էր, բայց նա ոչ միայն արքայություն մտնելուն արժանացավ, այլև նրա գոգն Աստծո արքայություն և բոլոր արդարոց հանգիստ եղավ ու կոչվեց: Նույնպես և Իսահակը, Հակոբը, Հոբը և մյուս բոլոր մեծատուն արդարները, որովհետև ոչ ոքի չէին զրկում, չէին նեղում, ոչ ոքի անիրավություն չէին անում, ընդհակառակը, իրենց արդար աշխատանքով ձեռք բերած հարստությամբ քաղցյալներին կերակրում էին, տկարներին՝ զորացնում, տնանկներին՝ փրկում «իրենց նեղողներից»: Եվ ինչպես որ նրանց մարմնավոր փարթամություններն արգելք չեղան արքայությունը ժառանգելուն, նույնպես և քեզ շարյաց պատճառ չի լինի քո մեծությունը, այլ մանավանդ թե բարյաց պատճառ կլինի, որովհետև իմաստունն ասում է. «Մարդու մեծությունը ուրիշներին փրկելն է»:

Դավիթը սքանչացած ձայն է տալիս. «Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին. փորձանքի օրը Տերը կփրկի նրան»: Եվ ի՞նչ բան է խորհելը: Խորհելն այն է, երբ նրա տառապանքները տեսնելիս կմտածես, թե իմ եղբայրն է, անդամս ու մարմինս, ինձ պես պետք ունի և կարոտ է ամեն բանի, քաղցի վտանգից ստիպված՝ շրջում է անհանգիստ, տոթից այրվում է, ցավից դողում, որովայնը դատարկ, մարմինը մերկ, դեմքը թոշնած և ողջ մարմինը ցամաքած: Թափառում է, վարանում ու երերում և մեր անողորմ սիրտը ճանաչելով՝ մեզ իր կտրված, մատնաթափ ձեռքն է ցույց տալիս, որ մեր գույթը շարժի: Երկյուղով դռներին է մոտենում, երկյուղով ներս մտնում, որովհետև տներում էլ շներից է դողում, անասուններից վախենում, ձին քացի է տալիս, եզր եղջյուրներով խփում, շունը կծում, և չար ու անգույթ մարդիկ բամբասում ու անարգում են, ասես թե նետով են խոցոտում, մանավանդ որ խեղ,



կույր ու ցավագար է: Իր քաղցածությունից անողորմներին է դիմում ինչպես գազանների, որոնցից նախ անարգվում է, ապա նոր միայն կարողանում մի բան ստանալ, այն էլ հազար ու մի բամբասանքով: Այս է խորհելը, եթե միայն մարդ մտածի աղքատի ու տնանկի վիճակի մասին և քաղցր խոսքով ու գթոտ սրտով մխիթարի կարոտյալին: Մարգարեն այդպիսիներին է տալիս երանությունը: Եթե աստվածապաշտ ես, նրանց հոգսը տար, եթե ուզում ես մեղքերդ քավել, նրանց կերակրիր ու հագցրու, եթե ուզում ես համարձակ երեսով Հիսուսին տեսնել, մի՛ տրտմեցրու աղքատների ու նեղյալների երեսը, եթե ուզում ես սրբոց օթևանը մտնել և անբավ բարիքներ ժառանգել, ինքդ օթևան եղիր պանդուխտների, հիվանդների ու վշտացածների համար:

Հիրավի, եթե աշխարհում աղքատներ չլինեին, ո՞վ կարող էր իր մեղքերի ծանրությունից թեթևանալ և կամ ապրել ալեկոծյալ ու ծովածուփ անիրավությունների երեսից: Աղքատներին տրված ողորմություններն են, որ մեզ անց են կացնում աշխարհիս սահուն ու ծփուն կյանքով և հասցնում խաղաղության նավահանգիստը: Եվ վշտացյալների աղոթքները հանում են մեր մեղքերի փուշը, մաքրում ու այրում են մեղաց թարախը, բժշկում ու առողջացնում են սատանայի հասցրած վերքերը, ցրում ու թեթևացնում են անօրենությունների ծանրությունը և երկինք ուղարկում քավված ու արդարացած: Այսպիսի զորություն ունի ահա ողորմությունը, որ մարդուն իր ծանր հանցանքներից փրկում է այն շնչին արծաթով, որ տալիս ենք կարոտյալներին:

Դու մի՛ տրտմիր ունեցածիդ պակասելու համար, որովհետև դրա հետ էլ մեղքդ է պակասում: Ողորմությունովդ, արած բարերարությունովդ սրբվում է հոգիդ, օրհնվում են կաշքդ ու կավածքներդ, հաջողվում են վաստակներդ, ավելանում են եզներդ, բազմանում են ոչխարներդ, պտղաբերում են այգեստաններդ: Ճշմարիտ է, որ կուսությունը մեծ սրբություն է, սակայն ողորմությունը դրանից պատվական է, թեպետ պահոց պնդությունը և ուրիշ շատ

ու մեծամեծ առաքինությունները մեծ բաներ են, բայց ողորմությունն ավելի մեծ է, կարևոր և Աստծուն ընդունելի պատարագ: Մեծ է ու պատվական ողորմած մարդը, իսկ անողորմը Սուրբ Գրքի խոսքով շուն է, խոզ և միայնակեր գազան, որովհետև այդպիսիք ճրագ են անյուշա, աչք են խավար, աղբյուր ցամաքած և ծառ չորացած, որոնք անունով միայն կան, սակայն բնավին անօգուտ: Երբ երկրագործը սերմը գցում է հողի մեջ, չի տրտմում և իր արարքը ոչ թե կորուստ է համարում, այլ օգուտ և աշխատանք, թեպետ նրա հույսը մի շատ հաստատ հույս էլ չէ: Դու, որ ցանում ես նույնպիսի, բայց ավելի հաստատ հույսով և կարող ես տվածդ հանձնել ուղղակի իր՝ Հիսուսի ձեռքը, զարմանալի չէ՞, որ չես կամենում, դանդաղում ես և քո չքավորությունդ ես մեջ բերում:

Առատություն մը ցանիր, որ առատ հնձես: Ոսկին տալ և մեղքի թողություն ստանալ դեռ հետն էլ իբրև տոկոս երկնքի արքայությունը. սրանից ավելի ի՞նչ կկամենաս: Մի կտոր հաց տալ և սեղանակից լինել արքայության սեղանին, մի բաժակ ջուր տալ և խմել կենսատու աղբյուրից, մերկությունը ծածկել և զարդարվել լուսեղեն պատմունճանով: Կան շատերը, ովքեր շատ առաքինություններ են կատարում՝ աղոթում են, պաս պահում, ժուժկալ մնում, չոր գետնին քնում, բայց աղքատին մի դանկ չեն տալիս, նրանց ինչ օգուտ է իրենց այդ բոլոր առաքինությունները: Հիմար կույսերն էլ այն պատճառով կորան, որ մյուս բոլոր մասերով կատարյալ էին, սակայն իրենց լրացումների համար ողորմության ձեթը չէին առել. խավարում բնակվեցին և հարսանյաց առագաստին չարժանացան:

Դու ասում ես՝ խաբվեցի: Բայց քի՞չ է պատահում, որ մեր որդիներն ու կանայքն էլ ոչնչացնում են մեր հույսերը, բայց մենք դարձյալ խնամք ենք տանում նրանց համար: Պատահում է, որ պատերազմում հաղթվում և ծովում նավաբեկ ենք լինում, սակայն դարձյալ համառությամբ կրկնում ենք և արհամարհելով փորձը՝ դեպի նույնն ենք վազում: Ուրեմն ինչքան ավելի շպետք է դադարենք բարերարելուց: Եթե մեկն այն պատճառով չի տալիս, որ փոխարենը

չի ստանում, ուրեմն տվել է, որ ստանա: Որքան մարդիկ կան, որ արժանի չեն լույսի, և սակայն լուսանում է: Քանիսները կան, որ գանգատվում են շատ որդի ունենալուց, իսկ Աստված դարձյալ որդի է տալիս նրանց, բայց համբերում են տվածին: Համարձակ կարելի է ասել՝ ապերախտ մարդը խիստ է մեղանշում, բայց նա է ավելի շատ մեղանշում, ով երախտիք չի անում: Երախտավորներին պետք է սովորեցնել, որ տալուց հետո ոչինչ չպահանջեն, իսկ երախտավորյալներին, որ ստացածից ավելի են պարտ: Բարերարողը նման է Աստծու, իսկ երախտիք պահանջողը՝ վաշխառուի: Եթե կամենում ես Աստծուն նմանվել, բարերարի անգամ ապերախտներին, որովհետև չարագործների վրա էլ է ծագում արևը, և ավազակների համար էլ բաց են ծովերը: Երբ մեկն Արիստոտելին մեղադրում էր, որ նա մի վատթար մարդու ողորմություն տվեց, փրկիստփան ասում էր. «Նրան կարեկցեցի ոչ թե այն պատճառով, որ չար է, այլ որ մարդ է»:

Արդ, եթե հավատում ես Աստծո անսուտ խոսքին, պետք է հաստատ գիտենաս, որ երբ կերակրում ես քաղցյալին, Քրիստոսին ես կերակրում, եթե ծարավածին խմեցնում ես, եթե հյուր ես ընդունում տանդ, եթե հիվանդին այցելում ես, նեղյալին սփոփում, եթե թշվառին օգնում ես, տկարին սպասավորում, այդ ամենը Քրիստոսին ես անում, նրան ես պարտապան դարձնում, որ բազմապատիկ պետք է հատուցի քեզ «յաւուրն շարի», երբ ո՛չ սրբերը կարող են օգնել քեզ, ո՛չ արդարները փրկել, երբ ո՛չ հայրերը կխղճան, ո՛չ եղբայրները կողորմեն, այլ կօգնեն միայն բարերարություններդ: Ուրեմն այստեղ առատ ցանի՛ր, որ այնտեղ հարյուրապատիկ հնձես: Դրա համար է Հիսուս ասում, թե երբ խնջույք անես, մի՛ կանչիր մեծամեծներին, որ չլինի թե նրանցով զբաղվես, ու աղքատներն արհամարհվեն, և դու անարդար վարմունքիդ համար օրինազանց դատվես: Եթե Քրիստոս է, որին ընդունում ես, ուրեմն վայել չէ քեզ, որ նրա ընդունելության միջոցին զեխ մարդիկ ժողովես, նրանց ներս մտցնես, իսկ Քրիստոսին դրսում թողնես, որ նրանք պատվով վերև բազմեն, իսկ Քրիստոս անպատիվ վար նստի: Նրանք՝ պատ-

վավոր հյուրերի մեջ, իսկ Քրիստոս՝ ոտքի տակ, սպասավորները ծառայեն նրանց, իսկ Քրիստոս գլխիկոր նստի ցածում: Եվ ինչ ողորմություն է, երբ մարդ նստում, մտածում է սկզբում շատացնել ունեցածը, իսկ հետո տնանկներին ողորմություն տալ անօրենության փոխարեն և հաշտության պատարագ անել, որ Աստված հանդիմանում է Եսայու բերանով. «Եթե ազնիվ ալյուրի հաց մատուցեք ինձ՝ զուր է լինելու. ձեր խնկերն էլ են պիղծ են ինձ համար. ձեր ամսամուտները, շաբաթները և տոնական մեծ օրը ևս անընդունելի են ինձ. ձեր պահեցողությունն ու հանգիստը, ձեր ամսամուտներն ու տոները ատեց իմ հոգին: Կշտացել եմ ձեզնից, այլևս չեմ ների ձեր մեղքերը: Երբ աղոթքի համար դեպի վեր բարձրացնեք ձեր ձեռքերը, երես եմ դարձնելու ձեզանից, և եթե բազմապատկեք ձեր աղոթքները, չեմ լսելու ձեզ, որովհետև ձեր ձեռքերը լի են արյունով»:

\*\*\*

Ողորմության չափը չի կարելի որոշել: Շատից շատ պետք է տալ, քչից՝ քիչ, միայն թե աչքդ տվածիդ վրա շննա: Սուրբ Գիրքն ասում է. «Ողորմություն անելիս թող քո աչքը ազահ չլինի. ինչքան շատ ունենաս, ըստ այդ շատության կանես քո ողորմությունները, եթե քիչ ունենաս՝ ըստ քչի»: Տուրքը մեծացնում են ոչ թե նրա չափն ու կշիռը, այլ ժամանակն ու հանգամանքը: Բարերարություն է կալվածքներ ընծայելը, բարերարություն է և սովյալին մի հաց տալը: Բարերարություն է ընծայել այնպիսի գավառներ, ուր հոսելիս լինեն բազմաթիվ նավագնաց գետեր, բարերարություն է նաև մի աղբյուր ցույց տալ ծարավից պապակողներին, որոնք չորացած կոկորդով հագիվ են շնչում: Մեծ նշանակություն ունի ոչ թե տվածի չափը, այլ տալու եղանակը:

Կան մարդիկ, որոնք իրենց բարերարությունն այնպիսի խիստ խոսքերով ու ամբարտավանությամբ են ատելի դարձնում, որ ստացողը զղջում էլ է խնդրածի համար՝ մի կողմ դնելով և խոստանալուց

հետո ուշացնելը, որովհետև ավելի խիստն ու դառն այն է, որ խնդիրն ընդունելուց հետո հարկավոր է լինում կրկին աղաչել: Ուստի եթե ուզում ես տուրքդ սիրելի դարձնել, հոգ տար, որ ողջն անվնաս ու աննենգ հասնի ում որ խոստացել ես: Ահա դրա մի լավ օրինակը: Մի շքավոր կին իր գեղեցիկ աղջկան հետն առած՝ ներկայացավ մի կարգինալի և նրան հայտնեց իր տանտիրոջը տալիք 5 ոսկու պարտքը, որի համար նա նրանց դուրս էր անում իր տնից: Կնոջ համեստ վարքից ու խոսվածքից կարգինալի մարդասիրությունը շարժվեց, և նա մի տոմսակ գրեց ու տվեց նրան, որ տանի տա գանձապետին: Գանձապետը, տոմսակն ստանալով, իսկույն 50 ոսկի հաշվեց և տվեց նրան: «Բայց, պարո՛ն,— ասաց կինը,— ես կարգինալից այսքան բան չխնդրեցի, անշուշտ, սխալված է»: Նրան բավականություն տալու համար գանձապետը գնաց կարգինալին հարցնելու: Կարգինալը, տոմսակն առնելով, պատասխանեց. «Հիրավի սխալված եմ, այդ կնոջ վարմունքը հաստատում է սխալմունքս»: Եվ փոխանակ 50 ոսկու՝ 500 ոսկու մի տոմսակ գրեց և առաքինի մորն ստիպեց, որ ընդունի այդ գումարը և օժիտ անի իր աղջկան:

Ողորմությունն այնպես տանք, ինչպես որ կկամենայինք առնել՝ հոժարությամբ, շուտով և աներկմիտ: Դուրեկան չէ այն տուրքը, որ երկար ուշանում է տվողի տարտամ ձեռքում, որ ասես թե բռնի և իր անձից խլելով է տալիս: Եվ եթե հարկավոր էլ լինի ուշացնել, զգուշանանք ուշացնելու նշան ցույց տալուց, որովհետև բարերարողը լուրջ կերպով պետք է բարերարի, իսկ նա, որ ուշացնում է, իր շկամությունը հայտնելով, վկայում է, որ չի տալիս, այլ թույլ բռնած լինելով՝ տեղի է տալիս քարշողին: Ով աղաչանքով է ստանում, նա ձրի չի ստանում: Շտապել պետք է: Ուշ է բարերարում նա, ով աղաչողին է տալիս: Այն բարերարությունն է լավ և սրտի մեջ տևողական, որ խնդրելուց առաջ է լինում: Գոնե կրճատենք աղաչողի երկար խոսքերը, որ չլինի թե աղաչանքներից ստիպված՝ տվող երևանք և ցույց տանք, որ առանց աղաչելու էլ ուզում էինք ինքնահոժար տալ: Ինչպես որ առողջարար է հիվանդին իր ժամանակին

կերակուր տալը, այդպես էլ բարերարությունն է. թեպետ քիչ լինի, բայց հարմար ժամին և շուտ տրվելով՝ շատ զորավոր է և հաղթում է այն մեծ տուրքին, որ տրվում է շատ վարանելուց հետո և դանդաղությունը: «Բարեպատեհ՝ է նրա ողորմությունը նեղության ժամանակ, ինչպես անձրևաբեր ամպը՝ երաշտի ժամանակ»,— ասում է Սուրբ Գիրքը: Իսկ ակամա տուրքը քարե հաց է, որ ստանում է սովյալը և ուտում դառնությունը:

Չկա ավելի վատ բան, քան այն, երբ մարդ ողորմելիս երկար ժամանակ վարանման մեջ է լինում, որովհետև կան և այնպիսի խնդրողներ, որոնց համար ավելի հաճելի է իսպառ հուսահատվել, քան երկար հուսալ: Շատերն էլ փառասիրությունից են դարձել այդ ախտի տերը. իրենց խոստումն ուշացնում են, որ չլինի թե խնդրողների թիվը քչանա: Այդպես են բարձր տեղերում պաշտոն ունեցողները, որոնք կարծում են՝ եթե ամեն մեկին առանձին երկար ժամանակ տրամադրեն և իրենց զորության ու կարողության չափը շատ կերպերով ցույց շտան, իրենց իշխանությունը կնվազի: Եվ ո՞վ երախտագետ կլինի այն տուրքի համար, որին երկար սպասելուց ձանձրացած՝ սկսի անիծել տուրքը: Ով որ իրեն թույլ է տալիս երկար ժամանակ տանջել նրան, որին շուտով կարող էր ազատել կամ ուշ ուրախացնել, նա խեղդում է երախտիքը: Ով ուշացնում, օրեցօր է ձգում, նա երկու բան է կորցնում՝ ժամանակը և բարեսեր կամքի ցույցը, որովհետև ով կամենալիս դանդաղում է, նա չի կամենում: Որքան քաղցր է այն տուրքը, երբ տվողը թույլ չի տալիս շնորհակալ լինել, մանավանդ տալուց հետո մոռանում է տվածը: Մարդու մեկը, կամենալով ծածկաբար օգնել իր բարեկամին, որ զուր ամաշում էր իր աղքատությունից, նրա հիվանդ ժամանակ մի քսակով փող դրեց նրա բարձի տակ, որպեսզի նա իր ցանկացածն ավելի շուտ գտնի, քան թե ստանա: Տալիս կարելի է և այսպիսի սիրալիր գանգատներ խառնել. «Ցավում եմ, որ դու, այդպես կարոտ լինելով, վաղ չես հայտնել ինձ, և որ այդպես դժվարությունը դիմեցիր խնդրելու, մանավանդ դեռ միջնորդ ու բարեկամ էլ մեջ բերիր: Այսուհետև երբ

կարիք ունենաս, խնդրեմ, համարձակ դիմես ինձ»։ Եվ տվողի առաքինությունն իր ծայրին հասած կլինի, եթե նրանից հեռացողն իր մեջ ասի. «Մեծ բախտի պատահեցի այսօր։ Մի այնպիսի բարերար գտա, որ ինձ համար թանկ է անգամ շատ հարուստներից, բայց ես ինչպե՞ս պետք է երախտագետ լինեմ այդպիսի մի բարերար սրտի»։

Մենք սովորել ենք խեղճերին հանդիմանել իրենց անգործության համար, որ հաճախ ներելի է, իսկ ինքներս շատ անգամ անուժ ենք այնպիսի գործեր, որոնք ամեն անգործությունից էլ վատթար են։ Դու շատ անգամ ամբողջ օրն անց ես կացնում անօգուտ և նույնիսկ վնասակար խոսակցությունների մեջ՝ չմտածելով, որ արածդ վատ է։ Իսկ այս ողորմելի աղքատին, որ ողջ օրն անց է կացնում ողորմություն խնդրելով, աչքերն արցունքով լի, դատապարտում ես, դատարան քարշ տալիս ու հաշիվ պահանջում։ Եվ ինչ պատճառներ ես բերում. «Անգործ թափառականներ են,– ասում ես,– իրենց երկիրը թողած՝ գալիս, մեր քաղաքն են լցվում»։ Մի՞թե քեզ ծանր է գալիս, որ ամենքը ձեր քաղաքն իրենց հայրենիքից լավ են համարում ու խեղճերի ապաստարան ճանաչում։ Պետք է ոչ թե նեղանաս, այլ ուրախանաս և հիանաս, որ ամենքը ձեզ են դիմում, ձեր քաղաքը, ձեր տներն են դիմում որպես մի ընդհանուր հրապարակի։ Եթե Աստված էլ սկսեր այնքան խիստ դատել մեզ ու մեր գործերը, ինչպես մենք ենք դատում խեղճերին, ապա մենք ոչ մի թողություն, ողորմություն չէինք կարող ստանալ, որովհետև «ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու»,– ասում է Հիսուս։ Եվ արդյոք ինչի՞ համար ես անհանգստանում, ինչի՞ ես հետամուտ լինում։ Եթե Աստված մեզ հրամայեր քննել չքավորների կենցաղավարությունը, նրանցից բացատրություններ պահանջել և խնամքով հետազոտել նրանց բարքերը, այդ ժամանակ շատերը չէին տրտնջա, չէին ասի՝ այս ինչ բան է, Աստված մեզ դժվար գործ հանձնեց, մենք չենք կարող քննել այլոց կենցաղավարությունը և իմանալ, թե այս կամ այն մարդն ի՞նչ մեղքեր է գործել կամ դրանց նման ուրիշ բաներ։ Իսկ այժմ, երբ նա մեզ ազատ է թողել այդպիսի հետամտությունից և

խոստացել է լրիվ մրցանակ տալ ողորմածություն համար, ստացողները բարի լինեն թե շար, ուրեմն մենք ինքներս ենք զուր անհանգստություն պատճառում մեզ: Ինչպես Աստված, չնայելով որ շատերն իրեն վշտացնում են անվայել խոսքերով ու գործերով, հեշտանում են, գողանում, կողոպտում և շատ շարիքներ գործում, չի դադարում իր արևի ճառագայթները, անձրևներն ու երկրի բերքերն ուղարկել ամենքին, այդպես էլ դու, երբ դեպքը գա, թեթևացրո՛ւ աղքատությունը, դադարեցրո՛ւ քաղցը և էլ ուրիշ ոչինչ մի՛ փնտրիր, որովհետև երբ մենք սկսենք հետազոտել չքավորների կյանքի եղանակը, ապա ոչ ոքի ողորմություն չենք տա, կմնանք անպտուղ և աշխատած կլինենք զուր և անօգուտ: «Ողորմություն եմ կամենում և ոչ զոհ»,– ասում է Աստված, այսինքն՝ Նա ավելի շուտ կամենում է, որ մենք գուժ, սեր ու ողորմություն ունենանք դեպի ամենքը, քան թե Իրեն զոհեր մատուցանենք: Ինքը՝ Հիսուս, առաքյալի ասածի պես «մեզ համար աղքատացավ, որ մենք Նրա աղքատությամբ փարթամանանք»: Ուստի երբ շատերս սպասավորներով շրջապատված փափկանում ենք գահույճներում, խիստ պատասխանատվության տակ ենք գցում մեզ, իսկ շատերը կապանքներում ու բանտերում են փակվում, որով և մեզ դատապարտում ենք հայր Աբրահամից լսելու նրա հուսահատիչ խոսքը, թե. «Մեծ վիճ կա մեր և ձեր միջև»:

Ինչպե՞ս կարելի է սիրել Հիսուսին և արհամարհել այն գործերը, որ նա հանձնել է մեզ կատարելու: Ինչպե՞ս կարելի է սիրել Հիսուսին և մոռանալ աղքատներին. Նա մեզ է հանձնել իբրև իր ներկայացուցիչների: Ամեն անգամ տեսնելիս պետք է հիշենք աղքատ Հիսուսին, որ «իր գլուխը դնելու տեղ չուներ»: Ամեն դժբախտ, ամեն հալածյալ մեր աչքին պետք է ներկայացնի դատապարտված և վշտալի Հիսուսի պատկերը: «Ամեն ժամ աղքատներին ձեզ հետ ունեք» խոսքերով Հիսուս աղքատներին ու դժբախտներին ժառանգություն կտակեց քրիստոնյաներիս, և ճշմարիտ քրիստոնյայի սիրտն ամեն ժամանակ ու ամեն երկրում միշտ ապահով պատսպարան է եղել աղքատների ու թշվառների համար: Հիրավի, բոլոր



թշվառությունների վերջանալն ինչի՞ էր պետք, եթե այսչափ փարթամությունների մեջ մարդու սիրտն աղքատ մնար մարդասիրությունից: Բայց Աստված ոչ թե մարդասիրությունն է ստեղծել աղքատների համար, այլ աղքատությունն է ստեղծել մարդասիրության համար: Մի՞թե Աստված չէր կարող այնպես անել, որ ամենևին աղքատներ չլինեին: Բայց Աստված այդպես չկամեցավ, այլ կամեցավ, որ մեզ հետ միշտ աղքատներ ունենանք: Աղքատները դրված են երկրիս վրա, որպեսզի մեր մարդասիրությունը միջոցներ ունենա զարգանալու, որ անգործ չքնի: Այստեղ է ահա Աստծո նախախնամությունը, որ կամեցել է չարիքից բարիք ստեղծել:

Բարերարությունն անշոշափելի է և տեսնվում է միայն հոգու աչքով: Մեծ տարբերություն կա բարերարության և այն բանի միջև, որով լինում է բարերարությունը: Այս պատճառով ո՛չ ոսկին, ո՛չ արծաթը և ո՛չ որևէ տրված բան բարերարություն չէ: Բարերարությունը տվողի՞ բարերարողի կամքն է:

Պարզենք օրինակով. երկու երեխա ուղարկեցի ուսումնարան՝ տեսչին կանչելու: Մեկը, ման գալով ամբողջ սրահով և այն բոլոր տեղերով, ուր հույս ուներ նրան գտնելու, վերադարձավ հոգնած ու դատարկ, իսկ մյուսը, մի շատախոսի կողքին նստած կամ փողոցում սրա-նրա հետ խաղալով, գտավ տեսչին, որին չէր փնտրում, բայց գտավ իր մոտով անցնելիս: Երկուսից ո՞րը կատարեց իմ հրամանը. իհարկե, առաջինը: Այսպես ահա, կամքն է միայն պարտքի կանոնը և նրան ուղղություն տվողը: Ավազակը, դեռ ձեռքն արյան մեջ շաղախած, ավազակ է, որովհետև մահացու զենքերով պատրաստ կանգնած է կողոպտելու և սպանելու: Անօրենսությունը, որ արդեն գործվում է, ոչ թե սկսվում է, այլ վերջանում է ու հայտնի դառնում: Աստված գործին չի նայում, այլ կամքին, որովհետև կամենալ նշանակում է կատարել: Աբրահամն Իսահակին չմորթեց, սուրն ու սեղանը չարնոտեց, բայց պատարագը կատարեց, որովհետև ինչ որ ձեռքը չարեց, այն կամքն արեց: Մարդս կարող է ասել՝ հարստություն

չունենա մեկին օգնելու, բայց չի կարող ասել՝ օգնել չեմ կարող: Ինչ որ հարուստը կարող է տալ չքավորին գործով, նույնը աղքատը կարող է տալ աղքատին կամենալով: Նրա կամքն ընդունելի է Աստծուն՝ իբրև գործ: Շատ անգամ ավելի օգտակար է այն, որ մեկը կամենում է լալ, բայց չի կարողանում, քան եթե շատ արտասուվեր:

Ինչ որ ունենք, շոշափում ու տեսնում ենք, դեպի որոնց ձգտում ենք, այդ բոլորը կորստական են, այսօր կան, վաղը չեն լինելու, բայց բարերարությունը, եթե տրվածը կորչի էլ, դարձյալ մնում է անկորուստ և անջնջելի: Ասենք թե մի բարեկամ մարդու ազատեցի ավազակներից՝ փրկանք տալով, բայց թշնամին բռնեց նրան ու բանտարկեց: Դրանով նա ոչնչացրեց ոչ թե իմ արած բարերարությունը, այլ դրա պտուղը: Մեկ ուրիշի որդուն հրդեհից ազատեցի ու հորը հանձնեցի, բայց նա հիվանդությունից կամ որևէ դեպքով մեռավ, դրանով իմ բարերարությունը չոչնչացավ: Ի՞նչ է ուրեմն բարերարությունը: Բարերարությունը բարեսեր կամքի մի գործ է, որով մարդս, ուրիշներին ուրախացնելով, ինքն էլ է ուրախանում: Ուստի բանն այն չէ, թե ինչ ես տալիս, այլ թե ինչ ոգով ես տալիս, որովհետև բարերարությունը ոչ թե տվածն է կամ արածը, այլ սիրտն է, որ տալիս է ու անում: Եվ որովհետև մեծ տարբերություն կա տալու և սրտի միջև, ուստի բարերարությունը միշտ բարի է, իսկ ինչ որ տրվում է կամ արվում, այն ո՛չ բարի է, ո՛չ չար: Սիրտն է, որ փոքրերը մեծացնում է, անարգն ազնվացնում և մեծերն ու պատվականներն արհամարհում: Եթե բարերարությունը կախված լիներ ոչ թե բարեսեր կամքից, այլ տված իրերից, ապա տվածի մեծությունն համեմատ էլ բարերարությունը կլիներ: Բայց այդպես չէ: Ով տալիս է հոժարությամբ, ով իր աղքատությունը մոռանում է իմա տեսնելով, ով ոչ միայն կամքով, այլև ցանկությամբ է շտապում օգնել, ով բարերարելիս այնպես է համարում, թե ինքն է բարիք գտել, ով տալիս է առանց մի բանի ակնկալության և անում է իբրև ոչինչ չարած, ով մարդ էր փնտրում՝ օգնելու և գտնում է, նա է ճշմարիտ բարերարը, ճշմարիտ ողորմածը: Փոքր բան էր տվածը, բայց շատ տալու կարո-

դուժյուն շուներ, մեկ ուրիշը շատ բան տվեց, բայց դժվարությամբ տվեց, օրեցօր ձգելով տվեց և ոչ ի պետս, իր փառասիրությանը տվեց, ոչ թե ինձ: Ավելի հաճելի է այն տուրքը, որ դյուրաձեռն է, քան թե այն, որ լիաձեռն է: «Նրա ձեռքերը ճախարակված»,– ասում է իր հայտնության մեջ Հովաննես ավետարանիչը<sup>1</sup>: Այսինքն՝ ինչպես փայտը կամ գնդակը ճախարակի ողորկ լինելով դյուրաշրջելի է, այդպես էլ Հիսուսի ձեռքն էր դյուրաշրջելի՝ ամենքին բարերարելու հոժար ու պատրաստ:

Ողորմածությունը գովելով և ամենքից ողորմություն պահանջելով՝ առաքյալը վերջացնում է իր խոսքն այսպիսի մի սպառնալիքով. «Քանի որ անողորմ դատաստան է լինելու նրա հանդեպ, ով ողորմած չի եղել», որովհետև,– ասում է,– անողորմ է լինելու նրա դատաստանը, ով ուրիշին չէր ողորմում. անողորմն ինքը սովորեցրեց, թե չպետք է ողորմել: Աստված նրան դատում է իր ախտով, որովհետև ինչ չափով որ չափում էր ուրիշներին, ինքը կչափվի, և ինչ դատաստանով որ դատում էր, ինքը կդատվի: Չտվեց փոքրը, չի առնում մեծը, չկարեկցեց մի դանկով, չի առնում մի դահեկան: «Որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք չտվիք»,– ասում է Հիսուս, որովհետև քաղցած էի, և ինձ չկերակրեցիք: Լսեցե՛ք, մեծատունն է՛ր և զարհուրեցեք, լսեցե՛ք, անողորմներ՛ը և զարմացե՛ք: Չարիք երկրում մի բարեգործություն, չեղար մարդասեր, չես գտնում երկնքում, ինչ որ չես ամբարել, չես հնձում, ինչ որ չես ցանել: Դառնություն սերմանեցիր, ստացի՛ր որոմները, փախա՞ր ողորմությունից, կփախչի քեզանից ողորմությունը: Ո՛ւր կմնա այն ժամանակ ոսկին, ո՞ւր գանձարանի կնիքը, ո՞ւր կմնա գիշերային հակմունքը<sup>2</sup>, դրանք ի՞նչ կարող են անել դատաստանի օրը:


<sup>1</sup> Մեջբերումը Երզ Երզնցից է (Ե 14) - (ժնթ. խմբ.):

<sup>2</sup> Չգտնում

«Քանզի ողորմածությունը բարձրագույնս պարծենում է դատաստանի դիմաց»: «Դատաստանի օրը,- ասում է,- ողորմությունը, գլուխը բարձր բռնած, բաց ճակատով կպարծենա: Երբ դատավորն իջնի ահագին տեսյամբ և բարձրաձայն փողով, երբ երկիրքը գալարվի, և երկիրս դողա նրա առաջ, երբ նստի փառաց աթոռը, հուրը գնալիս լինի նրա առաջ, և խիստ մրրիկը՝ նրա շուրջ, երբ մենք ամենքս հարու-թյուն առնենք և տագնապով կանգնենք նրա առաջ կորագլուխ, այդ ժամանակ, այդ սոսկալի ժամանակ միայն ողորմությունն է անցնում, կանգնում բարձր ի գլուխ: Չի ամաչում, չի վախենում, չի դողում այն ահագին սպառնալիքից, այլ ասում է՝ Ո՛վ Դատավոր, ինձանից սովորիր ողորմության շնորհը, որովհետև ես, մարդ լինելով, արեցի, և դու արա՛, Աստված գոլով... Տերդ, որ ամենքիս թագավորն ես, նմանվի՛ր ծառայիս: Եվ կամ ինչպես մի ըմբիշ, հանդես իջնելով, օրենքով մարտնչի ու հաղթի ամենքի առաջ և բաց ճակատով մոտենա հանդիսադրին՝ պսակ պահանջի, ողորմությունն այդպես էլ լինելու է դատաստանի օրը: «Որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք չտվիր»։ Ի՛նչ երանություն, ի՛նչ պսակ կարող է հավասարվել այս խոսքին»:

Եթե թագավորը երեկոյան կանչեր մեկին և իր ծառաներին ասեր. «Իմ խորին շնորհակալությունը հայտնեցեք դրան: Դա իր տունը տարավ ինձ և կերակրեց, երբ ես անտուն էի ու աղքատ, դա շատ բարիքներ է արել ինձ իմ կարոտության միջոցին»։ Մի՞թե ծառաներից ամեն մեկն իր ամբողջ փողը գործ չէր դնի ու չէր ծախսի նրա համար, որին թագավորը հայտնեց իր շնորհակալությունը, ամեն մեկը չէ՞ր աշխատի մոտենալ ու բարեկամանալ նրա հետ: Տեսնո՞ւմ ես թագավորական խոսքի ուժը: Եթե մահկանացու թագավորի խոսքն այդքան հարգի է, անմահ թագավորինն ի՞նչ է լինելու: Հիսուս այդ օրը ողորմածին կանչելու է հրեշտակների և բոլոր երկնային զինվորությունների առաջ և ասելու. «Այս մարդը մյուս աշխարհում ինձ իր տունը տարավ և շատ լավություններ արեց ինձ՝ պանդուխտիս»։ Երևակայի՛ր ուրեմն, թե այդ մարդն ինչ համարձակություն է ունե-

նալու հրեշտակների մոտ, ինչքան է ուրախանալու երկնային զինվորությունների առաջ: Այսպես, սիրելի՛ս, մեծ բան է ողորմությունը, բարերարությունը: Դրան հավասարը չկա: Դա կարող է ջնջել մեր մեղքերը և մեզ ազատել դատաստանից: Դու լուռ ես, իսկ նա կանգնած պաշտպանում է քեզ, և հազարավոր բերաններ քո մասին շնորհակալություն են հայտնում Դատավորին:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷՄՄԱՆՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ  
(Կենսագրական տեղեկություններ) ..... 5

ԱՅՍ ԳՐՎԱԾՔԻՍ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԻՆ.....9

## ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆ Ա..... 13

ԲԱՆ Բ..... 21

ԲԱՆ Գ..... 32

ԲԱՆ Դ..... 43

## ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆ Ա Ի՞նչ է նշանակում ԱՂՈԹՔ անել..... 56

ԲԱՆ Բ..... 70

ԲԱՆ Գ.....83

ԲԱՆ Դ.....97

ԲԱՆ Ե.....107

## ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆ Ա.....114

ԲԱՆ Բ.....138

ԲԱՆ Գ.....160

ԲԱՆ Դ.....180

## ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՆ Ա.....196

ԲԱՆ Բ.....211

ԲԱՆ Գ.....220

ԲԱՆ Դ.....336

ԲԱՆ Ե.....249

ԷՄՄԱՆՈՒԵԼ ԲԱՅԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ՊԱՐԶ ԲԱՐՈՉՆԵՐ

(Ժողովրդական ընթերցանության համար)

Հրատարակչության տնօրեն՝	Նաթան Եպս. Հովհաննիսյան
Սրբագրիչ՝	Յու. Հովհաննիսյան
Շարվածքը՝	Վաչե արեղա Մկրտչյանի
Էջադրումը, կազմը՝	Յուլյանա Աբրահամյանի

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՏԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Էջմիածին - 2011

Թուղթ՝ օֆսեթ 80 գր., 60x84 1/16,  
ծավալը՝ 17 տպագրական մամուլ, շապիկը՝ 4 գույն, փափուկ,  
տպաքանակը՝ 1.000 օրինակ



ՏՊԱԳՐՎԱԾ Է ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ